11,661

9(47.925)
2-15

0

1/1 9/-

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Librairie H. PALOUYAN
43, Rue Richer
PARIS (9e) Tel PRO. 25-46

2-15

Ղ405.0
1933
օրլ

ՂԱԶԱՐԱՅ
ՓԱՐՊԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ

ԵՒ ԹՈՒՂԹ
ԱՌ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
ՌՅՁԲ — 1933

H. KASHMANIAN

16 JUN 2013
11,661
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԱՑ

Չորրորդս տպագրութեան, զայս և եթ կամ է ինձ աստանօր յայտ առնել, թէ զամենայն ձեռագիր և տպագիր օրինակաց որ յառաջ քան զդա զկատարելութիւնս յինքն ամփոփեաց:

Չարաբար զանց և զրեաւ իսկ զուսումնասիրութեամբք յամսագիր պրակս ի գիտնականաց Ազգիս եղելովք:

Գուն գործեցաք մերովսանն բազում ուրեք փոփոխել զգուշեաւ զկարգ բառից և բանից ըստ իմաստիցն և ըստ գրչագրաց, զոր ճշտեաւ գտցեն արդեօք խնդրակք ի Յառաջաբանին Ղազարայ[1] և այ-

---

[1] Բզմվպ. 1932, յէջս 444–459:

յուր։ Վասն որոյ ամենեւին ՆՈՐ *է հրատարակութեան։*

Ընծան վարկաք փոքու մատենականս տարագուն՝ ծանօթութեանս և համեմատութեանս յետուղ ի քղանցս իւրաքանչիւր իչից, հակիրճ ազդիւս շատացեալք։ Ի մեծագիր անդ տպագրին, ընդ հուպ՝ յընթացս տարւոյս երեւելոյ, կարգեսցուք մանր զամենայն ի վայելս բանասիրաց և յարաճուն փառս Հայրենեաց։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՎՐԻՊԵԱԼՔ

Յէջս 519. *և հրաժարեալ՝ զնա*
» 524. *ու այլովք*
» 533. Վ*եհնամ*
» 627. Ա*նզլոյ*

ՈՒՂՂԵՍՋԻՐ

Յէջս 519. *և հրաժարեալ զնա՝*
» 524. *և այլովք*
» 533. Վ*եհվեհնամ*
» 627. Ա*նգլոյ*

ՂԱԶԱՐԱՅ

ՓԱՐՊԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա. Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց. որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, սկսեալ ի մահուան Արտաւանայ յԱրտաշրէ՝ յորդւոյ Սասանայ՝ բռնաւոր Ստահրացւոյն. և զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէն կռապաշտութեան յաստուածգիտութեան ճշմարտութիւն, ի ձեռն սրբոյ Նահա-

տակին Գրիգորիսի. յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի:

Երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն՝ զիրս բազմափոփոխս աշխարհիս Հայոց, զբարեաց և զչարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպըղծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան. պատմեալ զայս ամենայն Փաւստոս ումն Բուզանդացի, մինչև ցԹագաւորութիւնն Արշակայ որդւոյ Տիրանայ, առ որով Թագաւորութեամբ բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուէնս ըստ օրինակի հնացեալ ձորձոյ: Եւ աւարտեալ աստանօր զբան պատմութեան իւրոյ՝ միացուցեալ հանգոյց, զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն՝ Հայոց պատմութիւն:

Երրորդ՝ Պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց՝ շարադրեալ տըկարութեանս մերում. յոր հարկաւորեալ հրամանաւ իշխանաց և բա-

նիւ սուրբ վարդապետաց, տուաք զանձինս յայսպիսի գործ կարեւոր, չիշխեցեալ ընդդիմանալ. յիշելով ի սուրբ գրոց զապառնալիսն անհնազանդից որդւոցն, և զօրս գրէ՝ ներողութիւն հնազանդից և հաւանելոց. կարգեալ մի ըստ միոջէ զիրս և զգործս, զբազմայեղանակ դիպմունս Հայաստան աշխարհիս, բաժանմանց յերկուս Թագաւորութիւնս. կալ ումանց ըստ աստուածային հրամանատուութեան ի հնազանդութիւն բնիկ իւրեանց Արշակունի Թագաւորացն, և այլոց ծառայել կամաւ օտար Թագաւորացն, ի կորուստ անձանց և աշխարհիս: Եւ ի վիճակէ բաժնոյ օրինացն՝ արանց քաջաց ի տոհմէ նախարարացն Հայոց՝ տալ զանձինս անհամարս ի նահատակութիւնս ի վերայ ուխտին սուրբ եկեղեցւոյ. և կնոց համբերել կապանաց և բանդից վասն երկնաւոր յուսոյն բազմաժամանակ տևողութեամբ. — Հեղուլ և քահանայից ընտրելոց Աստուծոյ և Ճշմարտապէս հովուաց՝ զարիւն ի պարանոցաց իւրեանց, ի վերայ ընտրեալ բանաւոր հօտին Քրիստոսի։ Եւ ոմանց յընկերակցաց նախարարացն և յայլ ազատ մարդկանէ՝ դառնալ յետս յուխտէ սրբութեանն, և անշէջ յաւիտենից հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն սատանայի և նորին արբանեկացն։ Եւ գրել զայս ամենայն մինչև ցօր սկզբան մարզպանութեանն Հայոց Վահանայ Մամիկոնէից տեառն և մեծի զօրավարին Հայոց և մարզպանի. և դադարեալ հանգուցից յայնմ տեղւոջ զբան վաստակոց պատմութեանցս այսոցիկ։

Բ. Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ի նոցանէ զժամանակաց և զգործոց աշխարհիս Հայոց բազմադիմի յեղափոխութիւնս, յստոյգ և յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս. այր բանիբուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից և յարմարագիր ի պատմութիւնս աստացուածի իւրոյ։ Սա զնուազումն թագաւորութեան արշակունւոյն Արտաւանայ, և զզօրանալն Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով կարգեալ գրոշմեաց. զքննախնդրութիւնն Խոսրովու, և զտարակուսանս գոռոզացեալ Ստահրացւոյն. զխորհուրդն և զխոստամունսն դաւողի հնարս յաղագս մահուն Խոսրովու, զխորամանկութեանն զմատնութիւնն Անակայ, և զսպանումն ի նմանէ զնորուն Խոսրովու՝ նենգաւոր խաբէութեամբ. զմատնումն յայնմհետէ զաշխարհս Հայոց ի ձեռս թագաւորութեան օտարի. զփախուցանելն դայեկացն զորդիս Խոսրովու յօտարութիւն՝ առ ի յապրումն. զհսկայաբար միաանգամ զդարձն Տրդատայ, և ըզգլաղթօղ մարմին ունելն զիւրոյին զնախնեացն քաջաբար զթագաւորութիւնն. զգիմելն առ նա սըրբոյն Գրիգորի. զհեշտ պաշտաման անձին զնահատակութիւն նորին Սրբոյն, և թէ որպէս տարաւ անպատումն և անբաւ բազում չարչարանացն. զառաւելապէս օգնականութիւնն Քրիստոսի որ ցուցաւ ի վերայ Սրբոյն, ի հիացումն գեռ եւս մոլորեալ մարդկան. զհամբերութիւն տևողութեանն այնչափ ամս ի վիրապին, ըստ կանխագէտ անտեսութեանն վերնոյն, որ պահէր զնահատակն ի գործն Հայոց. զեկս սուրբ կուսանացն ի Հռովմայեցւոց քաղաքէն, և զհեղումն մարտիրոսական արեանն ի Վաղարշապատ քաղաքի, յոռոգումն գալարութեան գոսացելոց դիոց մարդկան. զելն Սրբոյն Գրիգորի ի խոր վիրապէն, և զհանումն Հայաստան աշխարհիս ի խաւարէ անգիտութեանն յաստուածային արքայութեանն լոյս. զյորդորումն յայնմհետէ վարդապետութեան կենաց աշխարհիս Հայոց. զկտակս[1] մկրտութեան լուսոյ՝ զոր փրկիչն Քրիստոս ի ձեռն մեծի նահատակին Գրիգորի բարեխօսութեամբն եւս սուրբ կուսանացն՝ ծաւալեցոյց յաշխարհիս մերում. զշինութիւն եկեղեցեաց, զպայծառութիւն քահանայից, զխումբս բազմամբոխ ժողովրդոց ի տօնս Փրկչին և ի ժողովմունս[2] յիշատակաց Սրբոց: Զայս ամենայն, եւս առաւել քան զայն գիտութիւն, յիւրում հաստատուն և անսխալ կարգաւորութիւնս պատմեաց մեզ երանելի այրն Աստուծոյ Ագաթանգեղոս:

Գ. Իսկ զհետ սորա ըստ այլայլման իրաց և ժամանակաց, և գիպելոյ աշխարհիս Հայոց բազմամբոխ գա-

---

1. Ըստ ոմանց ընթեռնլի զվտակս,
2. Յօր. ժողովանս,

րուց, երբեմն խաղաղութեան, և երբեմն սաստիկ և անբաւ չփոթմանց, միաբանութեան առ միմեանս՝ և երկպառակութեամբ ճեղքելոյ ի միմեանց. որք ի միաբանելն՝ տեսանէին զԱստուծոյ օգնականութիւնն յանձինս և յաշխարհս, և ի քակտելն և ի պառակտելն՝ զվնաս և զկորուստ յանձինս և յաշխարհս։

Որում երկրորդ գրոյն անուանեն զոմն պատմագիր կոչեցեալ Փաւստոս Բուզանդացի, և վասն զի[1] կարգելոցն առ ի նմանէ ի տեղիս ուրեք՝ կարծեցին ոմանք բանք ինչ ոչ յարմարք և գիպողք, որպէս առաջնոյն ճշմարտութիւն Ագաթանգեղոսն կոչեցելոյ, յերկուացեալ հարկաւորին չասել զայնպիսի անպատշաճ կարգուն բիւզանդացւոյ ուսելոյ։

Քանզի Բիւզանդիոս այս փոքրիկ քաղաքիկ էր յառաջագոյն

---

[1] Յօր. ղէ,

շինեալ յառնէ ումեմնէ Բիւզաս անուն կոչեցելոյ, մերձակայ Թրակացւոց սահմանակցութեանն. զոր և ի գալն աստուածական հրամանով սրբոյն Կոստանդիանոսի ի վերայ անթիւ բազմութեանն Գոթաց ի պատերազմ, և առ եզերբն Դեկովբ[1] գետոյ արարեալ զիւր զօրու բանակատեղս, ուր[2] աստուածային տեսչութեանն լինէր արժանի, օրինակեալ նմա յայտնապէս յերկնից աստեղեայ լուսատեսիլ նշան կենսատու խաչին, բերելով շուրջ զինքեամբ ճառագայթից նշանագիրս, թէ Այսու յաղթեսցես. և նորա զարթուցեալ, յուսով երեւեցելոյ նմա սուրբ նշանին օգնականութեան՝ յաղթեալ վանէր զթշնամեացն բանակն. և խնդիր փութապէս գիւտին այսմ հոգացեալ առնել՝ ձեպով զիւր մայրն զերանելին Հեղինէ յԵրուսաղէմ առաքէր. և թէ որպէս անդ ի ձեռն ջերմ խնդրոյ սրբոյ մարդոյն[1] յայտնեցաւ կենաց փայտն, գիտէ ամենայն անձն ի նորին գրոց տեղեկացեալ՝ զգիւտ փրկութեան մերոյ։

---

[1] Ըստ Բ, Գ տպ. օտարոտի է մարտդ, և այլ պատմիչք առ Տիբեր գետով ասեն,

[2] Յօր. որ,

Եւ ինքն թագաւորն եկեալ ի յառաջագրեալ քաղաքին, որ անուանեալ կոչէր Բիւզանդիոս, և տեսեալ զսքանչելատեսիլ զամրութիւն տեղւոյն, թէպէտ և ծանրագոյն և բազում աշխատութիւն ի տեղւոջն ցուցանիւր, ոչինչ վեհերէր վասն օգտակարութեան կղզւոյն. վասն զի շրջափակեալ յամենայն կողմանց ծովածիր էր տեղին, բայց խուն ինչ ցամաքայատակ ճանապարհ առանց շրջագայութեանց ջրոցն, որ ելանէր յարեւմուտս կոյս քաղաքին։ Վաղվաղակի զձեռն ի գործ արկեալ՝ տայր հրաման հարթել զբար-

---

[1] Ըստ Բ, Գ առ. Թուղթ Ս. Մակար։

ձրաբերձ զբլուրսն որք ի Ներքս[1] ի կղզւոջն էին. և շինեալ քաղաք մեծապայծառ՝ զոր ըստ իւրում անուանակոչութեանն Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգմանի հայերէն Կոստանդիանոսի քաղաք. զոր ոմանք ըստ հռովմայեցի բարբառոյն՝ Պաղատն ասեն, որ թարգմանի արքունի։ Իսկ որ յառաջագոյն շինեալ Բիւզանդիոսն՝ էր թաղ մի յեզեր նորին քաղաքի, որ մինչեւ ցայսօր նորին անուամբ կոչի Բիւզանդիոս։ Եւ յայնմ հետէ վտակք գիտութեան որպէս ի թագաւորանիստ վայրի յորդեալ բղխեն ի քաղաքէն. որպէս և յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջուսեալքն՝ անդ փութան հանդիսանալ. և մինչև ցայսօր առաւելեալ տարածին յամենայն կողմանս նորա իմաստութեան վտակք։

Արդ յայնպիսում քաղաքի և ի

---

[1] Այլ օր. է Ներս։

մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս, այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր ի պատմութեան իւրում. քաւ, և մի լիցի: Ուստի և անհաւատալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն, ասեմ, թէ գուցէ այլ ոք յանդուգն և անհրահանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչպէս ըստ կամի. և կամ զի ուրուք անկարացեալ¹ դիպողս՝ այլաբանեալ փոխեաց, և անուամբ Փաւստոսին զիւրոյ յանդգնութեանն սխալանս համարեցաւ ծածկել. և այն յայտնի ցուցանի ամենայն հայեցողաց:

Քանզի են ոմանք ի Յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱսորիս բազումք՝ սպրդեցին գալ յայսպիսի յայրատութիւնս, արք ոգէտք և յանդգունք. գրեցին յինքեանց ճառս ընդունայնս և անպիտանաբանս, և

---

1. Ա, Բ օր. անկարեալ·

խառնեալ եդին ի գիրս գիտուն լսողաց. այլ ընտրող մտաց ճանաչի յայտնապէս գիտնոցն բանք և անմտացն շաղփաղփութիւնք:

Դ. Որում արթնամիտ խորհըրդականութեամբ ուշադրեալ այսմ ամենայնի, մտաւոր և քաջ այրն Վահան, տէրն Մամիկոնէից, զօրավարն Հայոց և մարզպանն, որ բազում և անհամար ուղղութեանց աշխարհիս Հայոց ի ժամանակս իշխանութեան իւրոյ եղև արարող անձամբ՝ և զայլս յորդորելով զբազումս: Սա որպէս և այլ ամենայն բարւոյ իրօք հոգացեալ զՀայաստան աշխարհի իւրս, առաւել ևս զայս ի դէպ և պատշաճ համարեցաւ. ի մնացեալ տեղւոյ պատմութեան երկրորդ գրոցն՝ աճեցուցանել յառաջ, և գրել յայնմհետէ զեղեալս յաշխարհիս Հայոց: Բազում զգուշութեամբ գրել և կարգել մի ըստ միոջէ զամենայն զհոգևորացն զառաքինութիւնս և զարանց քաջաց զկաութիւնն: Որպէս զի զհոգեւորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ջանկասցին մարդիկ ձգնութեանց նոցա, և պարտեալ եռանդեանն չարութիւնն՝ անդէն և անդ դադարեալ ցածնուն: Եւ քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝[1] անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց, անձանց և ազգի: Իսկ ծոյլքն և վատքն, հայելով յանձինս և լսելով զայլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք՝ ջանասցին լաւանալ: Այսպէս և բան հզօրին Աստուծոյ վճարէ զամենայն զոր կամի. ցասուցեալ ըստ չարի մեր գործոց՝ խրատէ ողոքեալ. զբարի գործ տեսանելով՝ ողորմի փութով:

Ըստ այսմ օրինակի զգուշացեալ ստիպեցուցանէ զմեզ տէրն Մամի-

---

1. Յաւելեալ յանձանց քաջութիւն. եդաւ ի Տփղ. տպագրէն:

կոնէից Վահան, զօրավարն Հայոց և մարզպան, որոյ հասեալ հրաման առ իս Ղազար փարպեցի. որ և սնեալ և ուսեալ առ ոտս առաքինակրօն երանելոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հօյակապ և յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ եղբօր Տաճատայ և Գոտարզի: Որ մինչդեռ էր ի տիս մանկութեանն, և այն ինչ դեռ տէգ մուրուացն ի վերայ գեղեցկատեսիլ վարդափթիթ ծնօտիցն բուսանէր, ի բաց ընկեցեալ արհամարհէր զամենայն վայելս կենցաղոյս. և զերկնաթռիչ զճանապարհէն յաւիտենից բարութեանցն ընտրեալ հետեւիւր, կեցեալ յանապատս ընդ արս ընտիրս ի[1] ճգնութիւնս մեծամեծս: Զորոյ և ոչ բաւական ոք է բանիւ բովանդակել զանբաւ վարուցն զառն նահատակութիւնն. այլ այսքան միայն ասացեալ՝ մնացուս-

---

1. Մեր Ա, Բ օր. և Ա տպ. ի—:

ցուք զբանս, որպէս թէ պատճառանօք գոլով ի մարմնի, տքնութեամբ և պահօք և անդադար աղօթիւք զցայգ և զցերեկ միշտ հոգևոր անսպառ վաստակօք զանմարմնոցն զվերին զօրացն բերէր յանձին զքաղաքավարութիւն. որ ոչ երբէք ի կեանս իւրում ընտրեաց ժամ աղօթից, այլ զտիւ և զգիշեր անհանգիստ նմա ժամ աղօթից էր։ Եւ կեցեալ այսպէս, մինչև առաւելեալ ծաղկէր հեր գլխոյն սպիտակն քան զխարտէշն, և կատարեալ զընթացս նահատակութեան իւրոյ՝ հանգչէր։ Եւ եդեալ ի մատրանն ի յԱգամակերտի. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչև ցայսօր և յաւիտեան, անուն սրբոյն յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, Վրաց և Աղուանից։

Եւ արդ յահագին այսպիսի մահուս զերծեալ անձինք շահաժողով ընչասիրացն, և հասեալք ևեթ խընդրոյն տենչիցն՝ որում ուշ արարեալ բաղձան, մոռացեալ զվիշտսն՝ բերկրեալ օգտիւքն զուարճանան. իսկ որչափ ևս առաւել գտանիցեն գանձուն յաւիտենից ժառանգաւորք, որք և զյօրինուածս բանից ստուգապատում կարգեալ պատմագրեցին, չառնել մարդահաճութեան բանից յաւելուածս՝ ի ցրումն ուկերաց, ըստ ասացուածի սաղմոսերգին, այլ զգուշական երկիւղիւն ընդ բազմաց լայնածաւալս[1] գիտնական բանի նաւեցին անվթար՝ ի սուրբ Հոգւոյն շնորհսն յուսով ապաւինեալք. ունելով փոխանակ փայտամած տախտակացն՝ զհիմն ուղղափառ հաւատոյ, և փոխանակ ի նմա բազմայարմար կազմութեան հնարիցն՝ զերրեակ ինքնութեանն միութիւն, ըստ անբաժան սուրբ Երրորդութեանն։ Եւ զի նաւացն

5478-2011

---

1. Բ, Գ տպ. ծանօթութեամբ [illegible] գրեն [illegible] ձեռ.

ՀԱՄՍ.Ը

տախտակք առանց բազմաց սատարելոյ չհնարին լինել յանօթ պիտանացու, քանի՞ եւս առաւել այսպիսի մեծ և հոգեւոր գործոյ ձեռնարկութիւն, ուր բազում կարեւոր պէտք էին առաքինի արանց օգնականութեան։

Ե. *Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ բռնադատեաց զտկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոց և մարզպան, ձեռնարկել ի գործ՝ որ ի վեր քան զկար գիտութեան մերոյ էր, քանզի ոչ էր քան զբան։ Զի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղապէս ուրուք տալ զանձն յայսպիսի վաստակս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալսն և*

կարճակտուր պատմել, բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն։ Եւ վասն զի են աստ պէտք բազում երկիւղագին պատրաստութեան, արդ նպաստեալ իմում տկար խորհրդոյս, աղաչեմ սատարեցէք ամենայն աղօթաւէր անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք. որովք արդարապատումն ճշգրտաբանեալ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ, հասից բարեխօսութեամբ սրբոց՝ յանալէկոծ և յապահով նաւահանգիստն։

Օրհնեալ է Աստուած։

ԴՐՈՒԱԳ Ա.

Զ. Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունեացն[1] յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արեւմտից աշխարհիս Հայոց՝ թագաւորին Յունաց՝ ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, եւ զկողմն արեւելից խոնարհեցուցանելով դառն եւ բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից. երթեալ այնուհետեւ նախարարքն Հայոց ի վիճակէ մասին արքային Պարսից, խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց։ Եւ արքային Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն յազգէն Արշակունեաց։

---

[1] Օր. մեր՝ ունին Արշակունոյն. Ուղղ. ըստ երկթգր. օր.,

Քանզի նախագոյն[1] թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան ըզթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց։ Իբրեւ եւս թէ խախտեալ և քայքայեալ մասնեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին իւրեանց, մեծաւ տրտմութեամբ խռովեալ տարակուսէր յանձն իւր․ տեսանէր նախ զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Հայոց․ և դարձեալ զմեծ մասն զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց՝ ունել ի բաժին արքային Պարսից․ քանզի թէպէտ և հասեալ բազում գաւառք այլ՝ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց, սակայն համեմատէին այն միայն Այրարատեան գաւառին։ Խորհուրդ բազմածուփ

---

[1] Այլ օր. ունին Նախնոյն։

հանդերձ իւրովք սիրելեօք ի մէջ առեալ թագաւորն Արշակ մտայոյզ լինէր ի սիրտ իւր ասելով․ Թէպէտ երբեք մինչև ցայժմ կամ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս, զգացուցեալ էր մեր նոցա գործով պատերազմի, որպէս և պարտ էր ճանաչել առն զփորձ միւսոյ եւս լաւագոյնի քան զինքն․ և թէ խոնարհեալ դիպէաք ի սէր առ միմեանս, սակայն եղբայր լինէաք հաշուեալ նոցա, պատուով և գահակցութեամբ ըստ կրսերագոյն մասին․ և ոչ բնաւ անկեալք ի բաժին՝ զանուն ծառայութեան ստացեալ կրէաք յանձինս։ Իսկ այժմ յաղագս ցասուցանելոյ մեր և մերոց առաջնոցն զերկայնամիտ և ըզքաղցր Աստուած, մատնեալ անկաք ի ստրկութիւն, և խոնարհեալք յանարգութիւն՝ անողորմութեամբ գըտեալք ի բաժանումն․ այլ և ըզգեղեցիկ տեղի հանգստի մերոյ և բնակութեան՝ տեսաք ժառանգեալ ամբարհաւաճ և անաստուած ազգին Պարսկաց: Վասն որոյ ընտրելագոյն լիցի ինձ թողուլ զանձկալի և զամենատենչ վայրս Արարատոյ՝ զբնիկ և զսեպհական տեղիս նախնեաց իմոց, և գնալ զկնի աղքատութեան, և կեալ բաղձալի կարօտանօք, քան թէ սիրել զկենցաղս աշխարհիս, զոր իբրև թողլոյ եմք ակամայ. և ընտրել զբնակութիւն մասին այսորիկ՝ քան բնակել անարգանօք ի մէջ անօրինաց, և կեալ միշտ ցաւօք մտաց զյերկար և կամ զկարճ կեանս անյայտ կենցաղոյս, և փոխանակել անարգութեամբ, ըստ որում[1] ոչ արժանի թագաւորական պատուոյ և շքեղութեան:

Է. Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լըքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Արարատու, ըզ-

---

[1] Մեր օր. ունին որում որ,

հոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյից կենաց և վայելչութեան և սթափութեան: Ըզդաշտս մեծատարածս և որսալիցս, զլերինս շուրջանակի գեղեցկանիստըս և պարարտարօտս, զհօծեալս երէովքն կճղակաբաժանիւք և որոճայնովքն, և այլովք ևս բազմօք ընդ նոսին. յորոց ի վերուստ ի կատարացն՝[1] ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման, արբուցանելով զդաշտս մատակարարէ անբաւ բազմութեամբ յստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղխ սերմանցն: Իսկ ի լանջակողմանն կամ ի սարահարթ տեղիս յոր գիպեցուցեալ զհայեցած Նորոգատեսիլ մարդոյ. հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանէն սփռեալքս պարարտաբոյսք և պարարտարօտք, պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն՝ զանթիւ արօտականս ընդունի իշանց և զանհամար[1] բոյլս վայրենի էրէոցն յագեցուցեալ, թանձրաթաղանթս, առոգագուակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանէն: Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթեգացն ընձեռելով առողջութիւն զօրացուցանէն զզգայութիւն խելացն և նորոգէն: Անդ գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց՝ ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոց, երագահաս

---

[1] Յօր. կատարածն,

---

1. Ա Բ օր. զանհամբոյր:

ախտահալած սպեղանիք, և կամ արմամբ՝ յերկարելոյն ի ցաւս՝ պատահացուցանէն առողջութիւն:

Իսկ դաշտացն ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կոչելով յինքեանց իբրև բանիւ, և առլցեալ որ զինչ և է բարով, եւս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրէն միանգամայն: Որք ոչ միայն երեւելութեամբն ցուցանէն վերաբերեալ զշահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն զառ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանէն, գանձել անձանց զշահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարէն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն, յօրինուածովքն՝ զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն ոսկէհուռս պաճուձեալս ընդելուզանէն: Այլ և մածմամբ ջրոց՝ համածին անուշութիւնս մատուցանէն զխորտկացն որոշութիւնս. Նաև զարմատս եղէգնասեր բուսոցն՝ ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ: Այլ և ի նմանէ ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս: Եւս և գետոցն գընացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ զշնորհս ընչից, և յագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր ջանացողացն:

Սնուցանէ յինքեան երկիրն ջըրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն. զկրկջաձայն քաղցրաձայն առասպարասէր վիմասոյզ սորամուտ երամս կաքաւացն և սալամբացն, և կամ զեղէգնաբնակ թփամուտ մացառաղօղ պարարտամարմին զանուշահամ ազգ աքարացն վայրենեաց. այլ և զջրասուզակ մամռախնդիր խօղակեր[1] մեծանձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն. և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն: Իսկ թակարթացն շըրջափակութեամբք, երագազիւքն և գահողովքն ելեալ ի յորս՝ գունդք նախարարացն որդւովքն ազատացն, ուր ոմանք զհետ ցռուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախականն և զաղեղնայինն եւեթ բարբառեսցին, և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովաձիգ արանցն ցուցանեն. և կէնք սուսերօք իբրև զմենամարտիկս՝ զսաստկանդամ երամս վարազացն գլորեցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն՝ դաստիարակօք և ծառայիւք, զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք, դարձեալ բերկիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով գընան ուրախացեալք:

---

[1] Թերևս խոզանակեր:

Որոց դէտակն կալեալ ըստ հանապազօրեայ սովորութեան՝ ջրայոյզ ջրածուփ ձկնորսացն մանկունք, ընթացեալք ի յառաջ նախարարագունդ որերոյն, ձկունս ի յորսոյ, և բազմազան վայրենի հաւուց ձագս և ձուս ի կղզեաց գետոյն՝ բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն: Յորոց ընկալեալ մասն ինչ նախարարացն ըստ կամի՝ պարգեւեն և նոքա ի յիւրեանց բերոցն ըստ առաւելապէս բաւականի ընծայաւորացն. և հասեալք լի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր յապարանս, շնորհէն և անպարապիցն մնացելոցն ի տան՝ զամբիծսն, առաւելապէս և առ օտարսն: Եւ տեսանել է յամենեցուն ընթրիս՝ որպէս

և շեղջակոյտս ինչ ի վերայ միմեանց զերէոցն բազմութիւն և զնոցուն գլխոց կարգմանց զառաջադրութիւն. յորոց ուրախացեալ բերկրին ձկնակերացն և մսակերացն անձինք. առաւել քան զխորտկաց անուշութեամբ՝ հոգեւոր ճաշակօք սաղմոսիւք և մարգարէական երգօք օրհնելով զպարգեւատուն Քրիստոս և զտուիչ և զլցուցիչ ամենայն բարութեանց:

Ը. Եւ արդ զայսպիսի զըղձակերտ գաւառ՝ զչնաշխարհիկ և զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւաւ ինչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան, ըստ բանի Գրոյն, զերկրին Եգիպտացւոց և զդրախտին Աստուծոյ, և զբնիկ սեփհական կալուածի ազգին Արշակունեաց՝ զքաղաքն Վաղարշապատ, զբնակութիւն ոստանին Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ շինուածս անթիւ ապարանացն, զանյագ զամենալի դաշտացն զբերկրումն, զհրեշտակացոյց հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ՝ մեծի եկեղեցւոյն, և զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն, որոց գտեալք անարժան ազգն Արշակունեաց՝ յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի, գտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն թագաւորին Պարսից և Յունաց. որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին:

Յաղագս որոյ յուղի անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն՝ որպէս ի գերութիւն՝ Արշակ թագաւորն Հայոց: Լաւ համարեցաւ երթալ զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ, և կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, քան թէ կալ ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց, և տեսանել հանապազօր զայպանումն հաւատոց, զթշնամանս սուրբ եկեղեցւոյ, զնախատինս զոր կրելոց էին պաշտօնեայք աստուածային ուխտին յանօրինաց, զթեթեւութիւն[1] իւրոյ ազգին և զթագաւորութեան՝ յամբարհաւաճ իշխանացն Պարսից տէրութեանն. ընտրելագոյն հաշուեալ անցուցանել զնուազ և ըղթուով ժամանակ կենցաղոյս այսորիկ քրիստոնէութեամբ ի խաղաղութեան, քան թէ սուտ փառօք որպէս զարհամարհոտ կեցեալ աստ և վրիպեալ յաւիտենից կենացն՝ մատնիլ յայրումն անշէջ հրոյն յաւիտենից: Եւ խորհելով զայս ամենայն՝ յանկարծակի ի միտս իւր

---

[1] Այսպէս ամենայն օր.։ Այլ ընթեռնուլ համարիմ ԹԵԹԵՒՈՒԹԻՒՆ՝ այն է սասանումն, խախտումն և անկումն (թագաւորութեան իւրոյ ազգին)։

տարակուսեալ, լքեալ զբարի ժառանգութիւն զնախնեաց իւրոց՝ գընայր ի ծառայութիւն թագաւորին Յունաց:

Թ. Իսկ յետ ժամանակի ինչ անցելոյ՝ բերեալ ատելութիւն նախարարացն Հայոց, որ ընդ Պարսից իշխանութեամբն էին, ընդ թագաւորին իւրեանց Խոսրովու, վասն երթալոյ տակաւին ի նուաղումն թագաւորութեան յազգէն Արշակունեաց, յաղագս առաւելեալ ի նոսա գործոց իւրեանց չարաց, ըստ բանից սուրբ քահանայապետացն առաջնոց և այլոց եւս բազում առաքինի արանց, որք անլուռ բերանով բողոք բարձեալ յանդիմանէին զանարժան գործս նոցա և զմատնումն ընդ լծով խիստ և անօրէն ծառայութեանն Պարսից, և նախագոյն բարբառէին: Երթեալ այնուհետև առնէին բանսարկութիւնս առ Շապուհ արքայն Պարսից, եթէ Խոսրով զինքն կարծեցուցանէ քեզ

սիրելի և հնազանդ, և այս ամենայն ցուցակութիւն[1] նորա առ քեզ ստութեամբ և ոչ ստուգութեամբ. վասն զի գաղտ ուխտ իւր և խորհուրդ ընդ թագաւորին Յունաց է, և միշտ հրովարտակօք և երթեւեկ պատգամաւորօք խօսի ընդ նմա ի խաղաղութիւն: Բայց դուք որպէս իմանայք հատուցանել նմա ըստ նորա խաբէութեանն, զայն դուք ոչ իշխէք: Եւ կարծէին բանսարկուքն ըստ իւրեանց անմիտ խորհրդոցն՝ կորուսանել զնա, և անձանց և աշխարհի բարւոյ[2] իմիք շինութեան լինել պատճառ. և ոչ գիտէին եթէ տակաւին ի մաշումն և ի չար ծառայութիւն վասն մեղաց իւրեանց մատնեալ լինին յԱստուծոյ:

Իսկ զայս լուեալ խնդութեամբ և ախորժակ ունկնդրութեամբ Շապհոյ արքային Պարսից, հրաման տայր

---

1. Օր. Տփղ. ունի ցուցակութիւն,
2. Ա. օր. Բարւոյ. Ուղղեցաւ ըստ Բ. օր.,

վաղվաղակի հրովարտակաւ՝ զԽոսրով ի դուռն կոչել. և նորա չզգացեալ զբանսարկութիւն իշխանացն Հայոց, վաղվաղակի որպէս առ իւր իշխանս և բարեկամս՝ ի դուռն հասանէր: Եւ Շապհոյ թշնամանեալ զնա պատուհասէր, այլ թերևս և վասն յօժարութեամբ մերժելոյ զնա ի թագաւորութենէն՝ և ոչ յանդիման կամեցեալ առնել զնա չարախօսացն, վաղվաղակի մերժեալ ընկենոյր զԽոսրով յիշխանութենէ իւրոյ թագաւորութեանն. և ուխտէր՝ այլ ոչ ևս տեսանել զաշխարհն Հայոց, անդէն կալեալ յաշխարհին Պարսից պահէր: Իսկ իբրև մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն՝ խընդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց. և նա հաւանեալ թագաւորեցուցանէր նոցա զՎռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու, յազգէն Արշակունեաց: Եւ թագաւորեցուցեալ զՎռամշապուհ՝ արձակէր ի Հայս:

Ժ. Ի ժամանակս սորա թագաւորութեանն տուաւ շնորհ հոգողութեան յամենախնամէն Աստուծոյ առն միում Ճշմարտի՝ Մաշթոց անուն կոչեցելոյ, որ էր ի գաւառէն Տարունոյ, ի Հացեկաց գեղջէ, որդի առն որում անուն էր Վարդան. ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դըպրութիւն զյոյն, զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն. վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ ըզգործ թագաւորին Հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակացն: Եւ սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանաց, յետ այնորիկ տենչացեալ կարգի վանականութեան՝ երթայ ի վանս բազմութեան եղբարց, և ընկալեալ զկերպարանս վանականութեան՝ լինէր ընտիր յամենայնի և երևելի. հրաժարէր յամենայն աշխարհազբօս երկրաւոր զբաղմանց: Ապա յանապատական կրօնս փոխեալ՝ զարմանալի երեւէր և հռչակաւոր· և կայր յանապատս ի բազում տեղիս քարանձաւաց, մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարիւք· բազում և այլ սուրբ վարուք կրօնաւորօք և աղօթասէր եղբարբք, մինչև յամս հինգերորդ՝ արքային Հայոց Վռամշապհոյ եղբօր Խոսրովու։ Եւ զայս եթէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան՝ աշակերտի նորին երանելոյն Մաշթոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա· և զիւր հայերէն նշանագրացն, թէ երբ կամ ուր, և կամ յո՞յր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին Հայոց Վռամշապուհոյ ջերմեռանդն խնդրելով· զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջագրեալ այրն հոգեւոր Կորիւն· ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեաւ։

Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշթոցի՝ ընկալեալ յամենախնամ մարդասիրէն Աստուծոյ՝ զօրացոյց զնա հոգւով ողորմութեան իւրոյ։ Քանզի հոգացեալ յարաժամ տըրտմէր երանելի այրն Մաշթոց՝ տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս· որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս օտարի գիտութեան։ Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց օտարի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս· յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, յանլրութենէ լեզուին օտարւոյ։ Զայս ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշթոցի, և փղձկացեալ յանձըն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուիս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով՝ շահել զոգիս արանց և կանանց առհասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն, զօրացեալ ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ։ Եւ եկեալ առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Սահակ, զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ՝ Զօրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից՝ զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն՝ բերեալ առ իս՝ ուղղեմ զայն. քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես։ Բայց նախ արժան է մեզ զգացուցանել Թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարեւոր խնդրոյ. վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազում՝ առեալ բանք յեկեղեցւոյ՝ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է որում ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն

առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում. և Թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց։

Եւ մտեալ սրբոյ կաթուղիկոսին Հայոց Սահակայ, հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ առ Թագաւորն Վռամշապուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն Թագաւորն զխօսեցեալսն վանականին վասն նորին իրացն ընդ նմա, զոր և նորա պատմեալ ուրախացոյց։ Եւ նոցա լուեալ զայս ի Թագաւորէն, փութացուցանէին զնա ասելով, թէ Ձեպեա՛ յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այսորիկ՝ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայն բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն Թագաւորութեանդ քո, և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց։ Եւ Թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ, որ ի ժամանակս Թագաւորութեան նորա զայսպիսի հոգեւոր կենաց փափագ ժառանգեաց յաշխարհիս Հայոց։

Վաղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ ոմն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց՝ հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երէց Հաբէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն կային։ Եւ երանելոյն Հաբէլի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ և լուեալ զիրսն՝ փութանակի հասանէր առ սքանչելի եպիսկոպոսն Դանիէլ։ Եւ նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն. և առեալ ի նմանէ, առ Թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասանէր։ Իսկ արքային Հայոց սուրբ կաթողիկոսաւն Սահակաւ և երանելեաւն

Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէ՝ ուրախ լինէին։ Բայց տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց համներգաբար, մուրացածին այնուիկ գծագրութեամբ։

Զկնի այսորիկ ինքնին Մեսրովբ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցանէ յԵդեսիա առ Պղատոն ոմն Ճարտասան հեթանոս, իշխան դիւանին։ Եւ նորա խնդութեամբ ընկալեալ՝ և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն՝ յինքն առեալ և շատ ջանացեալ և ոչ օգտեալ, զտգիտութիւն խոստովանեաց հռետորն։ Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու՝ վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն դրեան ի նոյն դիւանէն Եդեսեայ՝ և գնացեալ՝ քրիստոնէութեան հաւատոց, որոյ անունն Եպիփանոս․ զոր խնդրեալ՝ գտցես, լուցանել զփափագդ քո։ Յայնժամ Մեսրովբայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ։ Քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռուփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրովբայ և յայսմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի․ և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ․ այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն՝ թաթ ձեռին աջոյ գրելով ի վերայ վիմի․ զի որպէս ի ձեան՝ վերջք գծին կուտակեալ ունէր քարին։ Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք ամենիցն՝ որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռուփանոսիւ, կերպաձեւեալ ըզգիրն առձեռն պատրաստ Մեսրովբայ, փոխարկելով զհայերէն աթութայն ըստ անսայթաքութեան սիղոբայից ի հելլենացւոյն։

Եւ այսպէս դիպեալ դիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշթոց, յերիւրելով զնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրաճնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան․ տալով նմա օգնականս և այլ արս բանիբունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին սակաւ մի և նոքա որպէս երանելին Մաշթոց՝ մերձաւորեալք ի յունարէն հեգենայսն․ որում առաջնոյն անուն էր Յոհան՝ ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին Յովսէփ՝ ի Պաղանական տանէն, և երրորդին Տէր՝ ի Խորձենոյ, և չորրորդին Մուշէ՝ ի Տարօնոյ։ Որոց օգնելով զօրէր երանելին Մաշթոց, հանդիպեցուցանէր զհայերէն աթութայն ըստ կարգման սիլովբայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթուղիկոսէն Իսահակայ՝ զաթութայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունին։ Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անխախ ուղղակի՝ առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբաղում գիտնովք Յունաց. եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն և հռետորական յորդասաց յայտնաբանութեան. եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր։

Կարգեալ այնուհետեւ Փրկչին առաջնորդութեամբ՝ զգիր գրենոյն հայերէնի, և հելլենացին ուղղեալ յօրինուածս, ցանկային կարգել դըպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ. քանզի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն, զերծեալք

ի լոյս՝ խնդային։ Բայց տարակուսեալք կասէին յանչքութենէ գրոց սրբոց. քանզի ոչ գոյին դեռ եւս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ։ Եւ երանելին Մաշթոց և որ ընդ նմա պատուական քահանայք էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառ. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսման։

ԺԱ. Ապա ժողովեալ ամենայն ուստ քահանայք աշխարհի Հայոց, հանդերձ երանելեաւ Մաշթոցիւ և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտերօք՝ առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգեւոր, և թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուգ ի հայ բարբառս։ Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածայինն շնորհ ի ցանկութիւնս յայս՝ կարգել զվաղընջուցն գտեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր. այլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով զղջանային զմնոտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց. մինչև գըտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօրանայ։ Համայն և զայս վաստակոյս կարգումն, և քոյին առաքինութեանդ գիտութեամբ եղիցի, և կատարեա։ Արդ՝ որպէս և սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանկանսն անվնաս աջով հզօրին ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ, պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի՝ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամանս այսորիկ, ըսկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ, և լինել նմանօղ սուրբ նախնոյն քում, որ յանգիտութենէ ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց։ Արդ և դու յանօգուտ մոլորաբանութենէն ի սոյդ հոգէշահ և եկեղեցազարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, լնուլ զպակասութիւնս զայս մնացեալ ի սուրբ նախնեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած, զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ։ Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան ի վերին օգնականութենէն, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր ի քեզ զվարս երանելոյ հօր քո Ներսէսի։

Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն Հայոց սուրբն Սահակ՝ ի թագաւորէն Հայոց Վռամշապհոյ և յերանելոյն Մաշթոցէ և յամենայն ուխտէ քահանայից, եւս առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց, զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զՓրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս։ Եւ կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ՝ պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան.

և անվեհեր ջանալով զցայգ և ըզցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի սուրբ Հոգւոյն. և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն ըզլուսաւոր և զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով։

Եւ տարեալ ի գլուխ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոյն, կարգեցան վաղվաղակի յայնմհետէ դըպրոցք հօտին ուսմանց, բազմացան դասք դըրչաց ելևելս առնելով ըզմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց[1] ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց։ Որ շահեալք լի հոգևոր օգտիւ, ընթանային խընդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր ի տունս, մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս ի հրապարակս և ի փողոցս, և առանին։ Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ինոսա ուխտ կուսակարանաց ընծայիւք· համապազաբուղխ հոսէին վտակք յասողացն մեկնութեանց, որք զծածուկս մարգարէից բերելով ի յայտնութիւն՝ սեղանս ամենալից հոգեւոր խորտկօք դնէին առաջի ամենայն ժողովրդեան· յորոց ճաշակեալ իմաստախնդիր մարդոց՝ քաղցրանայ ի քիմս նոցա ըստ բանի սաղմոսերգին՝ բանք վարդապետութեան՝ քան զխորիսխ մեղու։ Եւ զի միանգամայն իսկ ասացից ըստ բանի սուրբ մարգարէին Եսայեայ, թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց՝ գիտութեամբ Տեառն ի հոգեւոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ, իբրեւ ըզջուրս բազումս որ ծածկէն զծովս։ Եւ շնորհիւ ամենախնամ փրկչին

---

[1] Թուի ժողովելոց։

Քրիստոսի կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վռամշապհոյ, ըստ յառաջագոյն գրեցելոց։ Եւ լուսաւորեալ զաշխարհս Հայոց, եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս քսան և մի[1], և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանդիսիւ յաշխարհին Հայոց։

ԺԲ. Յետ այսորիկ մեռաւ և Շապուհ արքայն Պարսից, և թագաւորեաց Վռամ որդի նորա որ էր Կրման արքայ· յորմէ խնդրեցին իւրեանց Հայք թագաւոր զնոյն միանգամ Խոսրով զեղբայր Վռամշապհոյ, զոր յառաջնումն բանարկութեամբ ետուն մերժել զնա Հայք՝ Շապհոյ[2] արքային Պարսից ի թագաւորութենէ Հայոց։ Եւ նորա կատարեալ զխնդիրս նոցա, թագաւորեցուցանէր դարձեալ զխօսրով՝ զայր յոյժ ծեր։ Եւ եկեալ խօսրով՝ յաշխարհս Հայոց, և կեցեալ ամիսս ութ՝ վախճանէր, առ հարսն յաւելեալ։

---

[1] Ընդ բնաւ 21 ամ թագաւորեաց.

[2] Իմա, Հայք՝ ետուն Շապհոյ մերժել զԽոսրով.

Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւորէր Յազկերտ եղբայր Վռամայ՝ որդի Շապհոյ ի վերայ աշխարհին Պարսից։ Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց, թագաւորեցուցանէր ի վերայ նոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ ըստ անուան հօր իւրոյ. խորհեալ չարաչար իմացմունս առնն ի միտս իւր. առաջին զայս, եթէ աշխարհն Հայոց մեծ է և օգտակար, սահմանակից և դրակից է Յունաց իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ բազումք են հնազանդեալք յազգէն Արշակունեաց. որոց գուցէ գորովեալ առ միմեանս ազգացն՝ ըստ օրինի եղբարց, որք ընդ մերով և

ընդ Յունաց իշխանութեամբն են, և եկեալք ի միաբանութիւն խօսեսցին ի խաղաղութիւն ընդ թագաւորին Յունաց, և ընդ նորա հնազանդութեամբ յօժարեալք՝ ապստամբեսցին ի մէնջ։ Եւ որպէս կալեալ է զմեզ բազում անգամ յաշխատութեան՝ առաւել ևս յաւելուածով նոցա՝ անհանդիստ առնիցեն զմեզ պատերազմաւ։ Եւ երկրորդ, զի յօրինացս մեր օտար են և ատեցողք, և միահաւան ունին զպաշտօն նոցա և զօրէնս։ Արդ ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորութիւնս մեր. և նոքա ցանկ երկիւղիւ և դողութեամբ ծառայեն մեզ, և օտարոտիս ինչ և չնաստակարս ինչ ոչ խորհին։ Է զի և սովորութիւն առնուն յանկչել յօրէնս մեր, համապագ խօսիւք ընդ միմեանս և ընդելական բարեկամութեամբ ի զբօսմունս որսոց, ի խաղս որ լինին ի մէջի նոցա. այլ և ամուսնութեանց տուրեւառիւք հաղորդեալք առ միմեանս, զատուցեալք այնուհետեւ որոշին ի սիրոյ նոցա և յօրինացն:

Եւ սորա խորհելով զայս այսպէս, չգիտէր զբան Սուրբ Հոգւոյն՝ որ ասէր, թէ Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ընդունայն: Որ փութանակի և արգեամբք վըճիռ ետուն գրեալքն՝ իւրացն եղելոցն. քանզի չեւ եւս յերկարեալ ի թագաւորութեանն՝ մեռանէր Յազկերտ. ի նմին աւուր և զորդի նորին զՇապուհ՝ զոր ի տեղի Արշակունւոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս, անդրէն ի դրան մարդկանէ դաւով յարքունիքն սատակեցին[1]:

---

[1] Ասոր ցվախճան տեսլեան Ս. Սահակայ, ուղղեցաւ ըստ օրինակին համեմատելոյ ի ձեռն. Հ. Կարապետի մերոյ Եաայեան ի Կ. Պոլիս. (1840).

ԺԳ. Եւ[1] յետ մահուանն Յազկերտի որդւոյ Շապհոյ թագաւորին Պարսից թագաւորեաց Վռամ որդի նորա ի վերայ աշխարհին Արեաց: Եւ եկեալ իշխանք աշխարհին Հայոց առաջի Վռամայ արքային Պարսից, խնդրեցին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց: Եւ նա թագաւորեցոյց ի վերայ նոցա զԱրտաշէս որդի Վռամշապհոյ, յազգէ թագաւորացն Հայոց:

Եւ էր այս Արտաշէս[2] այր մանուկ և իգամոլ, և բազում անառակութեամբ վարէր զթագաւորութիւնն: Եւ չկարացեալ այսպիսի զեղխ և մոլեկան վարուց թագաւորին Արտաշէսի տանել նախարարքն Հայոց, ժողովեցան միահամուռ ամենեքեան առ մեծ քահանայապետն Հայոց առ սուրբն Սահակ, որ էր յազգէն Պարթեւաց, որդի սրբոյն Ներսէսի, և ասէն ցնա. Ոչ եւս կարեմք այսպիսի անօրէն և պղծագործ թագաւորի համբերել, վասն զի լաւ համարիմք մեռանել՝ քան եթէ զայսպիսի գործ աղտեղութեան հանապազօր տեսանել և լսել: Այլ և մեծի և պատուական և երկնաւոր խորհրդոյն հաղորդել ի խղճէ մտաց. հանապազ տեսանել զայսպիսի պղծագործութիւն և լռել[1]: Քանզի ուսեալ եմք ի քէն և ի քո նախնեացն վարդապետութենէ, թէ ոչ միայն որ գործենն պարտական են, այլ և որ յանձն առնուն: Արդ. նախ քեզ պարտ է այսպիսի անհնարին աղէտիս խնդրել հնարս, և բառնալ ի միջոյ զայսպիսի ամբարշտեալ թագաւոր, որ այսպէս յայտնի իբրեւ զանհաւատ արհամարհանօք առ ոտն հարկանէ

---

[1] Ամենայն տպ. սուղ ինչ յետոյ սկսանին զԺԳ Գլ., — Ա. օր. աստի սկիզբն առնու.

[2] Կամ Արտաշիր. հմմ. Մով. Խոր. Գ, ԾԸ–ԿԵ.

զսրբութիւնն, և աներկիւղ կամակարութեամբ գործէ զաղտեղի գիճութիւնս:

Եւ լուեալ զայսպիսի բանս սրբոյ քահանայապետին Սահակայ ի նախարարացն Հայոց, պատասխանի տուեալ՝ ասէ. Իբրեւ ոչ թէ նոր ինչ լսելով այսօր ի ձէնջ ճանաչեմ զայս ասացեալդ ձեր. այլ գիտեմ զի զկծեալ սրտիւք խօսիք զայսպիսի խօսս: Եւ ինձ անհնար է ասել եթէ այլաբանք ինչ և ոչ ստուգութեամբ պատմին ասացեալքդ ի ձէնջ. բայց արդ՝ որպիսի հնարիւք ըստ արժանի հոգեւոր մարդկան պարտ է զելս իրացդ գտանել, զայն արժան է խորհել և առնել ամենեցուն մեր: Եւ նոցա առհասարակ պատասխանի տուեալ ասեն ցսուրբ կաթուղիկոսն Սահակ, թէ Մեք և ոչ մի ինչ ելս իրացդ կարող եմք գտանել, բայց բողոքել թագաւորին Պարսից՝ ի բաց բառնալ զդա ի թագաւորութենէ այտի, որում ինքն իսկ ինքեամբ չեղեւ արժանի ժառանգելոյ։ Այլ մեր քան զայդ ոչ իմանալ ինչ է եւ ոչ առնել. այլ զքեզ աղաչեմք միաբանել այսմ խորհրդոյ ընդ մեզ. եւ չէ պարտ այդպիսի սրբութեան խորշել զայլ ինչ, եւ պղծութեան գործոյ Թագաւորին հաղորդ լինել։

---

[1] Այլ օր. ունին լսել:

Իսկ սուրբ հոգեւոր կաթուղիկոսն Սահակ երբեւ լսէր զայս ամենայն ի նախարարացն Հայոց, եւ ստուգիւ ճանաչէր եթէ ի նոյն միտս եւ ի նոյն խորհուրդս հաստատեալ կան բովանդակ աւագանի աշխարհին, ի մեծ տրտմութեան եւ յանմխիթար սուգ ընկղմեալ լինէր. եւ հեղեալ արտասուաց վտակս առաջի բազմութեան նախարարացն Հայոց, հրաժարէր առնել պատասխանի բանիցն մինչեւ յաւուրս բազումս։ Եւ արգելեալ զինքն ի սենեակ՝ ձայն ողբոց եւ արտասուաց միայն լսէին որք հուպ լինէին ի դուռն սենեկին. քանզի տեսանող ակամբն եւ ի զօրութենէ Սուրբ Հոգւոյն հայէր այրն Աստուծոյ ի սպառ սպուռ զկործանումն աշխարհիս Հայոց։ Իսկ յետ բազում աւուրց համարձակեալ ոմանք յեպիսկոպոսաց որք հանապազ պարապէին առ դուռն սրբոյն, չկարացեալ եւ առ վայր մի տեւել յառատաբուղխ եւ ի շնորհալից վարդապետութենէ առնն, որ քաղցր էր ի ճաշակելիս խորհրդոց հոգեւոր իմաստուն լսողաց, ըստ բանի մարգարէին Դաւթի, քան զխորիսխ մեղու, եւ այլք ի պատուական երիցանց եւ ի սարկաւագաց, որք ի նորին սուրբ ուխտէ հայրապետին էին, եւ ոմանք յաւագ ազատանւոյն Հայոց, համարձակեալ մտանէին ի ներքս, եւ խօսէին ընդ նմա բանիւք ողոքանաց։ Ընդ որ սփոփեալ սակաւ մի սուրբ քահանայապետն՝ ըստ հոգեւոր գիտութեան եւ իրաստու, զոր միացեալ էր ընդ ինքեան ի մանկութենէ իւրմէ, լռեալ դադարէր առ վայր մի։

Իսկ յետ բազում աւուրց դարձեալ ժողովեալ առ նա միաբան ամենայն ազատագունդք աշխարհին Հայոց, և զնոյն բանս երկրորդէին առաջի կաթուղիկոսին, խնդրէին ստիպով ի նմանէ և զնորա միաբանութիւն ընդ ինքեանս։ Իսկ սուրբն իբրև տեսանէր, եթէ ոչինչ ամենևին եղեն կասեալք յառաջին կամացն և ի խորհրդոյն, վասն զի օր ըստ օրէ յաւելուած աղտեղի գործոց թագաւորին, առաւել քան զառաւել աճեցուցանէր զկորստեան անձին իւրոյ՝ զմիաբանութիւն իշխանացն, ձայն բարձեալ մեծագոյն ողբալով ասէր ցամենեսեան․ Ես ասէի, թէ դուք իսկ, որպէս ուսեալք յԱստուծոյ խորհիք հոգևորապէս․ և տարեալ վայր մի թերութեան առնն, արտասուօք և թախանձեցուցանելով զամենողորմ զՓրկիչն զտէր մեր Յիսուս Քրիստոս՝ յաղագս գիւտի կորուսելոյն խնդրել հնարս․ զի ըստ աւազանին ծննդեան, թէպէտ և մեղաւոր է, սակայն եղբայր

և մարմին մեր է․ յիշելով զվարդապետութիւն սուրբ առաքելոյն Պաւղոսի, զոր աւանդեալ ուսոյց ձեզ հոգևոր հայրն ձեր և քահանայապետն տէր Գրիգոր․ Զի եթէ վշտանայ ինչ մի անդամն, ասէ, վշտանան անդամքն ընդ նմա․ և եթէ փառաւորի ինչ մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա։ Յիշել պարտ է և զմտաւ ածել զվիշտսն և զնեղութիւնսն, զբանտսն և զկապանսն զսրբոյն Գրիգորի, զպաղատանսն և զաղօթսն զոր վասն ամենայն աշխարհի՝ զփրկութիւն ամենեցուն խնդրեալ յԱստուծոյ եգիտ, և զամենեսեան յանհաւատութենէ՝ շնորհիւ Սուրբ Հոգւոյն հաւատացեալս արար․ զդիւաց մոլորութիւնս խափանեալ՝ փախստական արարեալ հալածեաց ի ձէնջ, զճշմարիտ հաւատ աստուածգիտութեան՝ սերմանեալ ծաղկեցոյց ի միջի ձերում։ Եւ ձեզ ըստ նմին օրինակի պարտ է ի վերայ մեղուցեալ անդամոյն խնդրել ողորմութիւն, և ոչ անօրինաց մատնելով ի ծաղր և յայպանումն տալ զսուրբ խորհուրդ հաւատոյս մերոյ։ Յիշեցէք զսուրբ հայրն իմ և զձեր զվարդապետն և զուսուցիչն, որ և զփոխեալն յանասնական բնութեան կերպարանս, հառաչանօք և անդադար խնդրուածովք ածեալ ի գութ զամենեցուն արարիչն Քրիստոս, ի նոյն հաստատեաց ի մարդկային բնութիւնս։ Եւ դուք նորին աշակերտեալք հոգեւոր վարդապետին՝ միաբանութեամբ առ հասարակ արք և կանայք ծերք և տղայք զխընդրուածս և զարտասուս ի մէջ առեալ հաշտեցուցէք զամենաշնորհն Աստուած, որում շնորհաւորն է ամենայն, և ոչ ինչ տկարանայ առաջի ահեղ զօրութեան նորա. և նա վճարէ մարդասիրապէս զյոյժ դժուարինս կարծեցեալդ մեզ. որ և ես իսկ վճիռ միամիտ և անթերահաւատ խնդրողացն, ասելով անսուտն Աստուած, թէ Ուր իցեն երկու և երեք

ժողովեալ յանուն իմ՝ զամենայն զոր ինչ և խնդրեսցեն ի Հօրէ իմմէ՝ տացի նոցա։ Իսկ արդ եթէ երկուցն և երից աներկմիտ խնդրողացն զամենայն հայցուածս կատարէ Աստուած, ո՛րչափ ևս առաւել զայսքան բազմութեան խնդրողաց կատարէ փութով. մանաւանդ թէ անձանձրոյթ ևս լինիցին խնդիրքն և ջերմ հառաչանօք և անթերահաւատ յուսով. զի՞րդ ոչ առաւել ևս քան զհայցուածս մեծամեծ իւրս վճարեսցէ։

Աւաղ վասն իմ որ ասէքդ եթէ միաբանեա ընդ մեզ, ինձ քա՛ւ լիցի մատնիչ լինել հօտին իմոյ, և անհաւատից զիմ հօտի զմոլորեալ ոչխարն յայպանումն մատնել։ Զի թէպէտ և մեղաւոր է, այլ դրոշմեալ է սուրբ աւազանին ծննդեամբն. հմուտ է փրկութեան խնդրոյն, լուեալ զլուր քարոզութեան աւետարանին կենաց։ Արդ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր ոչխար եկեղեցւոյ իմոյ, փութայի և ոչ յապաղէի. այլ յամենայնից ախտացեալ անձն մատուցանել զիմ հիւանդացեալ հոգւով որդի, ո՛չ երբէք¹ առնում յանձն: Զի եթէ էր հաւատացեալ Թագաւոր, առաջի նորա առնել զայսպիսի յանդիմանութիւն՝ թերևս համարձակէի, յուսով գիւտի կորուսելոյն. այլ կշտամբել յաղագս մեղաց զհաւատացեալս առաջի անհաւատից՝ ոչ հաւանիմ, որ հանապազ ուսուցիչ լեալ եմ բողոքոյն² Պաւղոսի՝ որ ասէ. Իշխէ՞ ոք ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում՝ դատել առաջի անիրաւաց և ոչ առաջի սրբոց. եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհս դատեն. և եթէ ձեօք դատի աշխարհս՝ ապա ո՞չ էք արժանի անարգ ատենից: Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս. զերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգս՝ եկեղեցւոյ դատաւորս նստուցանեմք. առ ամօթոյ ձերոյ ասեմ: Նոյնպէս, ասէ, Ոչ ոք գոյ իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ եղբօր իւրում. այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն ի մէջ անհաւատից: Եւ արդ որ ուսուցի բազումս, զանձն իմ ընդէ՞ր ոչ ուսուցի: Այլ ինձ լաւ լիցի մեռանել, քան եթէ զոք ի հաւատացելոց՝ վասն անարժան գործոյ՝ մատնել անօրինաց: Զի թէպէտ և պոռնիկ է, այլ զկնիք հօտին Քրիստոսի յանձին իւրում կրէ. գիճացեալ ասէք մարմնով, այլ ոչ անհաւատ և հեթանոս. զեղխ՝ և ոչ կռապաշտ, և ոչ կրակապաշտ. տըկարացեալ է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց. ցաւով միով ախտանայ, այլ ոչ վարակեալ ամենայն ախտիւք՝ իբրև զամբարիշտ: Եւ զի՞րդ զսակաւամեղն՝ ամենայնիւ ամբարշտելոցն մատնել խորհիմք ի

1. Օր. Հ. Կր. Ես. չունի Երբէք.
2. Օր. Հ. Կր. Ես. ունի զԲողոքս,

սատակումն․ քա՛ւ ձեզ, որդեկք, մի խորհէք զխորհուրդդ զայդ, և զձեր բնիկ տէրդ՝ կորուսանել մի ջանայք, որպէս ոմանք ի ձերոց նախնեացն:

Զայս և առաւել ևս քան զայս բանս և խրատ բազում աղերսիւ և արտասուօք խօսեցեալ անձանձրոյթ սրբոյ կաթուղիկոսին ընդ աւագանին Հայոց, ոչ կարաց զնոսա յառաջին միաբանութենէն և ի խորհրդոյն՝ զոր հաստատեալ էին ի միտս իւրեանց՝ ի բաց դարձուցանել: Քանզի եկեալ հասեալ էր ի վերայ նոցա նզովք սրբոյ առնն Աստուծոյ Ներսէսի, անկանել նոցա ընդ լծով ծառայութեան չար հեթանոսաց, և ոչ դադարէր՝ մինչև ի գլուխ զգործն հանէր: Իսկ նոցա միաբանութեամբ առհասարակ պատասխանի արարեալ սուրբ հայրապետին և ասացին, թէ Փոխանակ զի ոչ լուար ձայնից մերոց, և ի միաբանութենէ մերմէ զանձն քո ի

բաց մերժեցեր, գիտասջիր, զի որպէս եղեալ է ի մահ չթագաւորել սմա այլ ևս ի վերայ մեր, խոստանամք՝ չքահանայանալ և ոչ քեզ առ ի յերկարս՝ ի վերայ աշխարհիս մեր: Եւ զայս այսպէս ասացեալ ամենայն աւագաց տանուտերանց աշխարհիս՝ առաջի հայրապետին Սահակայ, ելին զայրագնեալք ի խրատուէ Սրբոյն, և այլ ոչ ևս կամեցան դառնալ առ երանելի հայրապետն Սահակ․ զի էր զնոսա շրջափակեալ և պաշարեալ անէծք երանելի հայրապետին Ներսէսի:

ԺԴ․ Եւ յայնմհետէ միաբանեալ գնացին ի Դուռն արքունի․ և երթեալք յանդիման եղեն արքային Պարսից Վռամայ: Ընդ որս էր և երէց մի Սուրմակ անուն ի գաւառէն Բզնունեաց, ի գեղջէն որ կոչի Արծկէ, ի տոհմէ քահանայից գաւառին[1], մեկուսանայր․ որով միաբանեալ ընդ նախարարացն[1] Հայոց, ձեղքեալ ի խրատուէ սրբոյ քահանայապետին Սահակայ, խօսէր բանս անհանճարս և առաւել աղտեղիս քան զամենայն նախարարս Հայոց՝ զթագաւորէն Արտաշեսէ, առաջի աւագանւոյն Պարսից. շնորհ առնելով նախարարացն Հայոց՝ յաղագս խոստանալոյ նմա ոմանց յաւագանւոյն Հայոց զաթոռ կաթուղիկոսութեան աշխարհիս Հայոց։ Եւ ծանուցին կանխագոյն զպատճառս տրտնջման իւրեանց՝ Սուրենայ և այլ աւագանւոյն Պարսից. քանզի Սուրէնն պահլաւ՝ էր ի ժամանակին յայնմիկ հազարապետ ի դրան արքունի, հանդերձ նովաւ և այլ մեծամեծօք դրանն՝ հասուցին զբանն ամբաստանութեան առ Վռամ արքայն Պարսից։

---

[1] Յօր. է գաւառին:

Եւ լուեալ արքային Պարսից այսպիսի բողոք յազատանւոյն Հայոց,

---

[1] Տես ձձ. օր. Նախարարն,

ոչ տայր թոյլ նոցա խօսել առ վայր մի առանց գալոյ ոսոխին ի դուռն։ Վաղվաղակի դեսպան արարեալ ըզթագաւորէն Հայոց Արտաշեսէ՝ առ ինքն ձեպով գալ հրամայէր. ընդ նմա գրէր գալ և մեծ քահանայապետին Սահակայ։ Եւ եկեալ նոցա ի դուռն, հարցանէր առանձին արքայն Պարսից զթագաւորն զԱրտաշէս, եթէ զինչ իրք են վասն որոյ ամբաստանեն զքէն նախարարքդ Հայոց։ Եւ նորա պատասխանի տուեալ ասէր. եթէ, Ամենեւին ոչ գիտեմ զինչ խօսինդ և չարախօսեն դոքա զինէն. այլ որպէս սովոր են դոքա ի բնէ թշնամանել զտեարս իւրեանց, ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զչար կամաց իւրեանց զխնդիրս. քանզի միշտ իշխանափոխք լեալ են և տիրատեացք։ Եւ թագաւորն Արեաց Վռամ հրաման տայր՝ միայն ընդ միայն կոչել առ ինքն զսուրբ կաթուղիկոսն Հայոց զտէր Սահակ. քանզի մեծարէր զնա, նախ՝ վասն տոհմականութեան առնն, և դարձեալ զի առաջի անհաւատից յարդոյ և պատուական ցուցանէր զսուրբ ծառայս իւր Աստուած. և հարցեալ ցերանելի կաթուղիկոսն, կամէր լսել ի նմանէ զամենայն բանից զչարախօսից թագաւորին Հայոց։ Իսկ նորա պատասխանի տուեալ ասէր. եթէ, Ոչ գիտեմ զինչ խօսին դոքա զնմանէ. նոքին իսկ ասեն և դուք լուարուք ի նոցանէ. և որպէս ասենն առաջի ձեր՝ յանձինս իւրեանց ընդունին զհատուցումն։ Զիս ինչ այդպիսի խնդիրս բանից մի հարցանէք, զի ոչինչ լսելոց էք յինէն յաղագս չարախօսութեանդ այդորիկ չար ինչ և կամ բարի։

Ապա թագաւորն Վռամ կոչէր առ ինքն զՍուրէն պալհաւն՝ զհազարապետն իւր, որ ազգական և տոհմակից էր մեծի քահանայապետին Սահակայ, որպէս զի միաբանեալ և նա ընդ այլ նախարարացն Հայոց՝ վկայեսցէ չարութեան նոցա, և պատուեալ բազում պարգեւօք և մեծամեծ շքեղութեամբ դարձցի յիշխանութիւն կաթուղիկոսութեան իւրոյ և յաշխարհ։ Եւ Սուրէն բերեալ զպատգամս արքունի առ սուրբն Սահակ, խոստանայր նմա ըստ ասացուածին Վռամայ շքեղութիւն մեծ և օգուտ գտանել ի թագաւորէն. Թէ հաւանեալ, ասէ, կամաց նորա տացես վկայութիւն նախարարացն Հայոց, մեծարեալ բազում պարգեւովք գտանես յիշխանութիւն. ապա եթէ այլազգ ինչ խորհեսցիս յամառեալ, և զքո կաթուղիկոսութեան տունն կործանես ի քէն, և յիշխանութենէդ զոր ունիս՝ մերժեալ լինիս. և ես վասն զի ազգակից քո եմ և զբարին քո կամիմ, և ոչ զթեթեւութիւն՝ տամ քեզ սիրով այսպիսի խրատ։ Եւ այսպիսի բանիւք ջանայր հաւանեցուցանել զսուրբն Իսահակ. քանզի կամէր բառնալ ի միջոյ զթագաւորութիւն Հայոց։

Իսկ սուրբն բնաւ ոչ առնոյր յանձն այսպիսի բանից տալ զվկայութիւն ընդ իշխանացն Հայոց· այլ հաստատեալ ի նոյն բանս՝ ասէր, եթէ, Ես զԱրտաշեսի զայսպիսի վատթարութիւն ինչ ոչ գիտեմ, որով թէ արժան է ի ձէնջ դատելոյ և անարգանաց· և անգոսնելոյ արժանի է, այլ ըստ հրամանի ձեր աղտեղասէր օրինաց՝ գովութեան արժանի է և մեծարանաց։

Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ ի մեծ հայրապետէն Սահակայ՝ յիւրմէ տոհմակցէն, և պատմեալ Թագաւորին Արեաց, ի ցասումն զայրացման գրգռեալ Թագաւորն՝ հրաման տայր բազմամբոխ ատենին յանդիման՝ հարցանել զնախարարսն Հայոց և զԱրտաշէս։ Եւ կուտեալ իշխանացն Հայոց բազում աղտեղաբանութիւնս և ազգի ազգի խօսս անարժանս ի վերայ Թագաւորին իւրեանց· քանզի ոչ եթէ զեղեալ ի նմա զիւրն խօսէին, այլ եւս յաւելուածովք ըստ օրինի թշնամութեան կուտէին ի վերայ նորա բազում չիասս։ Որում թէպէտ և յուրաստ եղեալ Արտաշիսի՝ թէ չէ այդպէս ինչ, չհաւատացին լսողքն, եդին զկամս իւրեանց բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն յԱրշակունեաց ազգէն։ Մանաւանդ՝ զի լուաւ եւս Թագաւորն Արեաց ամենայն ուագանեաւ գրանն ի դատախազացն Արտաշիսի, թէ բնաւ զի՞ իսկ պիտոյ է մեզ Թագաւոր, այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեր· որ և զիւրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զհպատակութիւն և զանհպատակութիւն՝ ցուցցէ ձեզ։

Եւ լուեալ զայս Վռամայ հանդերձ ուագանեաւ գրանն, յոյժ ուրախանայր։ Եւ յայնմհետէ հրաման տայր վաղվաղակի ի բաց առնուլ ըզթագաւորութիւն յԱրտաշիսէ· ընդ նմին և զտունն կաթողիկոսարանին ի սրբոյն Սահակայ՝ յարքունիս ունել. փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Հայոց։ Եւ այսպէս վճարեալ հրաման Պարսից թագաւորին ի գըլուխ ելանէր։ Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշէսի, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին Ներսէսի, անկաւ աշխարհս Հայոց ընդ լծով չար ծառայութեան անօրէն իշխանութեան Պարսից։ Եւ առեալ գինս իշխանացն Հայոց ի թագաւորէն Պարսից՝ ընդ մատնութեան Արտաշիսի, պատիւս և մեծութիւնս, նման արծաթոյն զոր առին եղբարքն Յովսեփայ՝ յիսմայելացի վաճառականացն։ Եւ այսպէս հրաժարեալք ի դրանէ, եկին յաշխարհն իւրեանց։

ԺԵ. Եւ տանուտերացն Հայոց, որոց խոստացեալ էր զկաթուղիկոսութիւն Սուրմակայ արծկեցի երիցու, նստուցին զնա յաթոռ հայ-

րապետութեան Հայոց։ Որ յետ սակաւ ինչ ժամանակի անցանելոյ՝ ընդդիմացեալ ոմանց ի զօրաւոր իշխանացն Հայոց, մերժեալ ընկեցին զնա յիշխանութենէ կաթուղիկոսութեան։ Եւ յայնմհետէ առաքեցաւ նախ ի Վռամայ արքայէ Պարսից՝ յաշխարհս Հայոց՝ մարզպան պարսիկ. և յայնմհետէ եղեալ խոպան սպուռ անկեալք ընդ լծով ծառայութեան անօրէն ազգին Պարսից։ Եւ կատարեալ ել ի գլուխ բան անիծից քահանայապետին Ներսէսի, որով առաւել աճեցեալ օր քան զօր ի թագաւորական տոհմին Արշակունեաց գործք անօրէնութեան չարեաց, զոր կամակոր համարձակութեամբ միշտ գործէին անամօթեալք։ Մանաւանդ յորժամ ետես սուրբն Ներսէս և զմահն անարգար[1], զոր հասոյց նենգութեամբ Արշակ ի վերայ Գնելայ եղբօրորդւոյն իւրոյ. և չկարացեալ հանդուրժել այնպիսի անօրէն գործոց սուրբ այրն Աստուծոյ Ներսէս, զայրագնեալ սրտիւ ըստ գրեցելոց[1] ի պատմութեան երկրորդում, ի ճառին հնգետասաներորդի, ասաց, թէ փոխանակ զի յաճախեցեր ի չարիս մեծամեծս՝ առաւել քան զհայրն քո Տիրան, և քան զայլ նմանին քո, որք եղեն չարք և ամբարիշտք յազգէն Արշակունեաց, և ոչ նախանձեալ նմանեցար լաւացն և առաքինի արանցն եղելոցն ի տոհմին քում, որոց ժառանգեալ զպատիւ թագաւորութեան հարցն իւրեանց՝ առաւել եւս փութացան լինել ժառանգաւորք բարի գործովք երկնից արքայութեան. իսկ դու օր քան զօր աճեցուցեալ ի քեզ առանց պատկառանաց զամենայն պղծագործութիւնս լցեալ կատարեցեր. և ի վերայ ամե-

---

[1] Յօր. արդար։

---

1. Զակնարկեալ ճառդ՝ տես ի Փ. Բիւզ. Դ, գլ. ԺԵ։

նայնի այդորիկ գտար պատճառ հեղման արդար արեան եղբօրորդւոյ քում Գնելոյ. արդ եղիցիս դու հեղեալ յերկիր իբրև զջուր լուալեաց, և ի լարել աղեղան Բարձրելոյն՝ տկարասջիր։ Եւ կործանումն որ բերանով մարգարէին ասացաւ՝ հասցէ ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց զյետին բաժակն. որբասջիք, արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի հաստատեսջիք։ Հանդերձ այլ եւս ծանր և ահագին յաւելուածովք, զոր ասացեալ է սրբոյ քահանայապետին ի վերայ ազգին Արշակունեաց։

Ընտրեցին յայնմհետէ նախարարքն Հայոց իւրեանց կաթուղիկոս յարքունուստ, և թագաւորն Վռամ ետ նոցա զայր մի Բրդիշոյ անուն, ասորի յազգէ այր՝ որ եկեալ յաշխարհն Հայոց իւրովք գաւառակցօք, որք կային լոյծ կրօնիւք, եկեալքն ընդ նմա յԱսորեստանեաց, ըստ սովորութեան աշխարհին իւրեանց՝ տանտիկնօք. և ոչ կային ըստ սուրբ և ամբիծ կրօնիցն, զոր եդեալ էր և կարգեալ յամենայն եկեղեցիս Հայոց՝ սրբոյ Նահատակին Գրիգորի: Եւ տաղտկացեալ մեծամեծ տանուտերաց Հայոց և ազատ սեպուհք և ամենայն ժողովրդոց բազմութիւնք ընդ վարս մարդկան՝ որք եկեալ էին ընդ կաթուղիկոսին Բարդքիշոյի. որ ոչ հաւասարեալ էին հանգոյն կանոնի և վարդապետութեան հրեշտակակրօն կարգաւորութեան սրբոյ Նահատակին Գրիգորի, որով վարժեալ ուսոյց զամենեսեան և հաստատեաց ըստ կարգի վերին քաղաքավարութեանն: Առաւել ևս սուգ առեալ հեծէին անմխիթար սքանչելի քահանայք սուրբ եկեղեցւոյ, որք յառաքելանման աջոյ սուրբ քահանայապետին Սահակայ ձեռնադրեալ օծեալք էին: Եւ ոչ կարացեալ հանդուրժել առ յերկարս այնպիսի զեղխ և անարժան կարգ, խոտեալ մերժեցին զԲարդքիշոյ ի

քահանայապետութենէն. ծանուցին Թագաւորին Վռամայ, եթէ Ոչ են կարգ սորա և վարք ըստ կարգի մերոյ աշխարհի ուսման. բայց այլ այր տո՛ւր մեզ առաջնորդ ըստ մերում բնիկ կարգիս, որ եղեալ վերակացու՝ կալցի հաստատուն ըզկարգ սուրբ եկեղեցւոյ: Եւ Վռամայ արքայի հաւանեալ կամաւ խընդրոյն նոցա, տայր նոցա կաթուղիկոս դարձեալ այլ ասորի, որում անուն Շամուէլ: Որ եկեալ յաշխարհս Հայոց՝ կայր և նա նոյնպէս ըստ կրօնիցն Բարդքիշոյի, և սակաւ ինչ ժամանակս կացեալ՝ վախճանէր:

ԺԶ. Եւ տեսեալ ամենայն տանուտերաց աշխարհին Հայոց և ազատ սեպուհեացն և բովանդակ բազմութեան ուխտին եկեղեցւոյն և ժողովըրդոց ի միասին՝ արանց և կանանց, ողբային զսուրբ և զանարատ և զառաքելաշնորհ վարդապետութիւն՝ զոր սերմանեալ աճեցոյց ի նոսա սուրբն Գրիգորիոս և նորին զաւակքն, որք ուսուցին զճշմարիտ ուսումն ամենայն լսողաց. զոր ինքեանք նման առաքելոցն ընկալան, ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ յայտնութենէ Հոգւոյն Սրբոյ շնորհաց: Դարձեալ ժողովեցան նախարարքն Հայոց, և բուռն հարկանէին զոտից սրբոյն առն Աստուծոյ Սահակայ, աղերս Թախանձանաց և բազմազեղ արտասուս արկեալ առաջի ճշմարիտ քահանայապետին, և ասէին. Մեղաք, մեղաք յերկինս և առաջի քո. Թող մեզ մեղուցելոցս և ձեւացո զքեզ ըստ օրինակի նախնոյն քո բարեպաշտ նահատակի և սրբոյն Գրիգորի, որ ոչ յիշեաց զայնչափ տանջանս և զքերանս՝ զոր անցուցին ընդ նա նախնիքն մեր. այլ նմանեալ արարչին ամենեցուն՝ հատոյց փոխարէնս բարի փոխանակ չարեացն՝ զոր հասուցին ի վերայ նորա. և ծանուցեալ եցոյց ամենաբարի հաւանելոցն նմա՝ վարս երկնաթռիչս և ճանապարհս աստուածա-

գիտս. և ուսոյց ամենեցունց ասել հանապազ՝ Թող մեզ զպարտս մեր, ըստ մեր Թողլոյ մերոց պարտապանաց: Արդ որ եղեր և դու վարդապետ մեր, սորին փոխադրութեամբ տպաւորեա և դու ի քո անձնդ, զնոյն համբերութեան օրինակ, և Թող մեզ զպարտիս մեր: Եւ մեք ջանամք և խնդրեմք ի Դրանէ Թագաւորին հաստատել զքեզ ի բնիկ հայրենի աթոռ կաթուղիկոսութեան սուրբ եկեղեցւոյ, յորմէ լուսաւորեալ՝ տեսաք զայն անմատոյց արգարութեան արեգակնափայլ պսակն: Եւ մի խառնեսցի պղտոր ուսումն ընդ յստակ և ականակիտ վարդապետութիւն սրբոյ առաքելանման հայրապետին Գրիգորի. քանզի ահա դեռ Թուլացեալ մեղկի ի ծոյլ առաջնորդաց կնիք աւանդոյ անարատ քարոզութեան սրբոյն. և ահա կորնչիմք մեք և ծնեալք ի մէնջ՝ զյաւիտենական կորուստ:

Սոյնպէս և առաւել եւս քան զսոյն

բանս աղաչանաց խօսեալ միաբանութեամբ ամենայն բազմութեան ի բազում աւուրս ընդ Սրբոյն ի տուէ և ի գիշերի անդադար, և ամենեւին ոչ կարէին հաւանեցուցանել զմիտս առնն Ճշմարտի՝ ի բանս խանդաղատականս պաղատանաց իրեանց: Այլ խաղաղական պատասխանատուութեամբ ասէր ցամենեսեան. Թէ, Ես ոչ ուսայ յերկնաւոր արարչէն և ի վարդապետէն Քրիստոսէ բարկանալ ումեք, որ և ի խաչին յաղագս խաչահանուացն աղաչէր զՀայր՝ չհամարել նոցա զմեղսն. որ և մեզ ցանկ բողոքէ ասելով, Օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց: Այլ քահանայանալ ի վերայ տիրանենգ և տիրասպան և մատնիչ ժողովրդեան՝ ոչ կարեմ. քանզի և Հոգին Սուրբ որ ծնաւ զմեզ վերստին սուրբ աւազանաւն՝ ժառանգակից լինել Քրիստոսի, նոյն ասաց՝ երկնաքաղաքացի արամբն Պաւղոսիւ, Թէ Դուք որ

կարողք էք՝ զտկարութիւն տկարացն բարձէք. և դարձեալ իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից, ասէ Տէր. և Քրիստոս ասաց՝ Զի մի դատիցիք: Արդ դուք ձեզէն եղէք վրէժխնդիր Թագաւորին ձերոյ գործոց, և զայրացեալք նմա՝ զսուրբ հօտ ուխտին ձերոյ մատնեցէք, ծաղր եդուք առնել անօրինացն: Եւ զիս ի՞ւ արդեօք ջանայք մխիթարել՝ որ զվիրաւորեալ ոչխար հօտին Քրիստոսի տեսանեմ ոչ պատեալ. և կամ ո՞ւմ արդեօք Թախանձեցուցանէք զիս քահանայանալ որ և ոչ գինեաւ և ձիթեաւ օծեալ զվէրան, և եդեալ ի գրաստու և ածեալ ի պանդոկի. այլ յօշեալ յանխնայ՝ և առաջի գիշակեր գազանաց ընկեցեալ յօշատումն: Երթայք յինէն ի բաց, և թող տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց, զոր տեսանեմ աչօք մտացս ի զօրութենէ վերին ցուցակութեանն. մի բռնադատէք զիս մխիթարել ի վերայ ընկման ժողովրդեան իմոյ։ Վասն զի զանցս աղէտիս այսօրիկ եցոյց ինձ բարձրեալն յառաջ քան զձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն՝ յանուրջս, ըստ օրինակի մարգարէական տեսլեանն, որ ցուցաւ սուրբ նահատակին Գրիգորի, գիտութիւն առ յապայ եղելոցն։ Զոր և ձեզ պատմել այսօր բռնադատիմ առ նեղեալ սրտիս իմոյ, և ցուցանիմ անզգամ, որպէս և սուրբ առաքեալն Պաւղոս, որ յաղագս սուտ առաքելոցն և անօրէն մշակացն գըրեաց առ Կորնթացիսն, պատմելով զիւր ճգնութեանցն զհանդէսն։

Արդ ունկնդիր լերուք ինձ մըտադիւրութեամբ ամենայն բազմութիւն ժողովրդոց՝ և պատմեցից ձեզ[1]։

---

[1] 1. Զաղբերաց տեսլեանս և զՀեղինակէն. և տասն օրինակօք հմմտ. տարբերակն են, գի՛տ ի պրակին «Տեսիլ Ս. Սհկ. Պարթեւի» Վիեննաիկ 1932. կամ, ի Բզմվպ. 1931 Դեկտ. Յունր. 1932,

ԺԷ. Յառաջ քան զբազում ամս խորհուրդք անմխիթար նեղէին զիս՝ զի ոչ եղեւ ինձ արու զաւակ, անդադար զմտաւ ածելով և աղաչելով զԱստուած շնորհել ինձ որդի՝ որպէս և իմոց նախնեաց որ յառաջ քան զիս ամուսնացեալք վասն որդեծնութեան։ Եւ քանզի վերակացութիւն հզօրին առ իւրաքանչիւր ոք արդար է և ճանաչող քան զոր մեք իմանամք և խորհիմք և խընդրեմք։ Եւ ես ի մեծ ի հինգշաբաթոջն ի զատկի աղուհացիցն ի հսկման երեկոյին պաշտամանն ի սրբոյ և ի մեղսաքաւիչ խորհրդոյ կենարարին ճաշակեալ՝ այլ ընաւ ամենեւին չեւ ինչ ճաշակեալ բայց հաց և աղ և ջուր, ըստ կանոնի մեծի սուրբ ժողովոյն ՅԺԸ եպիսկոպոսացն որք ի Նիկիա այսպիսի սահմանաւ կանոնադրեալ հաստատեցին, զորոց կանոնադրութիւն հաստատեաց Հոգին Սուրբ։ Եւ կատարեալ իմ զկանոնն յերկարման առաջին գօբողայիցն, և դասք պաշտօնէիցն ընդ նստէին ծանր նիրհմամբ ի սատակութենէ բազմօրեայ տքնութեան՝ որպէս կիսամեռք լինէին, որոց զաւուրս քառասնորդացն ուժգին պահօք և անդադար աղօթիւք զցայգ և զցերեկ հանեալ էր յաղօթս. և մանաւանդ ի մեծի շաբաթուն՝ առաւել ևս յաւելուածովք զնոյն աճեցուցանել փութային ուշադրեալք ուրախալից վաստակօք հասանել վարձուցն հատուցման: Եւ լոյս ճրագացն և կանթեղացն՝ առաւել ևս տոչորեալ բորբոքէր: Եւ ընթերցողն կամաւ յերկարէր զկարդացումն՝ յաղագս սակաւ մի հոգի առնլոյ, և բաւելոյ պաշտօնէիցն առաջարկութեան կանոնին: Մնային և բազմութիւն ժողովրդեանն ժողովելոյ ըստ սովորութեանն ի պաշտօն գիշերոյն: Քանզի յորդոր կամօք փափաքէր իւրաքանչիւր ոք, այր և կին՝ առ հասարակ ժամանել արթնութեամբ ի պաշտօնն՝ վասն փրկութեան անձանց: Նստէի և ես մերձ առ սեղանն Աստուծոյ, ի սուրբ եկեղեցւոջն՝ ի Վաղարշապատ քաղաքի:

Եւ ահա յանկարծակի բացաւ հաստատութիւն երկնից, ընդ որ ծագեաց լոյս սաստիկ, և ելից զամենայն երեսս երկրի: Եւ կանգնեալ երեւեցաւ ինձ յերկրի բեմ չորեքկուսի ամպեղէն, որոյ բարձրութիւն տարածեալ լնոյր զամենայն երկիր: Եւ ի վերայ բեմբին երեւէր տեարակ ոսկեղէն յոսկւոյ սրբոյ խորան արդար, ըստ արժանի սպասու Տեառն սրբութեան, ծածկեալ յոյժ բարակ կտաւով սպիտակափայլ գունով: Եւ ի վերայ խորանաձեւ ծածկութեան՝ յայտնապէս նշան տէրունական երեւէր. որոյ երեւումն՝ ոչ նիւթեղէն այլ լուսեղէն ցուցանիւր: Եւ յանկարծակի եղեւ հնչումն խաղաղասիք օդոյ, և բացաւ փեղկ մի ի ծածկութից կտաւոյն: Ընդ որ հայեցեալ տեսի, և ահա կայր ի վերայ բեմբին սեղան չորեքկուսի ոսկի ականակապ՝ ի բազմագոյն ականց պատուականաց ընդելուզեալ։ Եւ ի վերայ սեղանոյն՝ կայր հաց մի սուրբ, և ողկոյզ մի խաղողոյ՝ ըստ պատուականութեան խորհրդոյ նմանութեան երկնաւոր փրկութեան։ Եւ մերձ առ սուրբ խորհուրդն երեւէր ծառ մի ձիթենի՝ պտղալից յոյժ և վարսաւոր, զորոյ ոչ կարէի առնուլ զչափ բարձրութեան նորա և զլայնութեանն, որոյ բերն էր բազմապտուղ և ատոք․ տեսիլն և գեղեցկութիւն՝ անպատում և սքանչելի։ Եւ որոշեալք չորս ոստ ձիթենոյն ի խոնարհ կողմ երկրի ձգեալ մօտէին։ Յորոց երեք ոստք միաչափք և հասարակապտուղք երեւէին, և չորրորդն ի նոցանէ՝ որպէս կիսաբաժին և նուազապտուղ ըստ երկայնաչափութեան և պտղաբերութեան երիցն երեւէին։ Եւ պտուղք չորեցունց ոստոցն՝ ոչ ինչ բնաւ ամենեւին նըմանք կամ հաւասարք բազմաբերութեան և պտղաբոյծ ատոքութեան

պտղոց ձիթենւոյն, այլ առաւել նըւազք թուով, և վտիտք ատոքութեամբ, որպէս թէ ծնկեալք էին։

Եւ ընդ ահեկէ բեմբին՝ տեսի աթոռ մի բարձր չորեքկուսի ծովագոյն սառնակերպ, ծածկեալ թանձր կտաւով թխագունիւ։ Եւ վերացաւ կտաւն թանձր ի չնչմանէ քաղցր օդոյն եկելոյ։ Տեսանէի և ահա սկտեղ մի մեծ արծաթի ի վերայ աթոռոյն։ Եւ ի վերայ սկտեղն կայր նափորտ մի բեհեզեայ ծալեալ, և առ նմին գունդ մի ոսկի բոլոր։ Եւ մագաղաթ հատուածեւ չորեքկուսի՝ գըրեալ ի սկզբանն կարգս ինչ սակաւ՝ ոսկետեսիլ գրով սքանչելապէս ձեռամբ գրչի ճարտարի։ Եւ ի միջոյ կողման մագաղաթին, հեռի յոսկեգիր կարգացն երեւէին այլ կարգք ինչ եղծեալք ջնջագիրք, որոց ոչ ինչ երեւէր տեսիլ գրոյն և կամ կերպարանք։ Եւ հուսկ յեզր մագաղաթին, հեռի ի ջնջագիր կարգացն՝ դարձեալ տեսանէի այլեւս կարգ մի և կէս կարգի գրեալ ոսկեգիր գրով առաւել սքանչելապէս՝ ըստ տեսլեան առաջնոյ կարգացն՝ գրելոյ յխակղբան մագաղաթին: Եւ ի կիսագիր կարգին մինչև ցմիջոց գրոյն՝ եւս առաւելագոյն ոսկով էր, և այլն մինչև ցկատարումն՝ կարմրագեղով: Եւ կային շուրջ զծնօտիւք սկաեղն անթիւ բազմութիւն տղայոց արուաց, այլ սակաւք և յիգաց: Ամենեքին պայծառացեալ լուսազգեստք էին: Բայց ճառագայթ փայլման պատմուճանաց նոցա, էր՝ որ կարմրագոյն արձակէին նշոյլք, և էր՝ որ երփներփն, և գոյն՝ ազգի ազգի: Եւ դէմք ամենեցուն՝ ի սուրբ սեղանն հայէին, չդարձուցեալք ամենեքին զաչս իւրեանց ի սուրբ խորհրդոյն փրկութեան:

Եւ սկսաւ յանկարծակի սաստկապէս դղրդմամբ շարժել աթոռն: Եւ զմանկտին զոր տեսանէի ի տիս մանկութեան, առժամայն վաղվաղակի փոխեցան ի հասակ երիտա-

սարդութեան կատարեալք: Եւ եղեն թեւազգեցիկ ի վերայ սուրբ սեղանոյն, որ էր ընդելուզեալ ի բազմագունի ականց՝ թռուցեալ բնակէին: Եւ համբարձեալ սուրբ սեղանն ի վեր քան զհաստատութիւն բարձրութեան երկնից՝ ծածկէր: Եւ այսպէս եղեալ՝ աներեւութանայր տեսիլն և անփափէր: Եւ ես ի մեծի հիացման եղեալ՝ ափշէի:

Եւ ահա յանկարծակի ի կերպարան մարդոյ երեւէր ինձ յերկնից այր մի լուսեղէն, որոյ տեսութիւն սաստկութեան լուսոյն՝ մառայլեցուցեալ ծածկէր զլոյս արեգական: Եւ սլացեալ այրն հասանէր ուր ես էի. և իմ առաւել եւս ափշեալ հիացմամբ ի փայլակնացայտ երեւմանէ առնն, անկայ վաղվաղակի գողալով ի վերայ երեսաց իմոց յերկիր: Եւ բուռն հարեալ կանգնեաց զիս, և հաստատեալ կացոյց զիս ի վերայ ոտից իմոց, և ասէ ցիս. քաջալերեաց, զօրացիր և մի երկնչիր. այլ հաստատեա զսիրտ քո յանուն հզօրին որ արար զամենայն երեւելիս և աներեւոյթս, և շնորհեաց եցոյց քեզ զմեծ խորհուրդ յառաջատես արարչութեան իւրոյ։ Եւ իմ ուշաբերեալ զօրացայ ի բանէ նորա, և ասէ ցիս. ընդէ՞ր ես տրտմեալ, և կամ ընդէ՞ր զբաղմունք նանրութեան պղտորեն զսիրտս յատակ խորհրդոց քոց։ Վասն զի տգիտական խորհըրդովք յածեցուցեալ զմիտդ խռովէիր վասն չլինելոյ քեզ արու զաւակ, որ քաջ ծանօթ էիր կամաց բարձրելոյն որ ստուգութեամբ բաշխէ զիւրաքանչիւր օգուտ, և ոչ զլացութեամբ խափանեալ արգելու յումեքէ զարժանն։ Եւ արդ գթալով ի քեզ բարձրեալն վասն սիրելոյ զքեզ կամեցաւ հեռացուցանել ի քէն զայդպիսի ընդունայն մտածմունդ, և մխիթարեաց զքեզ տեսլեամբդ այդուիկ, որ ցուցաւ քեզ յայտնութիւն մեծ, ոչ միայն յառաջիկայիս՝ այլ և առ յապա յամենայն մինչեւ ի վախճան աշխարհին

որ լինելոց են, ծանոյց քեզ և ամենայն հաւատացելոց ի բան նորա. որպէս ճշմարիտ նախնոյն քո առնն Աստուծոյ սրբոյն Գրիգորի. իսկ քեզ՝ մինչեւ ի կատարած աշխարհիս, որ ինչ միանգամ լինելոց է՝ եցոյց զամենայն։ Եւ արդ լո՛ւր և պատմեցից քեզ զմեկնութիւն մեծի յայտնութեանդ, որպէս և հրամայեցաւ ինձ ի վերին զօրութենէն ցուցանել քեզ զամենայն։ Եւ դու ունկնդիր լեր բազում զգուշութեամբ, և գրեա ի տախտակս սրտի քո անմոռաց, զոր ի մագաղաթի դրոշմեալ՝ թողցես հաւատացեալ ժողովրդոց և անսխալ մինչեւ ի վախճան աշխարհի։

Ի բանալ հաստատութեան երկնին զոր տեսանէիր, և տարածեալ լոյսն սաստիկ ընդ ամենայն երեսս երկրի. քանզի ահա ի գալստեան կենարարի Որդւոյն Աստուծոյ բացեալ լինի դուռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսին որ սիրեն զնա, և կատարեն զբան հրամանի նորա՝ յորս ծագեալ լուսաւորէ լոյս վարդապետութեան նորա։ Եւ բեմբն չորեքկուսի կանգնեալ որ ցուցաւ քեզ՝ բարձր յերկրէ մինչեւ յերկինս, հաւատն Ճշմարտութեանն է, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենաց՝ ի թեթեւութիւն երկնից բնակութեան։ Եւ զի ամպեղէն գունով երեւեցաւ բեմբն, վասն զի որ վերացաւն ամպով նոյն գալոց է վերացուցանել զարդարս ընդ իւր, ուր բազում և անթիւ են օթեւանք ի տան Հօրն յարքայութիւնն, զոր և դու տեղեկացեալ ուսար ի Հոգւոյն Սրբոյ, որ խօսէր ընտիր արամբն Պաւղոսիւ, եթէ ամպովք յափշտակիմք ընդ առաջ Տեառն յօդս։ Եւ աթոռն ոսկի որ ի վերայ բեմբին, որով էր արկեալ զմաքուր կտաւն զբարակ, որ ծածկեալ էր զսուրբ սեղանն, և որ ի նմա խորհուրդն, գիտեա և ծանիր, զի

ծածուկ և անյայտ է խորհուրդ աստուածային գիտութեան պատուականութեամբ և մաքրութեամբ, ըստ պատուականութեան մաքուր ոսկւոյն և լուսափայլ կտաւոյն։ Յորոյ վերայ կանգնեալ նշան կենդանացուցիչ խաչին երեւէր, որով կենդանացեալ կանգնեցան ամենայն արարածք գլորեալք մեղօք. և դարձեալ՝ զի նախ խաչն երեւի ի գալըստեանն Քրիստոսի, և ապա յայտնի խորհուրդ դատաստանին և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց։

Եւ զի եղեալ օդ քաղցրաշունչ, որ եբաց զմասն ինչ կտաւոյն, ի միտ առ, զի ցուցաւ քեզ ի սուրբ Հոգւոյն քաղցրաշունչ խաղացումն, որ յայտնէ սրբոց իւրոց զծածկեալ խորհուրդ աստուածութեան իւրոյ։ Ընդ որով կայր սեղանն ոսկի ի պատուական ականց ընդելուզեալ՝ սրբոյ Երրորդութեան ծանուցանի միասնականութիւն, որ զվարս և զՃգնութիւն արդարոցն, որպէս ըզպատուական ականց զանազանումն առաքինութեան առ ինքեան տպաւորեալ զուարճանայ, որք զճաշակն կենաց զմարմին և զարիւն փրկչին արժանապէս ճշմարտութեամբ բազմեալ ընդ նմա ճաշակէն ի պատուական սեղանոյն։ Ըստ երեւելոյ քեզ, հացն և ողկոյզն ի վերայ սեղանոյն՝ օրինակ մարմնոյ և արեան Տեառն չարչարանաց ցուցանի։

Իսկ երեւումն սքանչելատեսիլ ձիթենւոյն, որ էր հուպ առ տէրունական խորհուրդն, բարձր և վարսաւոր, բազմաբեր և պտղալից, զտուրս և զողորմութիւն և զսէր մարդկան որ առ իրեարս եցոյց քեզ բարձրեալն։ Քանզի մօտ և պատուական և առաջին է Աստուածութեան՝ աղքատսիրութիւն յամենայն բարեգործութիւնս, որով և առաջին արդարքն ընտիր երեւեցան․ Աբրահամ, Յոբ, Կոռնելիոս և նմանողք նոցա։ Առանց որոյ և կուսանացն արհամարհեալ վաստակ կուսութեան՝

արտաքոյ հարսանեացն ընկեցան։ Սովաւ ճանաչի յանձինս մարդկան կնիք քարոզութեանն Քրիստոսի որ ասացն, յայսմ ծանիցեն ամենեքին թէ իմ աշակերտք էք՝ եթէ զմիմեանս սիրիցէք․ և մանաւանդ որ առատապէս և զուարթ կամաւ կատարեսցեն զսիրոյն պատուիրանն ոչ միայն յաղքատս՝ այլ և յընկերս և յեղբարս և յամենեսեան որով հաստատի խաղաղութիւն ամենայն աշխարհի, և Տէրն փառաց բնակէ ի մէջ նոցա, շնորհելով զհանդիստ և զառատութիւն պտղաբերութիւն երկրի, որպէս տեսանէիր բարձր զձիթենին լիապտուղ և վարսաւոր։

Եւ ոստք չորք ձիթենւոյն որ ի խոնարհ կողմ երկրի ձգտէին երեւելով, երեք ոստք հաւասարակատեաք չափով, և են առաւել միաթիւք պտղովք, և չորրորդն ի նոսա զոր կիսաչափ ըստ հաւասարութեան երիցն և պակասաւոր ըստ պտղաբերութեան տեսեր, յորոց չորեցունցն պտուղք վտիտք և թառամեալք էին, և բերք պակաս քան զայլ տառքատեսիլ պտուղ ձիթենւոյն: Արդ ամփոփեա զունկնդրութիւն մտաց քոց, լուր և պատմեցից քեզ զոր ինչ սահմանեաց Բարձրեալն, յայտնեալ՝ մինչեւ ի վախճան աշխարհի:

Երեքտասան երեւակս ամաց, և կէս տասներեակք համառօտեցան ի վերայ երկրի, մինչեւ յերեւումն պղծոյն յանապատի, զոր Դանիէլ մարգարէին ասաց Սուրբ Հոգին, և լինին սոքա թուով ամք ՅԾ, ըստ միազոյգ պտղոցն, երեք ստոցն և կիսոյն: Եւ զի տեսեր զպտուղս ստոցն թառամս և ծնկեալս, և ոչ ինչ բնաւ նման այլ պտղոցն, որ ի ձիթենւոջն էին, տես ճշմարտապէս և ծանիր, զի բարձեալ է սէր և արդարութիւն յամենայն մարդոց, որք ստութեամբ և ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրողս և պատուիրանապահս. և այն յայտնի գրեալ կայ և կնքեալ ի գրութիւն ամենագիտին՝ որ ներէ երկայնմտութեամբ և հատուցանէ անաչառութեամբ:

Եւ ընդ ահեկէ բեմբին որ ցուցաւ քեզ աթոռ չորեքկուսի ծովագոյն սառնակերպ, նստելումն քահանայական գահոյից և թագաւորութեան ցուցանի՝ զոր արդարեւ Բանն Աստուած հաստատէ: Եւ ի վերայ սեղանոյն սկաւեղն արծաթի, քանզի իբրեւ զարծաթ ընտիր և լուսափայլ, յամենայն ազգ ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն, զոր և սաղմոսերգուն վարդապետէ Սուրբ Հոգւոյն յասելն, թէ՝ Բանք Տեառն սուրբ են իբրեւ զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ. (և զասելն յերկրէ) գիտասցեն թէ զերեւումն զՈրդւոյն Աստուծոյ ի սուրբ Կուսէն՝ յայտ առնէ մարգարէն: Եւ զի երեւեցաւ քեզ ծովագոյն սառնանման տեսիլ աթոռոյն, նշանակեալ ցուցանէր զծփումն ալէկոծութեան աշխարհիս Հայոց: Քանզի թխագոյն թանձր կտաւոյն ծածկումն, զորինակ բերէ թանձրամած սգոյն որ ունելոց է զաշխարհս ամենայն. վասն զի տեսիլդ ի վախճան է։ Եւ նափորան բեհեզեայ զոր տեսանէիր ծալեալ և եդեալ ի վերայ սիւնեղն, և գունդն ոսկի որ կայր մերձ առ նափորակին, նշանակէ մին զքահանայութիւն, և միւս զթագաւորութիւն։ Եւ զի ոչ ոք էր արկեալ զիւրեաւ զնափորան, և ոչ ոք այն էր որ զգունդն ունէր ի ձեռին, լուր ստուգապէս և ի միտ առ. զի լինելոց է մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց, և քահանայութիւն ի ցեղէ սրբոյն Գրիգորի։

Եւ մագաղաթն հաստուածեւ, որ ցուցաւ քեզ գրեալ յիսկզբանն կարգս ինչ ոսկեգիր գրով զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհք Հոգւոյն Սրբոյ, որք ի զաւակէ ցանկալի սրբոյն Գրիգորի յաջորդէն զաթոռ քահանայութեան. զի նոքա են արք ընտիր գրեալք ոսկետեսիլ գրով ի դպրութիւն կենաց։

Եւ զի երեւէին ի միջոյ կողմանէ մագաղաթին հեռի յոսկէկարգացն՝ կարգք ինչ խանգարեալք և ջնջագիրք, գիտեա զի նստելոց են քահանայապետք ոմանք յարանց անարժանից, յաթոռ սրբոյն Գրիգորի որ ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն, և ոչ ըստ կանոնի երիցս երանեալ ՅԺԸիցն սուրբ ժողովոյն լինին ձեռնադրեալք յերկնաւոր պաշտօնն, այլ ըստ փառաց աշխարհի ձգտին յայն պատիւն յանդգնութեամբք, որք են արծաթասէրք։ Եւ վասն զի խոտան է քահանայութիւն և ոչ ըստ հաճոյից Բարձրելոյն՝ ջնջեալ են նոքա ի դպրութենէ երկնից բարութեանց տալով դատաստան գեհենին այրմամբն՝ զանձանց ժողովրդոցն կորստեան։ Եւ այլ կարգ մի և կէս կարգի որ երեւեցաւ քեզ գրեալ սքանչելապէս ոսկեգիր գրով ի ստորին մագաղաթին, ըստ առաջին յօրինեալ կարգացն գրելոց յիսկզբանն մագաղաթին, ծանիր հաւատեաւ, զի մերձ յերեւումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէն Արշակունեաց, և նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի. վասն զի ոչ էին արհամարհեալք և ընկեցեալ յերկիր ի կոխումն, այլ յայտնական երեւմամբ կայր գունդն, և ծալեալ պատուականութեամբ ցուցաւ նափորտն, որ եւս առաւել հաւաստարապէս եցոյց քեզ, և ծանոյց վերին ազդեցութիւն սքանչելատեսիլ ոսկեգիր կարգաւն և կարգակիսաւն, որ ի ժամանակի դառողացեալ թշնամւոյն արդարութեան, նստցի քահանայապետ արդար ի ճշմարիտ վիճակէ ցեղի սրբոյն Գրիգորի. և քահանայացեալ առաջինն՝ կատարէ զաւուրս իւր կրեալ ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին կորստեան, և վախճանի խաղաղական մահուամբ և ոչ սրով: Եւ միւս զաւակ նորին յաջորդէ զաթոռ քահանայապետութեան, և բազում

և ազգի ազգի համբերեալ քերանաց և գանից և սովոյ և նեղութեան ժամանակս բազումս, յանօրէն իշխանին դահճաց՝ սրով ընդունի զվախճան մարտիրոսութեան: Եւ այն զի ցուցաւ քեզ ի կարգին մասն մի ի գրելոցն կարմրագեղով, ստուգեալ հաստատութեամբ դաւանեաց ըղկատարումն մարտիրոսութեամբ՝ որ դիպելոց էր սրբոց:

Եւ որ երեւեցաւ քեզ բազմութիւն տղայոցն, շուրջ կալով ի վերայ արծաթի սկտեղն, զուարճացիր ուրախութեամբ. զի յարգանդէ զաւակիդ որ տուաւ քեզ ի Բարձրելոյն՝ ելցեն բազում շառաւիղք՝ արք ընտիրք զօրութեամբ: Ընդ որ միաբանեալ և այլ բազմութիւնք լաւ արանց՝ յազգէ նախարարացդ Հայոց զօրացեալ սուրբ բանիւն Աստուծոյ, և զյարուցմունս թագաւորաց և զսպառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ՝ արհամարհեսցեն. միացուցեալ զանձինս ընդ յոյս բազձայնի երկնաւոր կոչմանն, չհայելով ի մեծութիւնս սնոտիս, և ոչ ի փառս առժամանակեայս, ընդ որոյ վաճառեալ ոմանց զփառս անեղծին Աստուծոյ՝ ընդ սնոտի և ապականացու կենաց աշխարհիս՝ ուրացողք լինին. վասն զի մօտ է առ դուրս վաճառ թուլացելոցն ի կորուստ, և հասեալ կայ հուպ օգնութիւն զօրացելոցն ի փրկութիւն։ Յորս և դու հայեցեալ շնորհի ակամբ՝ տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով զտղայն, չնայելով բնաւ ի սայթաքմունս սնոտի հեթանոսական պաշտամանցն. յորոց ոմանք ի կատարելութեան հասեալ՝ մարտիրոսական պսակին լինին արժանաւորք, ոչ միայն արք՝ այլ և կանայք, որք թէպէտ և ոչ սրով՝ այլ ի շնորհաց սուրբ Հոգւոյն զօրացեալք՝ բազում բարեգործութիւնս արարեալ՝ կատարին։ Որպէս երեւէրն քեզ լուսացայթ նշոյլս արձակեալք ի մանկանցն. յոմանց կարմրագոյն, և յո-

մանց երփն երփն. զի զկատարելոց արանց գուշակէր զնահատակութիւն։ Եւ զայլոց նոյնպէս ծանուցանէր զճառագայթից նշողումն. որպէս զբազմափայլագոյն լուսաւորութեան առաքինի մարդոյ. վասն զի բազում և անթիւ են ճգնութիւնք և վաստակք արանց արդարոց։

Եւ զի շարժեցաւ սաստիկ դղրդմամբ աթոռն զոր տեսեր, և որ երբեմն տղայքն քեզ երեւէին՝ յաճումն կատարելութեան բովանդակեալ, յերկրէ յերկինս թռուցեալ համբարձան ամենեւին, զերկրային կենցաղս արհամարհեալք, և ի յերկինս զլինելոցն նոցա հրեշտականման փոփոխումն եցոյց հաստատուն բարեաց պարգեւատուն։ Քանզի իբրեւ զտղայս կեցին յաշխարհիս արդարքն անմեղութեամբ, չդարձուցեալք և ոչ ուրեք զհայեցուածս մտաց իրեանց ի զբաղմունս նանրութեան, այլ ուշաբերեալք ի հրաւիրումն երկնաւոր ուրախութեան եւեթ հայեցան: Քանզի բազում և խիստ դղրդմունք յայսմհետէ լինելոց են յաշխարհի: Յարուցմունք թագաւորաց ի վերայ միմեանց, սովք և սասանութիւնք և բազում նեղութիւնք, որ զգալուստ մօտաւոր որդւոյն կորստեան նշանակեն: Որ եկեալ նստցի ըստ գրեցելումն ի տեղւոջն սրբութեան՝ ցուցանելով զինքն Աստուած, որ հաշի և մաշի ի վերնոյն զօրութեան, զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ: Եւ յայնժամ կատարեալ վարուք թուիցեն արդարք ի յաւիտենական յարկսն, և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցին: Եւ ապա յայտնապէս կատարի առ նոսա բան տէրունական բարբառոյն, որ ասէ. Ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի: Եւ դու, ասէ, կնքեա զտեսիլդ որ ցուցաւ քեզ թուով յայտնութիւն ի բարձանց. քանզի ոչ վրիպեսցի այտի բան մի՝ մինչեւ ամենայն կատարեսցի:

Եւ ես իբրեւ ի քնոյ զարթուցեալ ի տեսլենէն զոր եցոյց ինձ Բարձրեալն՝ որպէս թէ յայտնի արթնութեամբ: Եւ իմ զարթուցեալ մեծապէս փառաւորեցի զԱստուած, որ արժանի արար զիս զանարժանս այսպիսի ահաւոր տեսլեան: Եւ լռեալ դադարեցի յայտնել զայս մարդոյ մինչեւ ցայսօր: Եւ այժմ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղեալ սրտիս, այլ և թաքուցանել երկեայ, զի մի իբրեւ զըլացող պատուհասեալ դատեցայց ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ, որ և գրով ինձ զաւանդս զայս հրամայեաց թողուլ յաշխարհի:

ԺԸ. Եւ զայս ամենայն խօսս լուեալ բազմութեան աւագանւոյն Հայոց տանուտերացն և սեպուհացն, և միահամուռ ժողովրդոցն բազմութեան ի սուրբ հայրապետէն Իսահակայ, յարտասուս հարեալ՝ զարհուրեցան: Եւ այսուհետեւ ոչ ոք իշխէր յաղագս այնպիսի բանից ասել ինչ ընդ սրբոյն, և կամ ճառել:

Եւ յայնմհետէ ամփոփեալ զինքն առաքինւոյն Սրբոյն Իսահակայ յամենայն աշխարհածուփ զբօսանաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան. վասն զի բազումք յեպիսկոպոսաց և ի քահանայից ոչ երբէք ժուժէին մեկուսանալ ի մշտնջենաբուխ աղբերէ վարդապետութեան սրբոյն: Եւ կացեալ ամս բազումս, և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ խաղաղական հանգստեամբ ի գաւառին Բագրեւանդայ, ի գեօղն որ անուանեալ կոչի Բլուր, յիսկզբան ամին երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ Պարսից արքային, յամսեանն Նաւասարդի, որ օր երեսուն էր, յերկրորդ[1] ժամու աւուրն. ուր և զօր ծննդեան երանելոյն ի սոյդ գիտողաց և ի պատմութենէն երանելոյ առնն՝ հաստատեալ գրեցաք լինել նոյն օր ծննդեան Սրբոյն, ի նմին ամսեանն եղեալ:

Եւ վասն զի ոչ գոյր նմա արու զաւակ՝ բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և սպարապետի Հայոց, որ ծնաւ ի Համազասպայ երիս որդիս, զսուրբն Վարդան, և զՀմայեակ և զերանելին Համազասպեան. որոց կտակ ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զըստացուածս գեօղից և ագարակաց իւրոց, և որ ինչ միանգամ իւր էր ետ նոցա ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչեւ ցյաւիտեան: Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա օրհնութեամբ բազմաւ. և պատուիրեաց նոցա պահել զվարդապետութիւն պատուիրանի սրբոյն Գրիգորի, զոր ուսոյց և աւանդեաց ճշմարտութեամբ ամենայն երկրիս Հայոց, ծառայել և երկիր պագանել միայնոյ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որոց առեալ զտենչալի նշխարս

---

[1] Միւս տպպ. յերրորդ

Սրբոյն Իսահակայ՝ բազմութիւնք ազատաց և քահանայից տարան ի գաւառն Տարօնոյ ի բնիկ գեօղն յԱշտիշատ. և անդ կազմեալ հանգըստարան Սրբոյն, պատեցին ըզպարկեշտ մարմին երանելոյն ըստ արժանի կայանից։ Ուր չինեալ եկեղեցի մեծապայծառ ի վկայարան Սրբոյն՝ և զարդարեցին պատուական և մեծագին սպասուք. և կանգնեցին բազմութիւնս պաշտօնէից. կարգեալ անպակաս կերակուրս ի պէտս յաւելեալ եղբայրութեանցն նաև այգեստանս պաղոց և տօնս տարեւորականս աշխարհայորդոր բազմութեամբ հաստատեցին ի տեղւոջն, ազատք և քահանայք գաւառին, այլ և ի կարի հեռաւոր տեղեաց դիմեալք[1] յօր կարգադրութեան նորա կատարէին։ Ուստի բազում առողջութիւնս ըստ իւրաքանչիւր ախտից շնորհէին ի նշխարաց Սրբոյն,

---

[1] Հին օր. դիմեալ։

և ուրախալից սրտիւ փառաւորէին զԱստուած՝ որ է փառաւորեալ յամենայն սրբոց իւրոց յերկնաւորաց և յերկրաւորաց ամէն։

ԺԹ. Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան սրբոյ Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշթոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր քաղաք անուանէն, յերեքտասաներորդի աւուր ամսոյն մեհեկանի. զոր առեալ իշխանին Ամատունեաց Վահանայ՝ ըզմարմին առաքինւոյն՝ տարաւ յիւր ի գեօղն, որ անուանեալ կոչի Օշական։ Եւ յոյժ մեծարանօք զդիր երանելւոյն կազմեալ, տօն յիշատակի առնէն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովըրդոցն Այրարատոյ։

Զորոյ զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց ձորոյ, ի գեղջէն որում անուն էր Խողոցիմք։ Եւ ի բարեխօսութենէ սուրբ հանգուցելոցն արանց՝ շնորհեցաւ աշխարհիս Հայոց պաշտօն ուղղափառ հաւատոց, մինչեւ ցամն երկոտասաներորդ Յազկերտի արքային Պարսից որդւոյ Վռամայ։

Վերջ բանիս այս։

ԴՐՈՒԱԳ Բ.

Ի. Եւ էր Յազկերտի արքայի հազարապետ մի Միհրներսեհ անուն, այր չարաճնար և գժնամիտ. որոյ արկեալ ի միտս ի շատ ամաց զխորհուրդս անօրէնութեան ի կործանումն և ի կորուստ թուլամիտ ոգւոց. որում գտեալ օժանդակ չար և սադրիչ անօրէն թիւնաւոր բազմաժամանակեայ մտածութեանն իւրում՝ այր մի ի տոհմէն Սիւնեաց, որոյ անունն էր Վարազվաղան. որով ըստ նմանութեան սատանայի՝ որ ի դրախտին օձիւն խաբեաց զնախաստեղծին հաղորդն, նոյնպէս և նա նովաւ զիւրոյ դառն կամացն վճարել ջանայր զհաճոյսն։

Եւ էր Վարազվաղանս այս փեսայացեալ իշխանին Սիւնեաց Վասակայ․ որ և ըստ համբաւոյ ոմանց՝ ատելութեամբ մեծաւ ասէին ըղկեալն ընդ միմեանս զՎարազվաղանայ և զդստեր իշխանին Սիւնեաց․ յաղագս որոյ ծանր քինու հայէր հայր աղջկանն ընդ փեսային իւրում, և հնարէր սպանմամբ խնդրել զվրէժս ի թշնամեաց դստերն իւրոյ, մինչեւ հալածեալ հանէր զնա յաշխարհէս Հայոց։

Եւ չարիմացին Վարազվաղանայ գիտացեալ զանհնարին ոխութիւնն Վասակայ, և զի ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն՝ յաղագս հզօրապէս ճոխութեան որով վարէր ի ժամանակս իշխանութեան իւրոյ, փախուցեալ յերկիրն Պարսից՝ առ Միհրներսեհ հազարապետն Արեաց անկանէր։ Եւ վաղվաղակի խորհուրդ դիւական ի միտս արկեալ, առաջնորդ կորստեան աշխարհիս լինէր․ ճանաչելով ի նոյն խորհուրդ չարութեան յորդոր և զկամս Միհրներսեհի։ Մտածութիւն անօրէն ի միաբանութիւն բանսարկուին ի մէջ առեալ՝ ուրանայր զճըշմարտութիւնն, և տարերց հաստատելոց յարարչէն ի սպասաւորութիւն մարդկան՝ արեգական և լուսնի երկիր պագանէր․ և ճեղքեալ ինքնակամ յօժարութեամբ ի սուրբ և յարդար քարոզութենէն կենաց՝ զոր նահատակն և առաքեալն Հայոց Գրիգորիոս բազում և մեծամեծ վիշտս կրելով՝ անձանձրոյթ աղօթիւք և անզրաւ խնդրուածովք՝ զցայդ և զցերեկ վարդապետեալ սերմանեալ յամենայն ոգի, արհամարհեալ մերժէր յինքենէ անօրէնն Վարազվաղան։ Եւ մտեալ ի տուն մոխրանոցին՝ զկրակն ասաց գոլ աստուած, և ուրացեալ յանքակ և ի միաբանական սուրբ Երրորդութենէն՝ եղեւ դեղագործ մահու և մատուցակ կորստեան ոգւոց անօրինաւն Միհրներսեհի, ամենայն ակարամիտ անձանց։ Որում՝ այնուհետեւ եղեալ վարդապետ, ուսուցանէր փութապէս ի տուէ և ի գիշերի դառն իշխանն Միհրներսեհ զպիղծ սեպուհն Սիւնեաց զՎարազվաղան, ասելով այսպէս. թէ, Հայեաց մտաց աչօքդ և տես թագաւորութիւն մի այսպիսի, որ ահաւոր է և ի վեր քան զամենայն թագաւորութիւնս, և սաստկութիւն առն և ձիոյ և հրահանգի և կամ կազմութիւն զինու, որ սարսեալ դողացուցանէ զամենայն տեսողս և լսողս, զհնազանդս և զանհնազանդս. ընդ նմին և զօրինացս յայտնապէս ըստ արժանի մեծ թագաւորութեանս զընտրողութիւն, զստոյգն և զվայելուչն: Քանզի ո՞վ ոք ոչ տեսանէ յամենայն տիեզերս զարեգականն զփառաւորութիւն, որոյ ճառագայթիւք լուսաւորին ամենայն եղեալք խօսնոց և անխօսնոց, և կամ զհրոյ օգտակարութիւն, որով կերակրին և վայելեն ամենայն բանաւորք, և կամ տարերքս, և քաղցրախառն օդոց շնչմունք, որով բոյսք և սերմունք

առողջացեալք և հասեալք ի կատարելութիւն, մատուցանեն մարդկան զկեալն բարի և զուրախանալն: Արդ՝ թէպէտ և անհնազանդ են մեզ այնոքիկ, տեսանեն զայս ամենայն և ոչ իմանան. վասն զի ոչ ունին երբեք զմեզ մեծ իմաստս և խոհականութեան խրատս: Եւ վասն զի չկարացեալ ճանաչել այնպիսեացն զաստուածս, և ոչ զօգուտն՝ որ յիւրաքանչիւր ումեքէ յաստուածոցն բաշխին ի մարդիկ, յայտնի է և ստուգապէս՝ թէ և աստուածոցն ցասուցեալ՝ չկամեցան զիւրեանց բարութիւնսն, որ ի միոյ միոյ որոշողութեամբ պարգևելի յաշխարհս, ծանուցանել անմտացն: Իսկ որք ընդ մերով մեծ իշխանութեամբս հնազանդեալ են ազգք, և ընդ ձեռամբ այսպիսի ահեղ և սաստիկ կարգեալք են ընդ թագաւորութեամբ, կորընչին զյաւիտենական կորուստն, և մեք մեզադրեալք յԱստուծոյ պատուհասիցիմք:

Զորոյ անմիտ վարդապետութիւն զխորամանդ ուսուցչին Մեհրներսեհի՝ լուեալ խելացնոր աշակերտ նորա Վարազվաղան, չկարաց զգալ յապշութենէ սատանայազէն պղտորեալ մտացն, և առնել անդրէն պատասխանի անզգայեալ վարդապետին, թէ՝ աստուած որ ինքն յինքեան պակաս է և թերակատար, զիա՞րդ կարէ տալ այնպիսին այլում զկատարելութեան խնդիրս։ Քանզի զգոյն իւր ոք՝ կարէ տալ խնդրողին, իսկ որ ինչ իւր ոչ գոյ ուրուք, այլ որպէս մասն ինչ ի բազում մասանց յումեքէ առեալ ունիցի յանձին, կարէ տալ յայնմ մասնէ զոր ինչ ունի. իսկ զոր ինքն ոչ ունի, յայտնի է թէ և այլում շնորհել զայն ոչ կարէ։ Վասն զի թէ տապացեալ ոք՝ կարօտեսցի զովանալոյ, և մատուցեալ զայն խնդրեսցէ դարձեալ ի ջերմութենէ, չպատահէ խնդրոյն. այլ և խնդրողն յոյժ անմիտ ճանաչի յամենեցունց և արժանի ծաղու։ Քանզի և նոյն ինքն խնդրողն հաւաստեաւ գիտէ, թէ որ ինչ ինձս պիտի, յորմէ կամիմ խնդրել՝ նորա չէք, և ոչ տալ կարէ. և (թէպէտ) բազում թախանձանօք և յերկար գեգերմամբ խնդրեսցէ յայնպիսւոյն, անմիտ է և լի է ապաշաւութեամբ։ Որպէս թէ ի ջրոյ ոք խնդրիցէ ցամաքութիւն, և ի հրոյ հայցիցէ ոք գիճութիւն, և կամ զարեգակն աղաչեսցէ ոք յաղագս զովացուցանելոյ, և կամ ի գիշերոյ պահանջեսցէ ոք լոյս։ Այլ զեդեալն ի նոսա յԱստուծոյ մասունս՝ կան և ունին, սահմանեալ զնոյն և մատակարարեալ ըստ իւրաքանչիւր մասին, հարկաւորին անդադար հատուցանել աշխարհի՝ ոչ իւրեանց կամաւ, այլ ըստ հրամանի արարչին իւրեանց, որ էն Աստուած ճշմարիտ, արարիչ ամենայն լինելութեան ժամանակաց և տարերց, ջերմութեան և ցրտութեան և ցամաքութեան և խոնաւութեան, լուսոյ և խաւարի. և ունի յինքեան զամենայն բովանդակապէս. և որք խնդրեն ի նմանէ արժանաւորապէս՝ տայ և լընու զամենայն կատարելապէս ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից և կամաց:

Զոր և իւր ուսեալ զայս ամենայն ի մանկութենէ իւրմէ անօրէնն Վարազվաղան՝ քաջ գիտէր. բայց ի նախանձ անօրէնութեան ընկղմեալ ընդ աներոյն՝ խորհէր ի միտս իւր այրն աստուածուրաց, սադրելով նմա դիւին՝ որ միացեալ ներկեալ էր ի սրտի նորա, թէ իմաստս այս իմ և ջանս և արարուած՝ երկուց իրաց առիթ է ինձ բարւոյ: Կամ հաւանի աշխարհն Հայոց և ուրանայ, մեծաց պարգևաց և պատուոյ արժանի լինիմ յԱրեաց, որպէս հաւատարիմ նախադիտ և օգտացոյց այսպիսի կարևոր եւ մեծ իրաց. եւ կամ չհաւանին յանձն առնուլ՝ և ընդդիմանան, չկարացեալ կալ առաջի այնպիսի մեծի ուժոյ՝ կորնչին ամենեւիմբ տամբք և կարասեաւ. կորընչի թերևս և իմ թշնամին յիրիս յայսմիկ: Եւ ես թէպէտ և ոչ միոյ այլ իմիք չհանդիպիմ բարւոյ, սակայն շատ իսկ է ինձ և բաւական՝ լուրն և տես կորստեան թշնամւոյ իմոյ, քան զամենայն օգուտս և մեծութիւնս՝ որ են յաշխարհի:

Եւ զայս ամենայն չար խմացմունս անձին իւրում և զաւակի խմացեալ Սիւնոյ սեպհին անօրինի և տարեալ ի գլուխ, չմոռացաւ և աստուածային տեսչութիւնն. այլ աստէն իսկ նախ ընկալեալ յարդար դատաստանէն Աստուծոյ զվճիռ հատուցման՝ ըստ արժանի գործոց իւրոց: Քանզի տեսիլ նշաւակի եղեւ ամենայն տոհմին իւրոյ և գաւառին մարդկան: Վասն զի ի խորհրդակցէն ի դիւէն իւրմէ տանջեալ ամս բազումս՝ առաջի ամենեցուն հանապազօր նշաւակօք, զգետնեալ փրփրէր անզգայութեամբ, և չկարացեալ ասել, թէ մեղայ: Վասն որոյ գտեալ դիւքն ամենաթափուր զայրն ի խընամոց մարդասիրին, յետոյ ապա սաստիկ և անհնարին խայտառականօք՝ մինչ ի բազում ժամանակս չարալլուկ կտտանօք զարկուցեալ՝ հեղձոյց։ Որ և զմնացորդս ժահահոտ չարահամ խորակին իւրոյ եթող զաւակին իւրում. ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն սաղմոսին, Յագեցան կերակրօք, ասէ. որ միւս եւս թարգմանիչ՝ խոզենեաւ ասէ, և թողին զմնացուածս տղայոց իւրեանց։

Եւ այսպէս նորա աստէն ընկալեալ զհատուցումն մեղաց իւրոց, պահի և անշէջ գեհենոյն ի տարտարոսին՝ մատնել յաւիտենից և անանց բոցոյն։ Յորոց ձեռն սկիզբն առեալ գայր տակաւ յերեւումն՝ կանխաւտեսութիւն մարգարէական սուրբ նահատակին Գրիգորի տեսլեան, որ երեւեցաւ նմա յԱստուծոյ. աղբեւրն կենաց, յորում լուացեալ գառք սեւագոյն այծեացն՝ ի սպիտակակիզն

գոյն օգեաց դարձեալք՝ արեգակնանման լուսափայլեալք երեւէին. յորոց կէսք ի լուացելոցն յետս դարձեալք ընդ կրունկս՝ անցանէին ընդ ջուրն, և փոխեալք ի նմանութենէ սպիտակացեալ գառանցն՝ ի գոյն սեւացեալ գայլոցն, յարձակէին ի վերայ գառանցն և արեան ճապաղիս հանէին։ Որոց նախ և առաջին յառաջատեսութեանն սըրբոյն ի գառնութենէ ի գայլութիւն փոփոխման՝ այն այր ի տոհմէն Սիւնեաց, եղեւ պատճառ կորստեան բազմաց և կոտորածի աշխարհիս Հայոց։

ԻԱ. Եւ լուեալ զայս ամենայն բանս անօրինին Միհրներսեհի և խնդալից եղեալ, քանզի եգիտ սատար մահաթոյն և գրգռիչ անօրէն իւրում չար մտածութեանն զայրն Ղդիւազգեաց զՎարազվաղան, մըտեալ խնդալից առ թագաւորն Յազկերտ, սկսաւ խօսել ընդ նմա առանձինն և ասէ. Ոչ միայն ի վայելչութենէ շահից, եթէ որպէս ի դէպ է տերանց օգտել ի ծառայից՝ զայն եւեթ հոգալ պարտ է տերանց, այլ և յաղագս գիտելի ոգւոց արժան է զմտաւ ածել, որով ոգիք ծառայից մի կորիցեն: Վասն զի որպէս դու վասն քո շահիցն և հարկաց փոյթ յանձին ունիս՝ զի օգտեսցիս, նոյնպէս և աստուածք զոգւոցն գիտս ջերմագոյն եւս գրեն և կամին տեսանել, և աստուածոցն արժանի առնել: Չկարէ ոք ասել զպարգեւս և զպատիւս, որ այնպիսոյն յաստուածոցն մթերեալ պահին. Թող թէ որ ոք բազում ոգիս հնարի ի մոլորութենէ ի ճանապարհ ածել, և զանէծս անցուցանել ընդ արդարս: Փառք և շքեղութիւնք որ այնպիսեացն ոգւոց ընձեռին յաստուածոցն՝ ոչ ոք կարէ բանիւ ասել զայն և պատմել, և կամ ընդ գրով բովանդակել: Արդ՝ քանի՞ աշխարհք են որում դուք իշխէք աստուածաբար, և զո՞ր սպանանել կամիք յիշէք, և զո՞րս կեցուցանել:

Եւ նախ առաջին որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է և օգտակար, և առ նմին Վրաց և Աղուանից, և միայն օգտիցն եւեթ հայիք՝ զոր ընդունիք յաշխարհացն. և որ մեծն է և կարեւոր յաղագս այնչափ կորուսեալ ոգւոց գիտելի՝ զայն բնաւ և զմտաւ իսկ չածէք և ոչ հոգայք. և զայս ոչ գիտէք՝ եթէ ընդ ամենայնի այնչափ անձինն համար տալոց էք աստուածոցն: Զի եթէ հոգայք ընդ այնչափ ոգւոյ փրկութեան, գիտացէք զի աւելի քան զաստի թագաւորութեանդ մեծութիւնդ զոր ունիք, ոգւոցն բարի և մեծութիւն որ լինէր անդ, շատ օգուտ էր ձեզ և պիտոյ: Ես առաւել այլ օգուտ մեծամեծս և կարեւոր իրս տեսանեմ յիրս յայս Արեաց աշխարհիս: Վասն զի դուք ինքնին գիտէք և ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թէ որպէս մեծ է և պիտանի, և մօտ և սահմանակից է կայսեր իշխանութեանն. և զօրէնս և պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի։ Եւ եթէ և մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա և ընդելնուն, և կարեն ճանաչել եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ եկեսցեն, այնուհետեւ զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերժին և հեռանան ի բաց։ Եւ լինի այնուհետեւ աշխարհն մեր սերտ սիրով և միաբանութեամբ։ Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին, Վիրք և Աղուանք այնուհետեւ մեր իսկ են։ Եւ իմ թէպէտ և էր յառաջագոյն հոգացեալ զայսպիսի մեծ իրս, և զմտաւ ածեալ ցուցանել ձեզ, առաւել եւս հաստատեալ յառնէն՝ որ ի Սիւնեաց տոհմէն՝ գիտաց հեռանալ ի մոլար օրինացն զոր ցայժմն ունէր, և ընտրել զճշմարիտ և զհաստատուն օրէնս մեր, զոր կամաւ և ախորժելով յանձն էառ. զոր ինմանէ աւելագոյն ծանեայ, և հաստատեցի զօգուտ հոգեւոր և ըզ-

մարմնաւոր, որ յիրացս յայսցանէ լինելոց է ձերում թագաւորութեանդ և առ հասարակ ամենայն Արեաց աշխարհիս։ Այլ և որ սերտ սիրով ետ զանձն իւր այրն և ընտրեաց զլաւն, արժան է դիպել երեւելի փառաց և առաւելապէս պատուոյ քան զամենայն ընկերակիցս իւր և տոհմակիցս, որպէս զի տեսեալ տոհմին նորա և ամենայն Հայոց աւագանւոյն՝ զմեծամեծ բարիս և զշքեղութիւն՝ որ ի ձէնջ ի վերայ նորա յայտնի լինի, ի նախանձ գրգռեալ և նոքա այսպիսի կենաց և բարւոյ հանդիպել՝ յօժարութեամբ յանձն առնուն զձեր հրաման, և մի զմիով եղեալք՝ փութով կատարեն զկամս ձեր։ Եւ եթէ այս այսպէս լինի, միշտ ի խաղաղութեան և յանհոգութեան կայ թագաւորութիւն Արեաց աշխարհիս. ապա թէ ոչ լինիցի այս այսպէս, կասկածեմ յառաջիկայն՝ մի գուցէ որում օրինացն են հաստատուն, նոցին և ծառայութիւն առնել ցանկան, և լինի ոչ փոքր կասկած Արեաց աշխարհիս յիրացն յայնցանէ:

Եւ իբրեւ զայս ամենայն յարմարութիւն բանից լուեր Յազկերտ արքայն Պարսից ի չարախորհուրդ և ի դըժնամիտ հազարապետէն իւրմէ Միհրներսեհէ, հաճեալ ընդ խմաստն և գովեալ՝ յայտնէր մոգուցն և այլ աւագանւոյն Արեաց զբանս ամենայն Միհրներսեհի: Եւ ամենայն Արեաց առ հասարակ զարմացեալ և գովեալ զխրատն, վաղվաղակի կոչէր ըզմոգսն, և գրեալ զօրէնս մոգութեանն՝ տայր բերել ի Հայս: Եւ արարեալ հրովարտակս առ ամենայն Հայոց աւագանին և գրէր այսպէս:

ԻԲ. Թագաւորացն առաջնոց՝ որ նախ քան զիս՝ իմ նախնիքն էին և զայս Թագաւորական գահ ունէին, ոչ գիտեմ եթէ յաղագս այլ ինչ մեծ անպարապութեանց, և թէ չխորհելով զայսպիսի ծանր և կարեւոր պէտս, չհոգացան իրացս: Իսկ իմ

զմտաւ ածեալ, ի մոգուցն և յայլ իմաստուն և յաւագ մարդկանէ Արեաց աշխարհիս տեղեկացեալ, թէ որ միանգամ ընդ իշխանութեամբ մերով Թագաւորութեանս են, որպէս օգտիւք և այլ հպատակութեամբ վայելեմք ի նոցանէ, եւս առաւել պարտիմք ընդ փրկութիւն և ընդ գիւտ ամենեցուն հոգւոց հոգալ և տանել. և եթէ յանկարծ ծուլացեալ տանիմք յայսպիսի մեծ հոգողութենէ, տեղեկացաք յօրինաց մերոց՝ թէ ծանր պատուհաս կրելոց եմք յաստուածոցն: Արդ եթէ մեք պատուհասիմք վասն չբողոքելոյ ումեք ի ձէնջ, ձեզ առաւել աւելի եւս արժանի է երկնչել, թէ հեղգայք ինչ յիւրաքանչիւր հոգւոյ օգտէ, զի ի մէնջ պատուհասիք և յաստուածոց: Վասն որոյ և զօրէնս մեր զըստոյգ և զարդար՝ գրեցաք և տուաք բերել առ ձեզ. և կամիմք եթէ որպէս դուք օգտակար աշխարհի էք և մեր սիրելի, զմեր արդեօք զարդար և զկշիռ օրէնս ուսանէիք և ունէիք, և չպաշտէիք զայնպիսի օրէնս՝ որ ամենեցուն մեզ յայտնի են թէ սուտ են և անօգուտ։ Արդ լուեալ ձեր զմեր հրամանսդ, կամաւ և սիրով յանձն առէք, և բնաւ ամենեւիմբ զմիտս ընդ այլ ինչ մի տանիք։ Այլ և այս կայ մեզ և մեզ, զի զկարծեցեալ զձեր օրէնսդ՝ առ մեզ գրել հրամայեցաք ձեզ, եթէ որպէս կորուսեալ էիք մինչեւ ցայսօր։ Եւ յորժամ դուք իբրեւ զմեզ ճանաչօղք ճշմարիտ մեր օրինացս լինիք, Վիրք և Աղուանք ըստ մեր և ձեր կամս չիշխեն ելանել։

ԻԳ. Եւ ընկալեալ զայսպիսի հրովարտակ ամենայն Հայոց Աւագանւոյն, և ընթերցեալ զամենայն գըրեալն ի հրովարտակին, և զայն եւս իմացեալ՝ թէ զօրէնս անօրէնութեան իւրեանց՝ գրով առաքէ առ նոսա, ծանուցեալ և զառ ի ծածուկ նենգս թշնամւոյն՝ զոր ձգէր խորամանկութեամբ յանպարտ հօտն

Քրիստոսի, տրամեալ առողջախորհուրդ ժողովուրդք սուրբ հօտին Քրիստոսի՝ ի կոր կործանեցան, թէ ընդէ՞ր իսկ բնաւ այսպիսի դառն լիթիւնօք ծնեալ ի նոցանէ ճառեցան իրքս. Մի՞ գուցէ, ասեն, աճեցեալ ի պակասամիտ և ի փառախնդիր անձինս թերահաւատ մարդոց, չարաչար ձգտեալ արմատս՝ կորնչիցին բազումք վրիպեալք ի ճշմարիտ և յարդար հաւատոցն Քրիստոսի։

Ժողովեցան այնուհետեւ ըստ հրամանի տանուտերացն Հայոց սուրբ եպիսկոպոսք ըստ գաւառաց աշխարհին Հայոց, և պատուական երիցունք և վանականք, որք էին այսոքիկ. Սուրբն[1] Յովսէփ, որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ զկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր ի ժամանակին. Տէր Անանիա Սիւնեաց եպիսկոպոս, Տէր Մուշէ

---

[1] Յամենայն ձձ. և տպ. օր. Եւ Յովսէփ.

Արծրունեաց եպիսկոպոս, Տէր Սահակ Տարօնոյ եպիսկոպոս, Սուրբն Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս, Տէր Մելիտէ Մանձկերտոյ եպիսկոպոս, Տէր Եզնիկ Բագրեւանդեայ եպիսկոպոս, Տէր Սուրմակ Բզնունեաց եպիսկոպոս, Տէր Թաթիկ Բասենոյ եպիսկոպոս, Տէր Երեմիա Մարդաստանի եպիսկոպոս, Տէր Գադ Վանանդեայ եպիսկոպոս, Տէր Բասիլ Մոկաց եպիսկոպոս, Տէր Եղբայր Անձեւացեաց եպիսկոպոս, Տէր Տաճատ Տայոց եպիսկոպոս. Տէր Քասու Տարբերունոյ եպիսկոպոս, Տէր Զաւէն Մանանաղւոյ եպիսկոպոս, Տէր Եղիշէ Ամատունեաց եպիսկոպոս, Տէր Երեմիա Ապահունեաց եպիսկոպոս: Այսոքիկ ամենեքեան եպիսկոպոսք, և ի պատուական երիցանց՝ սուրբն Ղեւոնդ, և Խորէն ի Մրենեայ, և Գաւիթ, և այլ պատուական երիցունք, և աւագ վանականք բազումք, հանդերձ սքանչելի և հրեշտակակրօն տերամբն Աղանաւ, որ էր յազգէն Արծրունեաց:

Եւ որք ի նախարարացն էին ժողովեալք, տէրն Սիւնեաց Վասակ, և տէրն Արծրունեաց Ներշապուհ, Վրիւ Մաղխազ, տէրն Մամիկոնէից և սպարապետն Հայոց Վարդանն, տէրն Վահեւունեաց Գիւտ, տէրն Մոկաց Արտակ, տէրն Անձեւացեաց Շմաւոն, տէրն Ապահունեաց Մանէճ, տէրն Վանանդեայ Առաւան, տէրն Արշարունեաց Արշաւիր, տէրն Ամատունեաց Վահան, տէրն Գնունեաց Ատոմ, տէրն Պալունեաց Վարազշապուհ, տէրն Աշոցայ Հրահատ, տէրն Գիմաքսենից Համայեակ, տէրն Աբեղենից Գազրիկ, տէրն Առաւեղենից Փափագ, Վրէն Ձիւնական:

Այսոքիկ ամենեքեան աւագ տանուտեարք, հանդերձ աւագ սեպհօք և բարեպաշտ եպիսկոպոսօք, և աւագ քահանայիւք և վանականօք, պատասխանի հրովարտակին գրէին առ Թագաւորն Յազկերտ և առ ամենայն աւագանին Դրանն՝ այսպէս:

ԻԴ. Ի լուսաւոր և ի ճշմարիտ օրէնս մեր գրեալ է, որ ձեզ ընդունայնութիւն և բարբանջմունք թըւին, թէ Ծառայք հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ. և մեր ըստ կարի զօրութեան մերոյ երկուցեալ նախ ի հրամանէ օրինաց մերոց, և ապա ի ձեր ի մեծ թագաւորութենէդ, եդեալ ի մտի՝ ոչ միայն ըստ երկիւղի մարդկան որպէս առ ականէ ըստ օրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամաւ իսկ և յօժարութեամբ՝ յամենայնի զձեր կամս և զհրաման կատարել. և ծառայել ձեզ ոչ միայն կարասոյ ծախիւք, այլ և զարիւն անձանց մերոց և որդւոց ի վերայ ձեր դնել: Բայց վասն հոգւոց մերոց գիւտի և կամ կորստեան՝ զձեզ ինչ ամենեւին այդ հոգ մի աշխատեսցէ: Եւ վասն պարգևի և պատուհասի՝ որ երկնչիքդ յաստուածոցդ՝ յաղագս սիրոյ ոգւոց, որպէս ասէքդ, ի մեր անձինս և յոգիս հասցէ յԱստուծոյ

օգուտն այն և կամ պատիժ: Բայց դուք զիրսդ եւեթ զայդ լռեալ ներեցէք մեզ. քանզի որպէս անհնար է մարդկային բնութեանց փոխել զերկնից տեսչութիւնն յայլ տեսութիւն, նոյնպէս և անհնար է՝ որ ի բնէ ուսեալ եմք և հաստատեալ յօրէնս յայս, անսալ այդպիսի հրամանի և հաւանել. զոր և լոկ բանիւք անգամ լսել ոչ կարեմք, քանզի և կամիմք իսկ ոչ:

Այլ վասն օրինաց ձերոց, զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ, մեք ձեզ ոչ երբէք լսեմք: Մինչ որ այդր լինիմք ի դրանն, և կամ ի մոգուցդ՝ որ ձեր օրէնսուսոյցքդ իմն կոչին, այսպէս արարեալ արհամարհեմք. թող թէ և գրոց եւս յօժարեցուցանէք զմեզ, կարդալ և լսել որ ինչ ոչ է մեզ պիտոյ և խնդիր: Այլ յառաւել եւս պատուելոյ ըզթագաւորութիւնդ ձեր՝ և բանալ անգամ զգրեալդ կամ տեսանել ոչ կամեցաք. զի զօրէնս՝ զոր Ճանաչեմք եԹէ սուտ են և անմիտ մարդոյ բարբանջմունք, զոր բազում անգամ մեր լուեալ է ի ձեր անուանեալ սուտ վարդապետացդ, և տեղեակ եմք իբրեւ զձեզ, զայն ոչ կարդալ պարտ է և ոչ լսել: Վասն զի ընդ կարդալն՝ հարկիմք և ծաղր առնել, ուստի օրէնքն և օրէնսդիրքն և որք պաշտեն զայդպիսի խաբէուԹիւնս՝ ի միասին Թշնամանին: Յաղագս որոյ և ոչ զմեր օրէնս գրել և տալ բերել առ ձեզ՝ ըստ հրամանիդ ձերոյ՝ ի դէպ և պատշաճ համարեցաք: Զի եԹէ զձեր սուտ և զարժանի ծաղու օրէնսդ չհամարեցաք արժանի կարդալոյ և մատուցանելոյ ի մեզ, զի մի Թշնամանեսցուք ըզձեզ՝ ծաղր առնելով զօրէնօքդ, զոր ըստ ձերում խակ մեծի խրատոյդ պարտ էր զմտաւ ածել ի գրելն և ի տալ բերելն առ մեզ, մեք զիա՞րդ զայսպիսի զաստուածային և զՃըշմարիտ օրէնսն՝ գրիցեմք առ ձեր անդիտուԹիւնդ, յայպանումն և ի

Թշնամանս: Բայց այս եւեԹ ձեզ ի հաւատոյս մերոյ յայտնի լիցի, զի տարերց ոչ ծառայեմք, արեգական և լուսնի, հողմոց և կրակի, որպէս դուքդ. և բազում աստուածոցդ՝ զոր անուանէքդ դուք ի յերկրի և ի յերկնի, պաշտօն ոչ մատուցանեմք: Քանզի ուսաք և հաստատեալ ծառայեմք միում միայնոյ Ճշմարտին Աստուծոյ, որ արար զերկինս և զերկիր և զամենայն ինչ որ ի նոսա. և նա միայն է անուանելոցդ ի ձէնջ աստուածոցդ՝ Աստուած և արարիչ, Թագաւոր Թագաւորաց և տէր տերանց. և նմա միայնոյ վայելէ ամենայն բանաւորաց՝ մատուցանել երկրպագուԹիւն և պաշտօն:

ԻԵ. Եւ գրեալ զայս ամենայն բանս ի նամակին սուրբ քահանայից ժողովոյն, և հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, ետուն տանել առ Թագաւորն Արեաց Յազկերտ: Եւ նորա հրամայեալ կոչել զմոգսն և զամենայն աւագսն դրանն, ետ բանալ զնամակն՝ զոր առաքեցին Հայք, և կարդալ առաջի ամենեցուն։ Եւ լուեալ զբանս նամակին թագաւորն հանդերձ մոգօքն, և ամենայն աւագանեաւ դրանն, և սրտմտութեամբ բարկութեան գրգռեալ՝ հարցանէր ցմոգսն և ցամենայն Արեաց աւագանին, թէ ձեզ զի՞նչ թուի, ի ծառայից այդպիսի աներկիւղ համարձակութեամբ գրել առ իւրեանց տէրն։ Իսկ դասք մոգուցն և ամենայն մեծամեծացն աւագանւոյն դրանն՝ յոտն կացեալ ասացին, թէ զնոցա կորուստն անձանց իւրեանց և աշխարհի գրեալ է առ ձեզ. բայց ձեզ թէ որպէս պարտ է ծանուցանել նոցա զձեր տէրութիւն և զնոցա ծառայութիւն, զայն դուք իշխէք։ Առաւել եւս գրգռեալ ըզթագաւորն և զամենայն աւագանին, ասելով. Եթէ ոչ ուստէք ունէին նոքա յայլուստ օգնականութեան յոյս, զայդպիսի բանդ ի միտս իսկ իւրեանց նկատել չիշխէին, թող թէ

նամակաւ առ ձեր թագաւորութիւնդ առաքել։ Զայս չարախորհուրդն Միհրներսեհ ասէր։

Եւ թագաւորն Յազկերտ իբրեւ լուաւ զայս ամենայն ի մոգուցն և յամենայն դրան աւագանւոյն, սրտմտութեամբ զայրացեալ՝ հրաման ետ վաղվաղակի հրովարտակս առնել յաշխարհն Հայոց և Վրաց և Աղուանից։ Եւ հրամայէր գրել յերեսին հրովարտակին, զի ամենայն տանուտեարքն և աւագ սեպուհքն երեցունց աշխարհացն՝ փութով և անխափան ի դուռն եկեսցեն. և որ ոք, ասէ, ծուլացեալ յապաղեսցէ, առանց ամենայն թողութեանց՝ մահու պատուհաս կրեսցէ։ Եւ հասեալ հրովարտակս այս յերեսին յաշխարհն Հայոց, Վրաց և Աղուանից, և ընթերցեալ առաջի նոցա, իբրեւ լուան զայնպիսի ստիպով կոչումն զամենեցունց, անդէն և անդ գիտացին զպատճառս իրացն՝ թէ չէ խաղաղութեամբ, այլ կորստեան ոգւոց է ստիպումն կոչմանս այսորիկ. տրտմեալք աղմկէին, և յԱստուծոյ օգնականութիւնն ապաստանեալ ապաւինէին:

Պատգամաւորութիւն այնուհետեւ երեքին աշխարհքն առ միմեանս առնէին և ուխտադրութիւնս, և բազում երդմամբ Աւետարանին հաստատէին: Խորհէին, չերթալն որպէս ապստամբութիւն կարծեցուցանել, և զերթալն՝ խռովեալք տարակուսէին. հաշուէին զերթալն լաւագոյն, և ելից իրացն զԱստուած կոչէին օգնական: Բայց զիւրեանց զմիտս և զբանս և զխորհուրդս՝ միջնորդութեամբ սրբոյ Աւետարանին՝ անքակ և աներկեւան առ միմեանս հաստատէին. Թէ Երթամք, այո՛, այլ ուրանալ զարարիչն երկնի և երկրի ոչ հաւանիմք: Եւ այս կատարի մեզ յԱստուծոյ, յորժամ ցուցանեմք զմեզ Քրիստոսի մի մարմին և մի հոգի. յիշելով զսուրբ զառաքեալսն՝ զքարոզքն սուրբ եկեղեցւոյ, որոց

էր սիրտ մի և ոգի մի. որոց բարեխօսութեամբ ուղղեսցէ զմեր պատասխանիս առաջի ահեղ Թագաւորին՝ փրկիչն մեր և տէր Յիսուս Քրիստոս, և պահեսցէ զմեզ յարձակմանէ չար գազանին, որ դիմեալ գայ ի վերայ մեր. քանզի ոչ երբէք Աստուած զմիաբանեալս ի բարի կամս՝ եթող ի ձեռաց: Իսկ եթէ ոք որոշեալ ճեղքեսցի յայս ուխտէս միաբանութեան, և Որդի մարդոյ՝ որպէս և ինքն իսկ ասէ, ուրացեալ ընկեսցէ զայնպիսին յերեսաց իւրոց առաջի Հօր և հրեշտակաց երկնից:

Եւ այսպէս միաբանեալք ուխտիւք և երդմամբ երեքեան աշխարհքն, Հայք, Վիրք և Աղուանք, գնացին ի Դուռն:

Եւ որք ի ժամուն ի մեծամեծ աւագանւոյն Հայոց՝ յուղի անկեալ ճանապարհորդեցան՝ այսոքիկ են: Ի տոհմէն Սիւնեաց՝ Վասակ Սիւնեաց տէրն, որ և ի ժամուն մարզպանն էր Հայոց. և ի տոհմէն Արծրունեաց

Ներշապուհ. ի տոհմէն Ռուշտունեաց Արտակ. ի տոհմէն Խորխոռունեաց Գադիշոյ. ի տոհմէն Մամիկոնէից Վարդան, Հայոց սպարապետ և տէրն Մամիկոնէից. ի տոհմէն Մոկաց Արտակ. ի տոհմէն Ապահունեաց Մանէճ. ի տոհմէն Ամատունեաց Վահան. ի տոհմէն Վահեւունեաց Գիւտ. ի տոհմէն Անձեւացեաց Շմաւոն. և յաշխարհէն Վրաց բդեշխն Աշուշա, և այլ տանուտեարք աշխարհին։

ԻԶ. Եւ հասեալք ամենեքեան առքա ի դուռն՝ յանդիման եղեն նախ մեծամեծացն դրան արքունի, և ապա Թագաւորին Յազկերտի։ Հրաման տուեալ արքային Պարսից Յազկերտի առ վաղիւն, որպէս զի ամենայն աւագանին դրանն, հանդերձ երեւելի մոգօք, առաջի նորա լցին ի խորանին։ Եւ ասացեալքն ի Թագաւորէն կատարէին առ վաղիւն։

Ապա հրամայէր զուգեկեալսն ի Հայոց, ի Վրաց և յԱղուանից զառաջեաւ ածել։ Եւ նախգոյն հարցեալ ցՀայոց տանուտեարսն և ցսեպուհսն, ասէր. եթէ Նախ և առաջին կամիմ լսել ի ձէնջ, եթէ զի՞նչ համարեալ եմ ես ձեզ, կամ թէ դուք որպէս կարծէք զձեր անձինս լինել իմ։ Եւ նոցա պատասխանի արարեալ միաբան ասացին. եթէ Այդ հրամանիդ տեսութիւն և գիտելութիւն՝ և առանց պատասխանի լսելոյ ի մէնջ՝ յայտնի է ամենայն Արեաց և Անարեաց։ Եւ Թագաւորն անդրէն երկրորդեալ ասաց, եթէ Յայտնի և անծածուկ են այնոցիկ՝ որ ընդ իմով իշխանութեամբ են և հրամանի իմում ընդդիմանալ չիշխեն ամենեւին. բայց ես ի ձէնջ կամիմ լսել, և զձեր ճանաչողութիւնդ կամիմ գիտել, եթէ զի՞նչ հաշուեալ կարծէք զիս. ասացէք ցիս։ Եւ նոցա պատասխանի արարեալ ասացին. եթէ Մեք զձեզ Թագաւոր գիտեմք, որպէս ամենեցուն՝ առաւել եւս մեր. իշխանութիւն ունիս նման Աստուծոյ ի վերայ մեր և ամենայն մարդոյ՝ որ է ի թագաւորութեան քում, ապականել և կեցուցանել:

Եւ Յազկերտի արքայի լուեալ ի նոցանէ և ամենայն դրանն աւագանւոյն զայսպիսի պատասխանիս, ասէ ցնոսա թագաւորն Յազկերտ. Այդ պատասխանիք ձեր՝ ի նամակէն զոր ետուք բերել առ իս՝ շատ հեռի են և աննմանք: Վասն զի ի նամակին յայտ արարեալ էր, եթէ իւիք իւիք՝ որովք ծառայեմք քեզ, և կամաց քոց և հրամանի չընդդիմացեալք հաւանիմք. և է ինչ զոր ոչ քեզ պարտ է ասել և ոչ մեզ հնազանդել և յանձն առնուլ: Արդ ի մեր թագաւորութենէս և յամենայն Արեաց՝ ի ձէնջ նախ և առաջին կարեւոր և պիտոյ ի խնդիր՝ այդ է, և այդու ճանաչի մեր առ ձեզ տէրութիւն[1] և

խնամարկութիւն, և ձեր առ մեզ արդարամտութեամբ ծառայութիւն և հնազանդութիւն: Զի զվաստակոյ և զօգտէ, որ մինչեւ ցայսօր ձեր առ մեզ թագաւորս և առ Արեաց աշխարհս ցուցեալ է՝ դոհ եմք. և արդ կամիմ պատուով և մեծամեծ փառօք արձակել զձեզ յաշխարհն ձեր, միայն թէ զայդ եւս զիմ կամս, որ վասն ձեր հոգւոյ փրկութեան հաւատացաք՝ յանձն առնուք, և դառնայք ի կորստեան ճանապարհէն, յորում ցայժմ իբրեւ զկոյր մի ի խաւարի շրջեալ էիք: Ապա եթէ այլազգագոյնս ինչ խորհիք, և արդարեւ յորում միտս և մոլար օրէնս ցայժմ կեցեալ էք և ի նմին յամառեալ պնդիք, դուք Հայք, Վիրք և Աղուանք, առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձէնջ օգուտս և վաստակ, այլ կնաւ և որդւովք և ազգաւ կորուսանեմ ի միջոյ:

Եւ լուեալ զայս ամենայն բանս պատուոյ և խոստմանց և մահու ընպառնալեաց ի Թագաւորէն Պարսից Յազկերտէ՝ երեցունց աշխարհացն ազատանւոյ, լռեցին առ վայր մի այլքն։

---

[1] Աստի սկիզբն առնէ երկաթագիր մագաղաթին հատուած, ըստ որում և այլ օրինակք ուղղեցին,

Բայց յառաջ կացեալ աներկիւղ և քաջասիրտ մտօք Վարդանայ Մամիկոնէից տեառն և Հայոց սպարապետի, պատասխանի ետ Թագաւորին Յազկերտի առաջի ամենայն բազմութեանն. Եթէ բազումք են յայս երից աշխարհաց յազատորերոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք, և շատ են՝ որ ի խոնարհ են. զվաստակ և զհպատակութիւն՝ զոր ծառայից պարտ է առ իւրեանց տեարսն և առ Թագաւորս առնել, զայն նախ դու՝ որ ամենեցուն տէրդ ես՝ և ապա ամենայն Արիք, զիմ և զիւրաքանչիւր ի սոցանէ մինչեւ ցայժմ, քաջ գիտէք, և ոչինչ է պիտոյ ինձ և կամ ումեք ի սոցանէ զիւր զվաստակ և զսպաս ծանուցանել ձեզ։ Եւ յայսմհետէ և յառաջ ի մահ այսպէս եդեալ է իմոյ անձինս,

զի եթէ է և գոյ հնար առնել[1] զմի անձն իմ բազում անձինս, զոյժ և զյօժարութիւն կամաց առաւել ևս քան զնոյնս, զկեանս և զկարասի՝ որ գամ մի յիմում տանս կայ՝ ձեր առնելով, և ի վերայ Արեաց տեառն և ի վերայ Արեաց աշխարհի եդեալ է ի մահ մաշել։ Բայց զօրէնս՝ զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ՝ թողուլ, և ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հնար։ Զի եթէ ի մարդոյ ընկալեալ էր զարդար վարդապետութիւնն՝ զոր հաստատեալ է ի միտս իմ, գիտէի թէ ճըշմարիտ են՝ և ուրանայի, ողորմելի զանձն իմ համարէի. Թող թէ օրէնս՝ զոր ընկալայ և ուսայ ի բերանոյ Աստուծոյ, վաճառել ընդ երկիւղի մարդոյ և մնոտի փառաց. քաւ լիցի։ Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մեռանել, քան թէ կալ

[1] Աստ վախճան առնու առաջին մասնն երկաթագիր հատածին։

ուրացութեամբ առանց Աստուծոյ։ Իսկ այլքս, որ կան առաջի ձեր ամենեքեան՝ որ են ի քրիստոնէական կարգէ, բաւական է իւրաքանչիւր ոք ընդ անձին իւրոյ տալ պատասխանի։

Եւ լուեալ այլ ազատանւոյն, որք էին յերից աշխարհաց՝ Հայոց, Վրաց և Աղուանից, զպատասխանին աներկիւղութեամբ զսպարապետին Հայոց Վարդանայ, և զսաստիկ արտմութիւն զտեսլեան թագաւորին, ետուն պատասխանի և ասեն. Ներեսցէ մեզ արքայ աւուրս ինչ խորհել ընդ միմեանս, և առնել ձեզ պատասխանիս հաստատապէս միաբանութեամբ. վասն զի յաղագս հոգւոց ընտրողութեան խնդրին ի մէնջ պատասխանիքդ, յորում կայ առաջի գիւտ և կամ կորուստ յաւիտենական։ Եւ ոչ է պարտ ստիպով և անքնին մտօք առաջի ձեր առնել այդպիսի մեծի խնդրոյ դարձուած բանից. քանզի զնախնի և ըզսովորական հայրենի աւանդութեան մերոյ խնդրէք զքակտումն, և ըզյանձնառութիւն բռնադատէք օրինաց՝ որոց ոչ եմք եղեալ մեք և կամ հարք մեր ընդունօղք և սիրօղք։ Եւ թագաւորին ամենայն աւագանեաւն յանձն առեալ, հաւանեցան բանիցն. և շնորհեալ նոցա զժամակալութեան խնդիրն, արձակեցին զատեանն։

ԻԷ. Յայնժամ ի մի վայր ժողովեալ նախարարացն ամենեցուն, որք էին յերեցունց աշխարհացն՝ Հայոց, Վրաց և Աղուանից, և տարակուսեալք յանձինս իւրեանց, խորհուրդ ի մէջ առեալ՝ թէ զինչպիսի հնարիւք և մտածութեամբ ելս իրացն կարասցեն գտանել. և յածեցուցեալ զմիտս ի բազում յուզմունս խընդրոց զսակաւ աւուրս, յայս միտս առ վայր մի հաւանեցան և հաստատեցան, եթէ այլ ոչ ինչ գոյ մեզ հնար զերծանել յորոգայթէս, զոր ձգեալ չար որսորդին սատանայի պաշտեաց զմեզ, բայց եթէ առ ժամ մի յանձն առնումք պատճառանօք զհրամայեալս նոցա. և երթեալ իւրաքանչիւր յաշխարհ, այնուհետև կամ կեամք ծառայելով Ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի՝ յոր ծնաք աւազանին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի և նորին զաւակի, և կամ թողեալ զաշխարհ՝ գնամք իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ և որդւովք, ապաւինեալք և հաստատեալք ի բան կենարար Փրկչին՝ որ ասէ. թէ Յորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք ի միւսն: Ապա եթէ զանձանց միայն զփրկութիւն եդեալք ի մտի՝ ընդդիմանամք անօրէն հրամանաց իշխանին, անթիւ բազմութեան արանց և կանանց, ծերոց և տղայոց լինիմք պատճառ յաւիտենից կորստեանն. զորս խաղացուցեալ այսր՝ զընաւս ծառայեցուցանեն անօրէնութեանց պաշտամանց ազգաց յազգս:

Արդ թէպէտ և ածեալ ուրուք զմտաւ զայսպիսի որոշողութեամբ առանձինն, և զնոյնս դարձեալ խորհեալք միաբանութեամբ առ միմեանս զաւուրս սակաւս զցայգ և զցերեկ, սակայն ոչ իշխէին յայտնել զօրավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից զմտածութիւն միաբանութեան իւրեանց. Ճանաչելով ի միտս իւրեանց, թէ նմա ոչ է հնար յանձն առնուլ և հաւանել այսպիսի խորհրդոյ, ունելով զանշարժ զհաւատ հոգւոյն իւրոյ ի վերայ հաստատնոյ վիմին Քրիստոսի: Բայց սակայն և զչյայտնելն նմա և չպատմել զայս ամենայն, չկարէին հանդուրժել. քանզի գիտէին եթէ առանց նորա ամենայն խորհեալքն ի նոցանէ և պատճառագրութիւնք և արարուածք՝ թերիք են և անկատարք: Զի թէպէտ և կարծէին լինել կարող ըստ պատճառախնդիր խորհելոցն՝ զերծանել խաբէութեամբ և գողանալ զմիտս թագաւորին և զամենայն Արեւաց հրապարակին, և դառնալ յիւրաքանչիւր երկիր, սակայն գիտէին թէ թերակատար և ոչ լիապէս լինի նոցա գործ խորհրդոյն և խրացն առաջարկութիւն: Վասն զի տեսեալ էր ամենեցուն և լիով ի գրոց ճանաչէին, եթէ ամենայն իրք այնպիսի գործոյ ի բնէ յոլով Մամիկոնէիցն ազգաւ և նոցա միաբանութեամբ եղեալ էին ի գլուխ:

Որոց ածեալ զայս ամենայն զմտաւ նախարարացն ամենեցուն և սեպհացն, որք էին ի դրանն ժողովեալք, միաբան եկին առ տէրն Մամիկոնէից և Հայոց զօրավարն Վարդան, և յայտնեալ նմա զխորհուրդն՝ պատմեցին զիւրեանց զիմաստս զամենայն և զոր խորհեալ էին առնել. յուսեալ ի նոյնս թախանձումն և աղերս ամենեցունց, ասէին. Հայեաց, ասեն, ի մեզ անընդոստ մտօք. հայեաց, ասեն, և յառաջիկայ դիպմունս բազմութեան բիւրոց մարդկան պատահելոց չա-

րաչար աղէտից. յիշեա զհառաչանս մարց, զմտաւ ած զողայոց ողբումն, զծերոց ստիպով և զպառաւանց վարելոց յօտարութիւն, և այլ ամենեցունց դիպելոց այսպիսի անհնարին և չար վշտաց: Թէ լոկ միայն մարմնոյ աշխատութեամբ և մահուամբ էր կրել զայս ամենայն, համայն ծանր էր և դառն և արժանի լալոյ, թող թէ առ հասարակ առաջի հոգւոյ և մարմնոյ գայթակղութիւն և կորուստ: Եւ ոչ եթէ լոկ հարեւանցի լինի հասելոյ վտանգիս վախճան, այլ ցանկ մածեալ խաւար ամբարշտութեան թանձրամածութեամբ ունելոց է զսուրբ եկեղեցիս մեր և զժողովուրդս, զկանայս և զծնունդս մինչեւ յաւիտեան: Եւ եթէ դու միաբանելով մերում խորհրդոյս՝ կարասցես առ վայր մի հաւանեցուցանել զքո միտդ, գիտեմք զի ողորմութեան դիպիմք բազումքս. այլ և ոչ ընդհանուր եկեղեցիք երեցունց աշխարհացն մատնին յաւեր, և ոչ վարին ի գերութիւն բովանդակ աշխարհացն բնակիչք, զի ոչ շարժի սուրբ հաւատն ի հիմանէ· այլ թէ և առ վայր մի դղորդ հասանէ՝ կանգնէ հաստատ անդրէն և հաստատէ աջ ամենակալին։ Եւ այս լինի հաստատ այսպէս, եթէ կարասցես վայր մի հիւանդանալ վասն մեր, որպէս զի ողջացուսցէ զմեզ քեւ հանդերձ ամենագթածն բժշկի՝ Բանն Աստուած։

Եւ լուեալ զայս ամենայն բանս զօրավարին Հայոց Վարդանայ տեառըն Մամիկոնէից ի նախարարացն Հայոց, Վրաց և Աղուանից, ամենեքին ոչ առնուին յանձն լսել և հաւանել այսպիսի բանից, և կամ ընաւ հաղորդ լինել այսպիսի խորհըրդոյ· այլ յոյժ խռովեալ մեծաձայն գոչմամբ ասէր ցամենեսեան· թէ Մի՛ լիցի ինձ ասել արարչին իմում՝ պատճառանօք և կամ ճըշմարտութեամբ, և մի ուրանալ զայն՝ առաջի անօրէն և մահկանացու աշ-

գի, որ ուրանայ զուրացօղս իւր առաջի Հօր և հրեշտակաց սրբոց։ Քա՛ւ լիցի ինձ յաղագս զմտաւ ածելոյ զկարիս և զվիշտս զկնոջ և զորդւոց և զազգի, տալ ի մոռացումն զոր ասէն, թէ՝ Որ սիրէ զկին և զորդիս առաւել քան զիս, չէ ինձ արժանի։ Այլ դուք որ այժմ յերեցունց աշխարհաց եկեալդ էք տանուտեարք և սեպուհք, շնորհիւ ողորմութեամբն Քրիստոսի լի էք ամենայն զօրութեամբ և լաւութեամբ· զի ըստ ազատութեան արուեստի առաւելեալ էք ամենայն հրահանգիւ, և ճանաչիք երեւելի ի մէջ սպայից և ի մէջ ամենայն ազգաց, և ի մարտս և ի կազմս քաջութեամբ· իսկ զճըշմարիտ և զարդար հաւատն ուսեալ էք յԱստուծոյ ի ձեռն առաքելանման հովուին սրբոյ Նահատակին Գրիգորի և նորին զաւակի· բաւական էք ընդ իւրաքանչիւր անձին տալ պատասխանի, և որպէս խորհիք՝ կարիցէք առնել· այլ ինձ ոք ի ձէնջ՝ զոր ինչ անհնար է ինձ լսել բանիւք, թող թէ և առնել արգեամբք, մի ասէք:

Եւ լուեալ զայս ամենայն ըղխօսս՝ բազմութեան նախարարացն աշխարհացն երեցունց ի զօրավարէն Հայոց ի տեառնէն Մամիկոնէից Վարդանայ, թէպէտ և յանհնարին տրտմութիւն ընկղմեալք խռովէին, այլ սակայն ոչինչ թոյլ տուեալ լինէին ի բանիցն առաջարկելոցն. խմացեալ և առ կարիս վտանգին և այլ հնարս մաղթանաց: Եւ ժողովեալք ի մի վայր՝ կոչէին առ ինքեանս զիշխանն Մոկաց զԱրտակ, և զնա առաքել փութացուցանէին՝ անձանձրոյթ խանդաղատանօք նըստել առանձինն և խօսել ընդ սպարապետին իւրեանց՝ տեառն Մամիկոնէից տոհմին: Եւ նա ինքն էր այր համեստ, մտացի և քաջ. և տէրն Մամիկոնէից Վարդան առաւելապէս պատուով սիրէր զԱրտակ: Որ և հաւանեալ հրամանի նախարարացն Հայոց, յանձն առնոյր ամենայորդոր փութով ջանալ ընդ նմա, յարաժամ աղաչել. զոր և առնէր իշխանն Մոկաց Արտակ, մերթ առանձինն և մերթ հանդերձ աւագանեաւն Հայոց՝ ըստ յանձնառութեանն իւրոյ. որք ոչ դադարէին զցայգ և զցերեկ խօսել ընդ նմա զնոյն բանս և զաղերս ի բազում աւուրս: Զորս և ստիպագոյնս և անհանգիստ ի նոյն խորհուրդս ճեպեցուցանէր զամենեսեան բդեշխն Վրաց Աշուշայ, որ էր այր խելացի և խորհրդական, և ունէր կին յազգէն Արծրունեաց զքենի մեծի սեպհին Մամիկոնէից եղբօրն Վարդանայ. որ եւս առաւել յորդորէր յառաջադրեալն Աշուշայ զամենայն բազմութիւն նախարարացն Հայոց և զտէրն Մոկաց զԱրտակ, խօսել ընդ զօրավարին Հայոց Վարդանայ զայս ամենայն առանց յապաղելոյ: Եւ ինքն զնոյն խօսել ընդ նմա ոչ կասէր անձանձրոյթ բողոքելով, և ըստեղ հայեցուցանելով յիրսն, թէ որչափ յանհաւանելն քո՝ կորուստ երեցունց աշխարհացն լինի, և ի հաւանելն և յանձն առնուլն՝ գիւտ բազմաց, և անձին ապաշխարութեան ակնկալութիւն։

Եւ տեսեալ նախարարացն և սեպհացն երեցունց աշխարհացն զկամս սպարապետին Հայոց Վարդանայ՝ այնպէս անշարժ և անհաւանս ի յորդորմունս խօսից նոցա և աղաչանաց, բերեալ հարկաւորէին այնուհետեւ մատուցանել նմա ի Սուրբ Գրոց առակս դիպողս՝ ըստ պատշաճի հանդիպելոյ ի ժամանակին, որք տեղեկագոյնք էին ի նոսա գրոց սուրբ եկեղեցւոյ, յիշեցուցանելով նմա որպէս առն ուսելոյ և տեղեկի, — քանզի յոյժ հմուտ էր և ընդել գրոց վարդապետութեան՝ ուսեալ և խրատեալ ի սուրբ հայրապետէն ի Սահակայ ի հաւոյն իւրմէ, — ըզգրեալսն սրբոյն Պաւղոսի յաղագս Արարչին, թէ որ ոչն գիտէր մեղս, վասն մեր մեղս արար։ Եւ դարձեալ զինքեան իսկ Պաւղոսի զիջանելն, և նզով զանձն տենչացեալ լինել՝ վասն ազգատոհմին փրկութեան, զոր գըրեալ ասէր ի թղթի Հռովմայեցւոց, եթէ Ուխտիւք խնդրէի ես իսկ ինքն նզովեալ լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց իմոց և զաւակաց և ազգականաց ըստ մարմնոյ, որք են Իսրայէլացիք, որոց որդէգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնսդրութիւնքն և պաշտօն և աւետիքն։ Ա՛ռ յանձն, ասեն, և դու լինել վասն մեր առակաւորս, նզովս. չես մեծ և առաւելեալ ի հաւատս արդարութեան քան զսուրբ առաքեալն Քրիստոսի Պաւղոս. բայց ժողովուրդքն Հայոց, Վրաց և Աղուանից յոյժ շատ են և առաւելին քան զժողովուրդն խաչահանուացն Հրէից։

Եւ յորժամ զայսպիսի բազում բանս և ստէպ թախանձանօք զաղաչանս դնէին առաջի զօրավարին Հայոց Վարդանայ երեցունց աշխարհաց սուտ տանուտերքն և սեպուհքն, բերէին այնուհետեւ և զսուրբ Աւետարանն, եդեալ ամենեցունց առ հասարակ զձեռս ի վերայ՝ երդնուլին, ասելով. Եթէ դու եւեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճառանօք զասացեալս թագաւորին, և զերծուցես զմեզ յորոգայթագիր թշնամւոյն յարձակմանց, ամենայն ասացելոց ի քէն լուիցուք և արասցուք, դնելով զանձինս մեր ի վերայ ուխտին սրբութեան, և հեղլով զարիւն մեր ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան: Եւ եթէ դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ և զամենայն ստացուածս և փախչել յօտարութիւն, ընտրեսցուք՝ հանդերձ կանամբք և որդովք. և սիրով յանձն առցուք զաղքատութիւն և զմուրողութիւն. միայն ի բարկութենէս եւեթ ապրեսցուք: Եւ որ ոք թուլացեալ ի բանիցս յայսցանէ՝ ստեսցէ ուխտիս այսմ, և նենգութեամբ որոշեսցի յերդմանէ սուրբ

աւետարանին, և ի միաբանութենէ բազմութեանս այսորիկ, որոշեալ ձեղքեսցի և նա նման Յուդայի, որ ձեղքեալ մեկնեցաւ ի գնդէն սուրբ առաքելոցն. և բաժին այնպիսոյն առանց ապաշխարութեան և թողութեան ընդ նմին լիցի մատնեալ անշէջ բոցոյն՝ զոր պատրաստեաց Աստուած սատանայի և արբանեկաց նորա: Եւ որ ինչ վնասք և կամ գերութիւնք և դղրդմունք աշխարհաց երեցունց հասցեն, յանձնէ այնպիսոյն և միաբանելոցն ընդ նմա խնդրեսցէ վրէժխնդիրն՝ մինչև ցյաւիտեան: Իսկ զբարի և զօգտակար պահպանութիւնն՝ զոր շնորհեալ փրկչին Քրիստոսի պարգևեսցէ բազում օգուտ երեցունց աշխարհացս, վասն քո առ վայր մի հաւանելոյդ մեզ, եղիցի ծնացեալ ժառանգութիւնն այն ի փրկութիւն թողութեան ոգւոյ քո և ազգի՝ մինչև ցյաւիտեան:

Եւ լուեալ զայս ամենայն բանս

ի բերանոյ երից աշխարհաց ազատանւոյն՝ զօրավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից, տեսեալ և զկնքել ամենեցուն ահաւորապէս երդմամբ զսուրբ աւետարան ուխտին, որոյ առաջի ուխտեցին և աւանդեցին կնքով, յարտասուս հարեալ՝ յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորիլն վասն երեցունց աշխարհացն և բազմութեանց ի Նոսա արանց և կանանց։

ԻԸ. Եւ այնպէս միաբանեալք ամենեքեան յանձն առնուին կատարել խաբէութեամբ զհրաման Թագաւորին, և երթեալք ի տուն մոխրանոցին, կէսքն ի Նոսա ցուցանէին, այլ ոչ ամենեքեան, զպատճառանօք և ոչ ճշմարտութեամբ զխոնարհումն[1] գլխոց՝ իւրեանց ընտանի պաշտամանն։ Եւ ոմանք թէ-

---

[1] 1. Ակսանի վերջին մասն երկաթագիր հատուածին ըստ որում ուղղեալ լինին այլ ձձ. և տպ. օրինակք։

պէտ և գիտէին զանյարական գլորումն այլ ցանկացողք աշխարհիս փառաց՝ փոխանակեցին զփառս անեղծին Աստուծոյ ընդ եղծանելի և անցաւոր կենաց աշխարհիս։

Եւ զայն տեսեալ Թագաւորին Պարսից և ամենայն մեծամեծաց դըրանն և մոգուցն, նուէրս ազգի ազգիս բազում խնդութեամբ մատուցանէին աստուածոց իւրեանց։ Խրախճան մեծ ուրախութեան առնէին յաւուրն յայնմիկ, հաշուելով զայն օր չլինել անշարժ հաստատութիւն Թագաւորութեան իւրեանց, կեալ խաղաղութեամբ աներկիւղ այնուհետեւ յամենայն թշնամեաց։ Եւ ագուցեալ զտանուտեարսն և զսեպուհս զերեցունց աշխարհացն զՀայոց, զՎրաց և զԱղուանից ի հանդերձս Թագաւորականս զարդարէին. այլ և բազում և այլ ազգի ազգի պարգեւօք և պատուովք, գիւղիւք և ագարակօք, ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից լցուցանէին զամէնեսեան. զորս և ի հրաժեշտի կացուցեալ՝ փութացուցանէին համանել յիւրաքանչիւր աշխարհ։

Տուեալ ընդ նոսա բազմութիւն սուտ վարդապետաց, զոր և մեզ անուանեն, յորդորէին ուսանել զուսմունս ծաղրելիս չաչմանց և ընդունչսարկու քարթնջմանց խօսան, որպէս զօձակոչսն և զորովայնախօսս. պատուէր տային յերեսին աշխարհին կարգել զխաբէութեան դպրոցս, և ուսուցանել առ հասարակ զընաւս՝ զարս և զկանայս՝ զուսմունս մոգուցն։

Որոց առեալ ի յանձն՝ զբազմութիւն մոգուցն տանել ընդ ինքեանս յօժարէին։ Երթեալք այնուհետև հրաժարեալք ի Թագաւորէն Յազկերտէ և ի մեծամեծ աւագանւոյն դրանն, գովութիւնս սուտս և շնորհակալութիւնս խաբէութեամբ իւրաքանչիւր ոք ի պատճառելոյն առ վայր մի ըստ իւրում զօրելոյ իմաստից մատուցանէին Թագաւորին և

ամենայն աւագանւոյն Արեաց, մանաւանդ առաւելագոյն չարաթունին Միհրներսեհի։ Եւ էր պատճառ շնորհակալութեանն յամենեցունց մոգաց այս. եթէ՝ Ամենայն Թագաւորք որ յառաջ քան զձեզ էին ի գահուդ յայդմ՝ ձեր նախնիքն, սիրէին զմեզ՝ հոգալով զմեր շինութիւն և զօգուտս մարմնաւորս, բայց դուք առաւել ցուցէք զմեծ սէր առ մեզ, զի զյաւիտենական կենդանութիւնն մեր զմտաւ ածէք ծանուցանել մեզ և պարգևել։ Եւ եթէ նախնեացն քոց ծառայեցաք յամենայնի յօժարութեամբ և կամաւ յամենայն պէտս՝ յոր և հրամայէին մեզ, իսկ քեզ՝ ամենայն անձին պարտ է ոչ իբրև զմի անձն սպասս մատուցանել, այլ որպէս զբազում անձինս զմի անձն առնել, և անձանձրոյթ հպատակել զցայգ և զցերեկ օգտախնդիր Թագաւորութեանդ. քանզի յաղագս գիւտի մոլորեալ ոգւոյս մերոյ փութով հոգացար։

Եւ սոքա իւրաքանչիւր անձին այսպիսի ինչ, և ևս առաւել, ըստ իւրաքանչիւր կարի ասացեալ գովութիւնս՝ լուեալ դադարէին։ Իսկ սպարապետն Հայոց Վարդան տէրն Մամիկոնէից՝ կարգեալ զիւրն զառանց պատճառանաց զանսուտ բանս և զլինելոց իրս, որպէս ի դէմս գովութեան թագաւորին և ամենայն բազմութեան աւագանւոյն Արեաց, ասէր այսպէս. թէ Զիմոց զնախնեացն զհպատակութիւն և զվաստակ՝ զոր յայս դուռս և առ ձեր թագաւորութիւնդ արարեալ է, ի ժամանակէ յորմէհետէ կարգեալ եմք ի ձեր ծառայութիւնդ, դուք ամենեքեան քաջագոյն գիտէք. և ինձ ոչ է պիտոյ յաղագս այդպիսի իրաց մի ըստ միոջէ տեղեկացուցանել զձեզ, զոր ստուգագոյն առաւել ճանաչէք քան զիս։ Իսկ թէպէտ և շատ նուազ եմ քան զիմ նախնիսն, սակայն որչափ կարն էր յիս, եդեալ էր ի մտի արդար վաստակօք

հաճել զմիտս ձեր. և ուր հասեալ էի ի գործ ի ձեր հրամանէ, տեսեալ էր զօրագլխաց ձերոց և իմ ընկերաց՝ ըստ իմ ուժոյ միամտութեամբ զիմ զգործն և զվաստակն։ Բայց արդ յայսմհետէ այսպէս կամք են, ջանամ զի թէ ցայժմ գործեալ ինչ իցէ՝ և ոչ արժանի անուան կամ գովութեան, յայսմհետէ հնարիմ ամենայն զօրութեամբ և ուժով՝ օգնականութեամբն Աստուծոյ՝ գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչև ցյաւիտեան։

Եւ զայս բան՝ որպէս ի շնորհէ Աստուծոյ, սպարապետին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից ասացեալ, զոր հռչակելոց էր զնահատակութիւնն որ առ Աստուած ի դարս յաւիտենից։ Եւ զայսպիսի ասացմունս լուեալ թագաւորին Պարսից և ամենայն աւագանւոյ դրանն, մեծաւ շնորհակալութեամբ զարմացեալք գովեցին զնա և գոհացան. քանզի ծածկեաց Աստուած զբան խոստմանցն զոր աստ գործել ընդ պարապեան Հայոց Վարդան՝ յաղագս մեծի անուան համբաւոյ, զոր պարգեւեաց նմա Աստուած զանուն նահատակութեան յաղագս յաւիտենից։

Եւ հրաժարեալք այնուհետև յամենեցունց երեքեան աշխարհք, Հայք, Վիրք և Աղուանք, առեալ ընդ իւրեանս զդասս բազմութեան մոգուց, դարձան յիւրաքանչիւր աշխարհս, հաստատեալ բազում անգամ և ի ճանապարհին զնոյն ուխտ երդման աւետարանին սրբոյ. հրաժարեալք և ի միմեանց գնացին յիւրաքանչիւր աշխարհս, այդ առնել միմեանց ի ժամանակի ըստ Աստուծոյ հրամանատարութեանն՝ զպէտս գործոցն զոր խորհեցան կատարել։ Բայց զբդեշխն Վրաց զԱշուշայ և զերկու որդիս իշխանին Սիւնեաց Վասակայ, զԲաբիկ և զԱմիրներսեհ, ոչ արձակեաց Թագաւորն Պարսից Յազկերտ ընդ այլ նախարարացն Հայոց. հայելով ի յառաջիկայ իւրացն անյայտութիւն, կասկածեալ զգուշացաւ։

ԻԹ. Արդ՝ եկեալ հասանէին տանուտեարքն Հայոց հանդերձ սեպհօքն և որ ընդ իւրեանս, յաշխարհս Հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք. որք ոչն տեսանէին ըստ յառաջ լուսաւոր եկեղցն ողջամբ յայնպիսի հեռաւոր ճանապարհէ։ Եւ եկեալ ընդ առաջ նոցա դասք պաշտօնէիցն Քրիստոսի, բերելով ընդ իւրեանս զնշան կենսատու խաչին և զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի, զձայն սաղմոսաց զոր երգեաց մարգարէն Դաւիթ Սուրբ Հոգւոյն շնորհիւ, որում և իւրեանք երբեմն ձայնակից եղեալք՝ առաւելագոյն քան զպաշտօնեայսն նուագէին զերգս երկնաւոր ցնծալից ուրախութեամբ։ Այլ անդ էր լսել զձայն լալոյ և զձայնս գուժի, գոչիւնս ողբոց և բարբառ ճչոյ, տղայք անձկոտք ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափոխեալս իմն, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս՝ զարհուրէին. ստէպ հայելով յերեսս մարցն, զորս տեսանէին կողկողագին միշտ և արտօսրաբուղխս, յաղագս որոյ և ինքեանք յարտասուս հարեալ տղայքն՝ ոչ ոք կարէր լռեցուցանել ի դայեկացն կամ ի դաստիարակացն։ Ընդ որ հայեցեալ այնոցիկ՝ որք պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ ուրացողքն էին, փութանակի և առ ժամայն կամէին յառնել և ընդ ինքեանց սուրն ելանել. որոց ոչ պիտէր և առ վայր մի կեալն, քան թէ զայնպիսի տեսանել զաղէտս և ժուժկալել. որք զկերակուրս ուրախութեան, ըստ բանի սաղմոսերգին, իբրեւ զմոխիր ուտէին, և զըմպելի իւրեանց արտասուօք խառնէին. քանզի ոչ ոք հաւանէր ընդ նոսա կամակից լինել

սեղանոյ, ոչ կին, ոչ որդի, ոչ ազատ, ոչ ծառայ ոք, և ոչ սպասաւորք։

Եւ էր այնուհետեւ տեսանել զամենեսեան քակտեալս ի միմեանց և պատառեալս. և զորոց քաղցր և ախորժակ բարբառ փրկչին Քրիստոսի, որ ասէր. Թէ Են և այլ ոչխարք՝ որ ոչ են յայսմ գաւթէ, պարտ է և զնոսա ածել այսր՝ զի եղիցին մի հօտ միոյ հովուի ճշմարտի, զոր Աստուած միացոյց, և կատարէր զասացեալսն. յանկարծակի ապստամբեալ թշնամւոյն՝ ցրուեաց վեր ի վայր, և արար իբրեւ զհօտ՝ որոյ ոչ գուցէ հովիւ։ Վասն ամենայնի այսորիկ սուգ առեալ կոծէին կանայք աւագ ազատացն և պերճք ի հրապարակս, մանկամարդ առնականայք, օրիորդք ի սրահս դռնափակեալս, հարսունք ի սենեակս։ Սուրբ եպիսկոպոսք պատուական քահանայիւք և եկեղեցական ուխտիւ, ծերովք և տղայովք և ամենայն ժողովրդոցն բազմութեամբ՝ կառաչ բարձեալ լայնն ի տանն Աստուծոյ: Եւ էր տեսանել ծեփեալ արեանց հոսմամբք զամենայն դէմս ուղղափառ մարդոց:

Իսկ մոգուցն գունդք սախպով բռնադատէին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն, և յայլ ականաւոր և գեղեցիկ տեղիս, շինել տրուշանս և կարգել բեռնակիրս փայտակրաց ի պէտս կիզման չարատուածոյն անյագի. որոյ յուսեալն յանդգնեալ ոչ ինչ շնորհ ունի պաշտօնէիցն, և ի կրել արտաքս զաւելորդ թրքածս մոխրոցացն՝ ձանձրացուցանէ զգաղախադէմ զկրողսն պակշոտեալս:

Լ. Եւ արդ՝ տեսեալ զայս ամենայն չարիս տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետին Վարդանայ, կոչեալ առ ինքն զամենայն ընտանիս իւր, զեղբարս և զազատս և զծառայս և զամենայն միահամուռ զբազմութիւն գրան իւրոյ՝ սկսաւ խօսել ընդ նոսա և ասել. Ես ոչ

ուրացայ զարարիչն իմ և զտէր Յիսուս Քրիստոս՝ կամաւ և կամ առերկիւղի, քաւ լիցի. և ոչ զվարդապետութիւն և զհաւատս սրբոյ աւետարանին, զոր ուսոյց և հաստատեաց յիս ճշմարիտ հաւն իմ Տէր Սահակ, մերժեցի յինէն. այլ առ վայր մի մինչև ի ժամս յայս յաղագս ձեր ամենեցուն գիւտի կորեայ պատճառանօք, զի գտեալ զիս ձեօք հանդերձ՝ ապաշխարեցից և կեցից: Վասն զի ուսեալ եմ և յիշեմ զքարոզութիւն սուրբ մարգարէից, թէ Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեալն. և զոր ի միւսում վայրի Սուրբ Հոգին ասէ. Թէ Յորժամ դարձցիս և հեծեսցես, յայնժամ կեցցես: Արդ՝ փոխանակ զի թողի զնա պատճառանօք առ վայր մի վասն ձեր, կամիմ ստուգութեամբ փոխանակ այնր թողուլ զամենայն ինչ իրս կենցաղոյս այսորիկ մինչև իսպառ: Եւ որ ոք ի ձէնջ կամակից կարող էք լինել՝

արհամարհելով զամենայն սնոտի կեանս աշխարհիս, յանձն առեալ ձեօք հանդերձ վասն անուան Քրիստոսի՝ ընտրեմ գնալ յօտարութիւն։

Եւ նորա խօսեցեալ զամենայն այսպէս ընդ ընտանիս տանն իւրոյ, պատասխանի ետ նմա երանելի եղբայրն Հմայեակ և ասէ. Փութա կատարել զոր խորհիդ, և մի յապաղեր. քանզի ոչ ոք կարէ լինել երաշխաւոր անձին իւրում և ոչ ժամ մի. Աստուծով եթէ կեցցուք, և առանց խղճի մտաց վախճանի աւուրն դիպեսցուք, գամ մի չկարացեալք վաղ և կամ անագան զերծանել ի մահուանէ. Թէ մոլորութեամբ իցէ և թէ օտարութեամբ՝ նովաւ եւեթ կեցցուք, և անուամբ նորա պարծեսցուք զօրհանապազ։ Զուրացութեանն եւեթ զանունն ի բաց ընկեսցուք ի մէնջ, և խառնեալ ի հօտն Քրիստոսի՝ կամաւ յանձն առցուք զամենայն վիշտս որ և հասանէ ի վերայ մեր, եթէ սով,

եթէ սուր. և կամ թէ յօտարութեան՝ մոլորութիւն և վախճան։

Եւ այսպէս միաբանութեամբ արհամարհեալ զամենայն սնոտի մեծութիւն կենցաղոյս այսորիկ՝ առ ոչ ինչ համարեցան. այլ հանդերձ հաւանելովք ընդ ինքեանս դրամբ և ընտանեօք՝ դէմ եդեալ անցեալ ի կողմանս իշխանութեանն Յունաց ճեպէին, ուր և թագուցանել միաբանութեամբ և կամ աստ անդ ցրուել զանձինս կարասցեն։ Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի, որոյ անուն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարածատափոյ. ուր և սակաւ ինչ աւուրս կամեցեալ հանգչել, և զուշ եդեալ ճանապարհն գնալ պատրաստէին ըստիպով։

Յանկարծակի իրազգած եղեալ այսպիսի խորհրդոյ և գնացից յաշխարհէս Հայոց՝ զմեծէ սպարապետէն Հայոց, զտեառնէն Մամիկոնէից

Վարդանայ, հանդերձ եղբարբք իւրովք, դրամբ և ամենայն ախիւ՝ իշխանին Սիւնեաց Վասակայ՝ որ և մարզպան էր Հայոց ի ժամանակին, և ամենայն տանուտերացն Հայոց և սեպհացն, խորտակեալ սրտիւ զարհուրէին. զմտաւ ածեալ ամենեցուն, որք ի փրկութիւն անձանց իւրեանց խնդրէին, թէ արդ գիտեմք զի կորեաք ի սպառ. և ոչ է հնար մեզ զերծանել ի չարէս յայսմանէ մինչեւ իսպառ: Քանզի տեղեկացեալ ճանաչէին ամենեքեան՝ թէ առանց առաջնորդութեան ազգին այնորիկ և ոչ մի ինչ իրք և գործք աշխարհիս Հայոց երթեալ էին ի գլուխ: Խորհուրդ ի մէջ առեալ իշխանին Սիւնեաց Վասակայ հանդերձ ամենայն տանուտերամբք Հայոց և ազատ սեպհօք, և զմիտս ամենեցուն յիւր կամսն հաւանեցուցանէր, ասելով, թէ՝ պարտ է փութով զհետ զօրավարին Հայոց Վարդանայ Մամիկոնէի՝ քահանայս առաքել ըն-

տիրս և արս ազատս ի տանուտերացս Հայոց, և աղաչանօք դարձուցանել զնա այսրէն. զի առանց նորա մեր այս ամենայն կամք և խորհուրդք՝ և ոչ մի ինչ վճարին:

Եւ արարեալ նամակ իշխանին Սիւնեաց Վասակայ իւրով մատանեաւ, հրամայէր նամականի առնել և այլ ամենայն ազատ տանուտերացն Հայոց, և կնքեալ զնամականին իւրաքանչիւր ուրուք մատանեաւ, բերել և զկնքեալ աւետարանն ուխտին, և արս պատուականս յայտ արարեալ ի քահանայից, զերանելին Ղեւոնդ երէց, և զերանելի երէցն զԵրեմիա ի Նոր քաղաքէ, և զերանելի երէցն Խորէն ի Մրենոյ, և արս ազատս ի տանուտերացն Հայոց, զիշխանն Արշարունեաց Արշաւիր, զիշխանն Գիմաքսենից զՀմայեակ, և զիշխանն Աբեղենից զԳազրիկ. և տուեալ ցնոսա իշխանին Սիւնեաց Վասակայ զամենայն նամականին և զաւետարանն երդման, դեսպանս արձակէր զկնի նորա: Որք հասեալ գտանէին զնա և որք ընդ նմայն էին՝ յառաջագրեալ գեօղն յԱրամանայ:

Եւ ազդարարեալ՝ մատնէին զառաջեաւ, պատմէին երանելւոյն Վարդանայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետին, և առաջի եղբարցն իւրոց՝ Հմայեկայ և Համազասպայ, զպատճառս իւրեանց փութանակի հասանելոյն առ նոսա, զխորհուրդն և զխօսս հանդերձ երդմամբ որ եղեն ամենայն Հայոց՝ միաբանութեամբ իշխանին Սիւնեաց Վասակայ. յառաջ բերեալ և զաւետարանն երդման՝ ունէին առաջի երանելւոյն Վարդանայ և եղբարց նորա: Տային ի ձեռս նորա և զնամակն Վասակայ զտեառն Սիւնեաց և զայլոց ազատացն Հայոց և զեպիսկոպոսացն և զսեպհացն, և պատգամ կարճառօտիւ ամենեցուն բան, և ասէին ցերանելին. Թէ՝ Դու աւասիկ հանդերձ եղբարբքդ և հաւանեալ ընտանեօքդ, որք հոգացեալ էն ապրեցուցանել

ընդ քեզ զինքեանս, անձնապուրք լինիք, բայց մեք ամենեքեան կորընչիմք զանվախճան կորուստն: Վասն զի ոչ է հնար մեզ առանց ձեր, և ոչ զաւակի մերում երբեք պատահել փրկութեան և կեալ: Բայց որպէս հոգացեալ խնամ տարէք ձեզ, նոյնպէս և զայսչափ զբազմութեան ոգիս մի թողուք կորնչել. քանզի եմք աստ բազումք, որք և ազգախառն և արիւն ձեր եմք. պսակեցարուք և ընդ մեզ ի Քրիստոսէ, որպէս ցանկացեալ ջանայք ընդ ձեր միայն պսակիլն:

Եւ զայս ամենայն բանս լուեալ ի քահանայիցն և ի նախարար պատգամաւորացն եկելոց՝ սուրբ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ հանդերձ երանելի եղբարբքն իւրովք և զսուրբ աւետարան ուխտին տեսեալ, և զնամականին կարդացեալ զիշխանին Սիւնեաց Վասակայ զմարզպանին Հայոց, և զայլոց զիւրաքանչիւր ուրուք զընկերակցացն, պատասխանի ետ միաբանութեամբ ամենեցուն և ասէ· Ես և եղբարք իմ և ընտանիք կարեւոր՝ ընտրելագոյն քան զամենայն ինչ որ է յաշխարհի՝ համարեալ եմք ընտրել և գտանել զոգւոյն փրկութեան գին, և ուսեալ եմք հաստատուն և զանշարժ բանն որ ասէ· — յոր և հաւատացեալ եմք անշարժութեամբ, — թէ՝ Զի՞նչ օգուտ է մարդոյ թէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր կորուսցէ· և կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Եւ ոչ զմեր եւեթ զոգւոց խնդրեմք զօգուտն, այլ և ընդ այլոցն խնդամք ընդ փրկութեան: Եւ ոչ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ որոյ կարծիցի զայս զմէնջ, յորմէ ոչ ոք երբէք զանգիտեալ յազգիս մերում, ոչ երբէք· և թէ որպէս ի վերայ ընկերի բարւոյ՝ առաւել քան զանձին միշտ հոգալով՝ զանձն եդեալ է այժմ տոհմի, զայն և ամենայն՝ դուք Հայք՝ գիտէք ստու-

գութեամբ ի պատմութենէ գրոց, և ի լսելոյ ձեր յաւագաց: Բայց ի նենգաւոր խաբէութենէ ձերմէ՝ զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ, զայն ամենայն յիշելով, գնացեալ եմք լինել անձնապուրծք· որպէս ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ, և զձեր անձինս ի բաց ունելով, մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուց: Բայց սուրբ և երկնաւոր հրաւիրակիդ Աւետարանի՝ ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք· քաւ լիցի: Դուք թէ միամտութեամբ վարիք և կամ երկմտութեամբ, դուք գիտէք, և սուրբ Աւետարանդ՝ որ ճանաչէ զամենայն և դատի ըստ իրաքանչիւր գործոցն:

ԼԱ· Եւ զայս տացեալ սրբոյ առնն Վարդանայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, կամակցութեամբ երանելի եղբարցն իւրոց և սիրելեաց, դարձան անդրէն առ ընկերան իւրեանց ի բանակն Հայոց։ Եւ եկեալք ի միաբանութիւն բազմութեանն, ոչ առնէին դուլ և դադար խորհուրդք սրբոյ սպարապետին Հայոց Վարդանայ՝ լոկ միայն առանին կատարել քաջանայիւք և այլ բազմութեանն պաշտօնէիւք դըրանն իւրոյ՝ զպաշտօն կարգեալ ժամուցն, զոր զցայգ և զցերեկ բազում փութով վճարէին անյապաղ. այլ միաբանութեամբ ամենայն Հայովք երթալ յեկեղեցի ցանկայր։ Բայց թէպէտ և նեղէր չերթալով, այլ և կամաւ արգելեալ առ վայր մի՝ համբերէր իրացն, հոգալով և զպէտս ընկերացն որպէս իւրոյ տանն և անձին. մանաւանդ յաղագս Աշուշայի Վրաց բդեշխի և որդւոց իշխանին Սիւնեաց Վասակայ, զորս արգելեալ պահեաց անդրէն ի դրան թագաւորն Պարսից Յազկերտ։ Եւ զայս խորհէր սուրբն Վարդան, եթէ ոչ առ ի պէտս ինչ օգնականութեան իւրում առաջադրեալ գործոյն, քանզի չըխորհէր զյաղթութեան ինչ անուն գտանել, այլ զհեղումն արեան անձինն ի վերայ շինութեան ուխտի եկեղեցւոյ տենչէր ըմբռնել. բայց հոգայր իբրև զբարեսէր, թէ մի գուցէ դժուար ինչ արանցն ի թագաւորէն դիպի և վնասիցին։

Բայց իշխանն Ամատունեաց Վահան ոչ տայր դուլ և դադար զօրավարին Հայոց Վարդանայ. այլ մերթ ինքեամբ և մերթ այլովք ստիպէր՝ վաղվաղակի յայտնել զիրս ապըստամբութեանն, կարծեցուցանելով որպէս հոգւոյ եւեթ հոգալ զգիւտ փրկութեան. բայց ոչ հոգալով ինչ կարի յայն միտս՝ ըստ խօսիցն փութացուցանէր զյայտնել իրացն, այլ վասն մթերից առաջին ոխութեանն՝ զոր ունէին առ միմեանս իշխանն Սիւնեաց Վասակ և տէրն Ամատունեաց Վահան։ Բայց ըստ ծանր խոհականութեանն իւրոյ հայեցեալ նկատէր, թէ կամ չհաւանեալ ապըստամբել իշխանն Սիւնեաց Վասակ՝ մեռանի յիւրոցն ընկերաց անարժան մաշուածք, կամ թէ հաւանեալ առ վտանգին ապստամբել, արգելեալ անդրէն ի դրանն որդիքն երկոքեան՝ չարաչար կենօք վտանգեալ պատահէին մաշու. և կամ բազմաժամանակեայ կարեւոր կապանաց և բանդից դիպեալք՝ տանջին անխնայ:

Իսկ սուրբ այրն Աստուծոյ Վարդան՝ տէրն Մամիկոնէից և Հայոց զօրավարն՝ ոչ ի բանս ինչ ուրուք հայէր, այլ զհոգ ընկերաց հոգայր, և ի նահատակութիւնն ցանկացեալ ընթանայր: Եւ այնպէս ձգեալ բռնի զաւուրս գարնանւոյն յերկար, մինչեւ յաւուրս տօթոյն մօտելոյ: Եւ հասեալ ամիսք տօթոյն ջերմութեան, չու արարեալ ամենայն բազմութիւնն Հայոց ի տեղիս հովոց, գային հասանէին ի դաշտն՝ որ կոչի Ծաղկուտն, մերձ ի բերդն ամուր՝ զոր Անգղն անուանեն. զայն տեղօք արարեալ բանակետեղս արանց՝ դադարէին անդ զաւուրս տօթոյն:

ԼԲ. Իսկ մոգքն՝ որ ի դրանէն նախարարքն Հայոց ուսուցիչս ածեալ էին ընդ ինքեանս, իբրեւ տեսին թէ արհամարհեալ են յաչս նոցա ինքեանք և օրէնք նոցա, քանզի կանայք նախարարացն զորս կարծէին մոգքն աշակերտել՝ այնք և տեսանել անգամ գարշէին զնոսա, այլ զորդիս իւրեանց և զդստերս պատուիրէին ստէպ դաստիարակացն՝ չանցուցանել երբէք առ նոքօք մօտ. իսկ արքն որք պատճառանօք կարծեցուցանէին զինքեանս ուրացողս, սուտ վարդապետացն և հաց ուտել առաջի իւրեանց չտային թոյլ, և շրջէին ողորմելի սովամահք. գնալ ի բաց և փախչել չիշխէին, և կալն առ նոսա՝ զմահ ծանուցանէր նոցա և զկորուստ. և տակաւին գրել գաղտ ի դուռն զիրս ապստամբութեանն փութանային:

Ապա իմացեալ սպարապետին Հայոց Վարդանայ՝ թէ կարի հռչակին իրք ապստամբութեանն, և ի կարի հեղգալոյն մեծամեծ գործէին մնասք, խորհուրդ ի մէջ առեալ զաւուրս բազումս, և ժողովեալ ըզպատուական եպիսկոպոսս և զականաւոր երիցունս և զաւագ տանուտեարսն Հայոց և զսեպուհսն առանձինն՝ չեւ դեռ եւս յայնմ ժամու կամեցեալ յայտնել զբանսն իւրեանց մարզպանին Հայոց Վասակայ, գիտելով ոչ միայն լոկ վասն որդւոցն եւեթ զկասումն առն ի փրկութեան դարձէն, այլ զառաւել փառասէր աստուածատեաց խորհրդոց նորա ճանաչեալ զորոճմունս, ասէր ցամենեսեան այնուհետեւ յայտնապէս այրն երանելին Վարդան. Թէ՝ Մինչեւ ցե՞րբ հանդուրժեմք թագուցանել զճշմարտութիւնն և կորնչիմք. և այս համբաւ ելեալ տարածեալ ելից զամենայն տեղիս. այլ յայտնի լուսով գնասցուք իբրեւ ի տուընջեան, և որդիս լուսոյ կոչեսցուք։

Միոմն յՈստանեայ տանէն, որում անուն էր Ջանդաղան, սերմն ժանդ,

որդի անօրէնութեան, որ բազում և անապաշխար չար գործեալ էր ի կեանս իւրում, լսէր յոմանց զխորհեալն Հայոց, և երթեալ վաղվաղակի պատմէր նմանւոյն իւրում Վասակայ։ Որոյ բանից իրազգած եղեալ նենգաւոր քսուին՝ աւագ նախարարքն Հայոց, կալեալ զնա ի գեօղն որ կոչի Արծակ, տարեալ կապեցին ի միւսում եւս ի գեօղ յանուանեալ Բերդկունս, ի նմին Բագրեւանդ գաւառի. զոր և ոչ յետ բազում աւուրց՝ ըստ արժանի գործոց իւրոց անօրէնութեանց՝ քարկոծեալ սատակեցին։

Եւ ապա յայտնապէս ժողովեալ միաբանութեամբ ամենայն տանուտեարքն Հայոց և սեպուհք, եպիսկոպոսքն և բազմութեամբ ամենայն քահանայիւք և ժողովրդովք, առ երանելի սպարապետն Հայոց՝ տէրն Մամիկոնէից Վարդան, և համդերձ նովաւ մտին Թափ ըստ գրոց հրամանին բոլորեքեան առ իշխանն

Սիւնեաց Վասակ, առ մարզպանն Հայոց· և յայտնեալ նմա միաբան ամենեցուն զխորհուրդն, թէպէտ ջանայր յապաղել նա, մի՝ վասն որդւոցն իւրոց որք ի դրանն էին, և դարձեալ՝ զի և կեանքն իւր խակ ի խնամս չարին միտէին հանապազ, ոչ ինչ այնուհետեւ թոյլ տային սայթաքել խորհրդոց նորա այսր անդր· այլ թէպէտ և ոչ կամաւ, սակայն ի հարկէ յանձն առեալ միաբանէր ընդ նոսա։ Բերել դարձեալ հրամայէին նախարարքն Հայոց սուրբ եպիսկոպոսացն և երիցանցն՝ զԱւետարան ուխտին սրբոյ· և երդուեալ ամենայն բազմութիւն զօրացն ազատացն և անազատացն, հանդերձ իշխանաւն Սիւնեաց Վասակաւ և ամենայն տանուտերամբք և սեպհօք՝ հաստատէին զերդումն· և որոց մատանեաւ չեւ եւս էր կնքեալ զԱւետարանն՝ կնքէին· և համբարձեալ առ հասարակ զձեռս ընդ երկինս՝ բարբառելով ասէին այսպէս ամենայն բազմութիւնն, այր և կին միաբան խնդալիցք·

Զքեզ՝ Սուրբ Հայր, արարիչ երկնի և երկրի, և զՈրդիդ քո միածին զտէր մեր Յիսուս Քրիստոս, և ըզՍուրբ Հոգիդ կենդանարար, զանորիշ և զանքակ Երրորդութեանդ միութիւն, խոստովանիմք արարիչ երկնի և երկրի, տեսակաց և անտեսից· որ միայնդ ես Աստուած, և չիք այլ ոք բաց ի քէն։ Որ և ըստ մարդասիրութեան յաղագս փրկութեան տիեզերաց՝ ի վախճան աւուրցս՝ մի ի Սրբոյ Երրորդութենէդ ծնար ի սուրբ կուսէն Մարիամայ, և զամենայն կարիս բարձեալ քոյին մարմնովդ, զոր ի սուրբ և յԱստուածածին կուսէն առեր, տարեալ բեւեռեցեր ի խաչափայտի· յորում հեղեալ զսուրբ արիւն քո՝ ազատեցեր զաշխարհս ի ծառայութենէ մեղաց անիծից, մեռար, թաղեցար և յարեար, և վերացեալ յերկինս՝ ետուր աւետիս խոստման տանել առ քեզ զամենեսեան, որ խոստովանին առ քեզ, Աստուած Ճշմարիտ, Թագաւոր Թագաւորաց և Տէր տերանց։ Եւ մեք վկայեմք և խոստովանիմք զքեզ՝ Աստուած աստուծոց և Տէր տերանց, Աստուած քաւիչ մեղաց մերոց. ուրացեալքս և զղջացեալքս՝ յանցուցեալքս և յողորմութիւնդ ապաւինեալքս, գլորեալքս և կանգնեալքս։ Ընկալ զմեզ որպէս զորդին ուրացող, որ ծախեալ ապականեցաք զհանդերձ սուրբ մկրտութեանն, զոր զգեցուցեր մեզ աւազանին լուացմամբ, անառականօրէնութեամբ թաւալեցաք ի տղմի ուրացութեանց իբրև զդասակն խոզաց։

Եւ արդ, դարձեալ առ Ճշմարիտ Հայրդ երկնաւոր աղաղակեմք ասելով. Մեղաք յերկինս և առաջի քո. շնորհեա մեզ բարեխօսութեամբ լուսաւորիչ առաքելոցն, և վաստակովք սուրբ Նահատակին Գրիգորի նոցին նմանոյն և գործակցի, զթողութիւն մեղաց մերոց. և զգեցո մեզ

զառաջին պատմուճանն, և մաքրեա զոտս մեր ի խոչիցն չարեաց, որով ծակոտեալ ի թշնամւոյն կաղացոյց զմեզ։ Եւ ագո մեզ կօշիկս պահպանութեան՝ աւետարանին սրբոյ. և դիր զմատանին՝ զգծած խաչի քո՝ ի մատին աջոյ ձեռին մերոյ, որով կնքեալք զբոլոր անդամս մեր՝ սարսեալ բանսարկուն փախիցէ ի մէնջ։ Եւ որպէս հեղեր դու զարիւնդ քո սուրբ ի վերայ մեղաւորաց ի փրկութիւն յանցաւորաց, պարգևեա և մեզ հեղուլ զարիւնս մեր ի վերայ խոստովանութեանս այսորիկ և իւրաքանչիւր թողութեան մեղաց։ Եւ որ ոք հեռացեալ յուխտէ երդմանցս այսոցիկ ցուցցի ուխտազանց, և ի միաբանութենէս մերմէ որոշեսցի, եղցէ նա արտաքս ընդ Յուդայի, որ մերժեալ ընկեցաւ ի գնդէ սուրբ առաքելոցն. և առանց ամենայն թողութեան կացեալ ի ձախու կողմանն՝ լուիցէ ի քէն զահագին բարբառն, զոր ասես յաւուրն հատուցման, թէ՝ Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալ է սատանայի և արբանեկաց նորա:

Եւ ասացեալ զամենայն խոստովանութիւն զօրհնութեանն և զանիծիցն՝ միաբանութեամբ ամենայն բազմութեանն ի ձայն մեծ արանց և կանանց, հնչեաց երկիրն ամենայն ի բարբառոյ զօրացն բազմութեան: Եւ գրեալ զայս ամենայն բանս հաւատոյ ուխտին, և կնքեալ նախ մատանեաւ իշխանին Սիւնեաց Վասակայ, և ապա մատանեօք ամենայն տանուտերացն Հայոց և աւագ սեպհացն, և եդեալ ի սուրբ Աւետարանի երդմանն, ետուն ցպատուական եպիսկոպոսն և ցաւագ քահանայութիւնն՝ որ էին անդ: Եւ կատարեալ զայս ամենայն այսպէս, դիմեցին մեծաւ ցնծութեամբ և հոգեւոր երգովք ի տուն Տեառն, և երկըրպագեալ միոյն միայնոյ Ճշմարտին Աստուծոյ լի անձկով, և յերկար և անձանձրոյթ ծունրդրութեամբ կատարեցին զաղօթսն:

Եւ արձակեալք յաղօթիցն, ռամիկ զօրացն բազմութիւն դիմեցին ի տուն մոխրանոցին, չմնալով բընաւ աւագացն հրամանի. և առեալ զկրակարանն՝ վարեցին ի ջուրն զկրակն, որպէս ի գիրկս եղբօր, ըստ ասելոյ սուտ վարդապետացն Պարսից. զոր ըմբռնեալ ջրոյն թըշնամաբար և ոչ եղբայրաբար՝ ծախեցին: Բայց զմոգուցն բազմութիւն պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ. և ի վաղիւն ի ծագել արեւուն արս ինոցանէ թուով սպանին սրով ի գիւղն որ կոչի Զարեհաւան:

ԼԳ. Եւ կատարեալ զայս ամենայն գործս ըստ ասելոցս կարգաւ, դադարեցին անդէն զաւուրս տօթոյն: Եւ ապա փութացան իջանել յԱյրարատ գաւառ. քանզի լուան թէ Միհրներսեհ Արեաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝

գունդ կազմէ, և ընդ Աղուանս արձակէ ի Հայս. զոր և Աղուանից ազատք, որ ուխտակիցք էին Հայոց, ստէպ փութացուցանէին հասանել առ ինքեանս, և անդէն առ Աղուանս ի դիմի հարկանել նոցա պատերազմաւ:

Եւ արդ եկեալք յԱյրարատ գաւառ, և զայս համբաւ լուեալ ի կողմանց Աղուանից, ստիպէր զերանելի սպարապետն Հայոց Վարդան զտէրն Մամիկոնէից՝ իշխանն Սիւնեաց Վասակ, գնալ պատահել նոցա գնդաւ. և զինքն մնացուցանէր անդէն պատճառանօք, ասելով. թէ՝ Ես աստէն պատրաստիմ. գուցէ, ասէր, այլ ինչ իմացեալ չարախորհուրդն Միհրներսեհ գործիցէ ընդ մեզ: Այլ ինքն Վասակ զխաբէութեան ճանապարհն կազմեալ նիւթէր ի սրտի իւրում, ունելով կամակիցս և այլ աստուածանենգ արս խորհրդոցն իւրոց՝ յազատացն Հայոց: Իսկ երանելի սպարապետն Հայոց՝ տէրն Մամիկոնէից Վարդան, ասէր ցիշխանն Սիւնեաց Վասակ, թէ՝ Որպէս ածաք զմտաւ՝ պարտ է մեզ նախ զորս առաքեմքն առ կայսր՝ արձակել. և ապա զոր ինչ հրամայեսցես ինձ՝ առնեմ անխափան: Եւ նորա յաղագս ճեպով զիւր առաջի եդեալ զխորհուրդն կատարելոյ՝ յանձն իւր առնոյր զասացեալսն յերանելի սպարապետէն ի Վարդանայ կատարել:

Եւ փաղփաղակի նամականի արարեալ առ կայսրն և առ ամենայն աւագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս և կողմնակալս, առ բըդեշխն Աղձնեաց և առ իշխանն Անդեղ տան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յԵկեղեաց, և այլ իշխանաց իւրաքանչիւր տեղեաց, և առ մեծ ըսպարապետն Անտիոքայ: Եւ զայս ամենայն թղթեան կնքէր նախ ինքն իշխանն Սիւնեաց Վասակ իւրով մատանեաւ, և ապա ամենայն տանուտեարքն Հայոց: Եւ պատրաստեալ ճանապարհին Յունաց կազմէին զիշխանն տանն Ամատունեաց Վահան, որպէս զայր մտացի և խորհրդական, և սուրբ սեպուհն զՀմայեակ՝ զեղբայրն երանելի զօրավարին Հայոց Վարդանայ ի Մամիկոնէից տոհմէն, և զերանելին Մերհուժան՝ զեղբայր սրբոյն Աղանայ՝ ի տոհմէն Արծրունեաց։ Յորոց ձեռն տուեալ զնամականին իշխանին Սիւնեաց Վասակայ և ամենայն նախարարաց աշխարհին Հայոց, յուղարկէին առ կայսր և առ այլ ամենայն յառաջագրեալ աւագանին Հայոց։

ԼԴ. Եւ սպարապետն Հայոց տէրն Մամիկոնէից երանելին Վարդան՝ առեալ ընդ իւր ի տանուտերացն Հայոց, որք ջերմեռանդն սիրով ձեպէին մարտիրոսութեան ժամուն պատահել, որք էին այսոքիկ. Խորէն Խորխոռունի, Արշաւիր Կամսարական, և Թաթուլ Դիմաքսեան, և Արտակ Պալունի, և Գիւտն Վահեւունեաց, և Հմայեակ Դիմաքսեան, և այլ տանուտեարք և սեպուհք, և բազումք ի զօրացն Հայոց, որք ինքնայօժար փութով փափագէին լինել վրէժխնդիր ուխտի սուրբ եկեղեցւոյ, և տալ զանձինս ի մահ ի վերայ սուրբ և ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի. և այլ գունդք ի զօրացն Մարդպետական այրուձիոյ, փոյթք ի գործ պատերազմին առաքինութեան. զորս և չարախորհուրդ իշխանին Սիւնեաց Վասակայ ծանուցեալ ոչ հաւանս իւրոյ չար մտածութեանն, կազմեալս առաքէր ընդ նմա. և զորոց գիտէր զհոլովումն ի վատթար կողմն և ոչ ուղղակի ի խորհուրդ ուխտապահութեանն՝ ի տանուտերացն Հայոց և ի սեպհացն, որք էին երեւելագոյնք, և յայլ ռամիկ բազմութենէն, զայնս արգելեալ առ իւր պահէր։

Եւ հրաժարեալ երանելի զօրավարն Հայոց տէրն Մամիկոնէից Վարդան, հանդերձ ընկերակցօքն իւրովք և այլ զօրուն արամբք՝ որ էին ընդ նմա, յիշխանէն Սիւնեաց Վասակայ և յայլ մնացելոցն ընդ նմա աւագանոյն, ողջախորհուրդ մտօք գընային ի գործ պատերազմի: Եւ մտեալ ի տուն Տեառն, որ է սուրբ եկեղեցի, երկիր պագանել տեառն Աստուծոյ ամենակալի, առեալ ըզսուրբ Աւետարանն և զնշան կենսատու խաչին՝ ողջունէր, դնելով անյագ ի վերայ բաց աչացն և ճակատու. զնոյն առնէին ջերմեռանդն սիրով և որք ընդ նմայն էին ամենեքեան. և ողջամբ գնային ամենեքեան յորդորմամբ սիրոյ: Եւ չեւ եւս հեռացեալք, տեսանէր օթեւանս ոչ բազում յԱյրարատոյ՝ երանելի սպարապետն Հայոց Վարդան:

Եւ իշխանն Սիւնեաց Վասակ փաղփաղակի գաղտ դեսպանս առնէր առ Միհրներսեհ հազարապետն Արեաց, և զիւր նենգաւոր խորհուրդն նամակաւ ծանուցանէր նմա: Նոյնպէս արար նամակ և առ Նիխորական Սեբուխտ, և առ այլ

աւագս՝ - զորս արարեալ էր Միհրներսեհի ի վերայ Հայոց, և զՎեհշապուհ հաւատարիմ վերակացու արար, որ էր ի ժամուն սենեկապան արքունի, յետ այնորիկ ապա և դպրապետ եղեւ Արեաց, - յորում գրեալ եցոյց նոցա նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ զիւր խաբէութեանն կամս. Դուք, ասէ, անհոգ լերուք յեկելոցդ ընդ Վարդանայ ի վերայ ձեր, և մի ինչ զարհուրիք. վասն զի շատք այն են՝ զորս ես աստէն պահեցի առ իս. և զայլս բազումս ընդ այսր ընդ այնր ցրուեցի. և դա յոյժ սակաւուք է և ոչ բազմօք: Եւ զայն ոչ յիշէր անօրէնն, թէ Սիրտք իշխանաց ի ձեռս Աստուծոյ են. քանզի որով կարծէր չարախորհուրդն շնորհ ինչ առնել նոցա, առաւել եւս զօրութիւնն Աստուծոյ ի բարկութիւն սրտմտութեան փոխէր. և այնու գրգռէր զնոսա ի վերայ նորա. որ և ի ժամուն կատարեալ՝ կուտեցաւ ի գլուխ նորա ցուցակութեամբ:

ԼԵ. Եւ հասեալ յԱղուանս երանելւոյ զօրավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից, ազդ եղեւ զօրագլխացն Պարսից եկք Հայոց. որոց լուեալ փութացան անցանել ընդ գետն մեծ, զոր Կուր գետն կոչեն, և ընդ առաջ եկին նոցա մինչեւ ի գեօղն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից: Եւ տեսեալ սրբոյ ըսպարապետին Վարդանայ զանթիւ բազմութիւն գնդին Պարսից, և յինքեանս հայեցեալ թէ յոյժ սակաւք են, սկսաւ խօսել ընդ զօրն Հայոց, և յիշեցուցանել զբան Սուրբ Հոգւոյն, զոր մայրն մարգարէին Սամուէլի՝ ցնծութեամբ քաջալերեալ ի Քրիստոս երգելով ասէր. թէ, Մի պարծեսցի հզօրն ի զօրութեան իւրում, և մի պարծեսցի մեծն ի մեծութեան իւրում. այլ որ պարծելոյն իցէ՝ յԱստուած պարծեսցի: Քանզի ոչ ինչ է ի նուազս և ի բազումս յաղթութիւն և պարտութիւն, այլ յԱստուծոյ ակնարկութեանն հրամանի: Եւ զայս ասացեալ երանելի զօրապետին Հայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ, հայեցեալ և ի կամս ընկերակցաց իւրոց և ամենայն գնդին որ ընդ նոսա, թէ որպէս ջերմեռանդն սիրով զօրացեալ էին և քաջալերեալք, խրախալից մտօք փառաւորէր զփրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս:

Եւ հասեալք ի ժամ մարտին, հայեցեալ տեսանէին ըստ օրինի կարգման նկատելոյ զգունդսն Պարսից: կարգէր և զիւր գունդն երանելի զօրավարն Հայոց Վարդան՝ ըստ բաւականին այրուձիոյն իւրոյ՝ ընդդէմ նոցա. յերիս առաջս բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրաքանչիւր զօրագլխի. որում աջոյ կողմանն կացուցանէր զօրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն, որ էր և փեսայ զօրավարին Հայոց սրբոյն Վարդանայ տեառն Մամիկոնէից, ունելով զդուստր նորա ի կնութեան. և նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուհ՝ յազգէն Դիմաքսենից. և զաշեակ կողմն տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ. և զօրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն. և ինքն սուրբ զօրավարն Հայոց Վարդան՝ պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման: Եւ այսպէս յօրինեալ զճակատն, և յԱստուծոյ խնամոն ապաւինեալք՝ յարձակեցան ի վերայ թշնամեացն:

Յորս նախադոյն յառաջեալ ի տեղի մարտին՝ Կամսարականն Արշաւիր և Մուշ սեպուհն Դիմաքսենից, որք յանգիտութենէ տեղեացն՝ դիպեցան թանձրախոր ստորին մօրից. Կամսարականն Արշաւիր և Մուշ ի յառաւելապէս դիմեցմանէն երիվարացն, անկեալք ի տիղմն հանդերձ երիվարօքն խրէին. անդ կատարեալ պսակէր երանելի սեպուհն Դիմաքսենից Մուշ ի Նիխորականայ: Իսկ Կամսարականն Արշաւիր իջեալ յերիվարէն՝ ի հետիոտս՝ սպանանէր

զՎուրկն զեղբայր Վփնաց թագաւորին, և ի բաց ձգեալ զերիվարն ի ստորին խոր տղմոյն, ուր և մոյկ մի զերծեալ յոտանէն՝ թաղեալ մնայր անդէն ի մօրին. և ինքն Կամսարականն միամոյկ տղմաթաթաւ հանդերձ ամենայն զինուն հանեալ զերիվարն ի ցամաք, անվեհեր քաջաբար նման թռչնոց յերիվարն հեծանէր. և զարհուրեցուցեալ զթեւ իւրոյ կողման թշնամեացն՝ փախստական առնէր: Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից Վարդան՝ հանդերձ ընկերակցօքն իւրովք և ամենայն Հայոց գնդաւն, զի արարեալ փախստական և նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զօրացն Պարսից. յորոց զկէսն սրովք իւրեանց դիաթաւալս յերկիր կործանէին, և զկէսն գետավէժս արարեալ հեղձամղձուկ առնէին. և զայլսն ի նոցանէ՝ դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վանէին:

Իսկ ոմանք յաւագորերոյ Պարսիցն ելեալք ի նաւս՝ յայնկոյս գետոյն մեծի՝ փախստեայք լինել ձեպէին։ Որ և զկամսարականն Արշաւիր զիշխանն Արշարունեաց ընտխպով փութացուցանէր երանելին զօրավարն Հայոց Վարդան՝ զկնի փախստէից նաւացն նետաձիգ լինել, ի հաստատաձգութիւն և յանվրէպ դիպողութիւն առնն վստահեալ։ Իսկ կամսարականն Արշաւիր, որպէս և միշտ կամակատար էր բանի սրբոյ զօրավարին, վաղվաղակի հաւանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն և փախստէիցն նետաձիգ լինէր։ Եւ խոցեալ զնաւավարսն և զայլս բազումս ի նաւսն՝ կարէվէրս առնէր. որոց ընդ տապալել վիրաւորացն՝ կործանէին նաւքն. և բազումք ի նաւավարացն և գլխաւորացն Պարսից գետասոյզ եղեալ կորնչէին։ Եւ այսպէս շնորհեալ նոցա զյաղթութիւն՝ վերին օգնութեանն՝ դառնային ի բանակս ի-

րեանց, գոհանալով եւ օրհնելով զԱստուած։

Եւ դադարեալք անդէն ի տեղւոջն զօրն զայն, ի վաղիւն չուեալք անցանէին ընդ գետն մեծ, անուանեալն Կուր գետ, և հասանէին ի պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից և Հոնաց. և գտեալ անդ զպահապանս պահակին և այլ զօրականս պարսիկս բազումս, յորոց սուր ի վերայ եդեալ կոտորէին. և զպահակն յանձն առնէին թագաւորազնի միում Աղուանի՝ որում անուն էր Վահան. և զնոյն արձակէին դեսպան ի Հոնս՝ և առ այլ ամրականս տեղեացն, զորս հաւանեցուցէ միաբանել նոցա գընդաւ. որոց կամաւ և յօժարութեամբ զօգնելն յանձն առեալ՝ հաստատէին երդմամբ։

ԼԶ. Եւ մինչդեռ այս ամենայն կատարէր այսպէս՝ յաջողութեամբն Աստուծոյ ըստ կամաց նոցա, յանկարծակի դեսպան հասանէր առ երանելի զօրավարն Հայոց Վարդան, և առ ամենայն գունդն որ ընդ նմա էին, գոյժ տրամութեան և համբաւ չարաչար, ասելով. թէ՝ Արդ ատեաց անօրէնն Վասակ ուխտին Աստուծոյ, և նենգեալ դրժեաց Աւետարանին երդմանն, և ի յետս կացեալ ապստամբեաց ի միաբանութենէ ճշմարտութեանն. նոյնպէս և միացեալքն անդէն առ նմա աւագանին Հայոց՝ յետս կացեալ ընդ նմա ապստամբեցին, և դարձուցեալ զերեսս իւրեանց ի ճանապարհէն արդարութեան՝ մոլորեցան զհետ սատանայի. դեսպան արձակեցին ի Պարսս, նամակօք ուխտադրեցին ընդ նոսա. և զբերդեան ամրոցացն Հայոց ի բաց կալան, և զիւրեանցն բերդակալս արարեալ՝ զգուշացուցին, և զորդիս տոհմին Մամիկոնէից և Կամսարականաց և զայլոց տանուտերացն՝ ժողովեալ յիւրաքանչիւր դայեկաց, յամուրս բերդից իշխանութեանն Սիւնեաց ետ անցուցանել, և հրամայեաց պահել զամուրսն զգուշութեամբ։ Եւ ապա նենգաւորն Վասակ տայ տանել զորդայսն առ թագաւորն Պարսից։

Եւ որք խոտորեցան զհետ սատանայի ընդ ուխտանենգին Վասակայ՝ են այսոքիկ. իշխանն Բագրատունեաց Տիրոց, իշխանն Խորխոռունեաց Գադիշոյ, իշխանն Ապահունեաց Մանէճ, իշխանն Վահեւունեաց Գիւտ, իշխանն Պալունեաց Վարազշապուհն, իշխանն Աբեղենից Արտէն, իշխանն Ուրծայ Ներսեհ, և այլք յոստանկաց, և սեպուհք ոմանք յիւրաքանչիւր տոհմէ։

Եւ լուեալ զայս ամենայն գործ աղէտից, զոր էր գործեալ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ և այլ նախարարացն որ ընդ նմա, երանելւոյ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ՝ հանդերձ նախարարօքն և զօրուն որ ընդ նըմայն էին, չարամէլ ոչ կարէին. և զանձինս և զգերեալ ողջայն ի պաշտպանութիւն ամենահնար աջոյն յանձն արարեալ նուիրէին, ասելով այսպէս. Ահա առեալ հեծանոց ի ձեռն՝ փրկիչն ամենեցուն Քրիստոս, սրբել զկալ իւր և ընտրել, զցորենահատն ժողովել յերկնից ի շտեմարանն, և զյարդն մատնել անշէջ բոցոյն կիզուց անխնայ։ Եւ եղիցուք մեք սրբեալք ցորենահատ, և ցանկութեամբ սպասեսցուք աւուր նահատակութեան մերոյ. յորում թէ արժանի եղեալ դիպեսցուք մասին սրբոցն, վախճան մեր բարի զմեզ պսակէ. և զողջս՝ պաշտպանեալ սնուցանէ, և ի տեղիս իւրաքանչիւր և յիշխանութիւն ածեալ հատուցանէ, և զարբանեակս սատանայի բազում զղջմամբք ամաչեցուցեալ նշաւակէ աստ և ի հանդերձելումն։

Եւ ասացեալ զայս երանելւոյն, չուեցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատոյ. և անդ զաւուրս դառնաշունչ օդոյ ձմերայնոյն՝ ըստ սովորութեան իւրեանց դադարեալք, փութային առ հասարակ անձկով զաւուրս գարնանային ամսոյն տեսանել, և յօր իւրեանց նահատակութեան պսակին հասանել։ Քանզի ոչ եւս ինչ այլ բնաւ ածէր զմտաւ ոք զյաղթութիւն և կամ զպարտութիւն, այլ ցանկացեալք որպէս ծարաւիք բաժակին փրկութեան՝ իւրեանց կատարման պատահել և ընդունել զմային։

Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ՝ ոչ երբեք դադարէր գրել նամականի առ իշխանս և շինականս և քահանայս աշխարհիս Հայոց, ցուցանէր իմն բերեալս ի դրանէ ուխտս սուտս և վկայութիւնս ընդունայնս, թէ արքայից արքայ զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի, և զվնաս կատարածի մոգուցն չխնդրէ. և զապստամբութենէն ասէ, թէ բնաւ և յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ և ի բանից վարդանայ, և մի կորնչիք ընդ դմա։ Եւ զինքենէ գրէ ուխտանենգն Վասակ, թէ ես լինիմ միջնորդ այսմ ամենայնի, և անվնաս պահեմ զաշխարհս Հայոց։ Եւ տուեալ ի ձեռս սուտ քահանայից զգրեալսն՝ նենգաւորին Վասակայ, որոց անուանքն են չքահանայիցն՝ այս. Ձանգակ, մի ումն Սահակ Ձայնող, և միւս ումն Պետրոս Երկաթի։ Եւ էին Սահակն և Պետրոսն ի գաւառէն Սիւնեաց, յորոց ձեռս տայր գաղտ յերանելի սպարապետէն Վարդանայ՝ նենգաւորն Վասակ՝ զգրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհս Հայոց. զոր լուեալ թուլացելոցն ի հաւատս և անյուսիցն, հաւատացեալ բանից նենգաւորին՝ կորնչէին։ Իսկ պինդքըն և մարտիրոսութեան տենչօղքն՝ իբրև լսէին զայս ամենայն բանս ցնորից, ևս առաւել պնդեալք զօրանային, և աւուր աւետաբեր փըրկութեան իւրեանց սպասէին յուսով։

ԼԷ. Եւ կատարեալ զաւուրս ձմերային ցրտաշունչ օդոցն, և հասեալ ի տօն մեծ զատկին բովանդակ ուխտապահքն, և ամենայն աշխարհի եղև խնդութիւն՝ հրեշտակաց և մարդկան. քանզի խառնուրդք խաղաղութեան եղէն ընդ միմեանս աւետաւոր յարութեամբ կենարարին, զոր տօնեալ ուրախութեամբ զուարճանային։

Եւ յետ սակաւ ինչ աւուրց անցելոց լուան, եթէ զօր եհաս բազում ի Հեր և ի Զարեւանդ գաւառ։ Եւ երանելի սպարապետն Հայոց՝ տէրն Մամիկոնէից Վարդան ազդ առնէր ուխտապահացն, որք յաղագս տօնի աւուրցն երթեալք էին ի տունս իւրեանց՝ կատարել զտօնն զատկի առ ընտանիս իւրեանց, եթէ գունդ բազում հասեալ գայ՝ բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեսցէ, զի մի վրիպեսցի ոք և զղջանայցէ. և եթէ ոք խորհի այլազգ ինչ, որպէս և այլ.ք՝ որք խոտորեցան զկնի սատանայի, դադարեալ հանգիցէ ուր և թուեսցի հաճոյ ումեք։ Քանզի ոչ ոք պատժի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհողեղէնսն և զյաւիտենականսն։

Եւ զայս լուեալ ճշմարտասիրացն և զանմահութիւն սիրողացն՝ դղրդեցան, ելեւելս առնելով զմիմեամբ.ք, որպէս հօտք որ ի ձայն աղի փութայցեն զկնի հովուաց։ Թուի ինձ, ոչ այնպէս ընթացեալ երագունս Աբրահամայ ի տանել զորթն հրեշտակացն՝ որք խոստացան տալ նմա զորդին, որպէս ճեպեալ ընթանային զօրքն Հայոց՝ զհետ երանելւոյն Վարդանայ սպարապետին Հայոց, երթալ յընթրիսն Քրիստոսի և ուտել զհաց հրեշտակաց։

Եւ այսպէս եղեալ.ք ըստ նմանութեան սուրբ առաքելոցն ամենեքեան մի սիրտ և մի հոգի, առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան՝ միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմայն էին՝ սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով, երթալ լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տալ գրգիռ եթէ հնար իցէ, առ ի փութապէս, ասէ, գալ բերել մեզ զպսակս արքայութեան, զոր ի ձեռն նոցա պարգեւէ մեզ փրկիչն Քրիստոս՝ յաւիտենից բարութեանցն տուիչ։ Եւ երթեալ Առանձար և գունդն որ ընդ նմա, այնպէս շնորհեցաւ նմա յԱստուծոյ, որպէս զի տեսին զբանակն Պարսից. և զհզօր վերջապահ թեւով միով անկեալ, զբազումս հանէին ընդ սուր, և զայլս փախստականս արարեալ արկանէին ի զօրն Պարսից. և ինքեանք դարձեալ ողջանդամք հասանէին ուրախութեամբ ի գունդն Հայոց, և պատմէին նոցա զԱստուծոյ զօրութիւնն, զոր յաջողեաց նոցա Փրկիչն։

Եւ լուեալ երանելի սպարապետին Վարդանայ հանդերձ միահամուռ զօրօքն՝ գոհանային և օրհնէին զամենահզօրն Աստուած։ Պատմէին և վասն զօրագլխացն, թէ Մուշկան Նիւսալաւուրտ և Գողըվնդն են. տային գիտել և զայն ևս, սթափութեամբ հասանել ի միջոյ կողման աշխարհիս։ Զոր լուեալ երանելւոյ սպարապետին Հայոց և որ ընդ նըմայն էին, ևս առաւել ձեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան, քանզի անձանձրոյթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի, լինել արժանի այնպիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղւոջն ի Հեր և ի Զարաւանդ գաւառին՝ վճարին ելք գործոյն պատերազմին. և ոչ ոք լինէր արգել զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և աւարել։ Եւ սոցա թէպէտ և ածեալ զայսպիսի ինչ զմտաւ՝ կամէին փութալ, սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ, հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց յաղագս երկիւղի զօրացն Հայոց. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, և ի միջի նորա ածեալ զակիշ բանակէին։

ԼԸ. Իսկ ի յաւուր ուրբաթու մեծի տօնին պէնտէկոստէին՝ դիմեալ հասանէին մերձ ի նոյն տեղիս զօրքն Հայոց, գտեալ անպատրաստագոյն զզօրսն Պարսից. որոց թէ կամեցեալ էին՝ կարող էին՝ մանաւորապէս վ̃ասել երամակարձակ ծուլացելոցն, բայց թոյլ տուեալ դադարեցին յայնմ աւուր. քանզի ոչ էր եդեալ ի մտի նահատակութեան փափաքողաց՝ այնուհետեւ յաղթել, վասն տեսանելոյ հանապազօր զհոգեկորուսացն զապականութիւն, այլ միշտ և հանապազ ի կէտ կոչման և տենչալի մարտիրոսութեանն փութանային հասանել:

Եւ ժողովեալք այնուհետեւ մօտ առ զօրսն Պարսից բանակէին, մինչ եդեալ սահմանն ընթացից տուընջեանն կատարէր: Եւ հասեալք ի ժամ երեկոյին, եւ զկանոն պաշտամանն ժամու աղօթիցն ըստ սովորութեանն լցեալ՝ զուարճանային չափաւոր ուրախութեամբ կերակրովքն: Եւ կատարեալ զամենայն՝ առնուին հրաման ի սուրբ քահանայիցն արթուն խնդրուածովք կատարել զգիշերն յաղօթս: Եւ զցայգն ամենայն դասք քահանայիցն՝ մերթ սաղմոսարանին գոբղայիւք, մերթ վարդապետական բանիւք քաջալերէին զբազմութիւն զօրացն, վայր մի քաջանալ եւ անսպառ բարեացն լինել ժառանգաւոր: Իսկ սուրբ երէցն Յովսէփ, որ եւ զկաթուղիկոսութեանն Հայոց ունէր զաթոռ, հրաման տայր երանելւոյ առն Աստուծոյ Ղեւոնդի խրատել զժողովուրդն եւ քաջալերել:

Եւ սուրբ երէցն Ղեւոնդ զամենայն զգիշերն անձանձրոյթ առաքելական վարդապետութեամբ զօրացուցեալ ուսուցանէր զամենեսեան յորդաբուխ իմաստութեամբ, առակաց մեկնութեամբք, հոգեշնորհ վարդապետութեամբ. որոյ բանքն նման քաղցրութեան մեղու բղխէին ի բերանոյ արդարոյն, որ էր լսողացն ցնծութիւն. եւ ախորժաբար զնա ծանուցանէր վերին ազդեցութեամբ լուսաճաճանչ պայծառութիւն ի նմա ներքին մարդոյն, եւ տեսակութիւն հրեշտականման երեսացն կերպարանի: Զոր եւ յառաջագոյն ժամանակի կալով ի քուն սրբոյն, այրն Աստուծոյ Մաշթոց վարդապետն նորին՝ հանդերձ եւ այլ աշակերտօք իւրովք երանելեաւն Կորեամբ եւ Արձանաւ, տեսանէին արթնութեամբ՝ ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ՝ որք անդէն եւ անդ ծանեան երանելի արքն Սուրբ Հոդուով զվախճան սրբոյն Թէնահատակութեամբ կատարի. զոր Թէպէտ և նմա ոչ յայտնեցին զսքանչելագործութեան զտեսութիւնն, սակայն ի բազում չշնջելն՝ պատմեալ հուչակեցաւ ընդ երեւմանս այսորիկ: Որ յուսուցանելն իւրում բազում բանս հոգեւորս՝ յիշեցուցանէր ամենեցուն զվարս և զժուժկալութիւն առաջնոցն. և նախ զանպատումն զհամբերութիւն սրբոյն Գրիգորի, ապա զայլոցն ամենեցուն. Որոց գիտացեալ, ասէ, զվաղ և զանազան կենցաղոյս զվախճան՝ ընտրեցին ըմբռնել զյաւիտենից կեանսն: Ոմանք տանջանօք և մահուամբ, ոմանք պահօք և գետնատարած անկողնօք, այլք աղքատութեամբք և օտարասիրութեամբք յանգէտս ընդունել զհրեշտակս արժանի եղեն. և կէսք աշխարհաշինութեամբք, և արդար դատողութեամբ երեւեալ՝ ընտիր գտան Աստուծոյ: Քանզի ոչ բոլորեցունց դիպի մար-

դասիրութեան վիճակն, այլ ըստ ժամանակի որպէս և բաշխէ վերին տեսչութիւն: Եւ պարտին առողջքըն՝ արդար վաճառականութեամբ գնել ընդ անցաւորիս զանանցն, ընդ ապականացուիս զանանց բարութիւնսն: Իսկ պահեալքդ այժմ մեծի և պատուական բաժակի, փութասցուք լինել արժանի՝ հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս. զորոց զպատուականութիւնն սաղմոսերգուն գոչէ ասելով. Պատուական է առաջի Տեառն մահ սըրբոց իւրոց: Ահա և ճգնասէր Գրիգորիոս վարդապետն ձեր կոչէ զձեզ յերկնային քաղաքն Երուսաղէմ, յամենատենչ և անուշահոտ ընթրիան Քրիստոսի, ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք:

Բազում և այլ բանիւք հոգեղինօք և շնորհօք վարդապետութեամբք, քաջալերէր զիւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւագանւոյն Հայոց՝ սուրբն

Ղեւոնդ, հանդերձ երանելեաւն Յովսեփաւ. որ թէպէտ և զձեռնադրութիւն երիցութեան ունէր, սակայն յաթոռ կաթուղիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս: Որոց խրատեալ և զօրացուցեալ հոգեւոր բանիւք զամենայն գիշերն, լինէր ամենայն մարդ ի կամաւոր լսողացն՝ վառեալ որպէս աներկիւղ աւրութեամբ Սուրբ Հոգւոյն զինու: Որք զօրհնագրեալ ժամս գիշերոյն կարծէին երկայնագոյն քան զայլ գիշերացն. տեսանել զառաւօտ փըրկութեանն բաղձային, որպէս զի հասեալք արբցեն զբաժակ արքայութեանն երկնից:

Որոց աստուածաշնորհ բանից և մարտիրոսայորդոր վարդապետութեան հրեշտականման տեառն Յովսեփայ և Ղեւոնդի՝ մտադիւրութեամբ լուեալ երանելւոյն Վարդանայ տեառն Մամիկոնէից, տայր պատասխանի. թէ՝ Սուրբ քահանայից եկեղեցւոյ պատիւ ձեռնա-

դրութեան ոչ է ի մարդկանէ, այլ ի Սուրբ Հոգւոյն յաջորդեալ շնորհէ. Նոյնպէս և բանք սոցա զամենայն առողջ խորհուրդս լսողացն ի յերկինս հայեցուցանէ. որպէս և այժմ իսկ զամենայն գիշերս անհանգիստ ձայնիւ յորդորէին զամենեսեան յերկնաւոր ընթրիսն, յիշեցուցանելով մեզ զչարչարանսն սրբոյն Գրիգորի. յորոց բազումք որ աստ կամք, ոչ միայն աշակերտք՝ այլ ազգախառնութեամբ եմք հաղորդեալք: Փութասցուք ժամանել ի հարսանիսն Քրիստոսի, և ի հրաւիրակին՝ ի գունդ սուրբ առաքելոցն, և յընթրատուն Քրիստոս, որ բացեալ զդուռն արքայութեանն՝ սպասէ ընդունել զամենեսեան և ուրախ առնել. որոյ ուրախութիւնն մշտնջենաւոր է և անանց և անվախճան: Փութասցուք առանց յապաղելոյ, և մի ոք նման Յուդայի՝ որ յառաքելական դասուէն քակտեցաւ, նման նմա գտցի. որպէս և յայսմ գիշերի տեսէք, որք մեղկեալ զկնի սատանայի ընթացան: Այլ ես բաժակին՝ որում վաղնջուցն ցանկացեալն էի՝ փափաքանօք ընդունիմ, և ըստ գրեցելումն գոչեմ. Զբաժակ փրկութեան ընկալայց և զանուն Տեառն կարդացից:

Եւ զայս ամենայն այսպէս խօսեցեալ սրբոյ զօրավարին, ի ժամ հաւուն ասելոյ՝ հրաման տայր սուրբն Յովսէփ և Ղևոնդ, հանդերձ ամենայն քահանայիւքն զպաշտօն կանոնին կատարել, որով նպարակեալ վառեալ զինու Հոգւոյն՝ յուղարկէին յաստուածատունկ վայելչութեան դրախտն: Եւ հաղորդեալ զօրացն Հայոց ի պատուական խորհրդոյն մարմնոյ և արեան, ի գործ առաջիկայ իւրացն փութանային:

ԼԹ. Վասն զի մերձեալ էր այնուհետև ժամ ելից արեգական, և գունդն Պարսից ճակատել ի պատերազմն պատրաստէին և վառէին: Եւ սուրբն Վարդան տէրն Մամիկոնէից բաժանեալ զիւր գունդն

յերիս յառաջս, միջոցի գնդին կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց, և զմարդպետն Միհրշապուհ՝ հանդերձ իշխանաւն Արշարունեաց Արշաւրաւ և երանելի արամբն Արտակաւ իշխանաւն Մոկաց և այլ աւագ նախարարօքն. և կողմանն աջոյ կարգէր աւագ՝ զերանելին Մախազ Խորէն, հանդերձ երանելեաւն Թաթլաւ տեառն Վանանդայ և սուրբ արամբն Ներսեհիւ Քաջբերունեաց, և այլ աւագ նախարարօքն. և ընդ ահեկէն կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովն և իշխանաւն Առաւեղենից Փափագաւ, և այլ իշխան նախարարօքն Հայոց. քանզի յայն կողմանէ առաւելապէս երևէր կատիշ գնդին սիւնի զօրուն և այլ զօրաւոր արանց նշանք դրօշից: Եւ զՀամազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ. և պատուիրէր նմա մի զոք բանադատել, այլ յորդորել միայն բանիւք՝ յաղագս իւրեանց փրկութեան:

Եւ այսպէս բաժանեալ յերիս յառաջս զզօրսն Հայոց՝ սրբոյն Վարդանայ, և օրհնեալք ի բերանոյ սուրբ քահանայիցն, օրհնաբանելով զԱստուած, յարձակէին ի վերայ միմեանց երկոքին կողմանքն՝ Հայոց և Պարսից։ Եւ ելեւելս արարեալ այնուհետեւ, յառաջէին որք ցանկացօղք մարտիրոսութեան պսակին, և զզօրսն Պարսից ի փախուստ դարձուցանէին զառաջինսն։ Իսկ այլ բազմութիւն զօրացն Հայոց՝ որք առ հարկի և ոչ կամաւ, մանաւանդ զի և զայլս յերկուանալոյ և դարձուցանելոյ յետս՝ որք յերկնից բարութեանց ցանկացեալք էին, անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին ըղյաւիտենից կորուստն։ Եւ տեսեալ զօրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս և պարտասեալս առ ի կոտորել զազգն իւրեանց, հայեցեալ և յայն ևս՝ զի փախուցեալ երթային զօրքն Հայոց, ի մէջ առեալ շուրջ զնոքօք պատեալ ծովանային. ուր

և ցանկալի խնդրոյն գտեալք՝ կատարէին այնոքիկ։

Սակայն այնուհետեւ զհետ փախըստէիցն Հայոց անցանէին զօրքն Պարսից. որոց հասեալ՝ զոմանս կոտորէին, և զայլ ոմանս արգելեալ ի տեղի ինչ ամրոց՝ արգելուին. որոց ոմանք հասեալ զնիզակափակ գիշերոյն պահապանացն, և զբազումս ի նոցանէ կոտորեալ՝ գնացին ողջանդամք։ Եւ այգոյն ի փախստէիցն Հայոց ձերբակալ արարեալ ածին ի բանակն, և կոտորեցին սրով, և զայլս բազումս արկեալ զփղօք՝ ըսպանանէին. և մնացորդք փախստէիցըն յայլ և այլ տեղիս Հայաստան աշխարհիս ցրուեցան։

Բայց որք ի ժամուն երանելի և երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ և նահատակեցան, են այսոքիկ. յազգէն Խորխոռունեաց՝ երանելին Խորէն. յազգէն Պալունեաց՝ երանելի սեպուհն Արտակ. յազգէն Գնդունեաց՝ երանելին Տաճատ· յազգէն Դիմաքսենից՝ երանելին Հմայեակ· յազգէն Քաջբերունեաց՝ երանելին Ներսեհ· յազգէն Գնունեաց՝ երանելին Վահան· յազգէն Ընծայնւոյ՝ երանելին Արսէն· յազգէն Սըրուանձտայ՝ երանելին Գարեգին։ Եւ որպէս շատ խուզիւ և բազում քննութեամբ հարցեալ և ուսաք ըզնահատակելոցն թիւս՝ որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն, երկերիւր եօթանասուն և վեց այր։ Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին, եօթն հարիւր և յիսուն այր· որք լինին միահամուռ, հազար երեսուն և վեց այր· զորոց իւրաքանչիւր անուն վարձահատոյցն Քրիստոս գրեալ պահէ ի դպրութեան կենաց։ Իսկ ի զօրացն Պարսիցն որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ՝ զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագլխացն Պարսից, երեքհազարք հինգ հարիւր քառասուն և չորս այր։

Խ. Եւ յետ վճարելոյ այսպէս գործոյ պատերազմին, և մարդասիրին Աստուծոյ զիւր սիրելիսն առ ինքն կոչելոյ, հրովարտակ առնէր Մուշկան Նիւսալաւուրտ առ Թագաւորն Արեաց Յազկերտ, և զէլս գործոյ պատերազմին գիտել տայր, գրեալ զյաղթութեանն աւետիս, և յանուանէ զհամար անկելոցն յերկոցունց կողմանցն պատերազմին։ Զոր լուեալ արքային Յազկերտի զկոտորումն լաւ արանց ի գնդէն Պարսից և զմահ առն Վարդանայ, յահաւոր սուգ ընկղմեալ խռովէր, յիշելով զքաջութիւն առնն, և ըզլաւութիւնն՝ զոր արարեալ էր ընդ թշնամիս բազում անգամ ի վերայ աշխարհին Արեաց՝ եցոյց։ Պատասխանի առնել հրամայէր հրովարտակին, և զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ գնդաւն ի դուռն կոչէր։ Եւ զԱտրորմիզդ ոմն անուն՝ յաշխարհէն Հայոց՝ մարզպան հրամայէր թողուլ, որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց՝ չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, և զպաշտօնն քրիստոնէութեանն համարձակապէս առնել ամենեցուն: Եւ տեսեալ Մուշկանայ զհրովարտակն թագաւորին Յազկերտի, և լուեալ զբանսն ի հրովարտակէն, կացուցանէր ի Հայս մարզպան զԱտրորմիզդ Արշական, և զիրս ամենայն ըստ գրեցելոցն ի հրովարտակէն թագաւորին՝ նմա յանձն առնէր: Դառնայր Մուշկանն հանդերձ աւարանօքն և այլ ամենայն գնդիւն յերկիրն Պարսից: Եւ մնացեալ Ատրորմիզդ մարզպան աշխարհիս Հայոց, բազում թուղթս խաղաղութեան առնէր ի տեղիս տեղիս Հայոց աշխարհին, թէ Եկայք շինեցարուք աներկիւղութեամբ, և մի ինչ զարհուրիք· յորս գրէր և կնքէր աւետաւոր բանս, շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս և կամիցի ըստ իւրաքանչիւր կամաց: Որք ի համբաւն՝ խնդութեամբ ի Պարսից և ի Սիւնեաց՝ ժողովեցան ամենեքեան:

ԽԱ. Սա և ի վերայ ժողովելոցն առ երանելին Հմայեակ յամուրսն Տայոց՝ գունդ կազմէր այրընտիր բազմութեամբ ի Պարսից և ի Սիւնեաց· և յերկուս բաժանեալ ըզգունդն՝ կարգէր նոցա զօրագլուխս զԱրաէն Գաբեղեան և զՎարազշապուհ Պալունի: Քանզի բազմութիւն փախստէիցն Հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք՝ դիմեալ ի յերկիրն Տայոց, ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ, որ էր յամեալ յաշխարհին Յունաց, խնդրել զօրս ի թագաւորէն, ըստ յառաջագոյն գրելոցն ի կարգի: Որք երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի· որոյ լուեալ զպատճառ նոցա երթիցն, սիրով լսէր ի նոցանէ, և յանձն առնոյր օգնել նոցա գնդիւ. և մինչդեռ պատրաստէր զիրըս խոստմանն, հասեալ վախճան որբոյն՝ վճարէր ի կենցաղոյս:

Եւ Թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս, որոյ և տեղեկացեալ նորա զպէտս խնդրոյն իւրացն Հայոց, հարցանէր զաւագս դրանն, թէ որպիսի թուի ձեզ պատասխանի առնել արանցդ եկելոց յաշխարհէն Հայոց առ մեզ: Պատասխանի տուեալ Անատոլեայ որ ի ժամուն սպարապետ էր Անտիոքայ, և Փլորենտի ուրումն առն՝ ասորի ազգաւ, որ էր աւագ դրանն Թագաւորին, և ասեն. Մեզ ոչ թուի հաճոյ արհամարհել զուխտ և զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ և կնքեալ է առաջին Թագաւորացն, և գրգռել պատերազմաւ իւրս մի խաղաղացեալս, և ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ Թագաւորին իւրեանց: Այլ և զելս անյայտ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ որպէս՝

դիւրեա՞ւ և կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի: Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտս Թագաւորին, և հատեցաւ ակնկալութիւնն Հայոց՝ որում ուշ եդեալ մնային, և ոչ պատահեցաւ: Եւ մինչ դեռ յապաղեալ էր զրոյց պատասխանւոյն այսպէս, հասեալ գործ պատերազմին Հայոց և Պարսից՝ կատարէր:

Եւ տանուտեարքն Հայոց և նախարարք, որք երթեալն էին յաշխարհն Յունաց, իբրև տեսին՝ թէ ոչինչ օգտեցան յաղագս որոյ աշխատն եղեն, դարձան և փութային գոնեայ ի յուսոյ փրկութենէն չվրիպել, այլ զի արժանի լիցին ընդ ընկերս իւրեանց ըմպել զմարտիրոսութեան բաժակն: Եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին, առ վայր մի առ լերամբն որ կոչի Պարխար՝ մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց՝ ամրագոյն տեղի մի գտեալ դադարեցին, թէ որպէս տառաջիկայ իրացն մարթացէն պատրաստել: Յորոց վերայ տեղեակ առաջնորդք եկեալ զցայգն, և ընդ ծագել առաւօտուն պատրաստքն զէնուք անկանէին ի վերայ այնց նորին ընկերաց՝ Հմայեկայ Մամիկոնէի, ի գիւղն որ անուանի Որջնհաղ՝ ի գաւառին Տայոց. քանզի ի ժամուն իջեալ էին ի յամրոցացն լերինն Պարխարայ. որք փախստէիցն ձեպով յուրաքանչիւր երիվարս հասանէին: Ոմանք մերկանդամք և ոմանք զինեալք հարկանէին ի զօրացն Պարսից. և դարձուցեալ ընդ կրունկն անդէն փախստականս առնէին. յորոց զբազումս անդէն ի շինամիջին և զայլս ի մէջ այգեստանւոյն յերկիր կործանէին: Անդ զկատարելութեան պսակն ընդունէր երանելի սեպուհն Հմայեակ՝ զոր փափաքանօք և բազում ցանկութեամբ խընդրէր, ժամանել զկնի սուրբ եղբօրն իւրոյ, և վաղվաղակի լսելի լինէր. զի հայեցեալ Աստուծոյ ի փափաք

առնն՝ կատարէր զհայցուածսն, և պսակէր զսուրբն:

Իսկ զօրն ուխտապահացն որք առ սրբոյն Հմայեկի ժողովեալ էին, իբրև տեսանէին զիրսն՝ ի սուգ մեծ մտեալ ի վայր կործանէին, չունելով ամենևին յոյս ինչ մխիթարութեան. այլ անձամբ անձին այր իւրաքանչիւր զվճիռ վատ մահու և չարաչար կորստեանն կատարեալ տեսանէր: Զարհուրեալք անդէն ի վեր ի լեառն դառնային ի Պարխար, հայթայթանս իմն առ չարի, և սուգ պատճառանաց մեծի և ահաւոր հասելոյ տրտմութեան հաշուէին: Եւ լուեալ Ատրորմզդին մարզպանին Հայոց զայնչափ լաւ արանց զծախս ի գնդէն Պարսից և Սիւնեաց, թէպէտ և սաստիկ տրտմութեամբ խըռովէր, այլ յորժամ լսէր զվախճան հրաժարելոցն սրբոյն Վարդանայ և Հմայեկի, մխիթարեալ ուրախանայր մեծապէս, ճանաչելով զբարձումն սպառասպուռ քաջ զօրավարացն:

ԽԲ. Խորհուրդ ի մէջ առեալ թէ որպէս հնարեսցին որսալ զարսն փախըստականս առանց Արեաց կռույ, և ըմբռնել ըստ կամաց և ի հարկատրութեան կացուցանել զաշխարհս Հայոց. և յայս միտս հաստատեալ կային, թէ բայց միայն սուտ երդմամբ և սնոտի խոստմամբ հաւանեցուցանել զմիտս որերոյն՝ կարասցեն առանց կռույ։ Առաքէր առ նոսա մարզպանն Ատրորմիզդն ի բանէն արքային Յազկերտի, և երդնոյր նոցա դաւով՝ թէ ոչ զոք սպանանեմք ի ձէնջ, և ոչ զտէրութիւնդ և զպատիւ հանեմք յումեքէ։ Եւ այսպէս նենգով նուաճեալ զմարդիկն՝ կալաւ զամենեսեան և տայր խաղացուցանել ի դուռն Արեաց. զիշխանն մեծ Արծրունեաց զՆերշապուհ, և զիշխանն տանն Ամատունեաց, և զիշխանն տանն Վանանդեայ, և զիշխանն տանն Արշարունեաց զԱրշաւիր, և զիշխանն տանն Անձևացեաց զՇմաւոն, և զիշխանն տանն Ամատունեաց զՎահանն, և զիշխանն Գընթունեաց, և զիշխանն Աշոցայ, և զիշխանն Առաւեղենից զՓափագ, և զիշխանն Տաշրայ զՎրէն, և զիշխանն Արծրունեաց զԱպրսամ, և զայլսն ի տանուտերացն և յաւագ սեպհացն, խաղացուցանէին ի դուռն թագաւորին Յազկերտի։ Կամեցեալ չու առնել գնալ ի դուռն և ինքն նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ, բայց նախ տայր խաղացուցանել յառաջագոյն քան զինքն։

Իսկ ի սուրբ քահանայիցն Հայոց՝ զորս կալեալ էր նախագոյն և եդեալ ի տեղիս տեղիս յամուրս բերդիցն Սիւնեաց, զսուրբ երէցն Յովսէփ, որ զկաթուղիկոսութեանն ունէր զաթոռ ի ժամուն, և զտէր Ղեւոնդն, և զքահանայսն Արածայ զտէր Սամուէլ և զտէր Աբրահամ. ընդ որս կալեալ տանէին և զսուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց զտէր Սահակ, և զդրան երէցն իշխանին Արծրունեաց Ներշապհոյ՝ զտէր Մուշէ, և զսուրբ երէցն Արշէն և զսուրբ սարկաւագն զԲաջաջ: Բայց զսուրբ եպիսկոպոսն Բասենոյ զՏէր Թաթիկ՝ էր յառաջագոյն տուեալ տանել զօրագլխացն Պարսից ի Խուժաստան, ըստ քսելոյ իշխանին Սիւնեաց, և անդ խիստ կապանօք պահէր: Տայր խաղացուցանել և զպատանին, զոր կալեալ էր իւր ի տոհմէն Մամիկոնէից և Կամսարականաց, և ի յայլ տոհմէ իշխանացն Հայոց. կարծեցեալ տանել մեծապէս սպաս Թագաւորին Յազկերտի և ամենայն աշխարհին Արեաց, և առնուլ զպատիւ Թագաւորութեան և զպարգևս: Որ եւս առաւելապէս եղև նմա յԱստուծոյ անձուկն ձաղանաց՝ յաւուր Թշնամանաց իւրոց, յորժամ նշաւակեալ խայտառակեաց զնա Յազկերտ՝ ամենայն աւագանով դրանն, ըստ աներևոյթ սադրելոյ նոցա ի վերուստ ազդեցութեան արդարադատին Աստուծոյ:

Արդ խաղացուցեալ զնոսա զամենեսեան

առաջի իւր յերկիրն Պարսից՝ նենգաւորն Վասակ, յերկոտասաներորդում ամի Յազկերտի արքային Պարսից, և ինքն չու արարեալ սաստիկ կազմութեամբ և ուժգին ախիւք, մերձ ի հասանելն առ Թագաւորն Պարսից, և զկարծեցեալ զխաբէական զիւր զմիամտութիւնն ծանուցեալ Թագաւորին և աւագանւոյն Արեաց, և առնուլ վարձս ըստ մոլեկան խորհելոյն իւրոյ՝ զԹագաւորութիւնն իսկ Հայոց: Ապա թէ յայնմանէ վրիպեալ ինչ, ասէ, գըտանիմ, համայն զայլն ամենայն ըզպատիւ և զգահս առանց ամենայն երկբայութեան և յերկուանալոյ գըտանեմ, և իմ են: Եւ զոհէր Աստուած ոչ հարցեալ, որ ասէ մարգարէին, թէ՝ Թագաւորեցին և ոչ ինեւ, և դաշինս կռեցին՝ և ոչ իմով կամաւ. որում ի ժամ պատահելոյ նենգաւորին, ըստ իւրում կարծեաց, այսպիսի մեծամեծ պատուոյ, յառաջեալ արդարախինդիր բանն

Աստուծոյ, և զդիմակս նենգաւոր խորհրդոց նորա մերկացեալ՝ ցըրւեալ վեր ի վայր տապալեաց զամենայն դառն մտածութիւնս առն, որպէս զվայրաթոյն խորհուրդն Աքիտոփելայ։

Եւ արդ եղեալ սա զմիջոցաւ ճանապարհին, ուր զսուրբ քահանայսն Աստուծոյ տանէին կապեալս, նըստուցեալս ի վերայ ջորւոց, և բազմութիւնք չուելոցն՝ որ էին ընդ անօրինին Վասակայ, հասին նահատակացն Քրիստոսի։ Եւ նոցա հարցեալ՝ եթէ ո՞յր է բազմութիւնս այս, լուան ի մարդկանէ թէ Սիւնեաց տեառնն է։ Եւ նոքա ասեն. Աւադիկ մօտ առ մեզ գայ։ Լուեալք ի հարցանելոյ սուրբքն, ճանապարհին ուշադրէին։ Եւ սուրբն Յովսէփ հարցանէր ցայրն Աստուծոյ՝ Ղեւոնդ, թէ՝ Գիտեմ թէ հասեալ գայ ի մեզ Վասակ՝ լրբիանամօթութեամբ սըրտիւ գալ առ մեզ յողջոյն, և քոյ զմտաւ ածեալ՝ որպէս պարտ է

առնել մեզ հրամայեա, և այնպէս առնեմք մեք։ Եւ սրբոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ՝ ասէ. Զվարդապետութիւն փրկչին մի՛ խնդրեր ուսանել ի մարդոյ. Յոր քաղաք կամ դեօղ մտանիցէք՝ ողջոյն տացէք. և ուր գոցի որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա, ապա թէ ոչ իցէ արժանի՝ առ ձեզ դարձցի ողջոյնն։ Եւ այն ինչ կատարեալ նոցա զհարցուածսն առ միմեանս, եկեալ հասանէր առ նոսա նենգաւորն Վասակ Սիւնեաց տէր. և տեղեկացեալ ի նոցանէ՝ վաղվաղակի իջանէր յերիվարէն և ողջունէր ըզսուրբսն. որոց ոչինչ բնաւ կարծեցուցեալ թշնամութիւն ընդ նմա՝ յոյժ խնդալից սիրով տեսանէին զնա։ Եւ մանաւանդ սուրբն Ղեւոնդ, որոյ անարատ և զուարթերես միշտ տեսակ իւր, և ախորժակ բանիւ լրջմտութեամբ խօսէր երկարս ընդ Վասակայ Սիւնեաց իշխանին։ Որ իբրև լսէր զքաղցրաբանութիւնն և զշնորհալի բանս երանելւոյն՝ խելացնորեալ ի դիւէն՝ կարծեաց թէ սոքա ոչ գիտեն իսկ զիմ արարեալ ի սոսա զչարիս. յաղագս որոյ և առաւելագոյն մխիթարեալ ի բանից առն Աստուծոյ Ղեւոնդի, երթայր ընդ նոսա երկարագոյնս:

Եւ յետ կատարման խօսիցն՝ կամեցեալ կոչել զնոսա Սիւնեաց տէրն, զորս և յաւուրն յայնմիկ աղաչեաց զսուրբսն ճաշել ընդ նմա յօթեւանին: Եւ յառաջեալ սակաւ մի նենգաւորին Վասակայ ի նոցանէ, ձայն զկնի եդեալ սրբոյն Ղեւոնդի՝ կոչէր զնա պատուոյն անուամբ մեծաձայն. Սիւնեա՛ց տէր, Սիւնեա՛ց տէր: Եւ նորա յօժարապէս պատասխանի արարեալ. Տեա՛րք, զի՞նչ ասէք: Եւ սրբոյն ասացեալ. Զամենայն ինչ մեր ասացեալ ընդ քեզ՝ զպիտոյսն և զառաւել օգտակարսն մոռացաք հարցանել, թէ ո՞ւր երթաս: Եւ նենգաւորին Վասակայ լուեալ զայս և

ի մեծ տրտմութիւն ընկղմեալ՝ ասէր զարմացմամբ. Առ տէրն իմ երթամ, գտանել ի նմանէ ըստ արժանի մեծ վաստակոցն զհատուցումն մեծ: Եւ սրբոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ, ասէ. Կարծեցուցանէ՞ զքեզ դեւդ՝ որ պատրեալ սադրեաց ըզքեզ նենգել սուրբ Աւետարանին ուխտի, թէ արդ միայն թագաւորութեամբ աշխարհին Հայոց կարեն Արիք տալ քեզ ըստ արժանի վաստակոց քոց զհատուցումն. այլ և ոչ մի ինչ է որ կարեն տալ քեզ փոխարէնս: Բայց թէ արդարեւ դու կենդանութեամբ զգլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս, ապա ընդ իս տեառն Աստուծոյ չէ խօսեցեալ: Եւ զայս լուեալ նենգաւոր իշխանին Վասակայ, վհատեալ խզեցաւ ամենայն սնոտի յոյսն իւր. և անդէն ծանեաւ զբեկումն անձին իւրոյ, որ մերձ ընդ մերձ հասանելոցն էր ի վերայ նորա: Քանզի ոչ վրիպէր բան սրբոյն, մինչեւ կատարէր ամենայն:

ԽԳ. Եւ արդ հասեալ ի դուռն՝ նենգաւոր իշխանն Սիւնեաց, և տեսեալ նախ զաւագանի դրանն արքունի, մատնէր և առաջի թագաւորին Յազկերտի. ընդունէին զնա թագաւորն և ամենայն մեծամեծքն արքունի՝ առ վայր մի մեծարանօք և շքեղութեամբ։ Զի թէպէտ և գիտէին զխաս նորա և զերդումն, և զուխտն զոր ուխտեալ էր նենգութեամբ ընդ սրբոյն Վարդանայ և ամենայն իշխանաց աշխարհին Հայոց՝ յաղագս զնոսա կորուսանելոյ և զինքն հաւատարիմ ցուցանելոյ, սակայն ոչինչ զգացուցեալ տային գիտել նմա. այլ լաւութեամբ որպէս զանգէտս պատուէին զնա՝ որպէս զայրն հաւատարիմ և բարեգործ, մինչև ածեալ հասուցանէին ի դուռն զսուրբ քահանայսն Աստուծոյ, և զաւագս ի տանուտերացն Հայոց, ի սեպհացն՝ որ ապստամբն էին, ընդ նոսին և ի տոհմէն Մամիկոնէից և Կամսարականաց և յայլ ազգաց

զողայ մանկունս ապստամբացն, զորս նախագոյն տարեալ նենգաւորին կացուցանէր առաջի հազարապետին Միհրներսեհի և այլ աւագանւոյ դրանն։

Եւ անօրէն հազարապետն Արեաց հրամայէր նախ զքահանայսն ածել զառաջեաւ. և հարցանէր զսուրբ երէցն Արածայ զՍամուէլ, և զնորին զհօգւոյ որդին զսուրբ սարկաւագն զԱբրահամ, որոյ զկրակն անցուցեալ էր զԱրտաշատու. Որպիսի՞ համարձակութեամբ, և ո՞յր հրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ, և ոչ ածէք զմտաւ զահ թագաւորաց և զերկիւղ իշխանաց, և այնպիսի մեծ կրակի իշխեցէք ձգել զձեռս ձեր. զի թէ մարդոյ եղեալ էր այնպիսի յանդգնութիւն՝ համայն արժանի մահու էր գործն, թող թէ յաստուածսն։ Եւ լուեալ զայս սրբոցն երկոցունց, տեառն Սամուէլի և Աբրահամայ, ետուն պատասխանի միաբանութեամբ՝ էր ինչ որ ստուգախօսութեամբ, և էր որ եպերանօք, ցուցանելով զիւրեանց աներկիւղ համարձակութիւնն, և լըսողացն զանզգայաբար հարցմամբն ծիծաղելով, ասէին. Երկնչել զերկիւղ զարժանն և զարդար ի Թագաւորաց և իշխանաց, նոյն օրէնքն մեր հրամայեն. բայց զԱստուծոյ երկիւղն փոխանակել ընդ երկիւղի մարդոյ՝ ոչ առնումք յանձն: Իսկ յաղագս կրակիդ՝ որ ասէք ցմեզ թէ սպանէք, մեք զկրակն ոչ գան հարկանելով և ոչ չարաչար խոշտանգանս ածելով նմա՝ վնասեցաք ինչ. այլ հայեցեալ ի ժամանակ ամբոխին և ի սպասաւորաց վատթարութիւնս, որք առ ոչինչ համարեալ զերկիւղ աստուածոցն իւրեանց՝ թողին զնա որպէս ոչինչ արհամարհանօք, և ինքեանք գնացին՝ և մեր տեսեալ միայն զկրակն առանց մարդոյ՝ մոխրեալ, և այնպէս կացեալ ի բազում աւուրս առանց ուրուք

խնամ տանելոյ, առաք զմոխիրն հեղաք ի բաց. վասն զի զայն ի նորին սպասաւորացն տեսանէաք հանապազօր՝ կրելով ցանկ զմոխիր և հեղլով յերկիր: Բայց որպէս չարախօսացն մերոց իմացուցեալ է ձեզ զմէնջ, թէ առեալ զկրակն ի ջուր վարեցին, յայդմ բնաւ իսկ չէ արժան արդարադատութեանդ ցանուլ մեզ և առ մահապարտս ունել, այլ գովութեան և պատուի առնել արժանի: Զի թէ արդարեւ ըստ ձեր բանիցդ՝ զոր լուեալ է յուսուցչացն ձերոց՝ խօսիք, և ճշմարիտ է վկայութիւնն այն, և զի եղբայր է ջուր կրակի, մեր ոչ միայն զի անցուցեալ չէ և վնասեալ զկրակն, այլ և մեծարեալ է զնա և բարի արարեալ: Արդ թէ արժանի մահու են, այնոքիկ են արժանի՝ որ թողին և արհամարհեցին զկրակն և գնացին. և ոչ մեք որ առաք և յեղբայր նորին տուաք՝ զի պահեսցէ սիրելապէս և բազում շքեղութեամբ, և ի ժամու տացէ ի բաց:

ԽԳ. Ըստ ամին օրինակի պատուհասեալ հարցանէին և զայլ սուրբ քահանայսն Աստուծոյ, զսուրբն Յովսէփ՝ զարդարեւ զկաթուղիկոսն Հայոց, և զսուրբ եպիսկոպոսն Ըռըշտունեաց զտէր Սահակ, և զամենասուրբ երէցն զտէր Ղեւոնդ, և զայլ սուրբ քահանայսն՝ որք էին ընդ նոսա ի հարցմանն. զսուրբն Մուշէ աղբակացի, որ էր դրան երէց իշխանին Արծրունեաց Ներշապհոյ, և զսուրբն զԱրշէն երէցն, որ էր ի գաւառէն Բագրեւանդայ, ի գեղջէն որ կոչի Եղեգեակ, և զսուրբ սարկաւագն զՔաջաջ, որ էր և նա ի գաւառէն Ռըշտունեաց, աշակերտ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, թէ Որպիսի աներկիւղ համարձակութեամբ, անձամբ ի վերայ թշուառացեալ անձանց ձերոց զայդչափ բազում մահապարտութիւնն դիզեալ կուտեցէք. աւերեցէք զատրուշանն, սպանեցէք զայնպիսի ձոխ կրականի, որ յաստուածոց շնորհեալ Արեաց աշխարհիս ի պահպանութիւն վառ և մշտակայ իրաց, որ ի թշնամեաց ուստեք յարձակէին ի վերայ մեր և ամենայն կողմանց, այն կրականայն անշէջ պահեալ էր զմեզ և պահէին։ Սպանէք զմոգեանն, կորուսէք ձերով կախարդութեամբ զայնպիսի քաջ այր ըզՎարդան, զի օգտակարութիւն էր Արեաց տեառն. և զմեծամեծ գործոց նորա յիշումն առ Արեաց աշխարհին, զոր բազում զօրագլուխք և այլ Արիք յիշէն, ընդ որս և նորա կախ եղեալ էր. այլ և զոր իւր իսկ աստուածանման տեառն իւրովք աչօք տեսեալ էր ի Մարվիռոտ՝ ըզնորա քաջարութիւնն։ Սակաւ մարդիկ են յԱրեաց աշխարհին, որ կարէին առնել ըստ արժանի գովութեան յայրն և ի նորա արարած. և դուք ձերով անպիտան և մշտակայ ուսմամբ թշուառացուցեալ կորուսէք զայնպիսի այր։ Եւ յայնպիսի աշխարհի հեղան անթիւ արիւնք և բաղում, Արեւաց և Անարեւաց։ Եւ արդ ոչ կարէք արդեօք ձեզէն ձերոյին անձանցդ գտանել հնարս մահու և վճարել ի բարեբարի լուսոյն, զոր անարժանութեամբ և ոչ իրաւացի տեսանէք այսօր, քան թէ սատակ և ըստ արժանի ձերոց գործոցդ պատահեալ բաղում տանջանաց՝ վատամահ լինել։

Եւ լուեալ զայս ամենայն խօս սպառնալիցս և զբանս պատուհասալիցս զչարաթոյն հազարապետին Արեւաց Միհրներսեհի, և զամենայն դրան աւագանւոյն, յառաջ կացեալ այրն Աստուծոյ Ղեւոնդ եւ պատասխանի ետ և ասէ. Սոքա ամենեքեան, որ կան ի հարցման առաջի իշխանութեանդ ձերոյ, ընդ որս և դուք զբանս երկարեալ խօսիք, ըստ օրինաց մերոց և ըստ աստուածատուր հրամանի կարգադրութեան եկեղեցւոյ՝ որոշութիւն ունին ըստ քահանայութեան պատուոյ։ Եւ ծանուցանելով զմի մի ի սրբոց՝ ցուցանէր նոցա զիւրաքանչիւր ոք թէ ո՞ ոք է, և կամ զի՞նչ է անուն ուրուք նոցա, և թէ որպիսի աստիճանաւ ըստ քրիստոնէական կարգի պատուեալ է։ Քանզի և թէպէտ ըստ համբաւոյ լուեալ էր նոցա զանուանս սրբոցն և զգործ զիւրաքանչիւր ուրուք՝ զոր գործեալ էր յաշխարհին Հայոց, սակայն և անծանօթ էին անուանք սրբոցն, և ըստ քրիստոնէութեան օծմանն անտեղեակ էին իւրաքանչիւր պատուոյ։ Եւ զսրբոյն Յովսեփայ ասէր. Զսա զոր տեսանէքս, թէպէտ և մանկագոյն քան զիս տեսանէք աչօք, այլ պատուով կարգեալ և արժանաւորապէս, և գլուխ է ամենայն Հայոց քահանայութեանց։ Եւ զսուրբն Սահակ ցուցեալ ասէր. Սա զկարգ օծման ըստ ճշմարիտ և արդարև քրիստոսատուր ձեռնադրութեան մերոյ օրինաց՝ զկատարեալն ունի. իսկ այլքս և ես միապէս եմք ըստ կարգի քահանայութեանն։ Իսկ թէ և ոք նուաղ հաղորդելով այսմ ժամուս, մանաւանդ դիպելով եւս խնդրոյ կատարելութեան է գտցի արժանի, և մեծ եւս է այնպիսին յաննախանձ արքայութեանն Աստուծոյ. և ոչ է իմ բանս՝ այլ որ արարիչն մեր և վարդապետ՝ նա ասաց, թէ Որ ախորժելով սպասաւորէ ամենեցուն, մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ: Որք և զպատասխանիս ձերոց ընդ մեզ այդչափ բանից և սպառնալեաց հրամայեցէք առնել մեզ ինչ. քանզի ոչ իբրև զանդէտս գործեցաք անխորհուրդ զայնպիսի մեծ և ահաւոր գործ, և զղջացեալ եմք, և կամ այժմ կարծիցեմք յոմանց՝ երկիւղիւ և ոչ ուրախութեամբ կալ առաջի ահաւորութեանդ ձերոյ. այլ ի վերայ գործելեացն ուրախ եմք և ցնծամք. այլ մեք պատահեալ եմք ազգի ազգի վշտաց, և մահու եւս փափաքելով սպասեմք՝ զի արժանի լիցուք:

Իսկ յաղագս տարուչանացն աւե-

րելոյ՝ որ ասէքդ, և կամ կրակին սպանանելոյ, ասէ ի մեր գրի. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն ի ներքոյ երկրի: Վասն զի կրակ ի բազում նիւթոց լինի. և է զի յորոց նիւթոց լինի՝ ի նոցունց և շիջանի, և է յորմէ լինի՝ ի նոցունց աճեալ բորբոքի: Արդ ծնանի հուր յերկաթոյ և ի քարէ և ի ջրոյ և ի փայտէ. այլ է և ուլն սպիտակ՝ որ ի նմանէ լինի հուր. լինի ի կաւարծաթոյ հուր, յորժամ ընդդէմ արեգական ոք շողացուցեալ դիցէ: Եւ ծնեալն յերկաթոյ հուրն՝ թէ կուտեսցես ի վերայ նորա երկաթ՝ կորնչի. և եղեալն ի քարէ՝ եթէ ծածկեսցես զնա քարամբք՝ անցանէ. նոյնպէս որ ի ջրոյն և յայլ նիւթոյ. իսկ ելեալն ի փայտէ հուր՝ ի փայտէ վառեալ զօրանայ. արդ ոչ հուրն, այլ փայտն արժանի է անուանել աստուած, որ և ծնանի և կենագործէ: Արդ ո՞չ արդեօք իցէ յետին մոլորութիւնն չար, զթշնամին միմեանց եղբարս անուանել և զմարդկան հաստատուածս՝ աստուած։ Որ զիւր զեղբայր և զծնօղ որպէս Թշնամիս ծախէ, զիա՞րդ նա զԹըշնամանիչս իւր և կամ զերկրպագուսն գիտէ պատուել կամ Թշնամանել. և դարձեալ յորմէ ծնանին՝ զնոյն ուտէն և անխնայ։ Ոչ պակասէ յամենայն նիւԹս հուր, ապա ուրեմն ամենայն նիւԹք երկրի աստուածք. ապա Թէ այդպէս գիտէք, ընդէ՞ր կուրացեալ մոգք զկէս մասն անուանէք աստուածք, և զկէսն յաղտեղի գործ ծախեալ Թշնամանէք. որպէս յաղուսոց և ի քարանց զկէսս ապարանս շինէք, և զկէսս՝ տունս դաշտանաց և աղտեղուԹեան շինէք. և յարծաԹոյ՝ զկէսս ըմպելիս կազմէք, և զկէսս՝ անօԹս աղտեղուԹեան կազմէք։ Հրոյ՝ աստուածոյն զարջառս և զոչխարս խորովէք և եփէք, և Ջրոյ զդաշտանս և զԹարախս և զաղբս լուանայք. և զկէսն առանձինն և կամ խառնեալ

ընդ գինի՝ ըմպէք, և ոչ զարհուրիք և սոսկայք։ Եւ մի ևս մի ըստ միոջէ հարկաւորեցիմք ասել և կամ Թուել զանզգայուԹիւնդ ձեր. զոր արԹուն և քաջ նահատակն Վարդան և նոցունց նմանիքն՝ որք ոչ կարացեալք այսպիսի խաբէուԹեան ծառայել, բողոքէին ձեզ համապազօր. Թէ՝ սուտ էն պաշտամունքդ ձեր և անմտաց վարդապետուԹիւնք, և չըլսէիք. զի բանուԹիւնք՝ զիրաւունս ոչ տան ճանաչել, որպէս և այժմ. յաղագս որոյ ոչ հանդուրժեալք, ետուն զանձինս իւրեանց ի մահ և պսակեցան, որոց և մեք քաջալերիչք եաք և արդարև ճշմարիտ վարդապետք նոցա։

Եւ տեսեալ զայս ամենայն սըրբոյ տուն Աստուծոյ Ղեւոնդի, որպէս ընդ մի բերան գովեցին սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով, և ուրախ եղեն յոյժ։ Եւ լուեալ զմեծաբարբառ գովուԹիւն սրբոցն, և զբերկրուԹիւն երեսաց նոցա տեսեալ անօրէն Միհրներսեհի և այլ ատագանւոյն Արեաց՝ որ նստէին առաջի նորա, ի ցասումն բարկութեան եղեալ, ասէ ցնոսա. Ոչ հրամայեն մեզ օրէնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չեւ ինչ լուեալ ի բերանոյ նորա. արդ զուարթացեալս իմն տեսաք ըզձեզ ընդ խօսս աշխարհակորուսիդ այդորիկ, զորոյ քաջ տեղեկացեալ լուեալ է մեր զամենայն գործս, և զկախարդասար վարդապետութիւն դորա, որով կորոյս զպիտանի այրն զքաջն Վարդան և զընկերս նորին. ըստ որոյ արժանի պատրաստեալ պատուհասին դմա չարաչար հատուցմունք և մահք: Բայց դուք գիտել տուք մեզ՝ թէ և ձեր նո՞յն բանք են, զոր մահապարտդ այդ իշխեաց աներկիւղ համարձակութեամբ յանդըգնել և խօսել առաջի մեր:

Եւ սուրբն Յովսէփ և սուրբն Իսահակ ետուն պատասխանի և ասեն. Զամենայն բանդ և զպատասխանիդ, զոր ըստ արժանի իւրոյ

սրբութեանդ արար՝ Աստուծոյ օգնականութեամբն քաջալերեալ, և խօսեցաւ ընդ ձեզ տէրդ Ղեւոնդ, ի յերկար ժամանակաց բազում անգամ զմտաւ ածեալ հասարակաց մեր ամենեցուն՝ զոր այսօր դա ըստ իւր աստուածաշնորհ գիտութեանդ գեղեցկապէս յօրինեալ կարգեաց առաջի ձեր, խորհեալ էր մեր և խօսեալ. որք ի դոյն միտս ամենեքեան և ի դոյն կամս ամենեքեան կամակիցք եմք, և խնդրեմք զի արժանի լիցուք վճարիլ ի դմին: Իսկ դու ախտիւ դառնութեան առ զայրացմանդ թշնամանեցեր զդա. երանի այնոցիկ՝ որ մտաց աչօք սրատեսք իցեն և արդարահայեացք. այլ մարմնական ախտիւ մեծամեծք ըմբըռնեալ ակարանան, է զի և կուրք. և դուք զոք այդպիսի ախտիւ մի զայրագնեալ թշնամանէք, զի դուք էք արժանի եպերանաց բազմաց:

Եւ զայրագնեալ ի վերայ սրբոցն անօրէն իշխանն յաղագս թշնամանացն, որպէս թէ ի թագաւոր կողմն դարձուցին սուրբքն զքրքանսն, հրաման ետ դահճացն հարկանել խստապէս շղթայիւք զբերանսն երանելեացն, մինչեւ լցեալ բերանք նոցա արեամբ՝ հոսէր արտաքս: Եւ այսպէս վճարեալ արձակեաց զատեանն. իսկ սուրբքն ըստ օրինակի սուրբ առաքելոցն՝ գնացին խնդութեամբ յերեսաց ատենին, զի արժանի եղեն վասն անուանն Քրիստոսի՝ անարգանաց եւ գանից եւ պատասխանատուութեան:

ԽԵ. Իսկ զայլս ի կապելոց՝ որք էին ի տանուտերացն եւ յաւագ սեպհացն, որք էին ի նմին ատենի, հրամայէր Միհրներսեհ դահճացն՝ տանել զնոսա, եւ խիստ կապանօք պահել՝ մինչեւ ինքնին թագաւորն, ասէ, առաջի իւր հարցցէ եւ լուիցէ զոր ինչ խօսին: Եւ մտեալ ի վաղիւն անօրէնն Միհրներսեհ առաջի թագաւորին Յազկերտի՝ տալ նմա գիտել զամենայն հարցուածս իւր եւ

զպատասխանիս քահանայիցն Հայոց: Եւ սրտմտեալ թագաւորն հրամայեաց ի վաղիւն ատեան մեծ լինել առաջի իւր, եւ ամենայն այր Արի եւ Անարի եւ զոր ինչ եւ ունէր ոք զպատիւ թագաւորին՝ կազմ առաջի իւր եկեսցեն, եւ զկապեալսն զամենեսեան ածել առաջեաւ: Բայց զողայն եւ զմանկունսն ի տոհմէն Մամիկոնէից եւ Կամսարականացն, եւ որք յայլ տոհմէն՝ հրամայէր անօրէնին Միհրներսեհի՝ տալ ի բաց ում եւ կամեսցի:

Եւ լուեալ զայս ամենայն զինուորքն, որ ոք ունէր զպատիւ թագաւորին, վաղ անդր հասանէին յատեանն: Իսկ ուխտանենգ իշխանն Սիւնեաց Վասակ արկեալ զիւրեաւ զամենայն պատիւս՝ զոր ունէր ի թագաւորէն, զայր մտանէր, ի խորանսն արքունի մեծաւ շքեղութեամբ. քանզի բաց ի պատուոյ թագաւորացն որ նուազէր նմա, այլ ոչինչ ի պատուոյ արքունի պակաս էր՝ զոր ոչ ունէր. և կարծէր այնուհետև առնուլ զԹագաւորութիւնն մեծ աշխարհին Հայոց: Եւ զայն ոչ գիտէր Թշուառացեալն, եթէ Տէր հեռացեալ էր ի նմանէ, և այսն պիղծ խեղդէր զնա. և բան սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի ի նմին ժամու կատարէր ի վերայ Թշուառականին: Եւ լցեալ Արեօք և Անարեօք ամենայն խորանն, հրաման տայր Թագաւորն զապստամբսն Հայոց կապանօք ածել առաջեաւ:

Եւ ածեալ կացուցանէին զնոսա առաջի Թագաւորին, և հարցեալ Թագաւորին, ասէ ցնոսա. Որպիսի՞ համարձակութեամբ, և կամ զի՞նչ զմտաւ ածեալ, և կամ ո՞ր պատրանօք, և կամ զի՞նչ ոյժ օգնականութեան տեսեալ՝ դիմեցէք յայնպիսի ահաւոր գործ, յորում տեսանէիք զկորուստ անձանց ձերոց և զաշխարհին, որպէս եղեւ իսկ և տեսէք: Եւ լուեալ զայս ամենայն Նախարարացն Հայոց, լուռ եղեն առ վայր

մի, և ոչ ինչ ետուն պատասխանի: Եւ երկրորդեալ զբանն Թագաւորին՝ ըստ առաջին հարցմանն, խնդրէր ի նոցանէ ստիպով պատասխանի: Եւ նոցա տուեալ պատասխանի՝ ասեն. Շնորհեսցէ մեզ բարերարութիւնդ ձեր զայր մի՝ զոր մեք ի մէնջ ցուցանեմք, լսել ի նմանէ զամենայն ի բնէ զմերոց իրաց՝ զաճումն, զխորհելն և զառնելն. վասն զի ոչ է պարտ ամենեցուն մեզ անկարգ ամբոխիւ խօսել առաջի քո:

Եւ Թագաւորին և ամենայն աւագանւոյն յօժարութեամբ յանձն առեալ՝ հրամայեաց: Եւ նոցա յառաջ մատուցեալ զԿամսարականն Արշաւիր, տացին լսել ի նմանէ բովանդակապէս զամենայն: Եւ Կամսարականն Արշաւիր զօրացեալ ի Սուրբ Հոգւոյն, յառաջ մատուցեալ աներկիւղաբար սկսաւ խօսել առաջի Թագաւորին և ամենայն աւագանւոյն, և ասէ.

Ի սկզբան իսկ զիրացդ զայդոցիկ

զպատճառս, յորժամ ի ձեր թագաւորացդ ի միտս ծնեալ՝ յայտնեցաւ մեզ բանն, և զիրացդ բուռն հարէք՝ որում մեզ ծառայել հրամայէիք, և օրէնս իմն հարկաւորէիք ունել մեզ՝ զոր ոչ մեք և ոչ նախնիք նախնեաց մերոց գիտէին և կամ ծառայեալ էր, և բազում անգամ բողոքեցաք թէ անհնար է մեզ յանձն առնուլ և ծառայել օրինաց, որոց նախնիքն մեր ոչ ծառայեցին, որ և մտաց մերոց ծանր թուի և արհամարհանք. և այսպիսի ի մէնջ բողոքելոյ՝ ձերոյին իսկ վկայէ անսուտ հրապարակդ։ Եւ իբրև ոչ կամեցաք լսել, ըստ բռնաւոր կամացդ ձերոց, և հարկաւորութեամբ յանձն եառուք առնուլ զպաշտօնն, զոր չըթամբէք առ երկիւղի մեծարեցաք սուտ, կամեցեալ գողանալ վայր մի խաբէութեամբ զերկիւղ ձեր. և սրտիւք ագարշելի համարեցաք զգործն և ատեաք, եդեալ ի մտի զերծանել հընարիւք և երթալ յաշխարհն մեր,

և թողուլ զաշխարհն մեր և գնալ կնաւ և որդւովք, և երթալ կորնչել յօտար երկիր։ Զոր նախ քան զամենեսեան ըստ ամենեցուն խորհրդոցն երեւելին ըստ աշխարհին իշխանաց՝ ծառայն ձեր Վարդան արար, զոր գիտէն և վկայէն բանից իմոց արք պարսիկք յաւագ տոհմաց, որ այժմ ողջ են և աստ են առ ձեզ։ Առեալ լոկ զիւր կին և զընտանիս իւր՝ դէմ եդեալ գնաց փախստեայ ի ձերոյ երկիւղէ յերկիրն Յունաց։

Եւ զգացուցեալ զայս տեառնդ Սինեաց Վասակայ, փութով զհետ դեսպանս արար զաւագ տանուտեարսն և սեպուհսն. և զսուրբ քահանայսն, և զսուրբ գիրս օրինաց մերոց կնքեալ իւրովք մատանեաւ, որով և երդուան իսկ, ետ տանել առ նա։ Ընդ որս յղեաց և զիս, և գրեաց ի նամակին առ նա այսպէս. թէ՝ Զի՞ ես փախուցեալ, և կամ զի՞նչ է երկիւղդ քո՝ յորմէ դուդ երկնչիս և ինչ ոչ յայտնեցեր. արդ մի փախչիր և մի երկնչիր յումեքէ. զի թէ յԱրեաց տեառնէն և ի նորին ուժոյ զարհուրեալ ես, մի երկնչիր. դարձիր, և նամակ առնեմք առ կայսր, և զանձինս մեր նմա ի ծառայութիւն տամք. և նա հաւատայ՝ թէ զայսպիսի մեծ աշխարհ նմա մեր կամաւ ի ծառայութիւն տամք, խնդութեամբ և կամաւ յանձն առնու, և զօր տայ մեզ. և նոքա և մեք միաբանեալք՝ միշտ աշխատ ունիմք զտէրն Արեաց և զԱրիս: Ապա թէ կայսրն այլազգագոյնս ինչ խորհի և չճանաչէ զիւր օգուտն, և ես մինչ Վրաց մարզպանն էի և Դուռն Ալուանից յիմում ձեռին էր, բազում զօրագլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ, և այսօր նոյն երդմամբ երթեւեկեն առ իս. և հարկք ամենայն աշխարհիս Հայոց առ իս են, և գործակալք ամենայն յիմում ձեռին են, և այլ եւս բազում կարասի՝ զոր ի պարսիկ գործակալացն հանի՝ որ աստ ի

Հայս էին, և յիմում գանձի կայ. յորմէ թէ զմի մասն՝ Հոնաց տամ տանել, անտի այնչափ սաստիկ հանեմ Հոնս, որչափ զի հողն Պարսից չբաւիցէ նոցա յաւարի:

Եւ գրեալ զայս ամենայն երդմամբ Վասակայ Սիւնեաց տեառն, դարձոյց բանի զՎարդան, որ էր մօտեալ օտար իշխանաց, որք ոչ են հնազանդեալ ձերում իշխանութեանդ: Եւ նամակն զոր գրեաց առ Վարդան՝ Սիւնեաց տէրդ՝ ողջ է, և կնիք աստ առ մեզ, տեսանել հրամայեցէք: Եւ յաղագս որդւոցն իւրոց այսպէս ասէր. Եթէ ոք ի Հայս Պարսիկ է, զամենեսեան կապանօք յամուր բերդս դնեմ, մինչև հարկաւ արքայն զիմ որդիսն ի բաց արձակիցէ: Յորոց կալաւ արս սակաւս ի Պարսկաց, առ վայր մի կապեաց. և յորժամ ինքն նենգաւորութեամբ զմերոյ կորստեան խորհուրդ ի միտ արկեալ տարաւ ի գլուխ, ապա ընդ նոսա ի բաց արձակեաց: Նամականի արարեալ առ կայսրն և առ այլ աւագանի դրանն և առ սպարապետն Անտիոքայ, և զՎահան Ամատունի և զայլս ի նախարարացն յիւրաքանչիւր տոհմէ ի Հոռոմս արձակեաց․ և զՎարդան և զմեզ գնդաւ յԱղուանս ի կախ գումարեաց․ և ինքն յանզգայս զմեզ նենգեալ՝ յայս չար մղեաց․ և զայնպիսի պիտանի զձեր ծառայ սպան, և այնչափ բազմութեան Պարսից և Հայոց կոտորածի և աշխարհին կործանման եղեւ պատճառ։ Եւ արդ ինքն զարդարեալ աւադիկ որպէս բարեգործ նստի ի միջի ձերում անհոգութեամբ։ Բայց դուք զնամականին զամենայն՝ զոր գրեալ և կնքեալ է առ կայսր և առ ամենայն աշխարհն Հոռոմոց, և կամ առ այլս բազումս, տեսանել հրամայեցէք զայն․ և որպէս ձեզ Արեաց կամ է՝ հրաման տուեալ կատարեցէք ի վերայ մեր։ Զի ուր գրեալք և կնքեալք ի միջի են, որպէս ձեր արդարութիւնդ խնդրէ, աւելորդ

բանից և շատխօսութեան պէտք անդ ոչ են։

Եւ լուեալ զայս ամենայն կարգաւ ի Կամսարականէն Արշաւրայ՝ արքային Պարսից և ամենայն աւագանւոյն դրանն, տեսեալ զնամականին՝ զոր գրեալ էր Վասակայ Սիւնեաց տեառն, և ի վերայ հասեալ, մեծապէս հիացեալ թագաւորն Յազկերտ և ամենայն իշխանք դրանն զարմացան։

ԽԶ․ Յայնժամ յառաջ կոչեցեալ թագաւորին զիշխանն Սիւնեաց Վասակ, սկսաւ սաստիկ և առաւելապէս զայրացեալ սրտիւ խօսել ընդ նմա և ասել․ Ի արդարեւ լուեալ մեր զայդ ամենայն նենգաւոր իրս քո և զարարուածս․ բայց արդ աղէ ասա՛, զի՞նչ խորհելով, և կամ որպիսի՞ ինչ զմտաւ ածեալ զայդպիսի իրս վնասից իշխեցեր ձեռնարկել և գործել․ քանզի դու էիր իշխան և գլուխ աշխարհին Հայոց, նախ քաջալերել բանիւ զմարդիկն, զոր ի նամակացն գրելոց ի քէն, զոր տուեալ մեր կարդալ, ստուգութեամբ տեղեկացաք. երդմնեցուցեալ զվաստակաւոր և զայնպիսի պիտանի ծառայն մեր զքաջն Վարդան և զընկերակիցս նորա՝ խաբեցեր նամականիւ առ կայսր և առ նորին սպարապետն. երդմնեցուցեալ նենգով զայնպիսի քաջ և պիտանի զվաստակաւորն մեր զՎարդան և զայլ ընկերս, և դարձեալ գումարեալ զնա զօրու յԱղուանս՝ ի վերայ Պարսկաց գումարտակին համարձակեցուցեր երթալ. նենգութեամբ մատնեալ զաշխարհն Արեաց կորուսեր, և կոտորածի այնչափ խմոց ծառայից Արեաց և Անարեաց եղեր պատճառ: Զի զայնպիսի ծառայ մի զմեր, որպէս զՎարդան, և կայսր և կամ Հոնաց արքայ բռնութեամբ յինէն հանել կամէին, և ամենայն Արեաց ուժովս կռուէի և չտայի հանգչել, մինչև այսրէն յիս հանէի: Եւ արդ դու ընդ քո ձեռն զայնպիսի օգտակար ծառայն սպաներ, և զմեծ և զպիտանի աշխարհ մի կորուսեր, և դու իշխեցեր լրբաբար առ մեզ իբրև անգէտս քո նենգաւոր գործոյդ գալ, և զմեզ տեսանել: Բայց զայս գիտեա, զի յայսմ հետէ Սիւնեաց տէր չես. և զչարիսն զամենայն զոր խորհեցար և կատարեցեր, կուտեսցի ամենայն ի վերայ չար գլխոյ քո: Եւ զհարկեր զիմոյ աշխարհին Հայոց և կամ զՊարսկացն՝ զոր սպաներն, և զկարասին այնչափ՝ զոր հաներ, հրամայեցաք խնդրել ի տանէ քումմէ և յորդւոց քոց՝ մինչև վճարեսցի ամենայնն:

Իսկ ողորմելի ուխտադրուժն Վասակ թէպէտ և կամէր խօսել ինչ և տալ պատասխանի, չդնէր ոք բնաւ ունկն բանից և կամ ախորժէր. վասն զի ուխտանենգութիւն որբոյ Աւետարանին, և բան անիծից երանելւոյն առն Աստուծոյ Ղեւոնդի եկեալ հասեալ ի վերայ նորա, պատեալ փակեալ պաշարեցին զնա: Որ թէպէտ և կայր ինչ վաստակս առնն առ Պարսիկս, և ջանայր ցուցանել ի ժամուն, և այն ոչինչ էր օգուտ․ այլ առաւել ևս ի դատախազութիւն եղեալ խստէին նմա: Եւ կատարէր առ նա բան սաղմոսերգին, թէ՝ Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ և աղօթք նորա ի մեղս դարձցին: Հրաման տայր Թագաւորն Յազկերտ անդէն զառաջեաւ կողոպտել ի նմանէ թշնամանօք զամենայն պատիւն զոր ունէր․ և ձաղեալ զնա պայկացն՝ մերկացուցին զնա․ մերկացուցեալ ի նմանէ զզարդարանս պատուոյ տէրութեանն, հանին զնա խայտառականօք արտաքս քան ըզհրապարակն արքունի: Եւ ի նմին աւուր զթշնամին նորա զսեպուհն սիւնի զուրացողն զՎարազվաղան՝ տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցանէին, որոյ որքան ժամանակս կալեալ զիշխանութիւնն Սիւնեաց՝ բազում արարեալ անիրաւութիւնս, և բազում տունս մոխրանոցս

չինեալ յաշխարհին Սիւնեաց, ի գայթակղութիւն տանն իւրոյ, բազմաժամանակեայ տանջեալ ի դիւէ ըստ յառաջագրելոցն՝ դառն մահուամբ սատակեցաւ չարաչար:

Եւ նենգաւորն Վասակ կացեալ ի դրանն ամս ինչ կարի վշտագին և նեղութեամբ բազմաւ, մաշէր զաւուրս իւր հառաչելով և յոգւոց հանելով զամենայն օր և զժամ․ մինչև թշնամանակերպ ձաղանօք սփռեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զդէմսն, ասելով․ Ահա ընկալ զայս ձաղս, ասէր, զոր ետ բերել քեզ ուխտանենգութիւն սրբոյ ուխտարանին և արիւն նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի և այլոց ցանկալի հաղորդելոցն ընդ նմա, որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի և անանց յազգաց յազգս իւրեանց: Իսկ դու, ասէ, մեղաւոր անձն իմ, կեաս խղճիւ և ցաւօք մնաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահի մշտնջենաւոր և անանց գեհենին։ Եւ զայսպիսի բանս հառաչանաց նորա և լալոյ մինչև յօր մահուան իւրոյ՝ խօսէին ընդ մեզ զայս արդարապատումն սպասաւորք նորին իշխանին Վասակայ։ Որոյ և վախճանն իւր անդէն յերկիրն Պարսից վճարէր, ըստ բանի առն Աստուծոյ սրբոյն Ղևոնդի։

ԽԷ. Իսկ զսուրբ քահանայսն Աստուծոյ, զտէր Յովսէփ կաթողիկոս և զտէր Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս, և զերանելի երէցն տէր Ղևոնդ, և զտէր Մուշէ գրան երէցն Ներշապհոյ Արծրունեաց տեառն, և զտէր Սամուէլ երէցն Արածոյ, և զտէր Աբրահամ սարկաւագ, և զտէր Արշէն երէց Եղեգեկի, և զտէր Քաջաջ սարկաւագ, զսոսա ութ քահանայս և քրիստոսասէր կապեալ նախարարքն Հայոց, որոց անուանք են այսոքիկ. ի տոհմէն Սիւնեաց երկու եղբարք Բաբկէն և Բակուր. ի

տոհմէն Արծրունեաց Ներշապուհ և Շաւասպ և Շնգին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ. ի տոհմէն Մամիկոնէից Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ. ի տոհմէն Կամսարականաց Արշաւիր և Թաթ և Վարձայ. ի տոհմէն Ամատունեաց Վահան և Առանձար և Առնակ. ի տոհմէն Գնունեաց Ատոմ. ի տոհմէն Դիմաքսենից Թաթուլ և Սատոյ, երկու եւս այլովք տոհմակցովք. ի տոհմէն Անձևացեաց Շմաւոն և Առաւան. ի տոհմէն առաջին Առաւեղենից Փափակ և Վարազդեն և Գադ. ի տոհմէն Արծրունեաց Ապրսամ. ի տոհմէն Մանդակունեաց Սահակ և Փարսման. ի տոհմէն Տաշրացեաց Վրէն. ի տոհմէն Ռոփսենից Բաբիկ և Յոհան։ Եւ զսոսա երեսուն և մի այր ի նախարարացն Հայոց, հրաման տայր թագաւորն Յազկերտ խիստ կապանօք պահել անդէն ի Վրկանի, մինչև յամս վեշտասաներորդ թագաւորութեանն իւրոյ։

ԽԸ· Եւ յամի վեշտասաներորդի թագաւորութեանն իւրոյ՝ Յազկերտ չու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի վերայ Քուշանաց· հրամայէր և զկապեալսն Հայոց զքահանայսն և զնախարարսն՝ խաղացուցանել ընդ իւր ի Վրկանէ։ Եւ եկեալ յԱպար աշխարհ, և եկեալ ի Տահաստանն՝ որ անուանեալ կոչի Նիւշապուհ, հրամայէր պահել անդ զկապեալսն Հայոց՝ զքահանայսն և զնախարարսն, ի դղեակ Տահաստանին Նիւշապուհ։ Բայց զերանելի զերկու քահանայսն, զտէր Սամուէլ և զԱբրահամ, հրամայէր ընդ իւր խաղացուցանել· զոր չարաչար վշտով և բուռն կապանօք և գանիւ տայր նեղել հանապազօր, ահ և երկիւղ արկանել ի վերայ քրիստոնէիցն՝ որք ընդ նմա ի կարաւանին էին։ Եւ հասեալ ի սահմանս թշնամեացն, և ոչ սակաւ մի մասամբք կատարէին խնդիրք թագաւորին, այլ ամենայնիւ նկուն

եղեալ դառնայր ամօթալից, կորուսեալ ի զօրաց իւրոց արս ընտիրս և ականաւորս, նոյնպէս և յայլ ռամիկ այրուձից։ Քանզի ոչ դէմ յանդիման ճակատեալ թշնամեացն պատերազմէին ընդ զօրսն Պարսից, այլ յեղակարծումն անկեալք ի վերայ միոյ միոյ թեւի՝ հանէին ընդ սուր զբազումս, և ինքեանք դարձեալ անվնասք աներեւոյթք լինէին։ Եւ այսպէս ի բազում աւուրս արարեալ՝ վատնէին սաստիկ հարուածովք զզօրսն Պարսից։

Եւ թագաւորին Յազկերտի տեսեալ զայնպիսի թեթեւութիւն ծանականաց իւրոց, յանհնարին տրտմութիւնս ընկղմեալ մաշէր· մոլոյզ եղեալ խնդրէր գիտել՝ թէ վասն որոյ պատճառանաց եղեւ դիպեալ նմա այնպիսի ծանր թեթեւութիւն։ Եւ կացեալ ի տարակուսի՝ ձգէր զպատճառն մերթ յանմիաբանութիւն գնդին իւրոյ և մերթ ի մոգուցն ծուլութիւն· թէ, Արեան ոչ կարացին ընծայիւք և արժանաւորապէս զոհիւք հաճել զմիտս աստուածոցն, որոց ցասուցեալ՝ ոչ կամեցան օգնել մեզ. այլ թողեալ ի ձեռանէ՝ զօրացաւ կողմն թշնամւոյն, և մեք վատնեալք դարձաք լի ամօթով: Եւ մոգուցն իմացեալ զտրտմութիւն թագաւորին, խորհուրդ ի մէջ առեալ խրատու անօրէն հազարապետին Միհրներսեհի, սկսան խօսել ընդ թագաւորին և ասեն. Արեաց քաջ, մի յածեսցին միտք քո յայլ խորհուրդ՝ վասն վատ պատահմանց, որ դիպեցաւ մեզ ի թշնամեացն. այլ ի ցասմանէ աստուածոցն, որ կարի խիստ զայրացեալ են մեզ յաղագս աստուածասպան քաջանայիցն Հայոց, որ վաղ արժանի էին մահու, և ձեր անփոյթ արարեալ՝ կան կենդանի մինչեւ ցայսօր: Զի եթէ լոկ մարդասպանք իսկ էին, և դուք այդքան յերկարեալ պահէիք առանց մահու, սակայն կարի ծանր էր և արժան մեղադրութեան գործն. թող

թէ յԱստուած իշխեցին ձգել ըզձեռս՝ սպանանել, և նոքա կեան և զարեւ տեսանեն. յիրաւի պատժեալք մեք յաստուածոցն գանիմք անխնայ:

Եւ լուեալ զայս թագաւորն ի մոգուցն, և կարծեցեալ ստոյգ զսուտ պատճառս նոցա, և ի մեծ տրտմութիւն գրգռեալ ընդ կապեալ քահանայսն, հաշուելով թէ արդարեւ վասն նոցա եղեւ այսչափ կոտորած զօրացն իւրոց, վաղվաղակի հրաման տայր՝ նախ զնոսա որ ընդ իւր քահանայքն էին, զսուրբ երէցն Սամուէլ և զսուրբ սարկաւագն Աբրահամ, յանհերեւոյթ տեղի ինչ տանել շատ ի կարաւանէն հեռի, և անդ գլխատել, յաղագս չգտանելոյ ուրուք ի քրիստոնէից և պատուելոյ զոսկերս նոցա: Բայց յառաջ քան զսպանանելն զնոսա՝ հրաման տայր զաջ ձեռն կտրել զսրբոյն Սամուէլի, և դնել ի ձեռին տեառն Աբրահամու. նոյնպէս հրամայեաց՝ և սրբոյն Աբրահամու կորել զաջ ձեռնն, և գնել ի ձեռին տեառն Սամուէլի. Փոխանակ, ասէ, զի իշխեցին ձգել զձեռս իւրեանց ի պատուական կրակն և սպանանել. և ապա սրով կորել զգլուխս նոցա: Եւ այսպէս վկայեցան սուրբքն յամսեանն հրոտից, որ օր եօթն էր ամսոյն, ի գաւառին որ անուանեալ կոչի Վարդգէս:

ԽԹ. Յետ այսորիկ դեսպանս հրամայէր առնել թագաւորն Յազկերտ վաղվաղակի և յոյժ փութով յաղագս երանելւոյ եպիսկոպոսին Բասենոյ Թաթկայ, որ կայր ի կալանս յԱսորեստանի, ի բազում ժամուց տանջեալ չարաչարւոյ տանջանօք. և հրամայէր սպանանել անդէն և անհետ առնել զմարմին սրբոյն, յաղագս չգտանելոյ ուրուք ի քրիստոնէից՝ ի պատիւ տանելոյ զոսկերս նորա: Եւ հասեալ դեսպանին անդ, կատարեալ մոգուցն զհրամանն և լցեալ խնդութեամբ. բայց յառաջ քան զվախճան սրբոյն՝ քերեցին

նախ տանջանօք զաւուրս բազումս զմարմին սրբոյն յոսկերացն, և ապա ըստ հրամանի թագաւորին հատեալ սուսերաւ զգլուխն և սպանին:

Ծ. Նոյնպէս տայր հրաման և վասն այլ քահանայիցն սրբոց, զորս թողին կապեալս ի Նիւշապուհ ի գդեկին: Տայր հրաման Վեհդենշապհոյ ամբարապետի՝ առնուլ ընդ իւր երկուս եւս այլ օգնականս յաւագանոյն, զՋնիկան՝ մայպետն արքունի, և զՄովան անդերձապետ ի ձեռանէ մովպետեան մովպետի, երթալ փութով յառաջ քան զինքն, և հանել զսուրբ քահանայսն ի բանտէն՝ ուր էին կապեալք նոքա և նախարարքն Հայոց, և տանել զնոսա հեռի ի քաղաքէն յանկոխ և յանապատ տեղի, և անդ չարաչարւոյ տանջանօք, որպէս և կամեսցի, բարձցէ զնոսա ի կենաց: Բայց յոյժ պատուիրանաւ զգուշացուցանէր թագաւորն՝ Վեհդենշապհոյ, ոչ տալ ումեք գիտել՝ ոչ զառնուլ և զգնալ զնոսա ի քաղաքէն, և ոչ զճանապարհն՝ ընդ որ տանիցին, և ոչ զտեղի մահուանն՝ ուր սպանանիցեն զնոսա։ Քանզի լուեալ է, ասէ, մեր ստուգութեամբ, թէ աւելի, ասէ, վասն այսր կարի խընդան ի մահ՝ որք ի մոլար աղանդն են քրիստոնէից, զի այդպէս ասեն, թէ ոսկերք այնոցիկ՝ որք յաղագս Աստուծոյն իւրեանց մեռանին, և որ ոք, ասէ, յիւրում տանն ունիցի ինչ անօթ, թէ և փոքր խրխոր ինչ ունի, և վատ ինչ և խորամանկ ի նա և ի նորա տունս և ի սիրելիս ոչ մերձենայ։ Եւ զայս եւս ասեն, թէ ի բանս ատենի յաջողութիւնս տան և իմաստս և քաջութիւնս գըտանել և պահպանութիւն։ Եւ մինչեւ ի մահ ջանան անձամբ և կարասւով գոնէ ատամն մի կամ եղունկն մի գտանել յայնպիսեացն, և ի տունս իւրեանց տանել։ Այլ և զայն եւս ի հաւատարիմ մարդկանէ՝ որք ի մոլար աղանդին նոցա են եղեալ, ապա զմեր լուսաւոր և զարդար

օրէնս ունին, տեղեկացեալ եմք՝ թէ կանայք նոցա, ուստերք և դստերք, և զզարդս ոսկոյ և արծաթոյ և մարգարտոյ տարեալ ուրուք նոցա, թէ կարի փոքր ինչ յոսկերաց այնր մեռելոյ տայր նոցա, զայն մեծարգոյ և պատուական համարին։ Եւ զինչ եւս այլ աւելի ասեմ. և զհարց և զմարց զարդս՝ զոր յանուն նոցա արարեալ է մեծաւ աշխատութեամբ՝ ճիտակս և կամ զտակս ինչ մարգարտոյ կարի մեծագնոյ, կանայք քրիստոնէիցդ չհամարին ինչ հանել յանձանց և տալ և գնել փխրանս ինչ յոսկերաց այնպիսեացն։ Այլ դուք ուշիմ լերուք, և յայնմ վայրի եղիցի սպանումն նոցա՝ ուր յայնպիսեաց կարծեաց և պատուոյ՝ սպանեալքն և որք սպասեն ոսկերացն՝ վրիպեալ լիցին։

Եւ զայս ամենայն բանս լուեալ ի Թագաւորէն ամբարապետին Վեհդենշապհոյ յԱպար աշխարհէն, և մտեալ ի գլեկ Շահաստանի Նիւշապհոյ՝ խօսէր բանս սուտս, և տայր աւետիս նենգութեամբ, թէ արքայից արքայ հրաման ետ ինձ զհայ երիցունդ որ աստ ի կապանս են՝ արձակել յաշխարհն իւրեանց. և վասն այլ ազատանոյն որ ի Հայոց են՝ պայման արար, թէ ես յորժամ գամ՝ արձակեմ ի կապանաց: Եւ լուեալ զայս բազմութեանն՝ որ էին ի Շահաստանին, կարծէին գոլ արդար զխօսեցեալսն ի Վեհդենշապհոյ: Բայց սուրբ քահանայքն իբրեւ լուան՝ իսկոյն գիտացին ազդեցութեամբ Սուրբ Հոգւոյն զհասեալ բարի ժամ յուսոյ նահատակութեան իւրեանց. սկսան խօսել ընդ նախարարս Հայոց, ընդ որս կապեալն էին, և ասեն. Թէպէտ և կամէր արդեօք Վեհդենշապուհ թաքուցանել զճշմարտութեան բանն՝ ոչ կարաց. քանզի երկոքեան մեր այդ իրք այդպէս կատարելոց են, որպէս և լուանն իսկ ի նմանէ ամենեքեան. զի դուք իբրեւ ողորմութեամբն Քրիստոսի արձակելոց էք ի կապանացդ, և մեք զօրութեամբ Սուրբ Հոգւոյն կատարեալ զաղտուկ զաւուրս կենցաղոյս պանդխտանոցիս, գնալոց եմք ի բնիկ աշխարհն մեր և յընտանիս, ուր դասք առաքելոցն են և օթեւանք սրբոցն, ի բանակ տանուտեառն և յարարիչն ամենեցուն Քրիստոս, որ ասացն. Ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի:

ԾԱ. Եւ սոցա դեռ եւս խօսելով զայս այսպէս, մի ոմն ի դահճացն՝ որ սիրելապէս ընդունելութիւնս ունէր ընդ կապեալ նախարարս Հայոց, լուեալ ճշգրտապէս յերանելի Խուժկէն, եկեալ յայտնէր նոցա զատոյգ խորհուրդն. և տայր գիտել զարդարն, թէ որպէս տուեալ է հրաման թագաւորին յաղագս սպանման քահանայիցն: Զոր առուգեալ նախարարացն՝ լային դառնապէս. իբրեւ ոչ եթէ ոչ կամելով զնահատակութիւն սրբոցն, որում և ինքեանք իսկ փափաքէին լինել արժանի, այլ մնալոյ ի նոցանէ որբք և անմխիթարք։

Իսկ սրբոցն և յաւնէն իսկ ճըշգըրտեալ զիւրեանց հաստատապէս աւետիսն, զօրացեալք զուարճանային ցնծութեամբ, և տուեալ փառս Աստուծոյ՝ իսկոյն երեկոյին պաշտամանն պատրաստէին. քանզի և անագանագոյն իսկ էր այնուհետև ըստ այլ աւուրց պաշտաման ժամ։ Որ քանզի և եկք ամբարակապետին ի Շահաստանն ոչ ինչ էին վաղ, վասն որոյ կալ զգիշերն անդէն հարկաւորեցաւ ի Շահաստանին։ Եւ սրբոցն կատարեալ զկանոն երեկոյին պաշտամանն, վայելէին սուղ ինչ և դոյզն ռոճկօք որպէս բազմախորտիկս անուշահոտութեամբ. և անուշակ ընթրեացն ուրախութեանն յերկարեալ զուրախութիւն ճաշակմանն, մխիթարութեան շնորհիւ զօրութեամբ Աստուծոյ Սուրբ Հոգւոյն. և յարուցեալ յընթրեացն,

փառաւորելով և օրհնելով զԱստուած՝ կատարէին զաղօթսն։ Հրաման տային սուրբ քահանայապետքն Աստուծոյ՝ կապելոցն նախարարաց՝ աղօթից և տքնութեան պարապելոյ ըստ կարգի իւրաքանչիւր ուրուք զգիշերն զայն, ասելով ցամենեսեան այսպէս. Զի եթէ զոք ի ձէնջ այսօր յուղարկէիք ի Հայս, ո՞չ ապաքէն առ իւրաքանչիւր սիրելիս թուղթս ողջունացոյցս և պատգամս ուրախալիցս յղէիք խնդութեամբ. նաև յաղագս ճանապարհորդելոյ ի ձէնջ ուրուք խնդրէիք յԱստուծոյ ողջամբ հասանել առ իւրաքանչիւր ընտանիս, և զեդեալ ձեզ նմա զբանն կատարել։ Եւ արդ աւասիկ յուղարկիմք մեք ի ձէնջ առ Աստուած. խնդրեցէք ամենեքեան ի փրկչէն Քրիստոսէ և ի սուրբ նորա Հոգւոյն՝ լինել աներկիւղ քաջալերութեամբ ամենեցուն մեզ արժանի երկնաթռիչ ցանկալի ուղւոյն, տանել ձեզ ողջոյն և զյանձնարարութիւն առ՝ բազումողորմն Քրիստոս և առ սուրբ գունդն առաքելոց և մարգարէից և ամենայն սրբոց։ Որոց միշտ բարեխօսութեամբ թախանձեսցի գորովալից գութ բազումողորմ արարչին Քրիստոսի, լինել ձեզ մխիթարիչ և փրկիչ․ և արձակեսցէ զձեզ յերեւելի կապանացդ՝ յորում էքդ, և ամաչեցուցանէ ըզնախանձորդս ձեր և զթշնամիս։ Տացէ ձեզ տեսանել զաշխարհն Հայոց և զընտանիս ձեր․ և անդ ամփոփեալ զոսկերս իւրաքանչիւր ուրուք զձեր առ ոսկերս հարց ձերոց ժողովեսցէ․ և յանհրեւոյթ կապանաց սատանայի արձակեալ զոգիս ձեր՝ պահեսցէ անվնաս յօր տեառն Յիսուսի Քրիստոսի։

Եւ լուեալ զայնպիսի հրաման ի սուրբ քահանայէն Քրիստոսի՝ ամենայն նախարարացն, ետուն պատասխանի և ասեն․ Ո՞ւմ արդեօք յաղթիցէ քուն յարքայութեանն, ուր ոչ գոյ տքնութիւն և ոչ ծանրութիւն տաղտկութեան․ և կամ ո՞ արդեօք ախտացեալ տրտմեսցի յանանց բարութեանն, ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։ Եւ մեզ օրս այս կարապետ է և առիթ աւուրն յայնմիկ, ուր վարդապետութիւնք սուրբ քահանայից Աստուծոյ քարոզեալ լսելի լինէր ի միջի մերում․ և տրտմութիւն ընդէ՞ր իսկ ընաւ ծնանիցի ի սիրտս ուրուք, որք արժանի եղաք ցանկ զծնողս մեր և զհոգեւոր վարդապետս ի կենդանութեան մերում ի մարմնի իբրեւ զհրեշտակս տեսանել, և ի վախճանի իբրեւ զզուարթունս։ Բայց որ արտասուեմքս փղձկալով, որպէս փրկչին ամենեցուն Քրիստոսի զԵրուսաղէմ տեսեալ կամ զՂազար՝ որ յարոյցն ի մեռելոց, թէ ընդէր իսկ անմահ և անախտ բատեղծուած յարարչէն՝ գերեալ ի խաբէութենէ թշնամւոյն դարձեալ ի հող՝ անկաւ ընդ ախտիւ և մահուամբ։

Եւ այսպիսի բանս աւետալիցս լուեալ ի Նախարարացն սուրբ քահանայից Աստուծոյ, մեծաւ ուրախութեամբ սկսան ամենեքեան տարածել զձեռս ի յերկինս, գոհանալ զԱստուծոյ և ասել. Գոհանամք զքէն, Աստուած, որ ի շնորհէ քարոզութեան սուրբ առաքելոցն բազումս ծնար առաքեալս, և ի շնորհէ ճգնազգեցիկ մարտիրոսացն անթիւ ծնար նահատակս. որպէս առաքեալն և խոստովանողն տէրն Գրիգորիոս, արարողն ուղիղ գործոց և ուսուցիչն յստակ և անհեղդ վարդապետութեան, Նախանձեցուցեալ զամենեսեան ի բարի նախանձ՝ ծընաւ վարդապետս և անթիւ նահատակս, յոլով միանձունս, անչափ դասս կուսանաց, զամենայն անձն ընաւ տաճար բնակութեան Սուրբ Երրորդութեանդ յօրինեաց։ Գոհանամք զքէն, Փրկիչ. որ ի հօտէն Սրբոյն Գրիգորիոսի զոչխարսն առաւել քան զհովիւս բանաւորս

արարեր, և զաշակերտս ի ժողովըրդենէն առաւել քան զվարդապետս յօրինեցեր գիտունս։ Ահա և մեք այժմ զօրացեալք քաջալերեցաք ի բանից շնորհալից հոգեւոր ծննդոցս մեր, հարք յորդւոց, վարդապետք յաշակերտաց, քահանայք ի ժողովըրդոց։ Եւ արդ յուղարկեմք ի սոցանէ ուրախութեամբ, որոց արկեալ զմեզ յուղի՝ առ քեզ առաքեն. և ինքեանք մնալով ի մարմնի՝ ընդ քեզ են և առ քեզ, և քեւ զօրանան։ Պահեա զսոսա ամենազօր աջովդ քո, պարսպեա զսոսա ամրութեամբ Սուրբ Հոգւոյդ քո, մխիթարեա զսոսա ուրախութեամբ բանի քո. զխաղաղութիւն քո տուր սոցա, և աճեցո՛ ի սոսա զշնորհսն։

Եւ այսպէս օրհնեալք զերանելի կապեալսն, և հզօր Ամենակալին յանձնեալ, ասեն. Նա պահեսցէ ըզձեզ ողջս, և Հոգւոյն իւրով սրբով մխիթարեսցէ զձեզ հանապազ. և դուք մի՛ տրտմիք, այլ ուրախաթեամբ ուրախ լերուք յայն՝ որ ասացն, թէ Ոչ թողից զձեզ որբս, գամ, ասէ, առ ձեզ. որ եկեալ իսկ է, և է ի միջի ձերում. որ արձակէ զձեզ ի կապանացդ յորում էքդ, և պահեսցէ զձեզ յուսով օգնականութեան իւրոյ. և տայ ասել ձեզ համարձակաձայն պարծանօք, թէ՝ Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանդ: Եւ ամենատէրն խորտակէ զսատանայ ի ներքոյ ոտից ձերոց, երեւելիս և պայծառս ցուցցէ զձեզ ի մէջ ազգիս ամբարշտի, և դարձուսցէ զձեզ ի յերկիր ձեր: Պահեսցէ զտունս ձեր, սնուսցէ զորդիս ձեր, ժառանգեցուսցէ զաւակի ձերում զվիճակ հարց իւրեանց: Նմա փառք և այժմ և յամենայն յաւիտեանս. ամէն:

Եւ կատարեալ Սրբոյն Ղեւոնդի զբանս վարդապետութեան և մխիթարութեանս այսորիկ՝ ըստ հրամանին Սրբոյն Յովսեփայ և Սրբոյն

Սահակայ, որոց և նոցա օրհնեալ զերանելի նախարարսն և զայլ ժողովեալսն ընդ նոսա, յանձնեցին զամենեսեան Սրբոյ Երրորդութեանն, և կատարեցին զաղօթս: Եւ եղեւ ամենայն անձն երանելի կապելոցն նախարարացն որպէս զանձինս այնոցիկ՝ որք ժողովեալ էին ի վերնատունն և բնակէին ընդ սուրբ առաքեալսն, լցեալք Սուրբ Հոգւոյն շնորհիւ, քաջալերեալք և ապաքինեալք ի յոյսն երկնաւոր:

ԾԲ. Եւ մինչդեռ ուրախացեալ ցնծայր ամենայն խոհարան լսողացն՝ որպէս բազմախորտիկս անուշահոտ ճաշակօք, հոգէշնորհ վարդապետութեամբ առաքելանման վարդապետացն, դային հասանէին յանկարծակի բազմութիւնք դահճացն յամբարապետէն, ջահիւք բազմօք սաստկապէս լուցելովք. քանզի ըստ անանց և անփոփոխ ձայնարձակութեան յաստուածային հրամանատուութենէն՝ թռչնոյ, ժամ էր այնուհետեւ հաւուն խօսելոյ. ունելով ընդ ինքեանս բազմութիւն դարբնաց գործովք արուեստաւորութեան իւրեանց, սալիւք եւ ուռամբք, կռանօք եւ խարտոցովք, խարտել եւ կարել եւ ի բաց հանել զերկաթսն ի ձեռաց եւ յոտից եւ ի պարանոցէ սրբոցն. եւ զոր ոչն կարացին կարել խարտոցօքն, ուռամբք ջարդեալ զբեւեռ երկաթոյն, գնելով ի վերայ սալիցն բեկեալ հանցեն ի բաց։ Քանզի ստուարք էին եւ ծանունք քան զբնութիւն ամենայն երկաթոյ, որովք զայլ մահապարտսն կապէին, զոր ի նոցա իսկ անուն տուեալ էր առնել մոգուցն, որպէս յանուն արանց վատախրատից եւ աշխարհակորուսաց եւ աստուածապանաց. եւ մանաւանդ զշղթայս սըրբոյ կաթուղիկոսին Յովսեփայ, զոր եւս առաւել քան զսաստկութիւն այլոց շղթայիցն ստուարագոյնս ասէին զնորայն եւ անհեդեդս։

Եւ տեսեալ սուրբ քահանայիցն Աստուծոյ զեկեալս ի գահճացն ընդ վեհդենշապհոյ, եւ զբազմութիւն դարբնացն, գիտացեալ՝ տրտմեալք խռովէին առ հասարակ. վասն զի ցանկանային երկնահրաւիրակ կոչմանն՝ նոյն զարդու, զոր յաղագս անուանն Աստուծոյ արժանի եղեն կրելոյ զայնչափ ժամանակս կամաւ եւ ցնծութեամբ ի մարմնի իւրեանց. թէ եւ հասեալք նովիմբ ի տեղի նահատակութեանն, ուր եղեալք արժանիք յաւիտենից փառացն, անդ ապա գնելով յետս միանգամայն զշղթայսն եւ զկապանս երկրային ծանրութեանց այսր աշխարհիս կամէին ախորժելով։ Քանզի զոր օրինակ մոլեկան փառացն ցանկացօղք արք եւ կանայք, որք անյագութեամբն համակեալք ոսկովք եւ պատուական ակամբք եւ մարգարտովք կապեն ախորժելով զիւրոյին անձանց զձեռս եւ զոտս եւ զպարանոց, զորս թէ ոք ի թշնամեաց եւ կամ ի բռնաւոր իշխանաց կապէր առ վտանգի և նովիմբ տայր կալ և չհանել ի բաց, առատանային փղձկալով, և չունէին ժոյժ և առ վայր մի, և արդ ինքեանք զինքեանս կապէն, և չհամարին ծանր և ոչ զգան. այլ և զոր յայլսն տեսանեն յայնպիսի նիւթոյ՝ նախանձին թէ ընդէր ոչ այն եւս ի մերում զարդուս չէ· բայց իբրեւ այլոց կայ, ես իւ երեւիմ քան զոք աւելի. և թէ կուտէր ոք զամենայն նիւթս աշխարհիս պատուականութեան ի վերայ այնպիսոյն, մինչեւ հեղձամղձուկ եղեալ խեղդէր՝ շատս չասէր։ Բայց և ոչ այնպիսիքն երեւէին պաճուճեալք անցաւոր զարդուքն՝ այնպէս գեղեցիկք և շքեղք և ամենայն տեսողաց պատուականք, որպէս երեւէին հայրանման որդիք նահատակին Գրիգորի՝ ցանկալի շղթայիւքն՝ երջանիկք և հրեշտականմանք, զոր ունէին պարծանօք և խնդութեամբ ի սուրբ ձեռս իւրեանց և ի պարանոցի։ Յորս մատուցեալ դարբինքն և ի բազում

ժամս ջանացեալ խարտոցօք և այլ ազգի ազգի հնարիւք, և ոչ կարացին կորել զատուարութիւն բեւեռացն. յետոյ ապա եդեալ ի վերայ սալիցն և ուռամբք ջարդեալ, հազիւ զերծուցեալ հանէին զերկաթն ի մարմնոյ սրբոցն, չարաչար կոտորելով և վիրաւորելով զմարմինս նոցա. որք զահագին ցաւս վշտացն առ ոչինչ համարեալ. այլ և ձգտեալ յերկարէր գործն մինչեւ յերրորդ ժամ աւուրն, հանդերձ ընդ նոսա կապելովք նախարարօքն Հայոց, աղօթիւք և փառաւորելով զցաւացածոյցն զՔրիստոս օրհնէին։

ԾԳ. Յայնժամ հրաման տայր Վեհդենշապուհ, և որք ընդ նմա օգնականք էին՝ կոչել ի ծածուկ ի գիշերի զականաւոր արս Շահաստանին, նոյնպէս և զերեւելիս ոմանս ի մոգուցն. և պատուիրէին նոցա հրամանաւ արքունի. Դիք, ասէ, զկեանս ի մահ զիւրաքանչիւր անձին և տան, և յիշեցէք զերկիւղ

Թագաւորաց, որք նման աստուծոց իշխեն սպանանել և կեցուցանել, պատուել և անարգել. և մի զոք յօրէս յայսմանէ մինչեւ ցբովանդակել ամենայն կարաւանին արքունի և ի Վրկան հասանել, զՀայ այր՝ ուստի և իցէ, կամ ի մանկտւոյ կապելոց նախարարացն Հայոց՝ որ ի Շահաստանին են, և կամ ի մանկանց կապելոցս երիցանցս՝ զորս մեք այսօր ի բաց տանիմք, և կամ բնաւ Հայ զոք՝ որ յանկարծ թէ և այլուստ ուստեք եկեալ իցէ այսր բնակել, թողուլ արտաքս քան զդուռն Շահաստանին. և գտանիցէք առանց ամենայն թողութեան ազգաւ հարեալք և դառն մահու մեռանիցէք ի Թագաւորէն, և մեր անձինք անպարտ լիցին յայնպիսի չարեաց՝ որ ի վերայ ձեր հասանիցեն. այլ զգուշացարուք երկիւղիւ և հոգալով հատուցանել բարի շնորհակալութիւն ի վերայ անձանց և մեր և ձեր հասարակաց։ Քանզի ըստ հրամանի

Թագաւորին երկնչէին, թէ մի գուցէ ոք ի մանկանց նախարարացն կապելոց՝ գաղտ այլակերպեալ հետաղօտիցէ զայն ճանապարհ գնացից նոցա։ Զոր փրկիչն Քրիստոս ընդ նոսին իսկ առաքեալ էր զցուցակ և զյայտնի աշխարհի գանձուն մեծի, և նոքա նման Հրէիցն՝ Պիղատոսի զօրուն հրամայէին պահել զգերեզմանն, զոր Բանն Աստուած հրեշտակօք բացեալ յայտնէր զինքն հաւատացելոց յանուն նորա. որ և ասացն և կատարեալ երեւեցուցանէ անսուտ զասացեալս իւր հանապազ. թէ՝ Որ հաւատայ յիս՝ զգործն զոր ես գործեմ նա գործեսցէ, և առաւել եւս գործեսցէ։

Եւ կատարեալ գահճացն զգործն ըստ հրամանին Վեհգենշապհոյ, խաղացուցանել այնուհետեւ ի Շահաստանէն զսուրբսն փութային։ Եւ տեսեալ զայն նախարարացն Հայոց որք անդէն ի դղեկի Շահաստանին ճաւլոց էին ի կապանս, քաջալերեալք և ապաւինեալք ի յոյսն երկնաւոր՝ աներկիւղ համարձակութեամբ առաջի ամենայն բազմութեանն հրապարակին Պարսկաց՝ օտարացն և որք անդէն ի Շահաստանին, անկեալք յոտս սուրբ քահանայիցն Աստուծոյ խնդալից և ուրախասիրտք համբուրէին յերկար ողջունիւ զոտս նոցա, աղաչելով և ասելով, թէ յիշեսջիք զմեզ անմոռաց յուրախութեանն ձերում և յարքայութեանն։ Նոյնպէս և սուրբ քահանայքն Աստուծոյ բերկրեալք սրտիւք և զուարթալից երեսօք ընկալեալք զամենեսեան ի գիրկս իւրեանց, ասէին. Աստուած զօրութեանց օրհնեսցէ զձեզ, և տացէ ձեզ տեւողութիւն համբերութեան ի փառս անուան իւրոյ, և զօրացուսցէ զձեզ առաջի ազգացս հեթանոսականաց. և արձակեալ զմարմինս ձեր յերեւելի կապանացդ՝ յորում էքդ՝ առաջնորդեսցէ ձեզ յաշխարհն ծննդեան ձերոյ, և ի դիրս հարցն

ձերոց հանգուսցէ զոսկերս ձեր. և յաներեւոյթ կապանացն սատանայի արձակեալ զոգիս ձեր, ածցէ զձեզ ի դասուն՝ ուր զմեզ յուղարկեցէք, և բնակեցուսցէ զմեզ ձեօք հանդերձ յաւիտենից յարկսն, ուր Քրիստոս է ընդ աջմէ Հօր։

Եւ տեսեալ անօրինացն այնպիսի ուրախալից հրաժեշտ ի միմեանց սուրբ քահանայիցն և նախարարացն Հայոց, այպանէին ընդ միտս իւրեանց ծաղրելով, հաշուէին զնոսա լինել անգէտս հրամանի թագաւորին, և ասէին գաղտ ցմիմեանս. Զի թէ գիտէին երկցանիս զմահն՝ զոր պատրաստեալ է նոցա, ունէին արդեօք բազում ստատորս լալոյ զինքեանս, այլ այդպէս ծիծաղել և ուրախանալ ոչ լինէին կարող։ Եւ զայն ոչ գիտէին ամբարիշտքն՝ եթէ այն էր ցնծութիւն և նոյն լուր ուրախութեան, և ընդ այն զուարճանային անյագ խնդութեամբ հրաժարեալքն և մնացեալքն։ Եւ ողջուն-

եալք զմիմեանս սուրբ քահանայիցն և նախարարացն Հայոց, յուղարկեալք գնային՝ կոչեցեալք ի պակուհին։ Եւ երթեալք սուրբ քահանայքն Աստուծոյ կազմէին ձեպով, և այլ մանկունք ի սպասաւորացն երանելեացն, որք եկեալ էին ընդ նոսա ինքնակամ յօժարութեամբ յաշխարհէն Հայոց, արբանեկել նոցա և սպասաւորել ի կապանսն. որք և վիճակի բարւոյ մասինն լինել արժանիք տենչային։ Եւ մանաւանդ առաւել Խորէն երէց, որ էր ի գաւառէն Այրարատու, ի գեղջէն՝ որում անուն էր Որկովի, և երանելին Աբրահամ երէց, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն՝ որում անուն էր Ջենակս։ Զոր տարեալ Վեհդենշապհոյ և որք ընդ նմայն էին, և հարցեալ՝ թէ դուք յո՞ կազմիք. և լուեալ ի նոցանէ՝ թէ ուր զհոգեւոր տեառս մեր և զվարդապետս տանիք, ընդ դոսա պատրաստ եմք երթալ ի կեանս կամ ի մահ։ Եւ

սրտմտեալ Վեհդենշապհոյ՝ հրաման տայր բռնաբար ունել զնոսա և պահել անդէն ի Շահաստանին. պատուէր տայր ըստ առաջին հրամանին զգուշանալ նոցա բազում պահպանութեամբ մինչև ցժամանակ մըտանելոյ ամենայն զօրացն արքունի յոստանն. և ապա, ասէ, իշխեսցէ ծառայ ոք կապելոց նախարարացն Հայոց ելանել ի Շահաստանէն ի պէտս արբանեկութեանն, ուր և առաքեսցեն տեարքն իւրեանց։ Զոր իբրև տեսեալ երանելեաց քահանայիցն Խորենայ և Աբրահամու զբռնաբար դահճացն արգելուլն ըզնոսա անդէն ի Շահաստանին, մեծապէս խռովեալք տրտմէին, հաշուելով անարժան զանձինս այնպիսի երկնաւոր պսակի, զոր և առնլոց էն սուրբ վարդապետք նոցա՝ որդիք նահատակին Գրիգորի։

ԾԴ. Չուէր այնուհետև ամբարապետն Վեհդենշապուհ հանդերձ քահանայիւքն ի Նիւշապհոյ ի վեց-

երորդ ժամու աւուրն, ընդ ճանապարհն՝ որ ելանէ ի Վրկանն։ Եւ լուեալ զայս առն միոյ վաճառականի, որ էր ազգաւ Խուժիկ, որոյ ըստ օրինի վաճառականութեան շատ անգամ ճանապարհորդեալ էր ի Հայս, որ և զլեզու հայերէն խօսից քաջ տեղեկաբար գիտէր։ Եւ էր ինքն այր ի մանկութենէ իւրմէ կեցեալ առաջինի վարուք, եղեալ որդի քրիստոսասէր և հաւատացեալ ծնողաց, որ և զերանելի քահանայսն Աստուծոյ և զնախարարսն Հայոց՝ որ ի կապանս էին, յայտ ընտանութեամբ գիտէր, առ որս և բազում ծախս յընչից և սպասաւորութիւն արարեալ էր մինչ ի Վրկանին էին, ուշադրելով զամենայն օր և ակն ունելով մասին նշխարաց սրբոցն ի կատարումն նոցա լինել արժանի։ Սորա լուեալ զհրաման թագաւորին՝ ճեպով և անյապաղ ոչինչ զգացուցեալ ումեք՝ թողոյր և զգրաստ իւր և զկարասի ի մանկունս իւր և

յընկերս, և իւր առեալ ի գրաստուց իւրոց գրաստս տակունս և ուժեղս, և նմանեալ առն կարաւանի՝ գնայր ընդ ճանապարհ՝ որ երթայր յԱպար աշխարհն, և ուղեկցեալ ճանապարհորդէր ընդ ամբարակապետին ընդ Վեհդենշապհոյ, ցուցանելով նմա զճանապարհայնն և յօթևանս ուր հանգչէին՝ բազում արթնութեամբ շուտութիւնս, և հաճոյ եղեալ Վեհդենշապհոյ ամենայն գործ հպատակութեան Խուժկին՝ սիրէր զնա յոյժ և խնամարկելով ողջունէր. վասն զի Աստուած էր՝ որ յաջողէր զիրն։

Եւ եղեալ համարձակապէս յընդունելութեան մեծի իշխանին՝ Խուժկին, հարցանէր առ ի սթափելոյ ամբարապետն զԽուժիկն՝ յաղագս գեղջն նորա և ծնողացն, թէ որպիսիք էին և ուստի։ Եւ Խուժիկն պատճառադրելով խօսէր ընդ նմա այլաբանութիւնս, սուտ պատճառս և դիպողս ըստ առաջարկելոյ իւրաց գործոցն։ Որդի եղեալ եմ ես, ասէ, ծնողաց օրհնաւորաց, որք ի նախնեաց իւրեանց կրակի և արեգական հաւատարմապէս եղեալ են ծառայք, որոց զիս ի նոցա յանձնեալ է ի մանկութենէ իմմէ, և նոցա պաշտպանութեամբն կացեալ եմ ի միջի մինչեւ ցայսօր և կամ, ճանաչելով յայտնապէս յանձին իմում զաստուածոցն օգնականութիւն։ Յիշելով երանելոյ Խուժկին ըզպատճառագրութիւնսն վարդապետին հեթանոսաց Պաւղոսի, որ երբեմն հաւատոյն փարիսեցի լինէր, և դարձեալ այլուր հռոմայեցի. որ ոչ էր յայսցանէ ի ժամուն և ոչ մի, այլ հաւատովք աւետարանին քարոզ էր և վարդապետ, և քաղաքաւ ի Կիլիկեցւոց գաւառէն էր, տարսոնացի, մանաւանդ թէ սուրբ և հոգեղէն վերին զօրացն էր դասակից. բայց զմիտս լսողացն առ վայր մի սայթաքեցուցանէր այսր անդր, զի զճշմարտութիւն անձեցուցեալ

հաստատեսցէ. այսպէս և երանելի Խուժիկն պատրողական բանիւք ըզմիտսն Վեհդենշապհոյ խնդացուցանէր ի ժամուն, որպէս զի զիւր ընթացիցն տենչանս տարեալ ի գլուխ՝ կատարեսցէ ըստ կամի։

Իսկ ամբարապետն Վեհդենշապուհ որպէս թէ յաստուածոց համարէր զպատահումն նմա Խուժկին, տեսանելով զայրն յամենայնի յաջողակ, և առաւել վարկանէր հաւատարիմ և ըմբռն գործոց իւրացն՝ յոր երթայր. վասն որոյ և չտայր թոյլ առն և ոչ ժամ մի հեռանալ յիւրմէ, այլ ի տուէ և ի գիշերի մօտ ունէր առ իւր բազում յարգանօք և սիրով. և հաւատայր նմա զխորհուրդ թագաւորին և զպէտս գործոյն՝ յոր երթայր. վասն զի ըստ յառաջագոյն ասացելոցն, Աստուած էր որ տնտեսէր զիրսն ըստ իւրոց կամացն ի քակտումն և յամօթ անօրինացն, եւ յօգուտ եւ ի փառս եկեղեցւոյ իւրոյ սրբոյ։ Եւ կատարէր բան Սուրբ Հոգւոյն՝ որ ասէր, Թէ՝ Խորհեցան ոչ ինեւ, և դաշինս կռեցին և ոչ իմով բանիւ։ Եւ սաղմոսերգն ասէ. Խորհեցան խորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել։

Ապա պատճառէր երանելի Խուժիկն պէտս ինչ զիւր տեսանել այլուր. և խնդրէր աղաչելով հրաժեշտ ի Վեհդենշապհոյ. որով յամենայն օգտակար իրաց և կարծեաց հեռացուցեալ զմիտս ամբարակապետին՝ առաւել հաւատարմագոյն ցուցանէր նմա զինքն, գիտելով յաղթեցութենէ Սուրբ Հոգւոյն, եթէ ոչ տայ թոյլ Աստուած արձակել զնա նմա։ Իսկ Վեհդենշապուհ և բնաւ իսկ ոչ առնոյր յանձն՝ լսել բանից Խուժկին, այլ ասէր ցնա գաղտ. եթէ, Դու որ օրինօք սնեալ ես և կեաս ի փառս կրակաց, ո՞չ կաս առ իս յօժարութեամբ և տեսանես զկորուստ անօրէն կրակասպան մահապարտացն, և ուրախանաս։ Եւ երանելոյ Խուժկին լուեալ զայնպիսի

բանս յամբարապետէն, մեծաւ երկրպագութեամբ շնորհ ունէր սիրոյն Վեհդենշապհոյ. այլ ի սրտի իւրում փառս տալով օրհնէր զամենահզօրն և զյարդարիչն ամենայնի զԱստուած, որ տայր խօսել ամբարակապետին և աղաչել զթուշակ նշխարացն սրբոցն՝ երթալ ընդ նոսա ի տեղի նահատակացն Աստուծոյ. այն որ լինելոց էր ցրիչ և խայտառակիչ թագաւորին հրամանի, և ցուցակ և բաշխիչ մեծի և երկնաւոր գանձու սրբոցն։

Իսկ երանելւոյ Խուժկին համբարձեալ առ տէր Աստուած զաղօթս սրտի իւրոյ, խնդրէր ի Բարձրելոյն շնորհել նմա ուշ և լայնութիւն սրտի, որով արժանի լիցի գրել հաւաստեաւ ի տախտակս մտաց իւրոց՝ որպէս յարձանագրի՝ զամենայն հարցմունս բռնաւորացն և զպատասխանիսն և զաղօթսն, զոր իւրաքանչիւր ոք ի սրբոցն ի ժամ կատարման մատուցանէր Աստուծոյ.

որպէս զի պատմել Ճշմարտապէս կարասցէ ի կարգի առ ի յիշումն ամենայն հաւաստացելոց լսողաց յազգս յաւխանէնից։ Եւ ընկալեալ ի յախորժալուր ի տուչէն զգիւտ մաղթանօք խնդրոյն իւրոյ՝ պատմել անդադար ցնծալից սրտիւ ամենայն ուղղափառ ժողովրդոց, յամենայն տեղիս ի զարմացումն և ի փառս անուանն Քրիստոսի։

ԾԵ. Իսկ Վեհգենշապհոյ ի սկըզբանըն ոչ համարէր արժանի պատմել Խուժկին զսուրբս քահանայիցն, զոր ինչ գործելոց էր ընդ նոսա, այլ ասէր, թէ՝ ի Վրկան տանիմք և անտի արձակեմք։ Եւ երթային այն օր ի գեօղ մի՝ որում անուն էր Սեւան[1], հեռի ի Նիւշապհոյ որպէս հրասախօք վեցիւք և թէ աւելի եւս, ըստ չափոյ համարուց Պարսկացն, և դադարէին անդ մինչև ցառաւօտուն պահն։ Եւ յառաւօտեան պահուն յարուցեալ փութով գաղտ, ոչինչ զգացուցեալ ումեք ի գեղջէն, և ոչ ամենեցունց զորս ընդ ինքեանս, բայց միայն երանելի Խուժկան և անօրէն դահճօքն, որովք սպանանելոց էին զսուրբսն, ըստ հրամանի թագաւորին. գնացին ի գեղջէն լռելեայն։ Եւ առեալ ըզսուրբսն դահճացն՝ գնացին զբօվանդակ մնացեալ մասն ի գիշերոյն՝ ընդ անկոխ անապատն հեռի ի գեղջէն՝ որպէս պարսիկ հրասախաւ միով և թէ աւելագոյն. և ընդ ծագել առաւօտուն հասանէին ի տեղի մի քարուտ, առապարաձոր, աւազուտ. ի տեղի՝ յոր ոչ հասանէր արօտական, և ոչ բնաւ անցանէր ընդ նա ուղեւոր, վասն ոչ գտանելոյ երբեք ի նմա ճանապարհ։

Եւ արկեալ աթոռս երեցունց իշխանացն՝ նստէին, ամբարապետն վեհգենշապուհ, և Ջնիկան մայպետն արքունի և Մովան անդերձապետն։ Իսկ երանելոյ Խուժկին համբարձեալ առ արարիչն ամենայնի զուշն։

---

[1] Խնդրելի է տեղիդ յարեւելից հիւսիսոյ Նիւշապհոյ (որ է իբր ընդ 37° Լայն. ի Խորասան), զի յայնմ կողմանն նշանակին լերինք և առապարք։

Եւ կացուցեալ զսուրբ նահատակն յատենի՝ ասէ ցնոսա Վեհգենշապուհ. Բազում և անհամար չարիս գործեալ է ձեր, և բազում Արեացն կոտորածի պարտաւոր էք. զի թէ լոկ միայն երկուց և կամ երից անձանց մահու պատճառ էիք, սակայն մեծ էր, և չէիք արժանի կելոյ, թող թէ այնպիսւոյ աշխարհի մեծի, որպէս Հայքն են, և այնչափ բազում արեանց՝ որ անդ հեղան. և ամենայնի այնմ դուք էք պարտաւորք, և ձեր առնելով և խրատու գործեցաւ ամենայն գործն այն։ Եւ ի վերայ այդչափ ձերոյ յանցանաց և մահապարտութեան՝ արքայից արքայ առ ձեզ կարի բարերարութիւն արար, զի մեզ հրաման ետ և ասէ. Թէ հաւանիքն արեգական և կրակի

երկիր պագանել, և զմեր օրէնս յանձն առնուն պաշտել, նոցա զմահապարտութիւն թողում, և զազատորեարսն որ կապեալ է՝ արձակեմ ի Հայս, և զիւրաքանչիւր ուրուք զտանուտէրութիւն տամ և զգահ և զպատիւ։ Արդ դուք յիշեցէք՝ և զձեր անձինդ զմտաւ ածել և զայնչափ կապելոց զոգիս, որք ի բանտին էին. և զի զհրամանն արքայից արքայի կամաւ և ախորժելով յանձն առէք. և որպէս եղէք պատճառք բազում արեանց, լերուք այժմ պատճառք բազմաց կենդանութեան. ապա թէ ոչ առնուք յանձն, և տակաւին ի նմին ապշութեան յամառեալ կեայք, դուք մեռանիք, և զնոսա հրամայէ սպանանել. և ամենայն արիւնքն որ յառաջն հեղան և որ այժմ հեղլոց են, ի ձեր յոգւոց խնդրին յաստուածոց։ Եւ զայս ամենայն բանս խօսեցաւ Վեհգենշապուհ հանդերձ ընկերօքն իւրովք ընդ սուրբսն։

Հրաման տային երանելւոյն Սահակայ եպիսկոպոսին՝ թարգմանել Սրբոյն Յովսեփայ և Սրբոյն Ղեւոնդի և այլոց ընկերակցացն. քանզի սուրբ եպիսկոպոսն միայն գիտէր պարսկերէն, և այլ ոք ի սրբոցն ոչ գիտէր։ Որոյ անդրէն պատասխանի արարեալ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, ասէ ցԴենշապուհ և ցայլսն որ նստէին ընդ նմա. Մի՛ տայք ինչ, ասէ, ասել ցդոսա բանս, որ ոչ են արժանի սոցա լսողութեան. վասն զի խօսք՝ որ ինձ ատելի թուին և արժանի ծաղու, զի՞ ես ասեմ ցնոսա, զոր գիտեմ թէ իբրեւ լսեն՝ և զձեզ և զյղելիան ի միասին անգոսնեն։ Արարէք զինչ և կամիք, և մի՛ յերկարեալ խօսիք ընդ մեզ բանս անոտիս և պատգամս ընդունայնս։

Եւ սրտմտեալ Դենշապհոյ և այլոցն՝ ասեն ցսուրբսն. Դու հարկաւորութեամբ ասա ցդոսա, թող գիտասցուք և զդոցա զխօսս և զկամս։ Եւ սրբոյ եպիսկոպոսին կարճառօտիւ զբանսն և զպատգամս Թագաւորին ասացեալ ցսուրբ ընկերակիցսն իւր. և սրբոցն լուեալ՝ մեծաձայն ծաղու անգոսնեցին զբանիւքն. զոր և իմացեալ անօրէն իշխանացն՝ առաւելապէս զայրացան։ Սակայն պատասխանի տուեալ սրբոյ կաթուղիկոսին Յովսեփայ ասէ, թէ՝ Եղեւ հարցումդ այդ առենաւ ի դրան առաջի հազարապետին արեաց Միհրներսեհի, և լուեալ ի մէնջ զբանս մեր և զկամս, զոր և Թագաւորին գիտել ետ. նոյն են մեր ամենեցուն կամք և բանք, և ոչ փոփոխեմք զբանս մեր, որպէս երբեմն խօլացեալք իբրեւ զանխորհուրդս, և այժմ զղջացեալ ապաշաւեմք իբրեւ զմասակարս։ Այս եւեթ խորհուրդ և խնդիր օր քան զօր աճէ ի սիրտս մեր, թէ ընդէ՞ր ոչ այսօր քան զերէկն և զեռանդն ցուցանի գործ յանձինս մեր լաւութեան և արարուած բարւոյ ի հաւատս՝ յորում եմք, խորհել ի սոյն և կեալ սովոր է ի միասին վախճանել։ Այլ յաղագս երկրպագութեան արեգականդ, որ ասէք՝ թէ հրաման ետ թագաւորն, զոր թէ յանձն առեալ հաւանիք, ասէ, կեայք դուք և ազատորեարն՝ որ ի կապանսն են. և եթէ յամառեալ՝ չկամիք առնուլ յանձն, և դուք մեռանիք և զնոսա հրամայեմք սպանանել. մեզ՝ մի լիցի ուրանալ զճշմարտութիւն և ծառայել սուտ անուանելոց աստուածոց, որ ոչ են աստուածք. և մերով ուրացութեամբ ումեք ի հաւատացեալ կապելոցն՝ մի լիցի արձակումն և ի յաւիտենից անլոյծ կապանսն անկանել. զոր և նոքա այժմ առաւել եւս քան զմեզ խնդրեն յԱստուծոյ, զմեր վասն Աստուծոյ ըղ- վախճանն՝ քան թէ զկեալն մեր ուրացութեամբ։ Այլ թէ հնար էր ձեզ այժմ գիտել մարգարէութեամբ, թէ որպէս (վասն) պատգամիդ այդորիկ՝ զոր բերէք առ մեզ հրամանաւ թագաւորին, թուլեք մեզ

անմիտք և կորուսեալք և դուք և որ զձեզն յղեաց, ողորմելի զանձինս ձեր և զթագաւորին քան զամենայն թշուառացելոց ի մարդկանէ հաշուէիք. բայց զոր ինչ կամիք՝ արարէք վաղ, և կամ երբ կամիք։

Եւ ասացեալ զայս սրբոյ կաթուղիկոսին Յովսեփայ, սրտմտեալ զայրացաւ Վեհդենշապուհ և որք ընդ նմա հաւատարիմքն էին, և հրաման ետ սրբոյն Սահակայ ասել ցնա. Զի թէպէտ և թուին մեզ ծանր թշնամանքդ՝ որով թշնամանեալ ասացեր զմեզ անմիտս և կորուսեալս, սակայն առ համարձակապէտն յանդըգնութեամբդ՝ զոր իշխեցեր յաստուածանման թագաւորն ասել բանս անարժանս, իբրեւ ոչինչ թուին ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց և թեթեւութիւն։ Բայց դու գիտեա, զի քեզէն զկորուստ անձինդ խնդրեցեր և առեր, և կեալ քեզ այսուհետեւ անհնար է. սակայն պարտ է մեզ և զիւրաքանչիւր զայլոց գիտել զկամս և զընտրողութիւն, վասն զի օրէնք մեր այսպէս ասեն։

ԾԶ. Եւ հրամայեաց սրբոյն Սահակայ ասել ցնոսա, թէ մի՛ անսայք անմիտ բանից դորա, և զանձինս ձեր յայդպիսի խօլ խրատուէ ի բաց կալջիք, և մարդկաբար զկեանս ընտրեցէք քան զմահ։ Եւ դա որ ինքն այժմ իշխեաց խօսել զայդպիսի բանս մահապարտութեան, վասն զի մեծամեղ է և չէ արժանի կելոյ, իւր իսկ վասն գործքն չտան դմա կեալ. իսկ դուք թէպէտ և էք տակաւին ինչ փոքրասակարք, և զկամս թագաւորին եւեթ առնէք և արքայական երկիր պագանէք, հրամայեաց զփրկան թողուլ ձեզ, և զձեզ պատուով ողջանդամ ի տունս ձեր արձակել։

Հրամայէին եւս Վեհդենշապուհ և այլ հաւատարիմքն որ ընդ նմայն էին՝ սրբոյն Սահակայ, ասել ցերանելի այրն Աստուծոյ Ղեւոնդ. թէ՝ Մեր լուեալ է վասն քո՝ թէ օրինաց քրիստոնէից իբրև զքեզ ոք տեղեակ չէ, և ի քո խրատուէ աւելի եւս կորեաւ աշխարհն Հայոց. արդ՝ այդպիսի մեծ և իմաստուն մտաց պարտ է ճանաչել զարքայից արքայի զբարերարութիւնն, զի զայնչափ փրկան թողու ձեզ և ձեզ ճըշմարիտ Աստուած ծանուցանէ։ Արդ՝ որպէս եղեր խրատտու և բազումք մեռան ի քո առնելոյ, լեր այժմ խրատտու կենաց, և թող կեան և դոքա և այլ բազում անթիւ անձինք. ասա ցդոսա զի պագցեն արեգականն երկիր և կեցցեն. և դու այնպիսի պատիւս գտանես ի թագաւորէն՝ որով անուանի լինիս ի քում աշխարհին և յամենայն ազգս։

Եւ սուրբ եպիսկոպոսն Սահակ երկայնմտութեամբ և ծաղրելով թարգմանէր առ վայր մի Սրբոցն՝ զամենայն բանս ամբարշտապետին և զնորուն անօրէն գործակցացն, որպէս զի ծանուսցէ անօրինացն պատասխանեօք Սրբոցն՝ զիւրաքանչիւր անձին զերանելեացն զկամս և զփափուք և զանշարժ հաստատութիւն նոցա ի հաւատն:

Եւ սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի սկսեալ խօսել առանձինն ընդ սրբոյն Սահակայ՝ ասէ. Թէ՝ Մեզ դոցա պատասխանի այնքան պարտ է առնել, որչափ արար պատասխանի Փրկիչն Պիղատոսի՝ յատենին: Բայց զի ծանուսցուք աներկիւղ ըղցանկութեանս մերոյ զխնդիրն, ասա ցդոսա. Դուք ասացէք աւադիկ զոր ինչ լուեալ է ձեր վասն իմ, թէ օրինացն մերոց տեղեակ եմ, և բազմութեան ժողովրդոց եղեալ եմ ուսուցիչ, ցուցանէ ձեզ տիք իմոյ մերձաւորութիւն ի կատարումն: Եւ արդ զընտրողութիւն լաւ գիտութեան իմոյ՝ որում դուք իսկ վկայէք՝ զի ուսեալ եմ յԱստուծոյ և ոչ ի մարդոյ, այսօր յաղագս երկիւղի մահկանացու և ապշեալ մարդոյ՝ մոռացեալ փոխանակիցե՞մ, և կորնչի՞մ. քա՛ւ լիցի. և լուեալ յանդիմանիցիմ բանիւն, թէ Որ ուսուցեր զբազումս՝ զանձն քո ո՞չ ուսուցեր: Եւ վասն պատուի և փառաց՝ զոր խոստանայք տալ, մեզ մի՛ լիցի առնուլ զպատիւ ի հողեղէն և ի մահկանացու մարդոյ, զոր ցեց և ուտիճ ապականէ և գող ականէ հատանէ և տանի. որ զգեցեալ եմք զփառս և զպատիւս յերկնաւոր և յանմահ աջոյն Բարձրելոյ, զոր ոչ երկինք և ոչ երկիր և որ ի նոսա պատուականութիւնք են՝ արժել ոչ կարեն: Մի ինչ պակաս է ի մեր երանելի փառաւորութենէս, բաժակ մահուդ, որում իբրեւ զպասքեալ ծարաւիս փութամք ըմպել: Արբուցէք վաղվաղակի, և թող ուրախացեալք զերծանիմք յերերալից ախտալակաց կենցաղոյս. և մի՛ եւս այլ յերկարեալ ձգտէք զանմիտ և զվնասակար բանս բանդագուշեալ թագաւորին ձերոյ:

Եւ սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի կատարեալ զիւր պատասխանին, աղաչեցին զսուրբ եպիսկոպոսն ըղ-

Սահակ՝ երանելին երէցն Մուշէ և երանելի երէցն Արշէն և երանելի սարկաւագն Քաջաջ՝ ասել ցանօրէն իշխանն և նոցա բանիւ, թէ՝ զոր ինչ ասացին սուրբ վարդապետքն մեր և հոգեւոր հարքս տէր Յովսէփ և տէր Ղեւոնդ, նոյն են մեր կամք և խնդիրք· կատարեցէք վաղվաղակի յոր եկեալդ էք, և մի յապաղէք· և խնդրեմք յԱստուծոյ պարգեւել մեզ և արժանի առնել զմեզ յաւիտենական պատուոյն և երկնից արքայութեանն։

Եւ լուեալ զայս Վեհդենշապուհ և անօրէն գործակցացն, և ի սրտմտութիւն բարկութեան գրգռեալք կամեցան և այլ պատրողական բանս և խօսս ընդունայնս խօսել ընդ սուրբ նահատակսն· կարծեցեալք թերեւս կարասցեն ձեղքել զոք ի գնդէ անքակ միաբանութեանն, որում անհնար էր լինել· սկսան ստիպել և այլ զսուրբ եպիսկոպոսն Սահակ, զի թարգմանեսցէ նոցա և այլ զոր

ինչ կամիցին խօսել ընդ Սուրբսն։ Եւ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ պատասխանի տուեալ ասէ ցՎեհդենշապուհ և ցայլ գործակիցս նոցա, թէ՝ Ես որ մինչեւ ցայժմ կամակատար ծանուցայ ձեզ և զասացեալն ի ձէնջ թարգմանեցի Սրբոցս, իբրեւ ոչ եթէ ձեզ և կամ պակշոտեալ բանից թագաւորին ձերոյ կամեցայ արբանեկել· քանզի զի՞նչ արդեօք հարկ ի վերայ կայ մարդոյ՝ որոյ միտք իւր առ իւր են և զգայ խելաց իւրոց, զայդպիսի զձեր բանդագուշանաց բանս՝ իւր իսկ լսել, թող թէ յականջս այսպիսի իմաստուն և խորհրդական մարդոց լսելի առնել· բայց այսքան միայն՝ զի առաւել եւս ծանիցի ձեր յիմարութեանդ նշաւականք, և ի մեզ զօրացեալ հաստատեսցի ճշմարիտ և աստուածուսոյց քարոզութեանն մերոյ անշարժութիւնն։

ԾԷ· Եւ սրտմտեալ անօրէն երեցունց իշխանացն, ոչ եւս առ ի յերկարուն հանդուրժել կարացեալ Սրբոյն, որպէս շնորհ առնելով թագաւորին ընդ այնչափ թշնամանելոյ զնա, յարուցեալ ինքնին Վեհդենշապուհ առաջի գործակցաց իւրոց՝ հարկանէր սուսերաւ զուս սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, և հուպ ի գոտին մերձեցուցանէր զվէրսն. և սրբոյ եպիսկոպոսին ի սաստիկ հարմանէն դրդուեալ՝ ոչ գլորեալ անկանէր յերկիր, այլ ի քարի մի յեցեալ հաստատէր. և որպէս ի բերանոյ ամենայն Սրբոցն սկսաւ ասել այսպէս. Գոհանամք զքէն, Քրիստոս, որ բազում անգամ կենդանարար գառնդ՝ անմահական զենմամբ մատակարարեալ անծախութեամբ բաշխեցար ի ձեռաց մերոց. իսկ արդ և զմեզ իսկ մարդասիրապէս աբարեալ զենումն՝ ընկալ զամենեսեանս արժանաւորապէս զպատարագեալս՝ ի հոտ անուշից: Եւ ասացեալ սրբոյ եպիսկոպոսին այսպէս, թէպէտ և յորդեալ հոսէին

վտակք արեանն ի վերէ Սրբոյն, սակայն կայր զօրացեալ ուժով շնորհօք հզօրին, որպէս զի ընաւ չիցէ վիրաւորեալ:

Եւ ապա հրամայէին և զսուրբ կաթուղիկոսն զՅովսէփ գլխատել սրով. և մերկացուցեալ դահճացն զՍուրբն՝ ասաց երիցս. Դարձ անձն իմ ի հող և ի հանգիստ քո, զի Տէր բարի արար քեզ. և այսպէս ընկալաւ սրով զվախճան կատարելութեանն:

Իսկ յաղագս Սրբոյն Ղեւոնդի հրաման ետուն դահճացն՝ անօրէն իշխանքն՝ մերկացուցանել զսուրբն և քարշել ուժգին ընդ քարաժեռ կոպճուտ տեղիս լանջակողմանցն: Եւ այնպէս քարշեցին յերկար ժամս, մինչեւ զամենայն մարմինս Սրբոյն զլանջացն և զթիկանցն քանցեալ քերեցին ի մորթոյն, մինչեւ ոսկերացն մերկանալ ի մորթոյն. վասն զի զերանելի այրն Աստուծոյ զՂեւոնդ առաւելագոյն ատէին ամենայն

Պարսիկք խրատատու և պատճառ լինել ամենայն իրացն Վարդանայ և գործոցն՝ որ ի ժամանակին յայնմ գործեցան յաշխարհիս Հայոց։ Եւ մինչդեռ կէսք ի դահճացն քարշէին զերանելին Ղեւոնդ, այլք կտրեցին սրով զգլուխ սրբոյ երիցուն Մուշէի և զսուրբ երիցուն Արշենայ և զսրբոյ սարկաւագին Քաջաջայ․ որոց ի ժամ վախճանին կատարմանն ասացեալ, Տէր Յիսուս ընկալ զոգիս մեր։

Եւ ապա աշխատեալ դահիճքն որ քարշէին զՍուրբն Ղեւոնդ, ածին ի նոյն տեղիս սուղ ինչ ոգով, ուր և այլ Սուրբքն կատարեցան, և անդ հատին զգլուխ Սրբոյն սուսերաւ․ որ ի ժամ իւրոյ կատարմանն զուարթագին ձայնիւ ասաց․ Գոհանամ զքէն, Քրիստոս, որ բազում գըթութեամբ քո օգնեալ պահեցեր զիս ի մանկութենէ իմմէ, և հաստատեցեր ի ժամս յայս, արժանի արարեր մասին Սրբոց քոց․ ի ձեռս քո, Փրկիչ, յանձն առնեմ զհոգի իմ։

Եւ սուրբ եպիսկոպոսն Սահակ կայր եւս սակաւ ոգով, զորոյ յետ վախճանելոյն ամենեցուն՝ կտրեցին զգլուխն սուսերաւ․ որոյ մատուցեալ նուաղ ձայնիւ աղօթս, և ասացեալ զամէնն՝ աւանդեաց զոգին։

Եւ այսպէս ի վեշտասաներորդում ամի Թագաւորութեան Յազկերտի, որ օր քսան և հինգ էր ամսոյն հրոտից՝ պսակեցան սուրբքն վեցեքեան․ սուրբ կաթուղիկոսն Յովսէփ ի Վայոց ձորոյ, սուրբ եպիսկոպոսն Սահակ յՌշտունեաց, սուրբ երէցն Արշէն ի Բագրեւանդայ, սուրբ այրն Աստուծոյ Ղեւոնդ երէց ի Վանանդայ, սուրբ երէցն Մուշէ յԱղբակոյ, սուրբ սարկաւագն Քաջաջ յՌշտունեաց, յԱպար աշխարհի, մերձ ի գեօղն Մոգնուց՝ որ անուանեալ կոչի Ռեւան։ Եւ որպէս ստուգիւ և ջերմ խնդրով Կամսարականին Արշաւրայ հարցեալ ցերանելի Խուժիկն, և լուեալ ի նմանէ պատմեաց մեզ ըզխօսս իւրաքանչիւր ուրուք և ըզվախճան Սրբոցն, գրեցաք հաւաստեաւ:

Եւ գնացեալ ի բաց ի տեղւոջէն Վեհդենշապհոյ և այլ իշխանացն որ ընդ նմա էին, ընտրեալ արս ինն թուով՝ թողին ի տեղւոջն կազմ զինու. ընդ որս նախ առաջին ըստ Աստուծոյ ազդեցութեանն՝ զերանելի Խուժիկն ընտրէր Վեհդենշապուհ և թողոյր պահելով, որպէս զկարի սեպհականագոյն և պիտոյ իւրում հրամանին: Որոց հրաման տուեալ ասէին ցպահապանսն, թէ մինչեւ ցաւուրս տասն և կամ եւս աւելի պահեսցեն զզգուշութեամբ զդիակունսդ. որպէս զի գիշատեալք ի թռչնոց՝ ընկեսցի այսր անդր ոսկրոտին, ի գլուխ լերանց և կամ ի խորաձոր տեղիս քարանձաւաց, մինչեւ եկեալ անցցէ ի բաց կարաւանն արքունի. գուցէ, ասէ, եկեալ ոք ի քրիստոնէից իրազգած յումեքէ եղեալ, գտանիցեն զոսկերս դոցա, և առեալ սփռեսցեն յամենայն

քրիստոնեայս, և մեք գտանիմք մահապարտք առաջի թագաւորին:

Եւ մնացեալ անդ պահպանացն ըստ հրամանին Դենշապհոյ և Մովան անդերձապետի և Ջնիկանայ մայպետի, և կացեալք զայն աւուրս, խորհէր ի միտս իւր երանելի Խուժիկն, եթէ զինչպիսի հնարիւք ցուցանիցէ Աստուած ճանապարհ առնն, որով արժանի լիցի գողանալոյ զնշխարս Սրբոյն յայլոց պահապանացն: Եւ մինչդեռ երանելի այրն յայնպիսի խոհականութեան վտանգի կայր, յանկարծակի ի նմին աւուր յերեկորեայ գիշերոյն՝ լինէր շարժումն մեծ ի տեղւոջն, բոմբիւնք սաստիկք և ձայնք ահագինք յանդընդոց հնչէին, կուտեալք բազմութիւնք ամպոց զերկնին ծածկէին, ձայնք որոտմանց և փայլատակունք զլերինս դողացուցանէին. և սիւն լուսոյ ըստ օրինակի ծխածանի իջեալ յերկնից՝ շուրջ պարուրեալ զնահատակաց զմարմինս ծրափակէր. և կործանեալ յերկիր պահապանքն կիսամեռք լինէին, չգիտելով այր զընկեր ընաւ արգեօք թէ ո՛ւր իցէ. որք և գլորեալք յերկիր՝ ոչ կարէին կալ հաստատուն՝ քանզի դողումն մեծի շարժմանն ի վեր ոստուցեալ զնոսա ընկենոյր յերկրէ. և այսպէս կքեալ ոտիւք և կարկեալ խօսիւք՝ լինէին խորտակեալք ամենեքեան։ Իսկ զերանելի Խուժիկն աջ հզօրին պահէր անհոգս. ուրախալից մօք փառաւորէր զԱստուած, իմացեալ այնուհետեւ՝ թէ արդ հաստատ կատարին բազմաժամանակեայ յամենայն կամաց իւրոց խնդիրք։ Եւ կատարեալ միապէս երկիւղիւ զգիշերն ողջոյն և զտիւն բովանդակ և զերկրորդ եւս գիշերն մինչեւ ի ժամ արեգական ծագման, և ապա լուէին ձայնք անդնդոցն հնչմանց, և որոտմունք ամպոցն փարատեալ ցածնուլին, և դադարէր երկիրն ի շարժելոյ, և ցայտմունք փայլատակմանցն ամփոփէին յերեւելոյ. և լինէր այս

լոկ շուրջ զտեղեաւն իբրեւ ասպարիսօք երկուք։ Իսկ պահապանքն յահագին ապշութենէ թմրութեանն սակաւիկ մի ոգի առեալ՝ աչս ածէին փախչելոյ ի տեղւոջէն. այլ ի յոյժ բեկմանէ սրտիցն երկիւղէ՝ ոչ կարէին կանգնել յերկրէն. լոկ հայէին եւեթ ընդ միմեանց դէմ, և խօսել ինչ ոչ կարէին։

Բայց զինն ժամու աւուրն երրորդի յարուցեալ երանելի Խուժիկն, որպէս թէ կամաւ՝ կաղս ի կաղս հայելով զկնի իւր՝ փախչէր ի տեղւոջէն, զի զնոսա զօրացուսցէ ի կանգնել և զկնի իւր հեռացուցանել ի վայրացն։ Որոց տեսեալ զերանելի Խուժիկն զի երթայր խեկբեկս յընթացի, ուշաբերեալք առ վտանգի՝ զկնի նորա սրանային ի տեղւոյն, չիշխեցեալք ընաւ դառնալ և հայել ի տեղին առ երկիւղի. և պնդեալք զհետ վեհգենշապհոյ և գործակցացն նորա փութային. բայց երանելի Խուժիկն ընդ այլ ճանապարհ որոշէր ի նոցանէն։ Եւ հասեալ պահապանացն առ իշխանն յաւուր վեցերորդի, պատմէին զամենայն անցս աղէտիցն՝ որ անցին ընդ նոսա զաւուրն մի և զգիշերս երկուս· զորոց զգոյն երեսացն տեսեալ Դենշապհոյ և ընկերացն նորա, և զանցս ահագին իրացն մի ըստ միոջէ լուեալ՝ զարհուրէին։ Եւ ապշեալք ի բազում ժամս հիանային· խորհուրդ ի մէջ առեալ՝ ոչինչ կարէին իմանալ հնարս· բայց զպահապանսն եւեթ լռեցուցանել ջանային, չյայտնել ումեք ամենեւին, և ոչ բնաւ յիշել ումեք զմահ քահանայիցն և կամ զայնպիսի նշանաց երեւմունս։ Բայց ինքեանք միայն խոճոճելով առանձինն զարմացմամբ որպէս յանզգայութիւն ընկղմէին, ասելով Դենշապուհ և Ջնիկան ցմիմեանս, եթէ՝ Ոչ են իրք քրիստոնէից թեթեւ ինչ և դուզնաքեայ· այլ հաստատ մեծ է զօրութիւն օրինաց նոցա և հաւատոց· և մեք յանգիտութեան վնասեալ կորնչիմք և չզգամք։

Իսկ երանելի Խուժիկն գիտացեալ՝ թէ ցածոյց Աստուած զամենայն կասկած յամենայն կողմանց, այլ և զպատասխանիսն իշխանացն լուաւ՝ զոր ինչ պահապանացս արարին, և թէ ոչ ոք առնէ փոյթ ոսկերացն սրբոց, առեալ ընդ իւր տասն եւս այլ ընկեր, զորոց կարի քաջ գիտէր զհաւատս քրիստոնէութեանն, առնուին ընդ ինքեանս և գրաստս, և ըստ իւրաքանչիւր անձին Սրբոցն սապատս չորեքկուսիս· և գնացին լռելեայն ի գիշերի յիրան· և մերձեալք ի վայրն՝ վրիպէին ի տեղւոյն՝ ուր մարմինք Սրբոցն կային, քանզի յոյժ աղջամղջին էր գիշերն· և աշխատեալք առ վայր մի, տրտմէին, անարժանս կարծեցեալ զանձինս գիւտի երկնաւոր գանձուն։ Եւ մինչդեռ նոքա խռովեալք յածէին ընդ տեղիսն, և ահա յանկարծակի ի նմանութիւն լուսաւոր արծուոյ սըլացեալ հասանէր յերկնից, և իջեալ նստէր ի վերայ մարմնոյ սրբոյ առն

Աստուծոյ Ղեւոնդի. և լուսաւորեալ տեղիքն առաւել եւս քան ի տուէ՝ երեւէին յայտնապէս մարմինք իւրաքանչիւր Սրբոցն: Եւ նոցա ուրախալից սրտիւք զուարճացեալք երկիր պագանէին տեառն Աստուծոյ, և ձեռն ի գործ արկեալ՝ ժողովեցին զիւրաքանչիւր ոք յականէ ի մի մի սապատ, որպէս նշմարեալ երեւիւր իբրեւ գրով երանելի Խուժկին. յորոց բուրեալ հոտ անոյշ ի մարմնոց սրբոցն՝ լցեալ զուարթացուցանէր զամենեցուն զգայութիւն խելացն:

Եւ բարձեալ վաղվաղակի գրաստուց՝ փոխէին յայլ տեղի յանապատին, հեռի ի տեղւոյն իբրեւ երիւք պարսիկ հրասախօք. և գագարեալ աւուրս եւթն վասն քաղցածնլոյ իւրաց երկիւղին, ապա մաքրեցին զոսկերս Սրբոցն յանուշահոտ մարմնոցն. զոր և պատեալ արժանաւորապէս կտաւօք՝ թաղէին պատուով անդէն յանապատին ըղգուշութեամբ. և զոսկերսն առեալ բերէին ի շահաստանն, և աւուրս բազումս ունէին առ ինքեանս ի ծածուկ: Ապա լռելեայն սկսանէին տալ և ոմանց յառաքինի քրիստոնէից՝ որք ի կարաւանին էին. որք ընդունէին՝ հաշուելով գիւտ փրկութեան ոգւոց և մարմնոց: Եւ ստիպով յիւրաքանչիւր աշխարհս տային հասուցանել վաղվաղակի, յօգուտ երկնաւոր կենդանութեան ընտանեաց միանգամայն և գաւառին: Բայց զառաջին պտուղ աստուածաշնորհ մեծի գանձուն՝ բերեալ նախ երանելոյ Խուժկին մատուցանէր կապելոց նախարարացն Հայոց. որք իբրեւ արժանի եղեալք ընդունէին զայնպիսի փրկութեան զիւրեանց գիւտն, անդէն և անդ ճանաչէին թէ այցելութեամբ այց առնէ նոցա Աստուած, և երբ և է արձակին ի կապանացն, բարեխօսութեամբ ոսկերաց Սրբոցն, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի. զոր ի խրատելն իւրում ի գիշերին՝ աւետաւորեաց զդիպելոց նոցա ի շնորհէն Աստուծոյ, տեսանել զաշխարհ իւրեանց. որք կատարելոցն էին ասացեալք Սրբոյն ի ժամու իւրում։

Սկսեալ այնուհետեւ մի ըստ միոջէ պատմել կապելոց նախարարացն Հայոց երանելի այրն Աստուծոյ Խուժիկն, զոր անուանել յայսմհետէ Խուժիկ ծանրանամ, և զանուն սքանչելւոյն՝ ոչ ոք հոգացեալ պատմեաց մեզ, այլ ամենագէտն գըրեալ պահէ յօր մեծ այցելութեանն, և պարգեւէ առատապէս զվարձ վաստակոց նորա ընդ հաճոյս անուան իւրոյ. ասէր և ոչ լռէր զխնամս մեծամեծս և զօգնութիւն հզօրին զոր արարեալ էր նմա. և թէ որպէս ի Վարդգէս յայտնեալ Քրիստոսի զխորհուրդ Թագաւորին ծանոյց նմա, և նոյն ուղեկցեալ առաջնորդեաց նմա յուսով։ Մեծարոյ, ասէր, և հաւատարիմ առաջի Գենշապհոյ համբարակապետի երե-

եցոյց զիս, մինչ զի աղաչելով զիս և բռնի տանելով անօրինին ի ձեռն հզօրին Աստուծոյ ի տեղի տենչալի նահատակութեան Սրբոցն, որում կամաց հնարաւոր է ամենայն. որ եղէ արժանի տեսանել զամենայն, զոր ոչ կարծէի լսել և տեսանել մի ըստ միոջէ, որում ոչ արժանի լսելոյ համարէի զանձն իմ. զհարցումն բռնաւորացն և զպատասխանիսն միոյ միոյ Սրբոցն, զաղօթս և ըզկատարումն զիւրաքանչիւր անձին, տեսի կարգաւ և լուայ. ահա արդ և մեծի մասին ձերոյ անձանձրոյթ խնդրելով զիս անարժանս արժանի արար շնորհ Սուրբ Երրորդութեանն, մինչեւ երկնաւոր գանձու նշխարացն սրբոցն գտալ լինել ձեզ բերող. փախոյց ամօթով զպահապանսն տագնապեալս, զարհուրեցոյց զանհաւատ զվերակացուացն զսիրտս, ցրուեաց զանմիտ Թագաւորին զխորհուրդս, և բարձրացոյց զանուն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ։

Զայսպիսի բանս պարծանաց և խնդութեան պատմէր անձանձրոյթ երանելի վաճառականն՝ ամենայն հաւատացելոցն ի Քրիստոս. որ էր երբեմն վաճառական երկրաւոր գանձուն, և եղեւ յանկարծ վաճառական բարի գործովք պատուական մեծի երկնաւոր գանձուն մարտիրոսական նշխարաց:

Նոյն խօսք և մխիթարութիւն էր յաւէտ կապելոցն նախարարացն Հայոց յելս և ի մուտս իւրեանց, ի նստել ի տան և յառնել, ի տօնս և յամսագլուխս. զոր և պատմեալ անյագ ցնծութեամբ՝ զուարճացուցանէին նորոգելով զամենայն մեղկեալ միտս լսողացն, և հաստատէին ի հաւատս արդարութեան: Եւ մանաւանդ տէրն Արշարունեաց կամսարականն Արշաւիր. որ յամենայն ժամու ի տուէ և ի գիշերի վարդապետութիւն Սրբոցն, և մանաւանդ խօսք և հոգեւոր խրատ Սրբոյն Ղեւոնդի, և պատասխանիք իւրաքանչիւր ուրուք ըստ հարցմանն ըսպանողացն, և աղօթք միոյ միոյ ի ժամ կատարմանն եղեալք, այն էր նորա հոգւոյն կերակուր և որոճումն քաղցր, զոր ասէր և ընդ գուբողայս սաղմոսին միաբանեալ՝ պատմէր անձանձրոյթ հանապազ: Զոր և մեր յոլովագոյն լուեալ ի հրաշալի Կամսարականէն՝ գրեցաք յօժարապէս հոգալով. զոր թէպէտ ըստ տկարամտութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել զբովանդակն ի կարգի, այլ և ոչ բնաւ գտեալ անյուշք՝ յապաղեալ մոռացաք ինչ ծուլանալով:

ԾԸ. Եւ մտեալ թագաւորին Յազկերտի ըստ կարգելոյ ժամանակին յաստանն ի Վրկան, և միահամուռ ամենայն աւագանւոյն և զօրացն՝ որ ընդ նմա էին, համարձակութիւն այնուհետեւ տային բնակիչք շահաստանին, որք ի Նիւշապուհն էին ըստ հրամանին Դենշապհոյ, նախարարացն Հայոց՝ որք ի դղեկին ի կապանսն էին, արձակել զմանկունս խուրեանց և կամ զայլ ոք որ ընդ նոսա լինէին՝ ի պէտս արքանեկութեան ուր և կամիցին։ Զոր իբրև լուան երանելի երիցունքն Խորէն և Աբրահամ, վաղվաղակի փութով ի Վրկան հասանէին, և անկեալք հրապարակաւ առաջի ամբարապետին Դենշապհոյ, բողոք բարձեալ ասէին. եթէ Դու յորժամ զհօգևոր տեարսն մեր և զվարդապետս ի Նիւշապհոյ առեր գնացեր, ընդ որս և մեք կամեցաք ուղեկից լինել, և դու բռնաբար հրամայեցեր խիստ պահպանութեամբ արգելուլ զմեզ անդէն մինչև ցայժմ. արդ եթէ տարեալ ուրեք յերկիր օտար և անդարձ անցուցեք զնոսա, առնելով բարերարութիւն պատմեցէք մեզ՝ երթալ և մեզ և լինել անդարձ ընդ նոսա. այլ կեալ անդէն և վախճանիլ պատրաստ եմք. տեսանելոյ եւեթ ըզնոսա ցանկամք արժանի լինել. և եթէ սպանէք զնոսա, կամեցարուք և ի վերայ մեր տալ զնոյն հրաման,

զոր պատուական և մեծարգոյ համարէաք զմահն այնպիսի՝ քան զամենայն զփառս և զմեծութիւնս աշխարհիս։

Եւ Վեհդենշապուհ լուեալ զայնպիսի բանս ի նոցանէն, և ընդ համարձակութիւն աներկիւղածութեան արանցն զարմացեալ ինքն և ամենայն բազմութիւն հրապարակին, պատասխանի տուեալ ասաց ցերանելիսն, թէ Ճանապարհ վարդապետացն ձերոց ոչ ոք ցուցանէ. բայց վասն ձեր հարցանեմք ցարքայից արքայ, նա իշխէ զոր ինչ հրաման տայ ի վերայ ձեր։ Եւ մտեալ ինքըն Դենշապուհ պատմէր թագաւորին Յազկերտի զամենայն զբանս և զխնդիրս երանելի երիցանցն։ Եւ թագաւորն հրաման տուեալ ասէ. Թէ ի նոցա վերայ վնաս ինչ ոք յայտ չառնէ, և դատախազ ոք չէ զհետ, երկիր պագցեն արքական և պատուեալ զկրակն յանձն առցեն, և ընկալեալ զպարգևս մեծամեծս ի մէնջ՝ արձակեսցեն յաշխարհն իւրեանց. ապա թէ չհաւանեսցեն յանձն առնուլ զմեր հրաման, պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն, և ի հարկի կայցեն մինչեւ ցվախճան իւրեանց։ Եւ եկեալ Գինչապուհ ասաց ցերանելի երէցն Խորէն, և ցերանելի երէցն Աբրահամ՝ զհրաման թագաւորին։ Եւ լուեալ զայս պատուական քահանայիցն, ետուն պատասխանի որպէս ընդ մի բերան և ասեն. Մեք ոչ միայն խեղանաց եւեթ պատրաստ եմք վասն անուանն Քրիստոսի, այլ և քերանաց և մահու։ Այլ վասն արեգական երկրպագութեանդ՝ որ ասէք, մեք ընդ ձեր մոլորութեանդ ապշութիւն տրամեալք խռովիմք, և խնդրեմք յԱստուծոյ զգալ ձեզ ի թմրութենէ անդիտութեանդ այդորիկ, թող թէ մեզ՝ նմանել ձեզ. և մի լիցի թողեալ զարարիչն՝ արարածոց երկիր պագանել։

Եւ լուեալ զայսպիսի պատասխանիս աներկիւղ՝ իշխանացն ի բերանոյ երանելի երիցանցն, կատարեցին ըզհրամայեալսն ի թագաւորէն։ Եւ կապեալ զերկոցունց զականջսն, ետուն տանել յԱսորեստան՝ ի գաւառն որ անուանեալ կոչի Շաբուլ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի։ Եւ լուեալ զայս հաւատացելոցն աշխարհին, որք յԱսորեստանին էին, զերթս երանելեացն անդր, ընդ առաջ ելին նոցա խնդութեամբ և պատուեցին զնոսա որպէս զնշխարս նահատակելոցն սրբոց, որք և արժանի իսկ էին այնպիսի մեծարանաց. նա և զկարասի իւրաքանչիւր ուրուք զինչ և ունէր՝ բերեալ դնէին առ ոտս երանելեացն, առնուլ և մատակարարել ի պէտս հոգեւոր մասին ի փրկութիւն անձանց իւրեանց և ընտանեաց։ Եւ երանելի երիցանցն ընկալեալ յընծայիցն հաւատացելոցն՝ ըստ արժանի մասն ինչ, նոցին իսկ տային տանել յԱպար աշխարհ՝ կապելոց նախարարացն Հայոց. որք խնդութեամբ և բազում յօժարութեամբ իւրաքանչիւր ոք աղաչէր զերանելին՝ տանել արժանի այնպիսի հոգևոր ճանապարհի: Էր՝ զի երանելի երէցն Աբրահամ առեալ զաւուրս հարաւային կողմանցն Ասորեստանեացն՝ տարեալ մատակարարէր կապելոց նահատակացն Հայոց, ըստ իւրաքանչիւր պիտոյից. և արարեալ զայս այսպէս բազում անգամ կարգաւ կարգաւ՝ քրիստոնէից աշխարհին. և ապա իսկ ինքն երանելի երէցն Աբրահամ բազում ամս՝ մինչև յարձակումն կապելոց նախարարացն Հայոց աշխարհին, անվեհեր լինէր նոցա թոշակատար ի հաւատացելոց աշխարհին տուողաց: Եւ կեցեալ ամս երանելւոյ երիցոյն խորէնայ անդէն յԱսորեստանի վախճանիւր:

Իսկ երանելի երէցն Աբրահամ երաշխաւորութեամբ հաւատացելոց

աշխարհին, որք զտունս իւրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս՝ ցվախճան նորա, և կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա, արձակեալ զերանելի այրն՝ եկն ի Հայս. որոյ տեսն իսկ իւր առանց ամենայն երկբայութեան զկերպարանս հրեշտակի ցուցեալ ծանուցանէր ամենայն տեսողաց զայրն. և ձեռնադրեալ յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Բզնունեաց, բազում ուղղութեանց աշխարհին մարդկան լինէր ուսուցիչ. և վախճանէր ի նմին կարգի ի բարւոք ծերութեան: Որում արժանի եղիցուք և մեք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, և նմա փառք յաւիտեանս. ամէն:

ԴՐՈՒԱԳ Գ.

ԾԹ. Արդ, դարձեալք անդրէն յառաջին դրուագն՝ գրեսցուք ի կարգի։

Իսկ յամին եօթնեւտասներորդի Յազկերտի արքայի՝ իշխանն Վրաց Աշուշայ աղաչէր զաւագս դրանն արքունի, բազում և անհամար կարասի ծախեալ իւրաքանչիւր ումեք, և մանաւանդ անօրէն հազարապետին Միհրներսեհի. զոր մեծաւ ջանիւ և սաստիկ աշխատութեամբ հաւանեցուցեալ՝ տայր ասել ցթագաւորն Յազկերտ, զի շնորհեսցէն նմա զորդիս երանելոյ նահատակին Հմայեկայ՝ ի տոհմէն Մամիկոնէից, զորս առեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեաց Վասակայ ի դայեկաց՝ որպէս զորդիս մահապարտաց, և տար-

եալ ի դուռն զի մեռցին. որք էին յոյժ տղայք։ Եւ մարդասիրին Աստուծոյ բարեխօսութեամբ սրբոյ արեան հարց նոցա հաւանեցուցեալ զմիտս թագաւորին՝ պարգեւեաց Աշուշայի որպէս կարի առն սիրելոյ և վաստակաւորի՝ զանհաւատալի ամենեցուն զմեծ նորա խնդիրն։

Եւ Աշուշայի տեսեալ զայն և ընկալեալ ի թագաւորէն զմեծն պարգեւ, յարուցեալ ի խորանին առաջի ամենեցուն անկեալ յերկիր հոլովէր այսր և անդր, և ապա հարկանէր զգլուխ ի գետինն. այսպէս կատարէր զերկրպագութիւնն։ Եւ տեսեալ զայս թագաւորին և ամենեցուն որ ի խորանին էին, և զարմացեալք մեծապէս՝ թէ զինչ արար այրն, հարցանէր ցնա թագաւորն, թէ՝ Վրաց բդեշխ, զի՞նչ է այդ նոր իմն գործ՝ զոր ցուցեր դու մեզ այսօր։ Եւ պատասխանի տուեալ Աշուշայի ասաց, թէ՝ Բարերար արքայ, դուք ինձ նոր պարգեւ շնորհեցէք՝ զոր այլ իմ ընկերաց ծառայ ի ձէնջ չէր գտեալ, և ինձ արժան է նոր երկրպագութեամբ երկիր պագանել ձեզ, զոր յայլ ծառայէ զայնպիսի երկրպագութիւն երբէք չէր տեսեալ։ Եւ լուեալ զայսպիսի բանս թագաւորին յԱշուշայէ և ամենայն բազմութեան աւագանւոյն, յոյժ գովեցին զայրն և մեծապէս զարմացան։

Կ. Եւ կեցեալ Յազկերտի թագաւորին Պարսից զչափ ժամանակի կենաց իւրոց վախճանէր ի Փառսս[1]։ Եւ թագաւորեցին նորա երկու որդիքն հակառակելով ընդ միմեանս․ և դիմեալք ի վերայ միմեանց պատերազմաւ, յաղթահարեալ սպան կրսերն զաւագն, և ինքն թագաւորեաց․ որում անունն էր Պերոզ։ Եւ ի նմին ամի թագաւորութեանն իւրոյ առաքեաց զՅըզատվշնասպ զիւր դայեակորդին, զոր կարի յոյժ սի-

---

[1] Իմա ի Պարսս։ Ամենայն ձձ. և տպպ. Ի փառսս [illegible]։ Ուղղ. ըստ իմաստին։

րէր առաւելապէս, և հրաման ետ արձակել զնախարարսն Հայոց ի կապանաց, և կարգել նոցա ռոճիկ ի Հրեւ. Կայցեն, ասէ, անդէն այրուձիով, և կատարեսցեն զգործ որ ինչ և դիցէ նոցա Աշտատ հայրն Յըզատվըշնասպայ։ Եւ եկեալ Յըզատվըշնասպն ետ նոցա աւետիս, ասելով․ եթէ՝ Արքայից արքայ զմահապարտութիւնն եթող ձեզ, և ի կապանացդ հրամայեաց արձակել․ և կարգեաց ձեզ ռոճիկ ի Հրեւ, և կանանց ձերոց՝ յաշխարհի իւրեանց։ Եւ ձեզ հրաման ետ կալ ի գործ արքունի, և լսել ամենայն բանի և կատարել՝ զոր հայր իմ Աշտատ հրամայէ ձեզ։ Եւ լուեալ նախարարացն Հայոց զայս ամենայն բանս Յըզատվշնասպայ, ետուն փառս Աստուծոյ հոգալին իւրեանց և բարերարի․ յորմէ և կատարելապէս և այլ բարւոյ բարեխօսութեամբ նշխարաց Սրբոցն սպանելին երկայնմտութեամբ։

Եւ ի տեսանել զնախարարսն Հայոց Յըզատվշնասպայ, և առ սակաւ սակաւ ընդելնուլ ընդ նոսա, շնորհեցաւ որպէս յաստուածային ակնարկութենէն՝ խնամարկել. սիրեաց զԿամսարականն Արշաւիր ըստ սիրոյն Յովնաթանայ զԴաւիթ. յաղագս և այլոց նախարարացն Հայոց հոգայր բարեխօսութեամբ հանապազ: Տարեալ այնուհետեւ զնախարարսն Հայոց ի Հրեւ, և կարգեալ իւրաքանչիւր ումեք ռոճիկ, գումարէին զնոսա ի ձեռն Աշտատայ՝ ունել զնոսա ի գործ պատերազմի, զորս մեծարեալ յարգեաց առաջի զօրագլխի գնդին. յաջողելով նոցա քաջութիւն երեւելապէս, այլ և առաջի ամենայն քաղաքացեացն Հրեւայ և գաւառին. շնորհելով աջոյ Բարձրելոյն բազում և ազգի ազգի բժշկութիւնս ախտաժետաց ի Նըշխարաց Սրբոցն, զոր ունէին քահանայքն՝ որ առ նոսա էին՝ գաղտ առ ինքեանս. վասն որոյ հռչակեալ անուանեցան ի զօրագլխէն և յամե-

նայն գաւառին՝ քաջք և զարմանալիք: Եւ իշխանն Հրեւայ Հրեւշնումշապուհ սիրէր զկապեալսն Հայոց յոյժ, և զքաջութիւն նոցա և զլաւ բարս և զմարթչութիւնն՝ բազում անգամ գրով ծանուցանէր մեծամեծացն ի դուռն, և իւրոց սիրելեացն՝ որք ի հրապարակին էին:

ԿԱ. Եւ վասն զի բազումք իշխէին խուզել զերանելի կապելոցն զտկարանալ ինչ մարմնով, զնոյն և հարցանել յանդգնէին. որոց մոռացեալ յիւրեանց ականն զգերանն, ըստ բանի Փրկչին, անձնահաճ մնապարծութեամբ մատուցեալ յայլոց ական զշիւղ կրկտեն: Եւ իմ լուեալ զայս, դողացեալ զարհուրիմ. քանզի հայեցեալ ի կամաւոր նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան տանջանաց մասունս, և տեսեալ զմեծ նոցա զտեւողութիւն համբերութեանն, արհամարհելով զմեծութիւն, առ ոչինչ համարելով զիշխանութիւն, հեռանալով յընչից, տալով աներկիւղ զանձինս ի մահ, և բազմաժամանակեայ համբերել կապանաց, տարեալ բանդից և թշնամանաց, յանձն առնուլ զանարգութիւն քան զփառս, տանջիլ ի քաղցոյ, հաշիլ ի ծարաւոյ, ատել զընչից յղփութիւնս, ախորժել զաղքատութեան վիճակն, անարգել զփափկութիւն, սիրեցեալ զխստամբերութիւն, և զայլ բազում մասունս կարեաց զանհամարս և սաստիկս, զոր յիւրեանց մարմինս մարդիկն այն կրեցին ախորժելով. չիշխեմ բնաւ և ոչ յիշել զտկարացեալ մասն ինչ յայնպիսեաց անձինս. որպէս զերանելի մարգարէից և զսուրբ առաքելոցն բազում ինչ տեսանելով ուղղութիւնս, չեմք արժանի և ոչ նկատել զմի ինչ մասն մարդկային ի նոսա, որք լցեալքս եմք բիւր չարեօք. զոր անգամ և ոչ յիշեմք երբէք զմերն, և կամ զմտաւ ածեալ զղջանամք: Մի միայն է արդար և սուրբ, որ ասացն, թէ Ես միայն յաղթեցի աշխարհի:

Իսկ ոմանք ի կապելոց նախարարացն յայնցանէ, որում ականատես իսկ եղաք, արդարեւ յերկրի երկնաւորք էին և ի մարմնի հրեշտակք երեւէին. որոց կարգեալ անձամբ անձանց և դպրոց, և ուսեալք զկտակարանս եկեղեցւոյ, հոգեւոր կրօնիւք զանապատական առաքինեաց զվարս տպաւորեալ յանձինս իւրեանց, անվեհեր կատարէին կարգեալ կանոնս գուբղայից և կարգացմունս ընթերցուածոց. զցայգ և զցերեկ յոլովէին ի նոյն անդադար ի գումարտակի՝ որպէս ի տան. երբեմն յայտնի և երբեմն ըստ ժամանակին ի ծածուկ զնոյն աճեցուցանել ոչ յապաղէին, վառեալք զինու ընդ միտս իւրեանց պաշտէին. յարձակեալք ի վերայ թշնամեաց՝ յաղօթս կային ի սիրտս իւրեանց. և յամենայն կռուոյ օգնականութեամբ հզօրին ողջանդամք յաղթօղք և անուանիք դառնային: Եւ որք յաղագս ծերութեան և կամ ծանրամտութեան ըստ մարմնոյ բնութեան՝ ուսանել ոչ զօրէին, համայն յերկար աղօթիւք և անվաստակ յոտն կալով տառապել եւս կամաւոր յօժարութեամբ անքուն և անհանգիստք լինէին. և էր տեսանել զամենեսեան որդիս լուսոյ և մանկունս արքայութեան:

Նոյնպէս և կանայք՝ որոց նահատակեալ մարտիրոսացան արքն, և յայլոցն կանանց՝ որոց էին ի կապանս արքն ի Հրեւ, բազում պարկեշտասէր առաքինութեամբ մի ըղ-միով ելեւելս առնէին, զօր ամենայն մեռանելով ամենայն ախտից. ըստ բանի մարգարէին կենդանի մարտիրոսք էին, առ որս յաղթի բան ասել որոշողութեամբ զսաստիկ վարուցն նոցա ճգնութիւնս, որք անցուցին զբազում արամբք, և զբնական տկարութիւն մարմնոյ կանանց զօրութիւն բացուցեալ առաւել քան զարանց քաջայաղթօղք եղեն: Կանայք փափուկք դստերք նախարարացն և կանայք աւագաց՝ փոխանակ նաշհոյ կորեակ ուտէին, և փոխանակ պարզ գինւոյ՝ ջուր չափով ըմպէին, փոխանակ կերպասեայ ոսկէհուռ զգեստուցն՝ խոշոր բրդեայս զգենուին. և փոխանակ բազմագինի անկողնոցն՝ փրխայիւք ի վերայ երկրի գետնատարածք լինէին. և որք յառաջագոյն յամբանային ի քուն, նմանեալք վերնոցն՝ անքունք եղեն: Զօծան իւղով, չյարմարեցին սանտրով զհեր գլխոյ իւրեանց. և որում անհնար է յաղթել կանանց՝ շատախօսութեան և ստէպ ընդ քօղով այր անդր հայեցողութեան զաչս ածելոյ ի ստէպ, և ցածուցին զլեզուս իւրեանց յաւելորդ խօսից:

Յորոց խնդրուածս և ի վաստակս ի միասին արանց և կանանց ամենողորմն Աստուած հայեցեալ՝ յիշեաց զնահատակութիւն սրբոյն Վարդանայ և զամենայն միաբանելոցն ընդ նմա, և զբարեխօսութիւն վկայելոց քահանայիցն Աստուծոյ, շնորհեալ պարգեւեաց դառնալ կապելոցն յաշխարհ Հայոց։ Որք եկեալ ի տունս իւրաքանչիւր յամի վեցերորդի թագաւորութեանն Պերոզի. և կեցեալք իւրաքանչիւր ոք ըստ սահմանելոյ ի Տեառնէ, վախճանեալք թաղեցան ի գերս հարց իւրեանց խաղաղութեամբ ըստ Աստուծոյ հաճոյիցն, օրհնեալք ամենեքեան ի բերանոյ սուրբ կաթուղիկոսին Գիւտայ։

ԿԲ. Քանզի յետ կատարման սուրբ կաթուղիկոսին Յովսէփայ՝ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Հայոց տէր Մելիտէ, որ էր յաղգէն Մանազկերտեցեացն. և զհետ նորա տէր Մովսէս, որ էր և նա ի նոյն աղգէ։ Եւ ապա ըստ Աստուծոյ տեսչութեանն յաջորդեաց զկաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց՝ տէր Գիւտ, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ. այր լի գիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն, յորդառատ և առատաբուղխ վարդապետութեամբ. զոր ոչ երբէք արգելոյր անգիտութեանն տկարութիւն. այլ զծածուկս ասացեալ Հոգւոյն՝ նոյն Սուրբ Հոգւոյն շնորհ յայտ արարեալ նմա լուսաւորապէս ուսուցանէր բովանդակ ժողովրդոց. որոյ բանք իւր նման յորդառատ անձրեւի զամենայն լսողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս։

Եւ զմնացեալ դեռ եւս ի տղայութեան հասակի զորդիս նահատակելոցն ընդ սրբոյն Վարդանայ, որք ի նոյն տոհմէ Մամիկոնէիցն էին, և կամ որք ի տոհմէ Կամսարականացն և կամ յայլ ազգաց, կանայք նահատակելոցն արանց և կապելոց ի դրանն՝ թէպէտ և ի նեղութեան էին; սակայն ուսուցեալ և բազում հոգողութեամբ ուսուցանել տուեալ և խրատեալ, ոչ իբրեւ զանփոյթ և զանպիտան կանայս, այլ իբրեւ ըզքաջայրս՝ զառաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին։ Եւ մանաւանդ կին նահատակին Հմայեկայ Մամիկոնէի եղբօր սրբոյն Վարդանայ, որ եղեւ կին անուանի եւ առաւելեալ ամենայն լաւ եւ մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհիս, որ սնոյց եւ խրատեաց զորդիսն իւր յաշխարհին Վրաց՝ ի տան Աշուշայի Վրաց բդեշխի, զորս բդեշխին Վրաց Աշուշայ խնդրեաց պարգեւս ի յարքայէն Պարսից Յազկերտէ, ըստ առաջագրելոյն կարգի. եւ ածեալ ետ ցմայր իւրեանց, որում անուն էր Զուիկ. վասն զի զքոյրն Զուիկայ ունէր ի կնութեան բդեշխին Վրաց Աշուշայ, որում անուն էր Անուշվռամ։ Եւ սնուցեալ անդ մանկունքն եւ ուսեալ՝ յառաջադէմք էին յամենայնի եւ հռչակաւորք. որք մինչ դեռ եւս ի տիս մանկութեան էին՝ ամենայն տեսանող մտաց երեւէին աջողակք եւ զարմանալիք. որում անունն էր առաջնոյն Վահան, եւ երկրորդին Վասակ, եւ երրորդին Արտաշէս։ Բայց էր նոցա միւս եւս

եղբայր կրսեր, անուն Վարդ, որ էր մնացեալ տղայ ի գայեակս իւր ի Տայս։

ԿԳ. Զայսու տեսանելով որք ի ժամանակին իւրաքանչիւր՝ ի տունս որպէս գաղտագողի հարանոք երբեմն զանպիտանս գտանէին, ի Պարսկաց զտանուտէրութիւնն գնեալ ուրացութեամբ ըստ անարժանութեանն, եւ ոչ տիրացեալք աստուածպաշտութեամբ երբեմն զարժանաւորս, արք անմիտք եւ վնասակարք, անպիտանք եւ ոչ պիտանիք, վատք եւ ոչ քաջք, որոց ոմանք ի լեռնախոյզ աւազակաց ի մէջ անցեալ ուրացութեամբ վերաէին, եւ ոմանք կատակութեամբ աստուածս գնէին, եւ զաստուածս եւ զանմիտ վաճառականսն ի միասին թշնամանէին. անմարդք ի սոյգ մարդկանէ եւ անարժանք եւ անծանօթք յազգէ տոհմըկաց։ Եւ էր այնուհետեւ տեսանել յաշխարհիս Հայոց զլաւութիւն հեռացեալ, զխմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թագուցեալ. և երբեմն քաջանուն զօրքն Հայոց ի մէջ այլ զօրացն ամենայնի երեւէին, և զօրագլուխք անուանիք և յաղթողք, ապա ծաղր էին ամենեցուն և կատականք. մինչեւ ինքն իսկ Թագաւորն Պերոզ յայտնապէս նախատելով երբեմն առաջի ամենայն ատենին ասէր. Թէ Այր անպիտան և գունդ յետին, որ գամ մի յիմ իշխանութիւնն է՝ Ասորոց է, բայց քան զԱսորի՝ Հայն է այր յետին և անպիտան: Եւ էր լուրն այն արժանի լալոյ և ողբալոյ:

Եւ այնպիսի անպիտան իշխանք ժամանակին իբրեւ տեսանէին օր ըստ օրէ զաճումն յառաջադիմութեան յորդիս ազգի Նահատակելոց Մամիկոնէից, զոր ոչ ի տուչութենէ մարդոյ վաստակեալ ունէին յանձինս, այլ օգնութեամբ վերին խնամակալութեան, ի բարեխօսութենէ սուրբ արեան Նախնեացն իւրեանց՝ զոր ի

վերայ սուրբ եկեղեցւոյս Հայոց հեղին յօժարութեամբ, կային աներկիւղապէս ի մէջ անուանեալ իշխանացն Հայոց, որպէս ի մէջ Թշնամեաց: Թէպէտ և արհամարհեալք էին առ Նախանձու, սակայն լաւագոյնք էին և երեւէին յամենայնի, և ականաւորք ի խորհրդի, մտաւորք և իմաստնագիւտք. ի նետաձգութեանն գեղեցկաձիգք և դիպեցուցողք. յորս՝ թեթեւաշարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և շնորհալիցք. զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զգուրան, խնդրելով հանապազ զմիս այլ և այլ որսոց, և կամ այլ պատուական և մեծագին գիւտից խնդրովք ըստ իւրաքանչիւր աշխարհաց: Նոքօք շքեղանային ընթրիք ամենայն տանուտերանց Հայոց. Նոքօք զարդարէին յամենայն տունս օտարք և ընտանիք: Նմանեցուցեալ ինքեանց ի յառաջանալ փութային և զորդիս երանելւոյ կամսարականին Արշաւրայ տեառն Արշարունեաց, որք և ազգախառն իւրեանց էին ծնունդք դստեր մարտիրոսին Վարդանայ, խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի ջանային:

Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս առնել առատ և հոգալ՝ առաւել եւս կամաւոր յօժարութեամբ յորդորագոյն էր աւագ որդին սըրբոյն Հմայեկայ, որում անուն էր Վահան: Քանզի էր այր մտացի, առողջախորհուրդ և բարեսէր, յոր գործ և ձեռն արկանէր գործել՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա և զօրանայր. Նա և գործակալք Պարսիկք որ գային ի դրանէ, թէպէտ ոչ կամաւ, այլ ըստ Աստուծոյ սադրելոյ սիրէին զնա և պատուէին: Որք և առաջի թագաւորին Պարսից գովէին զլաւութիւն առնն, և անմոռաց յիշէին. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ գլխովին ծանեաւ զնա,

և առ լաւս ունէր, և յանդիման ամենեցուն գովէր, և արժանի պատուոյ հաշուէր: Բայց արժանի ըստ նորա իմաստից և քաջութեանն թէպէտ և ածէր զմտաւ պատուել զնա, այլ յիշելով զհարցն և զնախնեացն նորա զիրս և զգործս, և որպէս հանապազ ընդդիմութեամբ և պատերազմաւ աշխատ կալեալ էր զնոսա, յապաղեալ կասէր. և լռեալ՝ թագուցանէր զարժան պատիւ տալ նոցա. մանաւանդ իբրեւ հապաստէպ լսէր զնախանձորդացն զբանսարկութիւն, որք առ վտանգի ժամանակի տանուտեարք Հայոց անուանեալ էին, զորս կարի առաւելապէս երկեցուցանէր յաջողումն յառաջադիմութեան Մամիկոնէին Վահանայ: Կասկածէր երկիւղիւ առ ի յառաջիկայսն զանարժան գոռոզացելոցն բեկանել զսիրտս:

Իսկ լաւ ոք այր յանկարծ և կամ արժանաւոր թէպէտ և էր ի ժամանակին, որպէս լաւ այր Բաբիկն սիւնի և կամ սքանչելին Առնակն ամատունի և կամ այլ ոք նման նոցին, ի հոգէսպանութենէ մոլեկան Թագաւորին և ի կատաղութենէ ամպարշտեալ ժամանակի իշխանացն, որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց ի ծերպս վիմաց և կամ ի մացառուտ տեղիս մայրեաց զօղեալք Թաքչէին. կարեւոր համարէին համբերութեամբ ի քրիստոնէական կարգի վախճանել, քան Թէ փառախնդիր յածմամբ պատահել ուրացութեան և կորնչել: Լաւ համարէին, ըստ բանի գրոյն՝ զնախատինս վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի Թաթաւել ընդ սնոտի փառս աշխարհիս, և յաւիտենից տանջանացն լինել արժանաւոր. որք իբրեւ զԲաբելոնի հնոցին բոց տեսանէին բարձրացեալ զամբարշտութեանն կիզումն, և ոչ ոք էր որ շիջուցանէր: Ժողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտեայ, որ ոչ երբէք լռէր յարտասուելոյ զմոխրասիրացն զմոլորութիւնս, որ խնդրէր լռելեայն պաճարանս հայթայթանաց հանդերձ նոքօք. երբեմն փախչել յօտարութիւն, և երբեմն ի խնդիր լինել օգնականութեան և ապստամբել: Առաքէին գաղտ և պատգամաւորս միանգամ և երկիցս առ Թագաւորն Յունաց Լեւոն. որոյ Թէպէտ և յանձն առեալ կամէր օգնել, յերկարէր ժամն և խափանէին խորհեալքն:

ԿԴ. Սկսանէր այնուհետեւ սուրբ կաթուղիկոսն Հայոց Գիւտ առ ի չժուժալ սրտին՝ յայտնապէս ախութեամբ գրգռել ընդ անօրէն ուրացելոցն, և սիրել և պատուել զկողմն տառապեալ հաւատացելոցն: Եւ մանաւանդ առ վատԹարս ունէր և արհամարհէր զմախաղն Գադիշոյ, որ զօրագլուխն և քաջալերիչն էր ամենայն ամբարշտելոցն գաւառ. որոյ չկարացեալ տանել արհամարհանաց սրբոյ կաթուղիկոսին Հայոց

Գիւտայ, զօդեալ բիւր բանս թըշնամութեան՝ ամբաստան լինէր ընդնմանէ առ թագաւորն Պարսից Պերոզ, ասելով. եթէ՝ Զմարդիկ որ զկամաց քոց զհրաման կամին կատարել և զքո օրէնս խորհել յանձն առնուլ և սիրել, կոչէ առ ինքն, և է՝ որ ինչ տալով, և է զորս քաղցր բանիւք պատրէ, և յիւրացն ի բաց դարձուցանէ: Վասն զի բազումք եկեալ են առ իս և յանձն առեալ ունել զօրէնս քո, և նորա կոչեալ առ ինքն պատրանօք ի բաց տարեալ է թողուլ զիւրն և արհամարհել. այլ և զմեզ՝ որ զքեզ սիրեմք և արեգական և կրակի երկիր պագանեմք և կամաց քոց ծառայեմք, ատեայ և թշնամանէ: Եւ ինքն ընդ կայսեր խօսի և պատուական ընծայիւք հըպատակէ նմա և մեծամեծաց որ ի դրան նորա են: Եւ այլ բազում բանիւք ըստ օրինի թշնամւոյ խօսէր ըստ կամի:

Եւ լուեալ զայսպիսի բանս ամ-

բաստանութեան թագաւորին Պարսից Պերոզի ի մախաղէն Գադիշոյէ, զայրացեալ սրտմտութեամբ հրաման տայր սրբոյ կաթուղիկոսին Հայոց ի դուռն հասանել, և անդ պատասխանի առնել բանից դատախազի: Իսկ երանելի կաթուղիկոսն Հայոց Գիւտ կամաւ և յօժարութեամբ ի դուռն երթայր, և յանդիման լինէր ատագաց դրանն: Որոց առաջի շքեղացուցեալ զսուրբ այրն զօրութեան վերնոյն, տեսանէր ամենայն մարդ զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի. յորմէ և հեթանոսք մեծաւ զգուշութեամբ խորշեալ պատկառէին ի նմանէ: Այլ քրիստոնեայքն և եպիսկոպոսն Տիզբոնի և Խուժաստանի և Հրեւեայ, և ամենայն կողմանցն այնոցիկ երիցունք և սարկաւագունք՝ երկուցեալ դողային ի սրբոյն որպէս ի մարգարէէ տեսան Աստուծոյ:

Եւ լուեալ թագաւորին Պերոզի զերթալ սրբոյն Գիւտեայ, յղէր առ նա մի ըստ միոջէ զամենայն բանս ամբաստանութեան Մախազու, զՅըզավշնասպն զորդի Աշտատայ ի Միհրան տանէ: Եւ սրբոյ կաթուղիկոսին Գիւտայ պատասխանի առարեալ բանից Թագաւորին՝ ասէր. Ոչ են ամենայն ասացեալքդ Մախազու զինէն առ ձեզ՝ սուտ. այլ են որ արդար են, և են որ ոչ են ստոյգ արդար: Քանզի սիրել զքրիստոնէութիւն և որ ոք քրիստոնեայ է, զայդ ոչ այսօր ընտրեալ պաշտեմ յանձին իմում, այլ ի մանկութենէ իմմէ. և զամենայն մարդ՝ որ վրիպեալ է ի ճշմարտութենէն՝ ատեմ. և կամիմ՝ թէ ամենայն որ ի ճշմարտութենէն մոլորիլ կամէր և գնալ զճանապարհ որ ոչ է ուղիղ, և գայր հնար բռնութեամբ և կամ աղաչելով, այլ թէ և կարասւով կարէի հաւանեցուցանել, ջանայի անվեհեր մտօք և ոչ տայի կորնչել այնպիսոյն զանդիւտ կորուստն: Այլ որ ասէնդ, թէ երթեւեկք նորա (են) ի

Հռոմս, ոչ ըստ դորա կարծեաց և խօսիցն այդպէս են իրքն, քանզի սուտ է. այլ վասն զի զդպրութիւն գիտութեանս մերոյ և զիմաստ բանաւոր ուսմանց՝ յաշխարհին Հոռոմոց ուսեալ եմ, և են իմ անդ ծանօթք բազում և ուսումնակիցք, այլ և զկերպարան հանդերձիցս զոր ունիմքս մեք՝ անտի գնեմք. վասն զի և ոչ յայլ աշխարհի գտանի սա ուրեք՝ բայց անդ, հարկաւորիմք անտի գնել զայս ըստ ժամանակին պիտոյից: Այլ զհնազանդութիւն ծառայութեան՝ օրէնք իսկ մեր պատուիրեն հատուցանել տերանց զդիպողսն և զարժանաւորս:

Եւ տարեալ զայս ամենայն բանս պատգամաւորին առ Թագաւորն, իսկոյն ծանեաւ Թագաւորն՝ թէ ըստոյգ և մտացէբար են խօսք սրբոյն, և սուտ և առ քինաւորութեանն խօսի Մաղխազ զնմանէն, զոր ինչ և ասէ: Վասն զի և Աստուած ըստ հաճոյից սրբոյ առնն տայր լսել Թագաւորին զխօսս նորա․ բայց զի մի թեթեւացուցեալ զկարգ օրինացն իւրոց երեւեցուսցէ քրիստոնէից, լուեալ թողոյր զխօսս Մաղխազին, և չհարցանէր ինչ ծանունս: Բայց յղէր առ երանելի կաթուղիկոսն Գիւտ, թէ Մինչեւ ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ հրամանի կալեալ է, և ծառայ մարդիկ են՝ որոց քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ է․ և ոչ ինչ յինէն ունիս վստահութիւն: Բայց այժմ եթէ զիմ կամս առնես, և զիմ օրէնս ունիս, և արեգական երկիր պագանես, ըզգործդ զայդ քեզ և քում ազգի և որում դու կամիս՝ պատըշրաւ[1] տամ մինչեւ յաւիտեանս, և զքեզ պատուով այնպէս արձակեմ ի Հայս, զի Հայոյ ուրուք ի մեր դրացս պատիւ և շքեղութիւն այնպիսի չիցէ գտեալ, որպէս դու գտանես: Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել

---

1. Թուի երդումն կամ կնիք նշանակել

զկամս իմ, զեպիսկոպոսութիւնդ ի բաց առնում ի քէն, և ի գործոցդ ի բաց հանեմ․ և դու անարգանօք և թեթեւութեամբ երթաս ի տուն քո և յաշխարհն:

Եւ երանելի այրն Աստուծոյ կաթուղիկոսն Հայոց Գիւտ լցեալ զօրութեամբ Սուրբ Հոգւոյն, ասաց ցպատգամաբերին արքունի․ Կամէի՝ թէ այդպիսի բանից պատասխանիս ես ինձէն առնէի առաջի թագաւորին․ քանզի ոչ է հնար քեզ և ոչ իշխես համարձակապէս պատմել թագաւորին լիով զամենայն լուեալսն ի բերանոյ իմմէ: Եւ պատգամաւորին պատասխանի տուեալ ասէ ցըսուրբն․ Համարձակութիւն տուեալ է, ասէ, թագաւորաց՝ ասել զարդար լուրն ի մէջ երկուց կողմանց, զոր և լսեն պատգամաւորք, և չիշխեն եթէ չասեն: Եւ սուրբ այրն Աստուծոյ ետ պատասխանի և ասէ․ Ասա՛ ցթագաւորն, թէ յաղագս գործոյս զոր ասես՝ թէ ցայժմ քո ի ծառայից և ոչ յինէն կալեալ գործակալութիւն, թէ դու կամ թէ ոք ի ծառայիցն քոց որ ետուն, և առնուք յինէն, ուրախ եմ և կամիմ· վասն զի յաշխարհհառանջ հոգոյ և կարեաց ապրեալ, անձին պարապեմ և աղօթից։ Իսկ յաղագս եպիսկոպոսական ձեռնադրութեանն՝ որ ասես թէ ի բաց առնում ի քէն, զայս երկնաւոր ձեռնադրութեան պատիւ՝ առնուլ յինէն ոչ թագաւորք և ոչ յիշխանաց ոք – այլ մահ, – ոչ իշխէ, քանզի և կարէ իսկ ոչ. և ոչ բնաւ երկնչիմ ի մահկանացու մարդոյ՝ տալ զպատիւս զայս ինձ և կամ առնուլ յինէն։ Բայց վասն օրհնացդ քոց որ ինձ ունել հրամայես, յաղագս որոյ և պատիւս և պարգեւս խոստանաս տալ ինձ, ոչ ուրուք է յերկրաւորացս պատիւ մեծ և իշխանութիւն հզօր առաւել քան զքոյդ՝ որ ունիս· բայց վասն անպիտան և գարշելի օրհնացդ քոց՝ զոր ունիսդ, դու ինքնին գլխովին որ թագա-

ւորդ ես, և ամենեքեան որ զայդ օրէնս ունիք, մեռեալ համարեալ էք յաչս իմ, և ոչ կենդանիք· և զպատիւս քո և զփառս՝ անարգանս համարիմ և մանկաւոյ ծաղր և կատականս։

Եւ լուեալ զայսպիսի բանս պատգամաւորին ի սրբոյ կաթուղիկոսէն Հայոց Գիւտայ, ասէ ցերանելին. Թէ արդարեւ ի վերայ գործն բանից պնդեալ կաս, ապա արդար ասէիր՝ թէ չիշխես տանել զասացեալս իմ առ թագաւորն, և իրաւ ասէիր· զի ոչ ուրուք երբեք այդպիսի բանս համարձակութեամբ յղեալ է առ այր թագաւոր· բայց տես, թէ հնար է փոխել զխօսսդ· ուշիմ լեր։ Եւ սրբոյն պատասխանի արարեալ ասէր. Տեսանե՞ս, զի դու ընդդիմանաս պատուիրանին Աստուծոյ, և չերկնչիս· վասն զի դուք ասէք, թէ որ ոք զհրաման թագաւորին լուծանէ՝ զԱստուած անարգէ· և դու ասացեր՝ թէ թագաւորաց օրէնք են չիշխել պատգամաւորի նուաղեցուցանել բան մի ի բանից առաքողին և կամ առաւելուլ: Արդ երթ ասա զոր լուար յինէն. քանզի ինձ ոչ է հնար խորհել այլ ինչ և կամ ասել:

Եւ երթեալ պատգամաւորն առաջի թագաւորին, ասէ ցթագաւորն. Ոչ իշխեմ ես զխօսեցեալս առն յանդգնաբար երկրորդել առաջի ձեր, բայց եթէ ի ձէնջ հրաման առնում: Եւ հրամայեալ թագաւորին ասել համարձակապէս զամենայն լուեալսն առանց երկիւղի, և պատմել այնուհետեւ մի ըստ միոջէ զամենայն բանս առն Աստուծոյ Գիւտայ: Եւ լուեալ թագաւորն զամենայն աներկիւղապէս խօսեցեալսն Գիւտայ, ի զայրացումն սրամտութեան գրգռեալ, կամեցաւ տալ հըրաման խստութեամբ, և յանկարծակի դադարեցուցեալ զինքն՝ առ փոյր մի լռեաց, և ապա սկսաւ խօսել և ասէ. Չէ հնար. եթէ ոչ՝ կասել և ասէ. Չէ հնար. եթէ ոչ՝ կատարին կամք խնդրոյ նորա, զոր նայն

կամի. և ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա, և ոչ երկիր պագանել ոսկերաց նորա, որպէս սովորութիւնն: Լուեալ է իմ զպաշտամանց նոցա, թէ չառնեն զայն պատիւ կենդանեաց, զոր այդպիսի մեռելոյ առնեն: Բայց ասա ցնա՝ թէ այդմ պատուոյ չտամ քեզ պատահել, զոր դու ցասուցանելով զիս՝ գտանել կամիս յինէն. կաց ուր և կամիս, բայց ի գործոյ կաթուղիկոսութեան հեռի ես, և չէ քո:

Եւ լուեալ զայս սրբոյ կաթուղիկոսին Հայոց Գիւտայ, մասամբ միով ուրախացաւ, և միւսով ևս մասամբ տրտմեցաւ մինչեւ ի մահ. քանզի լուեալ՝ եթէ ի գործոյն ի բաց եղեւ, ուրախացաւ հանգչելով ի զբօսանաց աշխարհիս. և լուեալ՝ թէ ոչ կապանաց ել հրաման ի թագաւորէն վասն նորա և ոչ մահու՝ որում ցանկայր ի բազում ժամանակաց, տենչայր լինել արժանի, խռովեալ տրտմէր անմխիթար վասն չպատահելոյ ցանկալի և մեծ խընդրոյն՝ որում փափաքէր հասանել։

Կացեալ այնուհետև ի դրան ըստ իւրում կամելոյ սուրբ կաթուղիկոսն Հայոց Գիւտ, բազում համարձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայից և ի քրիստոնէից, այլ և առաւել ի հեթանոսացն՝ որ իւրաքանչիւր ախտից գտանէին բըժըշկութիւն յաղօթից սրբոյն. և այլք ի քրիստոնէից կողմանցն այնոցիկ ցանկանային ի սուրբ աջոյ առն Աստուծոյ գտանել ձեռնադրութիւն։ Յորոց զոմանս ձեռնադրէր յեպիսկոպոսութիւն, և զայլս բազումս յաստիճան երիցութեան կարգէր։ Եւ այսպէս պատուեալ յամենեցունց՝ ուրախալից չքնաղութեամբ հրաժարէր գնալ յաշխարհն Հայոց. օրհնեալ զամենեսեան յանձն առնէր Աստուծոյ, յուղի անկեալ գնայր յաշխարհն Հայոց։ Եւ կեցեալ առաւելապէս պատուովք քան զառաջինն ի Հայս, հանգչէր երկայն

ծերութեամբ, և եղեալ ի գիրս հարց իւրոց խաղաղութեամբ՝ ի գեօղն որ կոչի Ոգմու գեօղ, ի գաւառին Վանանդայ[1]։ Եթող օրհնութեամբ զամենայն ժողովուրդն սուրբ եկեղեցեացս Հայոց։

ԿԵ. Եկեալ ի դրանէ և Մաղխազն Գադիշոյ, և ժողովեալք առ նա զաւք ուրացողացն, որ թէպէտ և ուրախանային զառժամանակեայ թաղծալից ուրախութիւն կենցաղոյս, սակայն իբրև տեսանէին զմամիկոնեանն Վահան այնպէս երեւելի յաճմունս բարւոյ համակեալ, ներկեալք[2] խամրէին և ծնկեալք թարշամէին։ Խնդրէին ի վերայ նորա հնարս պատճառանաց, որով զնա և զեղբարս նորա կորուսանել կարացեն. տային գիտել մեծամեծաց դըրանն. այլ էր ինչ և որ Թագաւորին, թէ ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կեալ ի Հայս։ Յիշեցուցանէին Արեաց և զնախնեացն նորա զմիոյ միոյ, թէ ո՛վ ի նոցանէ ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ, և ոչ արար մեծամեծ վնասս և մահունս. արդ՝ երբ և է, ասեն, սա զնոյն խռովութիւնս յարուցանելոց է ի վերայ ձեր։ Որոց լուեալ զայս ամենայն բանս քսութեան ի ստէպն բանսարկուաց, կասկածէին ի համբաւոյն. և հայելով յառն յաջողակութիւն և յիմաստն, տրամէին առ սէրն։

---

[1] Վերագոյն՝ յէջն 354 յԱրահեզայ Տայոց ասաց զԳիւտ. գուցէ անդ ծնեալ էր, բայց նախնիք իւր ասէն ի Վանանդայ էին. Առ այս տ. և Գր. Խալաթ. Ղզ. Փարպ. և գործք իւր, տպ. Մոսկովա 1883 յէջն 55.

[2] Թերևս ՆԵՐԿԵԱԼՔ. Հմմտ. Ն. Բիւզանդացի Հայկ. Բռքն. տպ. Կ. Պոլ. 1880, յէջս 82-3, թ. 90.

Տեսեալ այնուհետեւ Վահանայ զայնչափ յարուցմունս նախանձաւորացն ի վերայ նորա, թէ ոչ երբէք կասեալ լռեն ի չար նախանձալից խօսից, չկարացեալ տանել համապազօրեայ բանսարկութեանն, երթեալ ի դուռն՝ տկարանայր ի հաւատն. և եկեալ ի Հայս, սակայն և այնպէս խնուլ զբերանս չարախօսացն ոչ կարէր։ Զի որ ոք բան ուղիղ ի հրապարակի առաջի իշխանի չգիտէր խօսել՝ զնա ատեայր. և որ ոք յորս կամ ի թիւրախ նետ չգիտէր ձգել՝ զնա պարտաւորէր. Նաեւ, ասէին, և ամենեցուն ունչս առնէ։ Եւ որ ոք անմտութեամբ զգործս արքունի չմարթէր գործել, ի նա բերէր զպատճառն. Նա, ասէին, յառաջէ յամենայն ի գործս, և չըտայ ինչ ումեք գործել կամ օգտել։ Վասն զի էր նա գործակից՝ որում անուն էր Վրիւ, անանուն ըստ ազգի և անփորձ իրի, որդի առն Ասորւոյ, բայց շատխօսութեամբ և ընդվայրաբանութեամբ առաւելեալ՝ նըմանէր ազգի Ասորոց. որոյ չմարթացեալ գործել զգործ արքունի՝ երթեալ լինէր ամբաստան զՎահանայ առաջի Թագաւորին Պերոզի, տանելով. թէ ինձ ի գործ ոսկէհատին չէր ինչ մօտ երթալ. և իւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին՝ խորհի երթալ առ կայսր և կամ յաշխարհն Չինաց, և տուեալ զակին՝ կամի խնդրել գունդ և ապստամբել:

Եւ լուեալ զայս ամենայն բան ապստամբութեան զինքենէ իմաստախորհին Վահանայ, առեալ փութանակի զբազմութիւն ոսկւոյն և հասանէր ի դուռն: Եւ լուեալ թագաւորին Պերոզի զձեպով երթալն Վահանայ, զարմացեալ ասէր. Թէ Ընդ Վահանայ այդպէս երագ՝ շատ ընդդէմ է բանիցն Վրուայ, մանաւանդ՝ թէ բերեալ ես ինչ է: Եւ եղեալ յանդիման թագաւորին, տեղեկանայր ի նմանէ թագաւորն Պերոզ՝ թէ արդարեւ բերեալ ինչ է. և լուեալ՝ զՎահանայ զքանիօնութիւն բազմութեան ոսկւոյն զոր բերեալ էր, և ուրախանայր յոյժ: Ապա և յանդիման Վահանայ տայր

ասել Վրուայ զբանսն՝ զոր ասէր զնմանէ յառաջագոյն: Եւ լուեալ Վահանայ զամենայն ասացեալսն Վրուայ, ետ պատասխանի առաջի թագաւորին, և ասէ. Գիտեմ և ես զանիմաստութիւն անձին իմոյ, ըստ ցուցանելոյ զիս ձեզ Վրուայ. բայց սակայն այնքան կոյր չեմ՝ թէ զԱրեաց ոյժ և տեսանել անգամ չգիտեմ. որոյ ուժոյ զբազում ազգս ապստամբաց հարեալ է սաստիկ երկիւղիւ, և հնազանդեցուցեալ ընդ ձեռամբ իւրեանց ունին: Իսկ ես որ ապստամբելս կամիմ ըստ դորա ասելոյդ, դոյն իսկ ինքն գիտէ՝ զի մի ծառայ չգտանի իմ որ ինձ խոհկերութիւն առնէ, և ոչ երկուց կամ երից պատանեաց իշխեմ տիրաբար, որ ինձ երկիւղիւ սպաս ունին. գնդի իմ ոյժ այդ է: Բայց եթէ նեղ ինչ էր ինձ ի ձէնջ, և ուրէք յօտար երկիր գնալ և կորնչել կամէի, զայդչափ ոսկի այսր զի՞ բերէի, որ մինչեւ ցմահ իմ, թէեւ կարի շատ կէի, խմում անձինս, այլ և տասանց եւս ընդ խաթուշակ՝ շատ էր և բաւական, և զայլ ոք ոստիկան ձեր յիմ վերայ չէր կացուցեալ, որ թէ ինձ ի հարկէ տայր բերել այսր զայդչափ բազմութիւն ոսկւոյ։ Բայց թէ վաստակել գիտեմ ձեզ, դուք կարող էք որ զիս թէ կամիք կեցուցանել, վաղվաղակի և առժամայն մեծացուցանել, որպէս և կամիք։

Եւ լուեալ զայս թագաւորին Պերոզի և այլ աւագանւոյն զայնպիսի իմաստութեան խօսս՝ ի Վահանայ, ամենեքեան իրաւացուցին զխօսս Վահանայ քան զխօսս Վրուայ։ Եւ ելանէր Վահան արդարացեալ յատենէն, և որդի Ասորւոյն Վրիւ ելանէր ամաչեցեալ և արհամարհեալ։ Եւ հրամայեալ Վահանայ ի դրանէ՝ մեծարանօք և բազում շքեղութեամբ, ելեալ հասանէր յաշխարհս Հայոց։

Եւ քանզի ոչ էր խաղաղութիւն մտաց նորա զամենայն օր վասն վատ

անուան ուրացութեանն, զոր նման նահատակեալ հարցն իւրոց պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ կրէր յինքեան, եւս առաւել ի դալն պայծառութեամբ ի դրանէ՝ տարակուսէր յանձն իւր, թէ մի՛ գուցէ պատրեալ ի փառս աշխարհիս՝ յամեալ մոռանայցէ զերկնից հանդերձելոյ աշխարհին, և վնասիցի։ Եւ այսպէս ցանկ մաշելով ի միտս իւր, ծանուցանէր առ ջերմ սիրողաց զիւրն հոգալ, և հնարս հայցէր. և անդադար խնդրէր ի փրկչէն Քրիստոսէ շնորհել նմա ժամ բարի, ասելով ընդ միտս իւր. թէ Միշտ քեզ Տէր Աստուած ամենայն ինչ հնարաւոր է, և տկարանայ քեզ և ոչ ինչ. դու Տէր, ապաւէն իմ լեր. շնորհեա ինձ ժամանակ դարձի խոստովանութեան. և ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

ԿԶ. Եւ մինչ դեռ Վահան յայսպիսի յուզմունս մտաց կայր տարակուսեալ, լինէր յանկարծակի խըռովութիւն յուզմանց յաշխարհին վրաց. Վախթանգ սպանանէր զբդեշխն զանօրէնն Վազգէն՝ յամի քսաներորդի հինգերորդի Պերոզի արքայի: Զոր լուեալ Հայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱղուանս էին՝ յաստամբ ամրականացն կռուի, որոց բովանդակին զօրագլուխ էր Զարմիհր Հազարաւուխտ, և Հայոց աշխարհիս Ատրվշնասպն Յոզմանդեան էր մարզպան: Իսկ քրիստոնեայ մարդիկն Հայոց, որ այն ամ անդ ի կռուին էին, հարեալք մաշէին առաւել եւս յարհամարհանաց և ի նախանձուէ ի յեռին իշխանացն Հայոց, որք ուրացութեամբն գոռոզացեալ ամբարհաւաճէին ի ժամանակին, քան թէ ի բռնութենէ պարսիկ զօրագլխացն գործոց: Որք ի ժամանակին իբրև լուան զապստամբութիւնն վրաց արքային, ցնծային ուրախալից սրտիւ: Վասն զի գայր առ նոսա համբաւ թէ վրաց

արքայ ասէ, թէ՝ Ես միում ումեք զկռիւ չտամ տեսանել, այլ այնչափ հանեմ հոնս, որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զօրքն Պարսից: Զօրացեալք յայնպիսի համբաւոյ քրիստոնեայքն, և անձանց ակն ունէին օգտի և բարի այցելութիւն գտանել ի Բարձրելոյն. բայց երկնչէին՝ թէ մի գուցէ առեալ զգունդն Հայոց զօրագլխացն Պարսից՝ ընդ նոյն ի գուբն գումարիցեն:

Այլ Քրիստոս յայնպիսի կարծեացն զերծուցեալ զնոսա գային ի Հայս. և եկեալք ի գաւառն Շիրակայ, ի դաշտն՝ ուր բնակէր մարզպանն Հայոց Ատրվշնասպ Յոզմանդեան, և առ նմին հազարապետն Հայոց Վեհվեհնամ. առ խորհուրդ ի մէջ առեալ արանց ոմանց նախարարացն Հայոց, որք զորամէլն և զտարակուսելն ի բազում ժամանակաց գիտէին զմամիկոնէին Վահանայ՝ յաղագս մոգութեանն անուան, և աւէրն. թէ՝ Կարի պատեհ էր և մեզ և նմա ժամս այս փրկութեան. նմա ապրել ի խղճէ մտացն իւրոց, և մեզ զերծանել ի հնապազորդեալ կասկածանացս և յարաժամ հարանացս, որոց ծառայեմքս ի հարկէ հեղձամղձուկս նախանձու: Եւ արքայդ Վրաց Վախթանգ արեացի է. ո՛ գիտէ և բազումողորմն Աստուած հայեսցի ի վտանգս մեր և օգնեսցէ մեզ, և հանդերձ Վրօք թերեւս կարող լինէաք առ սակաւ մի աշխատանել զՊարսիկս: Եւ խորհեալ այսպէս սակաւ ոմանց ի Հայ նախարարացն, լսելի լինէր խորհուրդն և յայլս ոմանս. և որպէս յԱստուածոյ առաջնորդութենէ միաբանէին կամաւ և յօժարութեամբ ամենեքեան որք լսէին զխորհեալսն:

Յայտնէին այնուհետեւ համարձակեալք ի գիշերի միում զբանս մտածութեանն իւրեանց Մամիկոնէին Վահանայ. որոյ իբրեւ լուեալ ասէր ցամենեսեան. Գիտեն ոմանք թէպէտ

և ոչ ամենայնքն՝ որք էք ի խորհրդիս յայս, թէ որպէս վտանգեալ տագնապիմ յամենայն ժամու յաղագս սուտ անուանս՝ զոր ատելութեամբ կրեմ յանձին իմում. զի մերձեալ յերեկոյն՝ կասկածեմ ցառաւօտն, և հասեալ յառաւօտն՝ երկնչիմ յերեկոյն, հայելով ի փութանակի և անյայտ կենցաղոյս վախճան՝ որ երագահաս է և յանկարծակի, թէ գուցէ այսպիսի անուամբ գնալ յաշխարհէս. ապա կամէի և ընտրելագոյն էր ինձ՝ թէ բնաւ և ծնեալ իսկ չէր զիս մօր իմոյ յայս աշխարհս. և գտանել հնարս և զերծանել ինձ ի խղճէս՝ որ նեղէն զիս, աղաչեմ զԱստուած անդադար: Բայց միաբանել խորհրդոյդ՝ զոր դուքդ խորհիք, և ասել ձեզ՝ թէ լաւ է իմաստդ և արարէք՝ ոչ կարեմ ասել և չիշխեմ: Վասն զի զԱրեաց ոյժն և ստամբակութիւնն քաջ գիտեմ, և զՀոռոմոց զթուլութիւնն և զխաբէութիւնն. և զձեր ծանուցեալ է փորձիւ իմ, թէ որպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ստեցին. և վասն Վրաց արքային և Հոնացդ՝ զորս ասէք, Վիրք առանձին թեթեւ ինչ աշխարհ են և այրուձիով սակաւաւորք: Բայց վասն Հոնաց՝ ո՛ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ, որք չէնն ի միջի և չերեւին: Բայց քան զամենայն եւս առաւել՝ յանձանց երկերուք. վասն զի մարդիկ սուտք էք և անվստահք: Բայց եթէ զիս հարցէք և զբանն իմ առնէք և հաւանիք, թողէք ի բաց ըզբաներդ, և զԱստուած աղաչեցէք միայն՝ տանել հնարս իրացդ, որում դիւրին է առնել զոր ինչ և կամի. այլ ընդունայն և յանպիտան խորհուրդս ձեր՝ զիս մի՛ աշխատ առնէք:

Եւ լուեալ զայս ամենայն բանս նախարարացն Հայոց ի մամիկոնենէն Վահանայ, ետուն պատասխանի միաբանութեամբ և ասեն, թէ Զամենայն զոր ասացերդ՝ լի ասացեր որպէս վայելէ քում իմաստութեանդ,

ճշմարիտ ասացեր և արդար. բայց զՅոյս մեր ոչ ի Հոռոմս եդեալ է և ոչ ի Հոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ, բարեխօսութեամբ Սրբոյն Գրիգորի, և ի մահ նախնեացն՝ որ նահատակութեամբ իւրեանց հաճոյ եղեն փրկչին Քրիստոսի, և ապա ի մահ անձանց մերոց. քանզի լաւ համարիմք՝ մի ժամ մեռանել՝ քան թէ զամենայն օր զեկեղեցւոյ և զքրիստոնէից զարհամարհանս տեսանել և զքակտումն:

Եւ լուեալ զանուն մահուան՝ մամիկոնէին Վահանայ և քաջի եղբօր նորա Վասակայ, քաջալերեալք զօրացան, և լցեալք Սուրբ Հոգւոյն շնորհիւ յորդորեցան: Սկսաւ խօսել մամիկոնեանն Վահան՝ և ասէ. Դուք գիտէք՝ զի Վարդ իմ եղբայր ի դըրանն է. և գիտեմ, թէ լուեալ է զխորհուրդս մեր Պարսկաց, կապեն զնա և վշտացուցանեն. բայց ի մահ յօժար եմ քան թէ այսպէս կեալ ուրացութեամբ. և յայդ բան հաւանիմ ձեզ, որ ոք կարէք առնել։ Եւ ամենագիտին հայեցեալ ի դարձս իմ, և ծանուցեալ թէ արդարև յամենայն սրտէ է իմ դարձիս կամք, արասցէ յիս նշան բարի և դարձուսցէ առ իս զանձկալի եղբայրն իմ զՎարդ ողջ, և տացէ տեսանել զնա աչաց իմոց և ուրախանալ․ և ապա կատարեսցէ ի վերայ իմ զհաճոյն իւր, որ ինչ թուիցի յաչս նորա։

Եւ զայս ասացեալ՝ յառնէն ամենեքեան միաբանութեամբ քրիստոնեայքն և ուրացեալքն, և յաղօթս կացեալ խնդրէին զԱւետարանն սուրբ։ Եւ մատուցեալ յառաջ քահանային՝ որում անուն Աթիկ, որ էր ընդ նոսա ի բանակին, այր բանիբուն բանիւ և խորհրդապաշտ սըրտիւ, յերեւելի գեղջէն որ կոչի Բճնի, և բերեալ սուրբ Աւետարան ողջունէին ամենեքեան, և եդեալ իւրաքանչիւր ուրուք զձեռս ի վերայ՝ ասէին․ Թէ Որ ոք խոստովանեսցի

զհաւատս զայս՝ զոր փրկիչն ամենեցուն և տէր Յիսուս Քրիստոս վարդապետեալ գրեաց ի սմա, և Որդի մարդոյ խոստովանեալ տարցի զնա առաջի Հօր իւրոյ, ժառանգեցուցանել նմա զերկնից բարութիւնն։ Եւ որ ոք խոտորեալ ուրասցի ի հաւատոյս յայսմանէ, և նենգեալ ստեսցէ Աւետարանիս երդման, և Որդի մարդոյ ուրացեալ հանէ զնա ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է և կրճել ատամանցն։ Եւ այսպէս երդուեալք ի գիշերին և հաստատեալք ի հաւատն Քրիստոսի և հրաժարեալք ի միմեանց, յիւրաքանչիւր վանս գնացին հանգչել։

ԿԷ․ Մի ոմն անդէն և անդ ի նախարարացն Հայոց, որում անուն էր Վարազշապուհ, ի տոհմէն Ամատունեաց, ելեալ ի խորհրդենէ միաբանութեանն, որպէս մերժեցաւ Յուդա ի գնդէն սուրբ առաքելոցն, գնաց ի նմին գիշերի և պատմեաց մարզպանին և այլոցն ամենեցուն՝

զխորհուրդ միաբանութեան և զերդումն Աւետարանին, և զխօսս ամենայն նախարարացն Հայոց։ Զոր իբրև լուէր մարզպանն Ատրվշնասպն և այլ պարսիկ մարդիկն և ջոկք ուրացողացն Հայոց, սրտաբեկեալք զարհուրէին և անքունք լինէին զմնացորդ մասն գիշերոյն յերկիւղէ։ Հասեալք ի ժամ առաւօտուն, չուէին ի տեղւոյն և երթեալ բանակէին մօտ ի պարիսպ բերդին՝ որ անուանեալ կոչի Անի. և առ աղէտի՝ խրատատուք խաբէութեանն և մարզպանն կասկածանօք կային ըզտիւն զայն անդէն, ծանուցանելով այլոցն ստուգիւ թէ և վաղիւն անդէն լինին։ Եւ ի նմին գիշերի հեծեալք յիւրաքանչիւր երիվարս մարզպանն և հազարապետն և որք ընդ նոսա միաբանք էին՝ փախստականք լինէին։ Զոր զգացեալ նախարարացն Հայոց՝ հետամուտ լինէին զկնի փախստէիցն. և վասն զի տեղեակ առաջնորդօք փախչէին մարզպանն և հազարապետն, ոչ ընդ ուղղորդ տեղիս ճանապարհացն, այլ ընդ այլ և այլ տեղիս զերծեալք անկանէին ի բերդն Արտաշատու, որոց ոչ կարէին հասանել նախարարքն Հայոց. բայց զգրաստ ամենայն Պարսկացն հասեալ ըմբռնէին ի ճանապարհին, և զմախաղն Գադիշոյ ձերբակալ արարին, ածէին ընդ ինքեանս. և հասեալք ի Դուին, երթեալ պաշարէին զբերդն Արտաշատու։ Իսկ մարզպանն և հազարապետն գաղտ ի գիշերի ելեալ ի բերդէն փախստեայ գնային ի կողմանս Ատրպատականի։ Եւ սեպուհ մի ուրծացի, որում անուն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Հայոց, նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ աւերէր ըզշահաստանն Բռնավիժի. և առեալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց։

Իսկ ոմանք ի հայ նախարարացն ամբարշտելոցն խրատ տուեալ մարզպանին Հայոց Ատրվշնասպայ ասէին, թէ Թագաւորն Վռամ ապստամբեալ է, և Հոն կամի հանել, բայց հանեալ չեւ եւս է. և դարձեալ՝ Հայոց առ կայսր զգնդէ յղեալ է, և դեռ չեւ եւս երեւի ի միջի. և ինքեանք չեւ եւս քաջ կազմեալ են, որպէս արժան է, և դու թէ այժմ փութով հասանես ի վերայ նոցա՝ դիւրով և թեթեւով վճարես զգործ մի կարի մեծ, և լաւ անուն յանձն առեալ՝ պատիւս և շատ պարգեւս գտանեմք յարքայից արքայէ և դու և մեք. ապա թէ ծուլացեալ հեղգաս, երկնչիմք, մի գուցէ զօրացեալ անձամբ և կամ ուստեք օգնականութիւն գտանելով, ոչ գիտեմք, թէ որպէս պատահեալ իրացն աշխատիցիմք և զղջանայցեմք։

Եւ հաճոյ թուեցաւ բանն մարզ-

պանին և ամենեցուն որ ընդ նմայն էին. և վաղվաղակի յԱտրպատականէ գունդ առեալ և ի Կոպրեաց մարզպանէն, և զգունդն Կատշաց՝ որ զայն տեղօքն էին, դայր հասանէր յաշխարհն Հայոց ի գետեզերն Երասխայ. կամեցան անցանել ի գեօղն՝ որ կոչի Նախճաւան, ի սահմանակցութեանն Սիւնեաց։

ԿԸ. Ազդ եղեւ առ տէրն Բագրատունեաց Սահակ, զոր Հայք և զօրավարն Հայոց Վահան ի ժամանակին յայնմ մարզպան կարգէին Հայոց. ասպետն Սահակ զմարզպանութիւնն, և Վահան զտէրութիւն Մամիկոնէից և զսպարապետութիւն Հայոց, որք նախ հաստատապէս ի վերնոյն հրամանէ, և ապա ի Հայոց ընկալան զգործակալութիւնն. առ որս և եկք Պարսից գնդին լսելի եղէն. և տեսեալ դեռ եւս անկազմագոյն զպատրաստութիւն զօրուն իւրեանց, խորհէին առ վայր մի յամուր տեղիս գաւառին Տայոց չուել։

Եւ դարձեալ զամենայաղթ օգնութիւնն Աստուծոյ յիշելով ասէին, թէ Ոչ է յաղթութիւն ի բազումս և ի սակաւ, այլ ի վերին կշռողութեան ձեռինն, և մանաւանդ մեր գործս, որ ամենեւիմբ ի նորա յաջողութիւնն հայի։ Արդ պարտ է այլ ոչ ինչ խորհել բնաւ, բայց սախպով ընդդէմ նոցա գնալ, և զզօրութիւն յաղթութեան ի Փրկչէն բոլորեցունց հայցել։ Խորհէին և զայս եւս Աստուծոյ մտարկութեամբ, մնալ մարզպանին Սահակայ և սպարապետին Հայոց Վահանայ մամիկոնենին և ոմանց յայլ նախարարացն՝ անդէն յաստանին, ի քաջալերութիւն և ի բարի յոյս երթելոցն յառաջ, ի զարհուրումն և ի բեկումն սրտից կողման անօրինացն։ Եւ որք պատրաստեալք այնուհետեւ ի պատերազմն կազմեցան, սիւնին Բաբգէն, զոր անուանեցին ի ժամուն իշխան տէրութեան Սիւնեաց, և ամենալաւ քաջ սեպուհն մամիկոնէից Վասակ,

եղբայր սպարապետին Վահանայ, և Գարջոյլն մաղխազ, և երկոքեան որդիքն երանելւոյ կամսարականին Արշաւրայ, Ներսեհ տէր Շիրակայ և Հրահատ նորին եղբայր, և երկու արք ի Գնունեաց տոհմէն՝ Ատոմ իշխանն Գնունեաց և եղբայր նորին Առաստոմ, և գունդ ընդ նոսա, որ էին թուով ընդ բնաւ չորեքհարիւր այր։

Եւ մտեալ նոցա յեկեղեցին, երկիր պագանէին տեառն Աստուծոյ և արարչին ամենայնի և զօրացուցչի. և խնդրէին ի նմանէ առաքել օգնական ընդ նոսա զճգնութիւն սուրբ նահատակին Գրիգորի և զամենայն սրբոց, և զորդիս նահատակելոց քրիստոսասիրացն Հայոց և զզօրութիւն սուրբ խաչին։ Եւ փրկչին Քրիստոսի գթացեալ մարդասիրապէս, և հայեցեալ յարժանաւոր խնդրուածս նոցա, առաքէր ընդ նոսա օգնական զոր խնդրեցին ի նմանէ, և յուղարկէր խաղաղութեամբ։ Երկիր պագանէին նախարարքն և ամենայն արք զօրուն որք ընդ նոսայն էին, և հրեշտակակրօն սրբոյ կաթուղիկոսին Յոհաննայ. որոյ նպարակեալ յուղարկեաց զնոսա իւր ստոյգ և արդար ոգւոյն օրհնութեամբ՝ ի գործ պատերազմին։

Եւ ապա հրաժարէին յասպետէն Սահակայ մարզպանէն և ի զօրավարէն Հայոց Վահանայ Մամիկոնենէ, և յայլ ընկերակցաց իւրեանց՝ որ անդէն յոստանին առ նոսա մնալոց էին. և գնացին ստիպով խնդալից յօժարութեամբ։ Եդեալ ի մտի՝ ասէին, թէ Ո՛վ գիտէ կարեմք հասանել ի հունն՝ ուր գունդք Պարսից անցանել կամին, և դարձեալ յաներեւոյթ տեղւոջ ուրեք սպասեմք. և յորժամ գիտեմք՝ եթէ կէս գնդին անցեալ է ընդ գետն, անկանիմք ի վերայ անցելոցն, և թերեւս վնասել ինչ կարեմք. նոյնպէս և մնացելոցն ի նոցանէ՝ դարձեալ դիւրով կարեմք լինել գամագիւտ։

Եւ եկեալք ի գիւղն որ անուանի Վարազկերտ, լուան եթէ գունդն Պարսից անցին ընդ գետն ամենեքեան, և էն թուով եօթն հազար։ Եւ քաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ, քանզի առաջապահ էր այն օր, գնայր յառաջ ի գեօղն որ անուանի Կռուակք. թերեւս լինիցի ինչ հնար, ասէ, ջանամ առնուլ զգնդին Պարսից զհանդամանս՝ թէ էն ինչ եթէ ոչ։ Եւ երթեալ ի Կըռուակս յօթ, յանկարծակի յառաւօտուն ծագել՝ հասեալ ի նոյն գեօղ և մարզպանն Պարսիկ Ատրվշնասպ, լսէր զմամիկոնենէն Վասակայ՝ թէ անդ է։ Եւ քաջ սեպհին Մամիկոնէից Վասակայ գիտացեալ զԱտրվշնասպայ և զնոցանէն՝ որ անդ էին, հնար փրկութեան քաջութեամբ խորհեցաւ, որով զգունդն իւր ապրեցուցանել կարասցէ ի ժամուն։ Հրաման տայր երկուց երկուց զոյգ, և կամ երից և կամ եւս յոլովից, ընդ այլ և այլ անյայտ տեղիս և ընդ փողոցս ելանել ի շինէն, և զատ ի միմեանց փութալ հասանել ի գեօղն Վարագկերտ՝ ուր Նախարարքն և այրուձի Հայոց էին, և տայր գիտել նոցա։ Եւ ինքն քաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ պատրողական բանիւք բանգագուշացուցանէր պատգամաւորօք զԱտրվշնասպ, ասելով, թէ Ես պատգամ ունիմ առ քեզ զՀայոց, զորս լուեալ քո և որք ընդ քեզ են, հաստատ հաճոյ համարիք և օգուտ զայնպիսի լուր՝ և Արեաց տեառն և Հայոց աշխարհիս։ Եւ Ատրվշնասպայ լուեալ, թէպէտ և գայր ի միտս ուրախանայր, կարծեցեալ՝ թէ հաստատ ի նուաճումն գան, այլ սակայն առ նա խստագոյնս յղեալ ասէր, թէ Աշխարհ մի ապստամբ՝ առ իս զի՞նչ պատգամ յղէ։

Եւ քաջի սեպհին Մամիկոնէից Վասակայ գիտացեալ զիւրոյ այրուձիոյն՝ զերծեալք անվնասք, և թէ չիք ինչ կասկած այնուհետև, պատասխանի արարեալ եկելոցն յԱտր-

վշնասպայ ասաց. թէ՝ Մեր ցայժմ ոչ վատ ինչ գործեալ է և արքունի իրաց վնաս արարեալ. բայց դու ինձ հրամայեա ասել զպատգամն, և ձեր լուեալ՝ ապա հայեցարուք յարժանն, և ծաներուք զոր ինչ պարտ է առնել։ Եւ արձակեալ զպատգամաւորն, և ինքն հեծեալ յերիվարն՝ ասաց ցայլ Պարսիկսն որ կային անդ. թէ Ես ծաղր առնելով ընդ ձեզ խօսեցայ զբանսն առ պատգամաւորսն. այլ զիս ուրուք առ ձեզ պատգամ չէ յղեալ. բայց ես տեսանել զձեզ եկի թէ որպիսի ինչ էք. այլ դուք էք մարդիկ վատք և անպիտան, և եկեալ էք ի վատի խնդիր, և պատահէք չարի և կորնչիք։ Ասացեալ այսպէս քաջի առն, գնաց ինքն ի բաց անհոգութեամբ և աներկիւղ։ Եւ եկեալ քաջն ի գունդն Հայոց, պատմեաց նոցա թէ գունդ բազում է, բայց յոլովք ի նոսա անպիտանք են և քերթաքաղ իշավարեան։

Եւ լուեալ զայսպիսի բանս ի քաջ

մամիկոնեան սեպուհէն՝ միաբանութեամբ արք զօրուն Հայոց, խորհուրդ ի մէջ առեալ ասաց. Թէ պարտ է զի ի դաշտէն ի լեռնակողմն փոխել. խորհելով միաբան զայս. զի եթէ հարեալք, ասէ, ի գլխի, օգնականութեամբն Աստուծոյ զօրեմք, այն աջող իսկ է և բարի. և եթէ այլազգ ինչ դիպի, պահպանութիւն է մեր ամրութիւն լեռնակողմանն և օգուտ մեզ: Եւ եկեալ չուեալք բանակեցան ի գեօղն Մասեաց, որում անուն էր Ակոռի:

ԿԹ. Եւ լուեալ՝ թէ առ վաղիւ գունդն Պարսից գայ ի վերայ նոցա ի պատերազմ, կանխեցին ըստ սովորութեան աւուրցն ի պաշտօն գիշերոյն. և կատարեալ զաղօթս առաւօտուն, կազմէին և նոքա որ անդ էին՝ ընդդէմ նոցա ի պատերազմ: Եւ բաժանեալ զչորեքհարիւրսն ի չորս առաջս, միջին վայրին կարգէին զօրագլուխս ի ժամուն զիշխանն Սիւնեաց Բաբգէն և զքաջ

սեպուհն Մամիկոնէից Վասակ, և ահեակ կողմեանն զԳարջոյլն մաղխազ, և կողմանն աջոյ զգնունիսն երկոսին, զիշխանն Գնունեաց Ատոմ, և զնորուն զեղբայրն զԱռաստոմ: Եւ ընդ մէջ երկոցունց մասանցն՝ զքաջն և զընտիրն զիշխանն Շիրակայ ըզՆերսեհն կամսարական և զնորուն եղբայրն զՀրահատն՝ պատրաստական յօրինէին: Զի որ կողմն ակարասցի, ասեն, նոցա հասեալ փութով զօրացուցեալ օգնեսցեն, և յամենայն կողմանց ոյժ լինիցին. քանզի ամենեքեան վստահ էին ի յարսն՝ որպէս ի լաւսն և յարդարսն և յուխտապահսն:

Եւ այսպէս յօրինեալ զչորեքհարիւր արսն, և տուեալ փառս Աստուծոյ, աղաղակէին միաբան ասելով. Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն փառաց անուան քո. մի երբեք ասասցեն ի հեթանոսս՝ թէ ո՞ւր է Աստուած նոցա: Եւ ելեալ կային ճակատեալք ի վերայ բարձրաւանդակի լանջակողմանցն յայտնուորին: Զորոց այնքան զսակաւութիւնն Հայոց տեսեալ զօրացն Պարսից, ոչ ինչ այլ կարծէցին, բայց եթէ կամաւ խելացնորեալ ի խնդիր մահու են ելեալք: Եւ քաջ ի հեռաստանէ այրընտիր ի զօրացն Պարսից յարձակեալք ի վերայ զօրացն Հայոց, բազումք յեսսէին վատաձիոցն Պարսից, և քաջաձիքն յառաջեալ հասանէին ի տեղի պատերազմին: Յորս և ի ժամուն մաղխաղն Գարջյլ՝ առեալ զիւրեւ զհարիւրսն՝ նենդեալ ուխտի Աւետարանին՝ ի դունդն Պարսից անկանէր. և ճնային ջոկք ըստ հրամանին Աստուծոյ երեքհարիւրն Հայոց, ըստ ընտրութեանն երեք հարիւրոցն ընդ Գեդէոնին: Որք դիմեալք ի վերայ զօրացն Պարսից, օգնականութեամբ Բարձրելոյն յառաջեալ՝ զընտիր արս պատերազմին անդէն և անդ ի տեղւոջն դիթաւալ յերկիր կործանէին. և զայլ բազմութիւն գնդին Պարսից՝ ձորոց

և առապար տեղեացն ցրուեալ վատանէին: Անդ ի կողմանն քաջին Վասակայ սեպհին Մամիկոնէից և Սիւնւոյն Բաբգենայ՝ անկեալ սատակէր Ատրվշնասպն մարզպանն, և այլ արք աւագ և նախարարք յուրացողացն Հայոց, և այլ բազում Պարսիկք. նոյնպէս և ի կողմանն Ատոմայ և Առաստոմայ՝ բազումք մեռանէին ի քաջ արանց: Որ և զաւէրն Սիւնեաց՝ զԳդիհոն պահելով միւսում եւս չար ժամու, զերծեալ ապրեցուցանէր զթշնամին արդարութեան մաղապուրծ ի ձեռացն Ատոմայ և Առաստոմայ: Բայց նախ զյառաջեալ այր ի գնդէն Պարսից՝ Հրահատ որդի երանելւոյ կամսարականին Արշաւրայ՝ հարեալ նիզակաւ սատակէր:

Եւ մինչդեռ նոքա այսպէս քաջալերեալք աջով հզօրին գործամինեալք էին, առեալ Գարջուլայն մախաղու զգունդն Կատշայ՝ հանդերձ և այլ ապստամբօք Հայ որերով և այնու եւս գնդաւ որ ընդ իւրն էին, և յայլ կողմն կարթեալ ըստ աներեւոյթ ձորոցն խորութեան՝ հասեալ կայր զկնի ուխտապահ զօրացն Հայոց ի կողմանէ. կարծեցեալ մըտադիւր զնոսա յայնմ պարապութենէ կոտորելոյ զթշնամիսն Աստուծոյ, կամէր ի թիկանց կուսէ անկանել ի վերայ զօրացելոցն ի Քրիստոս, և տանել զյաղթութիւնն՝ խաբէութեամբ, և անուն մեծ ժառանգել: Իսկ սուրբն յանկարծակի զձայն խողխողման զՀայ սպանանելոյ ի Կառշացն լուեալ, բողոք արկանէր առ արս Կամսարականս. որոց ցասուցեալ առնն՝ կամէին ըսպանանել զնա, թէ գունդ մեր է, և դու խաբէութեամբ զմեծ իրս կորուսանես: Եւ ապա հաստատեալ Ներսեհի ի լրտեսելն եղբօրն իւրոյ Հրահատայ, եթէ գունդն թշնամեաց է, դիմեալ յարձակէին ի վերայ այնչափ բազմութեան երկոքին եղբարքն սակաւ արամբք: Ընդ հասեալ հայ-

րանման կամսարականն Ներսեհ, զզօրագլուխն Կառշաց՝ զայր հզօր և զմարտիկ՝ հարեալ նիզակաւ անդէն ի տեղւոջն սատակէր, և զայլ ամենայն գունդն արկեալ առաջի, բազում արանց դիակունս՝ առաւել քան զայլ մեռեալս պատերազմին՝ կործան յերկիր վարէին: Եւ լինէր օրն այն՝ որ նշանաւոր ուրախութեան հաւատացելոցն ի Քրիստոս, և օր ամօթոյ և կորանաց ամենայն ուրացելոցն ի Քրիստոսէ՝ և ճշմարտապէս կատարեալ հաստատէր բան մարգարէին որ ասէ. թէ՝ Որոց Աստուած օգնէ՝ մի զհազարս հալածէ, և երկուս՝ զբիւրս շարժէ:

Եւ տեսեալ այնպիսի փառաւորապէս վճարումն գործոյ՝ թշնամւոյն արդարութեան սատանայի, և ի կոր կործանեալ, խորհեալ՝ թէ կարի անհնարին ամենայն ինչ ընդդէմ իմոց կամացս գործեցան. և արդ յայլ ինչ չեղէ ձեռնհաս և նկուն գտայ, գոնէ առ վայր մի տրամեցուցանեմ ըզսիրտս քաջացն, որք դեռ եւս ոչ գիտէն զանցս աղէտիս իմոյ՝ և զկործանման: Եւ գտեալ իւր այս երկուս արբանեկեալս, զմին ի տոհմէն Գնթունեաց՝ որում անուն էր Վառգոշ, և միւսն ի տոհմէն Սահառունեաց՝ որում անուն էր Վասակ. և եկեալ արքն երկոքեան ի վաղիւն ճեպով ընդ ծագել առաւօտուն՝ գոյժ աղաղակի լսելի առնէին յականջս հայրապետին սրբոյ Յոհաննու և երկոցունց աւագ իշխանացն Հայոց՝ մարզպանին Սահակայ և Վահանայ Մամիկոնէի: Խառնեցան, ասեն, սաստկապէս կողմունք երկոքեան ի պատերազմ, - որոց բնաւ և տեսեալ չէր զգործ պատերազմին, - և զօրացաւ կողմ Պարսից, և ի պարտութիւն մատնեցաւ գունդն Հայոց. ի փախուստ դարձան, և անկեալ զօրաւորքն ի սուր թշնամեացն, մեռաւ քաջն Մամիկոնեան Վասակ և լաւ սիւնին Բաբգէն, և երկոքեան արքն անուանիք տէրն Շիրակայ Ներսեհ՝

սիրելի եղբարբն իւրով հանդերձ Հրահատաւ: Եւ արքն գնունիք Ատոմ և Առաստոմ, և այլ ամենայն զօրքն Հայոց՝ ի լանջակողմանս Ակոռայ տապաստ անկեալ դիակնացան. և մեք միայն մնացաք ի գուժկացն Յոբայ, և եկեալք պատմել ձեզ:

Եւ չեւ եւս սփռեալ տարածանէր համբաւս այս ի Դուին, զի մի չատագոյն ուրախասցի աղմկելով ըզքաղաքն չար գեւն, գայր հասանէր վաղվաղակի հրեշտակ աւետաւոր ի տոհմէն Գնունեաց, որում անուն էր Առաստոմ, ձայն բարձեալ գոչելով ասէր. Յաղթեաց զօրութիւն սուրբ խաչին, և միշտ յաղթէ: Տայր զոյց և զսքանչելիսն Աստուծոյ՝ զոր արար Սրբոյն բարեխօսութեամբ առ իւր սիրելիսն, և զչարաչար բեկումն և զամօթն՝ զոր գտեալ ժառանգեցին փաղանգ ուրացողացն: Եւ լուեալ զայս ձայն աւետեաց հայրապետին Հայոց Յոհաննու և աւագ իշխանացն՝ մարզպանին Սահակայ և սպարապետին Հայոց Վահանայ, և ամենայն նախարարացն Հայոց և ռամկացն, գիմեալք միաբանութեամբ ի տունն Աստուծոյ, որոյ հզօր է զօրութիւն իւր, գոհանային. երկիր պագանէին միայնոյ ճշմարտին Աստուծոյ և անընդդիմակ հրամանի կամաց իւրոց: Եւ երանելի կաթուղիկոսն Հայոց Յոհան տայր սաղմոսել ի սաղմոսէն քսաներորդէ իններորդէ. «Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և տէր եղեւ ինձ օգնական. Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն: Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի եւս զղջացայց, տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ»: Եւ կատարեալ զպաշտօնն՝ զատիկ ուրախութեան առնէին, նախ հոգալով զաղքատաց յագուճին նկատէին, և ապա ինքեանք ուրախանային ցընծալից ուրախութեամբ:

Եկեալ հասանէին և զօրքն ի պատերազմէն, պատմելով զնորոգ Աստուծոյ զօրութեանն յաղթութիւն՝ շնորհեալ նոցա զմեծ յաղթութեանն անուն, և զթշնամեացն տալ զխորտակմանն և զամօթոյ զվիճակն. և փառաւորելով զՔրիստոս՝ համբուրէին զմիմեանս ողջունիւ ուրախութեան, և անհոգ խաղաղութեան ի հանգիստ ձմերանոյն մտանէին. հոգային առ գարունն զպատրաստութիւն պատերազմին:

Է. Եւ դեսպան ստիպով առ Թագաւորն Վրաց Վախթանգ առնէին, տալ նոցա Հոն ըստ բանի խոստմանցն իւրոց: Եւ նա ժամավաճառ բանիւք երկայնէր զասացեալսն իւր. և ապա ուստեք ժողովէր Հոնս երեքհարիւր, և առաքէր ի Հայս. և չեւ եւս անցեալ ամիս մի ի ձմերանոյն՝ փոյթ պատճառագրութեամբ անդրէն առ ինքն կոչէր: Եւ մայր աշխարհիս Հայոց զօրութիւն օգնութեան՝ Քրիստոս, յոր ապաւինեալն էին և յուսային. այլ ի մարդկանէ ոչ ոք էր որ օգնէր նոցա:

Առաքէր զօրավարն Հայոց մամիկոնեանն Վահան՝ յերեւելի և յականաւոր ազգն Արծրունեաց, և յազգս գաւառին Անձեւացեաց և Մոկաց և առ ազատորեարն Ռշտունեաց. տայր գիտել՝ եթէ ո՛րպէս յառաջնումն օգնեաց Աստուած յուսացելոց իւրոց, և ասէր. Թէ՝ Զճշմարիտ և զարդար օրինացս մերոց զհաւատ և զքարոզութիւն՝ և իւրաքանչիւր ոք ի ձէնջ քաջ գիտէք, և ոչ էք կարօտ յումեքէ ուսանել, այլ և զտոչորումն իբրեւ զհնոց մոլորութեան մոգուցն. տեսէք՝ Թէ ո՛րպէս առեալ այրեաց զամենեցուն ոգիս բաց ի սակաւուց։ Արդ աւադիկ եհաս ժամ արդար մշակին Քրիստոսի, որոյ առեալ ըղհեծանաց սրբել զկալ իւր, և զցորեանն մաքրեալ՝ յերկնից շտեմարանս ժողովէ, և զյարդն անշէջ յաւիտենից հրոյն մատնէ յայրումն։ Եւ արդ որ ոք կամի լինել ցորենահատ՝ ընծայեսցէ զինքն Աստուծոյ

և կեցցէ. և որ ոք յետս ընկրկեալ յարգեսցի, յաւիտենից և անանց գեհենին եղեալ լուցկիք՝ այրեսցի և մի շիջցի։ Եւ ես ոչ զոք բռնաբարելով քարշեմ յօգուտ իւրաքանչիւր անձին, այլ յորդորելով յիշեցուցանեմ ամենեցուն զփրկութիւն և զկորուստ, որ դիպի յայցելութեան աւուրն։ Քանզի որ ոք խոստովանի զճշմարտութիւնն, փրկի ի գեհենէն. և որ ոք սայթաքեալ մոլորի յուղղորդ ճանապարհէն. զանդիտա կորուսան կորնչի։ Արդ որ ոք հոգացեալ խնդրէ զգիւտ անձին և տենչի անմահ կենացն լինել ժառանգորդ, եկայք խնդրել զվրէժ եկեղեցւոյ Թշնամանաց, որով Թըշնամանեցաւ ի բազում ժամանակաց և ամաց յարհամարհող ուրացողացն։ Եւ որք խորհիք զմարմնոյ երկիւղ, և ծառայել ցանկայք մոլորութեան բարբանջմանցն, բնակեսցէք ի խաւարի՝ չեղեալք արժանի հայել յարդարութեան արեգակն Քրիստոս, այլ ինձ հոգողապէս բողոքոյս հատուցէ վարձս վարձահատոյցն Քրիստոս։

Եւ լուեալ զայս պատգամ չորեցունց գաւառաց նախարարացն, կէսքն փափաքեալք աջոյ կողմանն՝ գրոհ տուեալ ընթանային ի հօտ ոչխարացն ժամանել. և այլք ընդ դասակս այծեաց ձախակողմեան հազորդեալք՝ գնային անդարձութեամբ ի խաւարն արտաքին։ Ո՟ն յԱնձաւացի նախարարացն՝ սեպուհ մի՝ որում անուն էր Յոհան, և միւս եւս Երուանդունի՝ Ներսեհ անուն, միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան, ընդ որս և հաւանեալ և այլ արք ճշմարտութեան նուիրիչք, գընային խառնել ի գունդն զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի։ Եւ մինչդեռ ժողովեալ գնային ի ճանապարհի, մերձեալք ի քաղաքագեօղն՝ որ կոչի Առեստ, ի ժամանակի քառասնորդացն պահոց՝ ի մեծի շաբաթու զատկին, յանկարծակի յանզգաստից եկեալ հասանէին ի վերայ նոցա իշխանն Անձեւացեաց Սեւուկ անուն և իշխանն Մոկաց Յոհան անուն, բազում այրուձիով, ընդ առաւօտուն ծագել։

Եւ սոցա զգացեալք՝ կէսքն զինեալք և կէսքն թէպէտ անպատրաստք էին, այլ օգնութեամբ Բարձրելոյն քաջալերեալք՝ հարկանէին ի դիմի աներկիւղապէս. և նախ Ներսեհ Երուանդունի յարձակէր ի վերայ իշխանին Մոկաց Յոհանայ, և հարեալ նիզակաւ, օգնելով նմա և Անձաւացւոց սեպհին Յոհանայ, յերկիր կործանէին։ Որոյ ասացեալ էր երբե՟ն հպարտաբար պարծելով զԱնձեւացի սեպհէն Յոհանայ, թէ նմա որպէս կովու՝ բայց թէ անուր եւեթ պիտի արկանել. այլ նա ո՞ւմ պիտոյ է յայլ իրս յօգուտ կամ ի վնաս։ Եւ լուեալ պատասխանի յազգակցէն Յոհանայ՝ յիշխանէն Անձեւացեաց Սեւկոյ, թէ՝ Ջանուրն ես բերեմ, բայց արկջիր դու ի պարանոցն։ Որ յաղագս ամբարտաւանութեան բանիցն՝ հարեալ կովուն եղջերբն չարաչար, ընկեաց յերկիր յերիվարէն և կոխեաց։ Եւ զայն տեսեալ զօրացն բազմութեան՝ ի փախուստ դառնային. զորոց զհետ եղեալ՝ զոմանս սպանանէին և զմնացեալսն փախստականս արարեալ ցրուէին աստ և անդր։ Եւ անդէն յայտնապէս ճանաչեալ և փառաւորեալ զԱստուծոյ զօրութիւնն, որ անկազմ սակաւուքն զայնչափ բազմութիւն զօրացն ցրուեաց, վեր ի վայր պատմեալ հնչէր լուր անկարծելի գործոյս այսորիկ յամենայն աշխարհիս Հայոց, առ հզօրին Աստուծոյ։

Եկեալ այնուհետեւ սեպուհն Անձեւացոցն Յոհան և Ներսեհ երուանդունի և արքն որ ընդ նոսա, յորոց ձեռն արար Աստուած զնշանսն և զզօրութիւնսն, և տեսեալ զնոսա սրբոյ կաթուղիկոսին Յովհաննու, տօն ուրախութեան և պատարագս ընդունելիս մատուցանէին առաջի Աստուծոյ, որ շնորհեացն զյաղթութիւնն, և բարձրացոյց զպարծանս եկեղեցւոյ միոյ սրբոյ, և ողջունեալ զնոսա ուրախանային ի Քրիստոս։

ՂԱ. Եւ անցուցեալ զաւուրս դառնաշունչ ձմերայնոյ ցրտոյն, հասանէին գարնանային ժամանակի օդոյն բարեխառնութեան. լսէին թէ զօր բազում խաղացեալ գայ ի Պարսից, եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ և Զարաւանդ գաւառի բազում զօրագլուխք, որք էին այսոքիկ. Սուրէն պալհաւ, և Ատրներսեհ փուշտիպանացն սաղար, և Վինի-Խոռեան, և Ատրվշնասպն Խոսպեան, և Գդիհոն Սիւնեաց տէր. և ի սոսա թէպէտ և ըստ դահոյ էր ոք ի վեր, այլ հրամանատու և աւագ զօրուն՝ Փուշտիպան սաղար էր։

Փութացաւ և զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, առեալ ընդ իւր և զսուրբ հայրապետն Հայոց զտէր Յոհան, յուսալով յաղօթս առնն՝ թէ ամենայն ինչ ըստ նորա կամելոյ կատարի յԱստուծոյ, և գումարեալ զզօրսն Հայոց ճեպէր հարկանել ի գլխի. և անդէն զայն տեղեօք թերևս ոչ, ասէր, լեցի անցանել բազմութեանն Պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց: Եւ առեալ ընդ իւր զնախարարսն և զազատս և զայլ ամենայն ռամիկն՝ որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին. և չուեալք ի Դունայ զօրքն Հայոց՝ ըստ աւուրց օթևանացն երթեալ հասանէին ի գաւառն յԱրտազ, և մօտեալք ի գունդն Պարսից՝ բանակէին ի գեղ մի՝ որում անուն էր Ներսեհապատ:

Եւ սուրբ կաթուղիկոսն Յոհան հրաման տայր ամենայն գնդին Հայոց ջերմեռանդն խնդրով պարապել աղօթից զգիշերն ողջոյն, և խնդրել ի մարդասէր Փրկչէն՝ բարձր առնել զանուն իւր մեծ ի մէջ բազմութեան ժողովելոցն հեթանոսաց, տալ բաժին պարծանաց ծառայից իւրոց, և զմասն ամօթոյ՝ ուրացողացն դասու: Եւ այնպէս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, սքանչելի ասպետաւն Սահակաւ մարզպանաւ, և ամենայն զօրօքն Հայոց, յորդոր սրտիւ խնդրելով յԱստուծոյ օգնութիւն, կատարէին զսահմանեալ ժամս գիշերոյն. և հասեալք ի լոյս առաւօտուն, սուրբ կաթուղիկոսն Հայոց Յոհան օրհնէր զամենեսեան, քաջալերեցուցանելով ասէր. Յուսացեալքն յԱստուած ոչ երբէք ամաչեցին. և ընտիր անօթ Սուրբ Հոգւոյն գոչէ համարձակաձայն բարբառով և ասէ. Յոյս երբէք ոչ ամաչեցուցանէ, յորոց սիրտ՝ սէրն Աստուծոյ սփռեալ է: Զօրացարուք ի Տէր և ի զօրութիւն բազկի նորա, և կարող լինիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել, զերևելիս և զաներևոյթ: Եւ մի ոք ի բազմութիւն զօրու անօրինացն հայեցեալ զարհուրեսցի ինչ. վասն զի լինելով ընդ ձեզ Աստուած, բազմագոյնս զձեզ ցուցանէ նոցա. և շարժեալ իբրև զխոխ ի սաստիկ հողմոյ ցրուեալ ընդ երեսս դաշտացդ և բլրոց՝ վեր ի վայր կորուսանէ: Արդ օրհնեսցէ զձեզ աջ հզօրին և զօրացուսցէ զձեզ, առաջնորդեսցէ և յաղթող արասցէ. նմա փառք և Որդւոյ իւրում, և Սուրբ Հոգւոյն, յամենայն յաւիտեանս. ամէն:

Եւ տուեալ ամենեցուն զամէնն, պատրաստեցան ի պատերազմ. և զինեալ գունդք Հայոց ընդդէմ թըշնամեացն, լինէր և երանելին Յոհան յաղօթս: Սկսանէր այնուհետև զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան յօրինել ըստ պատշաճի զիւրաքանչիւր կողմն ճակատուն: Զմիջոց կողմն բազում այրուձիովն տայր ի ձեռն լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի. և ի կողման աջոյ թևին կարգէր զԲաշղ վահեւունի և զԲաբգէնն սիւնի և զԱտոմ գնունի և զՓապակն պալունի, իւրաքանչիւր այրուձիով և այլ եւս յաւելուածով. և յաջեկէ կողմանէ համդերձ ուխտասէր Կամսարականօքն և իւր սիրելի եղբարբքն՝ Վահանաւ, Ներսեհիւ և Հրահատաւ. և ընդ աջմէ՝ իւրաքանչիւր այրուձիով գընդացն՝ կազմէր զինքն: Պատրաստէր և զայլ արս աւագս ընտիրս այրուձիով համդերձ և Վրենաւ վանանդացւով. առ որս և առաքէր զՊապ Արտակունեաց՝ զայր ոստանիկ՝ զորդի Բաբոցի, ասել ցիւրաքանչիւր աւագս, թէ՝ Զնշանս հզօրագոյն արանց՝ զոր յառաջագոյն տեղեակ եմք զարանց Պարսկաց և զԿադշաց և զգնդին Սիւնեաց, տեսանեմ զի դէպ ի մեզ դիմեալ գան. արդ դուք մեղմով երթայք, և ուշադրեալ հայեցարուք ի մեզ. թող մեզ նախ լինի յարձակել. և եթէ շնորհիւն Քրիստոսի մեք զմեր կողմն շարժեալ փախուցանեմք. ապա այլ կողմանքն մեր և ձեր առաջի ոչ կարեն կալ:

Եւ Պապայ տարեալ զպատգամն

սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի՝ առ իւրաքանչիւր աւագս կողմանցն, թէպէտ և կամէին ըստ հրամանի զօրավարին առնել, այլ ստիպով հասեալ գունդն Պարսից յիւրաքանչիւր թեւ կողմանցն, ոչ տային պարապել, այլ գլորեալ ըզկողմն աջոյ՝ ուր Բաշղն վահեւունի էր, փախուցանէին: Եւ տէր Սահակ ասպետ յարձակեալ նիզակաւ ի վերայ փուշտիպանաց սալարի՝ վրիպեցին ի միմեանց զնիզակն երկոքեան. և մօտեալ առ միմեանս երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց և կռուէին: Եւ տեսեալ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի՝ թէ աղմկեցան զօրքն Հայոց և տկարացան առաջի թշնամեաց, ձայն արարեալ առ Վրէն վանանդացի՝ Յառաջեա՛, ասէ, ի վերայ թշնամեացն, և ձեռն ի գործ արա պատերազմել. և նորա զարհուրեալ ասաց, եթէ Ոչ եմ կարող, յիս ինչ մի ապաստան յայսմ ժամու դու մի

լինիր: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի զօրացեալ սըրտիւ, և նշանաւ խաչին կնքեալ զինքն՝ հանդերձ կամսարականօքն երկոքումբք, յարձակէին ի վերայ հասելոց նոցա թշնամեացն. և ոչինչ բնաւ տեւեալ կալ առաջի, այլ շարժեալ սաստկապէս զկողմն իւրեանց ի փախուստ դարձուցանէին. և առեալ զթեւն զայն՝ արկանէին զմիւսես թեւոյն զմիջոցի կողմանն. և արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգունդսն, անթիւ բազմութիւն արանց քաջաց ի փոքր լանջակողմանն դիաթաւալ յերկիր կործանէին, և սաստիկ արեանց հանէին ճապաղիս: Բայց միայն Վինն Խոռեան երկու այլ զօրաւոր նիզակակցօք զօրու՝ դարձեալ ընդդէմ խիզախէր. ուր անդէն առ նմին քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան՝ սատակէր հզօրեղապէս. և զԱտրվշնասպն Տապեան՝ տէրն Շիրակայ Ներսեհն կամսարական, և այլքն ամենեքեան իւրաքանչիւր զբազում աւուրս քաջս ընկեցեալ յերկիր կործանէին: Եւ հայեցեալ յայն գունդն՝ Բարշլի և այլ փախստէիցն Հայոց, և տեսեալ թէ բեկաւ ույժ զօրու գնդին Պարսից, և երթան փախստական առաջի գնդին զօրավարին Հայոց Վահանայ, ոգի առեալ զօրանային, և դարձեալք անդրէն և զկնի հալածչացն եղեալք զբազումս սպանանէին, և զբազումս արկեալ առաջի՝ հալածականս առնէին: Եւ լինէր առաւելագոյն թիւ կոտորելոցն ի գնդէն Պարսից, քան թէ զերծելոցն փախստէից. վասն զի շատ եւս լինէր համար մեռելոցն ի տեղիս տեղիս վիրաւորացն, քան թէ կոտորելոցն ի գնդէն Պարսից անդէն ի տեղւոջն պատերազմին:

Եւ դարձեալ գունդն Հայոց բարի անուամբ և բազում փառօք, լաւ աւարաւ և սաստիկ ընչիւք առ պատուական կաթուղիկոսն Հայոց Յոհան ի բանակն, փառաւորելով և օրհնելով զաւուրն այնպիսի յաղ-

թութեան զՔրիստոս. որոյ ընդ առաջ ելեալ յաղթող գնդին ցնծալից սրտիւ օրհնէր զնոսա օրհնութեամբ բազմաւ, և զուարճացեալ ոգւով զօրութեամբ սուրբն, և ասէր ցամենեսեան. Ուրախ եմ յոյժ, և բանիւ վճարել զխնդութիւնս սրտի ոչ կարեմ: Բայց եւս առաւել զուարճացեալ բերկրիմ տեսանելով զԱստուած հաշտ ընդ ձեզ. քանզի յաղթութիւնս խնդացուցանէ զիս, այլ եւս առաւել բերկրիմ՝ զՔրիստոս տեսանելով գործակից ձեզ, որ ետ ձեզ յաղթել, և ամաչեցոյց զհակառակորդս արդարութեան: Եւ Աստուած որ զօրացոյցն զձեզ այժմ, նա զօրացուսցէ զձեզ հանապազ, և եղեալ ընդ ձեզ՝ մի թողցէ զձեզ մինչեւ ի սպառ:

ՀԲ. Եւ մինչդեռ զօրացեալք ցընծալից սրտիւք դարձեալք գային ի գործոյ պատերազմին, զոր վճարեալ էհան ի գլուխ ազդեցութիւն Վերնոյն ըստ կամաց հայրապետին սրբոյն Յոհաննու և ամենայն զօրացն Հայոց, երրորդ ուրախութիւն մեծ և լուր յանկարծակի աւետեաց տարածեալ քարոզէր ընդ ամենայն բանակն Հայոց: Եւ եկն Վարդ ողջ զերծեալ ի կապանացն զօրութեամբն Աստուծոյ՝ եղբայր զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի. և լցեալ այսպիսի աւետաւոր համբաւով ընդհանուր աշխարհս Հայոց, գրոհ տուեալ փութայր ամենայն ոք ի մեծ այցելութիւնն՝ զոր արար Աստուած աշխարհիս Հայոց. յորոց բազումք առ խնդին՝ իբրև տեսանէին զանհաւատալի տեսիլն, յերկուացեալք՝ կերպարան և ոչ ճըշմարտութիւն զերան կարծէին: Բայց յիշելով զԱստուծոյ զօրութեանն զանընդդիմակայ սքանչելիս՝ փառս միայն և երկրպագութիւնս մատուցանէին ամենաշնորհին, որոյ կամելութեան և հրամանի ամենայն դըժուարինք և անհնարինքն դիւրինք են և հնարաւորք. յիշելով զցօղադարձութիւն հնոցին ի Բաբելոնի, և զսառնաշէն պարիսպն եգիպտական Կարմիր ծովուն, զդառնալն ընդ կրունկն Յորդանանու, և զանկումն Երիքովի պարսպացն աղաղակաւ: Այս ամենայն յիշմունք հաւատացեալ խորհրդոց՝ դրուատս միայն գովութեան ընդունելի աղօթիւք մատուցանել յօժարեցուցանէին ամենահզօրին, որ առաւելագոյնս քան զսուրբ առաքեալն Պետրոս արար զզօրութիւնն: Վասն զի զնա անձամբ միայն հանեալ հրեշտակին՝ արձակեաց զերծանել յաճումն քարոզութեան կենաց. իսկ զայրն Մամիկոնեան զՎարդ՝ ոչ միայն լոկ անձամբ, այլ և ծառայիւք, դրամբ, և կազմածով յամուր տեղեաց շահաստանին, ի բարձրաբերձ պարսպացն և յապարափակ բաղմութենէ պահապանացն՝ ընկալեալ իբրև զարծուի ի թեւս իւր և ընդ բազում անցուցեալ օթեւանս, ածեալ հասուցանէր խաղաղութեամբ ի յերկիրս Հայոց:

Յայնժամ ծանուցեալ յիշէին ուխտակիցք՝ արք աստուածասէրք՝ զերդումն մամիկոնէին Վահանայ, զընդունելութիւն Աստուծոյ գործին նորա և վկայութեան և հաւատոց, զոր ասաց յաւուր միաբանութեան առաջի սրբոյ Աւետարանին. Թէ արդարև, ասէ, ծանուցեալ Աստուծոյ զբազմաժամանակեայ զթախանձ և զփղձկումն սրտի իմոյ, զոր հառաչէի յոգոց հանելով ի մոլորութեանն, և ընկալաւ զպտուղ շրթանց խոստովանութեան իմոյ, և հաճոյ եղև ամենագիտին խորհուրդս իմ և ուխտ, ապա ըստ իւրում զօրեղ տէրութեանն արարեալ յիս նըշան բարի՝ տացէ ինձ մերձ ընդ մերձ տեսանել ինձ զեղբայր իմ զՎարդ և ուրախանալ։ Եւ էր այնուհետև լսել յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, ի վկայարանս սրբոց, ի տօնս և ի ժողովմունս միաբանութեան, ի բերանոյ քահանայից և միաբան ամենայն ժողո-

վրդոց, յարանց և ի կանանց առհասարակ, թէ՝ Զինչ բարի, կամ զինչ վայելուչ, այլ բնակել եղբարց ի միասին։ Եւ առ սատակապէս բեկումն թշնամեացն և բարձրանալ սրբոյ եկեղեցւոյ՝ ասէին սաղմոսելով. Նոքա խափանեցան և անկան, մեք յարեաք և ուղիղք եղեաք. և ամենայն եղջիւրք մեղաւորաց փշրեցան, և բարձր եղեւ եղջիւր արդարոյն։ Եւ շնորհակալութեամբ գովութիւն ի մէջ առեալ ասէին. Այլ մեք ժողովուրդք և խաշն արօտի քո, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան. ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւն քո։

ՀԳ. Իսկ յետ աւուրց ինչ բազմաց անցելոց՝ տեսեալ իմաստախնդիր մարդոց և հանճարեղ անձանց զպսակումն քաջ սեպհին Մամիկոնէից զսրբոյն Վասակայ, զեղբօր զօրավարին Հայոց Վահանայ, անդէն և անդ ծանեան՝ թէ վասն զի մերձ ուրեմն էր կատարումն սրբոյն. որ և խնդրեաց յԱստուծոյ սուրբն Վասակ տեսանել ի մարմնի զեկս անձկալի եղբօրն իւրոյ Վարդայ, և տալ զօր ըղձի խնդրոյ իւրոյ ըմբռնել ցնծալով։ Եւ ամենահզօրն Աստուած եղեւ փութով կատարիչ խնդրոյ սրբոյն իւրոյ, ոչ ինչ յերկարեալ յապաղեաց զկամս առնն. այլ վաղվաղակի և ճեպով ընկալեալ զխնդիրն, և ածեալ զեղբայրն զՎարդ և ցուցեալ նմա և ամենեցուն, եթող ողջամբ առ մնացեալ կենդանի ծառայսն իւր. և զսուրբ վկայն իւր զՎասակ փոխեալ առ ինքն, պսակեալ բնակեցոյց յարքայութեան խորանսն, ընդ հրեշտակս յերկինս։

Գային հասանէին այնուհետեւ ի Ծաղկէոտն. և կամեցեալք առ վայր մի հանգչել ի ջերմկին՝ որ կոչի Վարշակի, գայր հասանէր գեսպան ի Թագաւորէն Վրաց Վախթանկայ, թէ գունդ սաստիկ եհաս յերկիրս Վրաց, և իմ տեսեալ թէ ոչ եմ

կարող կալ առաջի, խոյս տուեալ ի լերինս Հայոց՝ մօտ ի սահմանակցութեանն Վրաց՝ մնամ ձեզ։ Եւ նամակ ունէր գրեալ ի Վախթանկայ խաբէութեամբ, թէ Հոն գնդի հրաման ետու գալ, և չեւ եւս հասին. բայց մինչ դուք գայք՝ հասանեն. և այնուհետեւ դուք և մեք և Հոնք՝ զնոսա կորուսանեմք։ Բայց թուի ինձ՝ թէ յորժամ Հոն հասանէ, մեզ բնաւ և աշխատել ինչ ոչ հասանէ, նոքա իսկ վճարեն ըզգործն, զի անչափ բազմութեան հրաման ետու գալ։

Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և ամենայն ուխտ տանուտերաց և սեպհացն Հայոց, վասն զի երդուեալ էր Աւետարանաւ և խաչիւ ընդ Թագաւորին Վրաց Վախտանգայ, յարուցեալ վաղվաղակի և անյապաղ ամենայն զօրքն Հայոց առ արքայն Վրաց հասանէին. և բանակեալք առ վայր մի ի գաւառին Կանգարաց դադարէին։ Ուր պատրոզական բանիւք խաբէութեան թարթափեցուցանէր թագաւորն Վրաց Վախթանգ զմիտս զօրավարին Վահանայ Մամիկոնէի, և զայլ աւագտանուտերացն Հայոց. մերթ ասելով, թէ Միհրանայ զձեր եկդ լուեալ՝ խոյս ետ ի սահմանաց Վրաց, և յԱղուանս փախեաւ առ երկիւղի. և դարձեալ, թէ՝ Զերկուս աւուրս՝ և գունդք Հոնաց հասանեն. և անցեալ երկու աւուրք ժամադիր խաբէութեանն, ապա յերրորդ և ի չորրորդ օր ձգէր զպատճառադրութիւնն. և յետ այնորիկ յայլ՝ ի վեց և յեօթն օր։ Դարձեալ Սուտեւս տայր արձակել արս ի գնդէն Վրաց և Հայոց, որք իջեալ ի տեղիս ինչ դաշտացն, տայր երևեցուցանել լոյս կրակաց բազմաց և կոճեղս ծառոց զինեալս այրանմանս, ըստ խաբէութեան մակեդոնացւոյ Աղեքսանդրի։ Դարձեալ ասէր. Ոչ գայ գունդն Հոնաց առ մեզ ի լերինս, այլ ասեն՝ թէ սաստ ի դաշտին ած ցոյց

մեզ զՀայս, և ամենայն բանից քոց հաւատամք, զոր քո խօսեալ է ընդ մեզ և երդուեալ. և այնուհետև զոր ինչ և հրամայես առնել մեզ՝ զամենայն կատարեմք. ապա թէ ոչ՝ չհաւատամք թէ Հայք ընդ քեզ միաբան են. բայց թէ արդարև զայս տեսանեմք, այնուհետև զՊարսիկս ի մեզ թողէք, և ձեզ փոյթ մի լիցի։ Արդ թէ դուք ի դաշտն չիջանէք, և Հոն գունդքն վասն ինձ չհաւատալոյ՝ ի վեր ի յաշխարհէն չշարժին ուրեք, և Միհրան դառնայ և զՎիրս աւերէ, ինձ ձեր եկք զինչ օգուտ է։

Եւ Հայոց գնդին՝ վասն զի ուխտադիր էր ընդ թագաւորին Վրաց, զոր ինչ գամ մի ասէր ստոյգ կամ սուտ, ջանային վասն Աւետարանին երկիւղի՝ զամենայն կատարել։ Զի թէպէտ և տօթ էր ժամանակն, հարկաւորեցան իջանել ի դաշտն Ճարմանայնու. և յիշխանացն Հայոց ոմանք ոչ յաջող համարէին զէջս գնդին Հայոց ի Վիրս, զոր թէպէտ և բազում անգամ ասացին, չհաւատացեալ բանի ասողացն՝ լըռեցին:

Եւ իջեալ գունդն Հայոց ի Վիրս, և բանակեալք յառաջագրեալ տեղիսն, և չեւ եւս անցեալ աւուրք երեք կամ չորք. գայր հասանէր Միհրան և բանակէր դէմ յանդիման բանակին Հայոց, մօտ ի բանակն յայնկոյս գետոյն, զոր Կուր գետն անուանեն. և բանակն Հայոց չուեալ յայլ տեղի հեռագոյն ի բանակէն Պարսից, և առնէին զիւրեանց օթեւանին տեղին: Եւ բազմաց ի գնդէն Հայոց ի գիշերին յայնմիկ մոռացեալ զերկիւղ ուխտին Աստուծոյ, և զահաւոր երդումն Աւետարանին առ ոտն հարեալ, պատգամագնացութեամբ գաղտ խօսեցան ընդ իւրաքանչիւր ոք սիրելիս զօրացն Պարսից, թէ՝ Մեք ի բռնութենէ զօրավարիս Հայոց Վահանայ, և ոչ սրտի կամաւ անկեալ եմք յիրս

յայս, արք թուով. բայց միտք մեր և խորհուրդք առ ձեզ են. և գիտեմք եթէ ի ձերմէ ծառայութենէ չեմք ելանելոց, այլ վասն անձանց մերոց որսացեալ աճեցուցաք ցայժմ զվնասս ի մեզ: Բայց արդ եթէ չյիշիցէք զայս բանս մեր երբեք, և առնիցէք մեզ թողութիւն, դուք իշխեցէք: Այլ մեք վաղիւն յորժամ ի կռուոյն տեղին գամք, զմեր անձինս և զբազումս և այլս ընդ մեզ փախուցանեմք ի գնդէս: Եւ ընկալեալ երդմամբ ուխտի Պարսկացն՝ հաստատեցին զբանսն:

Եւ հասեալ ի վաղիւն ի տեղի պատերազմին, խօսէր և յայն ժամու արքայն Վրաց ընդ զօրավարին Հայոց Վահանայ և ընդ այլ աւագտանուտերս և ընդ սեպուհս Հայոց, և ասէ. Լաւ եղեւ մեզ կռուել այսօր ընդ զօրս Պարսից. քանզի մեք իսկ բաւական եմք սոցա, և չըկարէն կալ առաջի. բայց թէ այսօր եւս հեղգացեալ էր մեր, գոլոց էին

Հոնք և զանուն յաղթութեան և զօգուտ աւարիս նոքա տանելոց էին։ Եւ մինչեւ ցայնժամ եւս յերկարեալ խաբէր պատիր բանիւք։

ՀԴ. Ապա սրտմտեալ ընդ սուտ և անպիտան խօսս արքային Վրաց՝ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, ծանուցեալ և զթուլութիւն գնդին Հայոց, զոր տեսանէր լքեալս և մեղկեալս, և ոչինչ բնաւ նմանս այլոց ժամանակաց փութոյն և յօժարութեան. սակայն զգունդն զօրացն կազմէր Մամիկոնեանն Վահան ըստ օրինի ճակատուն պատրաստութեան. և տուեալ զկողմն աջոյ ի ձեռս Բարշլի վահեւունւոյ և Սատնի գաբեղենի, և զկողմն ահեակ տայր Վախտանգայ արքային Վրաց, և զմիջոյ կողմն կազմէր զինքն երեքումբք արամբքն որդովք երանելոյն Արշաւրայ, և երանելեաւ տերամբն Գնունեաց. և զերանելին ապեան Սահակ և զախունին Բաբգէն ընդ մէջ իւր և Բարշլի կացուցանէր։

Եւ մինչչեւ դիմեալք ի կռիւն, այլ կային ճակատեալք երկոքեան կողմունքն դէմ ընդդէմ միմեանց՝ Պարսից և Հայոց, և որ զնահատակութեան պսակն ընդունելոց էին յաւուրն՝ եցոյց վերին զօրութիւնն հայեցող աչօք մտացն։ Եւ յառաջ քան զկատարումն՝ յայտնապէս անծածուկ զահագնափոխութիւն երեսացն ի մահկանացու բնական տեսչութենէս ի լուսափայլութիւն վերին զօրութեանցն կերպարանի, և մանաւանդ զքաջութիւն առնն ըզՎասակայ Մամիկոնէի, զեղբօր զօրավարին Հայոց Վահանայ. որոյ փառաւորեալ երեսքն լուսով փառացն Աստուծոյ, մինչեւ բազումք յընկերակցացն որք նիզակակից սըրբոյն էին՝ հայել յերեսն փայլակնացայտ՝ ըստ փառաւորելոյ երեսացն մեծի մարգարէին Մովսէսի՝ ոչ հանդարտէին։ Զոր և իւր իսկ եղբօրն մեծի զօրավարի Հայոց Վահանայ տեսեալ, և մեծապէս զարհուրեալ, անդէն և անդ գիտաց, թէ սա յինէն և ի զազրալի կենցաղոյս այսոր առաւ, և փոխեցաւ յայն բանակ զուարթնոցն, որոյ բանակի զօրացն տեսիլ և կերպարան այս է։

Եւ յարձակեալք ի վերայ միմեանց Հայք և Պարսիկք, թէպէտ և զօրավարն Հայոց Վահան երիւք կամսարական եղբարբք հարեալ ի դիմի իւրոյ թշնամւոյն կողմանն, դիր և տար արարեալ դարձուցանէին ի փախուստ, մինչև տարեալ անցուցանէին զբազումս ի զօրացն Պարսից յայնկոյս Կուրն գետոյն, և զբազումս ի զօրացն Պարսից երեելի արանց զօրուն կոտորէին քաջաբար։ Անդ քաջի սեպուհին Մամիկոնէից Վասակայ հարեալ նիզակաւ ուժեղապէս զայր մի հզօր ի գնդէն Պարսից յերկիր կործանէր․ որ և բեկանէր նիզակն իւր յանկարծակի, և քաջին մամիկոնենի Վասակայ ելեալ ի խնդիր այլում նիզակի և գտեալ՝ դառնայր անդրէն փութանակի ուրախալից։ Եւ պատահեալ նմա կամսարականին Ներսեհի տեառըն Շիրակայ, որոյ և նորա բեկեալ նիզակն՝ ի խնդիր էր այլում նիզակի, և քաջի մամիկոնենին Վասակայ ձայն ի վերայ եդեալ ասէր․ Փութա՛ Ներսեհ, գտանել նիզակ, և դարձիր եկ արագ․ քանզի ոչ երբեք կարեմք գտանել ժամ սքանչելի այսպիսի վաճառու, ուր մահ՝ զանմահութիւն, և առժամանակեայս՝ զյաւիտենականն, և ապականացուս՝ զանապականելի կեանսն․ վաղվաղեա՛, քանզի չեմք կալոց անմահք։ գուցէ վրիպեալ յանուանէ և ի փառաւորեալ կատարմանէս՝ անանուն և անպիտան մահուամբ ելանիցեմք ի կենցաղոյս։ Եւ զայս լուր ի սրբոյ առնէն Վասակայ մամիկոնենէ՝ հաւատոյ երգմամբ պատմէր մեզ բազում անգամ ինքն տէրն Շիրակայ Ներսեհ կամսարականն։

Եւ մինչդեռ զօրավարն Հայոց՝ մամիկոնեանն Վահան այսպէս մրցէր հանդերձ երանելի եղբարբն Վասակաւ և երկոքումբք որդւովքն Կամսարականին Արշաւրայ, յանկարծակի փախուցեալք առ հասարակ սրանային գունդքն ամենայն Հայոց և Վրաց. որոց բազումք ի նենգաւորացն ապաղակէին առ միմեանս անհանգիստ, թէ փախեան Հայք, անձնապուրծք լերուք: Եւ վասն զի ոչ ըստ փութոյ և յորդոր խնդրոյ շնորհիւր ի ժամուն վիճակ մարտիրոսութեան ի վերին զուգակշռող աջոյ ամենագիտին, ըստ ծածուկ և անքննին իւրոյ կանխատեսութեանն, քաջի զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և այլոց ընդ նմա ուխտապահ ընկերացն, որ ախորժելով տենչէին բաժակի մարտիրոսութեան, և չգտան արժանիք, դարձուցեալ այնուհետև զերասանակս երիվարացն՝ դնային և նոքա զհետ փախստէիցն Հայոց: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի եկեալ պատահէր Բաբգենայ սիւնոյ, անկելոյ ի զօրացն Պարսից կարեվէր. զոր հեծուցեալ ի վերայ իւրոյ նժուգի և հանեալ ի պատերազմէն ապրեցուցանէր: Բայց որք ընտրութեանն ցանկացողք եղեն և արժանիք ընդ սրբոյ ասպետին Սահակայ և ընդ սրբոյ քաջին Վասակայ Մամիկոնենի, և կատարեցան յաւուրն, և անուանքն են այսոքիկ[1]...: Իսկ զօրքն ամենայն Հայոց, ընդ որս և անպիտան զօրքն Վրաց, հանդերձ Թագաւորաւն իւրեանց Վախթանգաւ՝ վանեալք ցրուէին. զորոց զկնի հետամուտ եղեալ գունդքն Պարսից՝ զբազումս կոտորէին, և բազումք յայլ և այլ տեղիս զերծեալ ապրէին:

Բայց զՀրահատն կամսարական՝ սաստկապէս վազս առեալ երիվարին իւրոյ՝ ընկենոյր, և հասեալ Պարսկացն՝ մինչդեռ էր հետիոտս, կալեալ ածէին առ Միհրան. զոր տեսեալ Միհրանայ՝ մեծապէս ուրախացաւ: Պատուհասէր զնա բանիւք խստութեան, և կապեալ տայր պահել զգուշութեամբ. և ուր երթայր յաշխարհին Հայոց՝ ընդ իւր շրջեցուցանէր: Ընդ որս կալան և սեպուհ մի Սիւնի, որում անուն էր Յազդ, և զայլս ոմանս ի Վրաց աշխարհէն:

---

[1] Ոչ միայն անուանքն պակասին, այլ և դէպք մահու Սահակայ ասպետի և նորին իսկ Վասակայ Մամիկոնենի.

ՃԵ. Իսկ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան երթայր առ վայր մի յամրագոյն տեղիսն Տայոց. ուր և սինլքորք փախստէիցն Հայոց առ նա ժողովէին, և այլք ի նախարարացն Հայոց. այլ Կամսարականքն երկոքեան ընդ նմա իսկ էին միշտ, և անքակ ի նմանէ և միաբան: Զօրոց զհետ եկեալ Միհրան գնդաւն իւրով, և ջանայր կամ սպանանել պատերազմաւ, և կամ ունել հնարիւք, և կամ հաւանեցուցանել և նուաճել:

Եւ էր բանակ սաստկութեան զօ-

րաւն Արեաց ի գեօղն որ անուանի Դու, ի սահմանակցութեան Պարսից և Հոռոմոց: Եւ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան մերձ ի նա իբրև երկուք հրասախօք, ի գեօղ մի որ կոչի Մկնառինձ, արամբք որպէս թէ հարիւրովք, և թերևս սակաւուք և կամ յոլովիւք: Եւ Միհրան այնչափ հազարօք առ նա բանակեալ էր մօտ, և տեղին ուր զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան էր՝ յիշխանութեանն Պարսից թագաւորին էր. և այնչափ սաստկապէս զեղեալ էր Աստուծոյ զմեծ շնորհ զօրութեան իւրոյ ի վերայ քաջի առն Վահանայ Մամիկոնէի, զի ի մէջ այնչափ բազմութեան գնդի և ի զօրաւոր քաջօրերոյ՝ գողացեալ սարսեալ կայր Միհրան գնդաւն, փակեալ ընդ երկիւղագին ահիւ Վերնոյն. և չիշխէր դիմել ի վերայ և սպանանել զոր կամէր, և հալածել և կորուսանել զմնացեալ փախըստեայն. այլ բանիւ ողոքանաց պատգամաւորէր ընդ նմա համապազօր ի խաղաղութիւն, ասելով. Թէ՝ Մի կորնչիր, և յարքայից արքայի ի ծառայութենէ մի ելաներ, և զաշխարհս Հայոց մի տար ի վտանուածս. ի հնազանդութիւն եկ թագաւորին, և ես միջնորդ լինիմ. քանզի վասն իւրոյ բարերարութեան սիրէ զիս, և բանից իմոց լսէ. և ես աղաչեմ զթագաւորն, և հաշտեցուցանեմ ընդ քեզ, և ինչ որ արժան է տալ քեզ՝ ջանամ զի տայ:

Եւ սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի պատասխանի արարեալ ասէր ցՄիհրան. եթէ Արեաց տէր որ լինի՝ արդար աչօք պիտի նայել յամենայն մարդ իբրև զթագաւոր, և արդարապէս տեսանել և արդարապէս լսել, ըստ արժանի թագաւորի: Բայց այր թագաւոր՝ որ ուղիղ աչօք չհայի ի ծառայս, և ուղիղ լսողութեամբ չլսէ ուրուք ըղբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի և ոչ ըստ արժանի իրաւանց

քննութեան. այլ առաւել ևս՝ որ կարի դժնդակագոյն է և աշխարհի կորստեան պատճառ, և համապազ զայն առնէ, և կամի տեսանել այլոյ աչօք, և լսել այլոյ ականջօք, ծանր է ծառայութիւնն այն և դառն, և վտանգ՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի: Վասն զի տէր որ յիւր ի ծառայից զլաւ և զվատթար չգիտէ ընտրել, և ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյսն ոչ կամի, այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել: Արդ Հայոց աշխարհս որպիսի՛ մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցո՛յց ինձ այր մի յայսպիսի աշխարհի՝ որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ ի տանուտէրութիւն. այլ որեար աւազակ և անպիտան, հացկատակք և վատտոհմիկ, որ գան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն, և ընդ կրակի՝ փառս գնեն և տէրութիւն. և ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՛ միզեն ի կրակն, և յանթեղ զաղբ իւրեանց արկանեն, և զվաճառականն և զվաճառն ի միասին թշնամանեն: Եւ այլ լաւութիւն և քաջութիւն և միտք և գիտութիւն՝ որով աշխարհ շինի և ի միջի լինի, այն չխնդրի և արհամարհեալ է. այլ անպիտան և վատատոհմիկ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յարգի, և դուք առ ճանաչող ունիք զձեզ: Լուեալ է քո, որ Միհրանդ ես՝ և ամենայն Պարսից, զբանս զայս յԱրեաց տեառնէն ի Պերոզէ՝ առաջի ամենեցունց յատենի. Թէ՝ Այր վատ և գունդ անպիտան Ասորի է, բայց քան զասորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անպիտան: Եւ ո՞չ արդեօք լաւ էր մահ՝ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ: Եւ արդ իմ երկուս կռիւս արարեալ է ընդ արի մարդկան, և երրորդն այս է՝ որ ընդ քեզ արարաք. և ընդ որս զերկուս կռիւսն արարաք՝ ընդ այնպիսի երևելի և քաջ մարդկան

կռուեցաք, զոր ինքն Արեաց տէրն և ամենայն Արիք ճանաչէին՝ թէ որպիսի արեար էին: Եւ օտար մարդոյ մեզ չէր օգնեալ, Հոնի կամ Հոռմի և կամ այլ ազգի ուստեք մարդոյ, բայց միայն այս Հայոց՝ զոր դուք գիտէք, սոցա վճարեալ է զայնպիսի մեծ գործ, զոր դուք ամենայն Արիք լուայք և տեսէք. և ոչ բազում այրուձիոյ, այլ հարիւր արամբ և կամ եւս նուազիւ՝ զհազար և զերկուս հազարս այր փախուցեալ է սոքօք: Եւ յայսմ կռուի՝ մի զայս զմտաւ ածեալ պարծիք. թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ. այլ ի մեր երկպառակութենէ և ի նենգելոյ եղեւ մեզ վնաս: Զի թէ էր այս հայ գունդ՝ յորոյ վերայ ահ և երկիւղ էր, որպէս Արեաց տեառն յիւր ծառայի վերայ, և յիմում ձեռին այսպէս էին՝ որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ, և համարձակապէս իշխէի զվատացեալսն ի կրռուի տամբ և կենօք հարցանել, և գլխով պատիժ առնել և քաջացելոցն կարէի բարի առնել և պատիւ տալ, ցուցանէի Արեաց տեառն և ձեզ ամենեցուն՝ թէ ո՛ր կարի գունդ յԱրիս անուանի էր և լաւ. բայց եթէ լաւագո՛յնք եւս և քաջք երեւէին. այլ ի խոնարհ սակաւ մի և նուազ չտայի երեւել: Բայց արդ՝ զոր ձեր ի վատ տոհմէ և յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք, դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն: Զի գնդի՝ որոյ զօրագլուխն վատ է, գնդին լաւ լինել չէ հնար. և աշխարհի՝ որոյ իշխանքն յետին են, աշխարհին այնմ անհնար է յառաջադէմ և անուանի լինել:

Իսկ յաղագս իմ դուք ամենեքեան գիտէք, զի ի հարցն իմոց ես աղայ մնացի. ոչ զվաստակս նոցա՝ որ առ Արեաց աշխարհն լեալ է՝ գիտեմ, և ոչ յանցման նոցա հաղորդ

ինչ էի: Բայց մինչ ես յանձինս ըզգացի, և ձեզ Արեաց տեառնն արբանեկութեան արժանի եղէ, ի մտի եդի առաջի Աստուծոյ և մարդկան՝ արդար մտօք Տեառն և ձեզ ծառայութիւն առնել, և արդար վաստակս վաստակել: Եւ որչափ ես զլաւն հոգայի և ի լաւ վաստակն յաւելուի, և վատ անարժան իշխանքդ Հայոց զինչպէտ բանսարկութիւնս առնէին, և դուք ինքնին մտօք լսէիք, և ընդ իս չհայէիք ուղիղ. ածի զմտաւ թէ զի՛նչ արդեօք այլ հնար գոյր, որով ես կարող լինէի զԱրեաց տեառն և զաւագացն զմիտսն ուղղել ընդ իս. եթէ գտանէի ինչ ոչ պարգեւս, գոնեա լոկ աչօք ուղիղ հայէին ընդ իս, և չատ էր ինձ: Եւ ի՛բր ի վաստակն զոր վաստակէի՝ ըստ իմում գիտելոյ՝ թերութիւն ոչ տեսանէի, և առաւելս ինչ յաւելուլ և վաստակել չգտանէի հնարս, և զթշնամեացն բերանս ի բանսարկութենէ խնուլ ոչ կարէի, և տեառն և ձեր ականջք ի բաց էին ի լսել զստութիւն և չխորհել վասն իմ ուղղակի. և իբրև ոչինչ գտի պատճառանս ծանր տրտմութեանն՝ որ կրէր յանձին իմում իսպառ, և փախչել յաշխարհէս չկարէի, խորհուրդ չար ի մտի արկի, և անձամբ զանձն սպանի. և երանի թէ լոկ զմարմինս էր սպանեալ. այլ ես զհոգիս և զմարմինս ի միասին կորուսի: Քանզի ուրացայ զճշմարտութիւնն՝ զոր գիտէի, թէ ստոյգ Աստուած է արարիչ և տէր ամենայնի. և երկիր պագի ստութեան և մոլորութեան, զոր այսօր առաջի ձեր և առաջի ամենայն աշխարհիս խոստովանիմ, թէ ստութիւն է և աղտեղի խաբէութիւն: Եւ յետ կործանման՝ յորում կործանեցայ, մաշէի յերկիւղէ զամենայն օր, թէ գուցէ մեռանիցիմ սովին մեղօք և կորնչիցիմ զյաւիտենական կորուստն. կալեալ ի բուռն զոգի իմ՝ ի բաց մերժեցի զերկիւղ

թագաւորաց, ընկեցեալ յանձնէ կոխեցի զուրացութեանն խիղճ և լուսաւորեցայ: Այսուհետև ուրախ եմ և պատրաստ հալածանաց, աղքատութեան, վշտի և մահուան. զի որում և դիպիմ քրիստոնէութեամբ՝ ուրախ եմ և անահ:

Բայց դու զոր խօսիդ՝ և արդարև կարես առնել, և հաւանի թագաւորն նուաճել զմեզ, և նախ քան զամենայն՝ զքրիստոնէութիւն շընորհէ աշխարհիս Հայոց, և զաղտեղի վաճառդ հատանէ յաշխարհէս մերմէ, զոր անպիտան և վատ մարդիկ գնեն ի ձէնջ խաբէութեամբ, և ընկալեալ՝ ծաղր առնեն զձեզ և զմոխիրն. և զմարդ ճանաչէք զլաւն և զանպիտան, և գործ խնդրէք յիրաքանչիւր ումեքէ, ոչ կաշառաբանութիւն. և ի գործ հայիք՝ տալ ըստ վաստակոց զհատուցումն, ոչ ի լկտեբանութեան խաբէութիւն. և կարէք գրել և կնքել՝ թէ ի մերմէ բռնութենէ եղև ձեր յանցուածդ և ոչ ի ձեր ստահակելոյ և յանդգնութենէ, և թողուք. և զտոհմիկն առ տոհմիկս ունիք և զվատտոհմակսն առ անտոհմակս. և թէ այդպէս նուաճէք զմեզ, մեր ընկեր տեարք էք և հարցն մերոց և նախնեաց, և մեք ծառայութիւն առնեմք և հպատակ լինիմք: Ապա եթէ նոյնպէս զյետինսն առ լաւսն ունիք և ըզլաւսն յետս տանիք, և աղտեղի մեղաց վաճառէք զիշխանութիւն աշխարհիս, և ոչ ըստ իրաւանց հայել յարժանաւորսն և ի պիտանիսն տայք, մեք՝ որ ապստամբեցաքն՝ ոչ եթէ գիտէաք եթէ մեք Արեաց առաջի ինչ կարեմք կալ, զի և զմեր տառապանացս ոյժ գիտեմք և զԱրեաց այնպիսի մեծ և զանհամար գնդի և ուժոյ զսաստկութիւն, բայց միայն զմեռանելն եդաք առաջի, և նմին պատրաստ եմք. և առաւել եւս ուրախ եմք՝ զի զանուանի և զլաւ մահ մեռանիմք քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ

գնել զանցաւոր փառս և զյաւիտենից կորուստն ժառանգել:

ՀԶ. Եւ մինչդեռ Միհրան և զօրավարն Հայոց Վահան մամիկոնեան զայսպիսի բանս ընդ միմեանս խօսէին, յանկարծակի դեսպան հասանէր ի դրանէ և ստիպով զՄիհրան ի դուռն կոչէին: Եւ նորա չուեալ ամենայն բազմութեամբ ճեպով ի դուռն, առեալ ընդ իւր զկապեալն Հրահատ և զերանելին Յազդ և զայլ կապեալսն. զորոց զհետ երթայր տրտմութեամբ և բազում փութով սիրելի եղբայր նորուն՝ տէրն Շիրակայ Ներսեհ, արամբք ընտրելովք. որոց տեսեալ զանհնարին անսպառ ողբումն Ներսեհի, սիրով խանդաղատեալ՝ զբարիս նոցա յիշելով երթային ընդ նմա: Որոյ յօրէ ունելոյ զՀրահատն Պարսկացն՝ ոչ էր եղբօր նորա Ներսեհի տեառն Շիրակայ դադարեալ ի լալոյ, և ոչ էր հանգուցեալ ի վերայ անկողնոյ, և ոչ ճաշակեալ հաց առանց արտասուաց.

այլ և զոր ճաշակէրն՝ առ չարի դառնացեալ լինէր բերան նորա: Եւ երթայր զհետ գնդին Պարսկաց, ածելով զմտաւ թէ՝ ո՞ գիտէ լրտեսեալ ուրեք ի զատագոյն թեւի գնդին՝ անկեալ ի վերայ կարասցէ զնա զերծուցանել. և կամ թէ ոչ՝ գոնեայ ես դիպեալ մահու հանդերձ յանմխիթար տրտմութենէս: Եւ երթեալ բազում անգամ օթս զհետ, և ոչ ինչ կարացեալ գտանել զնորս և մերձեալք որպէս թէ օթեւանաւ միով ի սուրբ տեղի տան Նահատակին Գրիգորի, ի գեօղն որ անուանեալ կոչի Բագաւան, և տեսեալ Կամսարականին Ներսեհի զտեղին նահատակին Գրիգորի, և յիշելով զտրտմակցութիւն սրբոց ընդ վըշտացեալս, և զհամարձակութիւն սրբոյ առն Գրիգորի առ Աստուած, ձայն սաստիկ բարբառոյ հանդերձ արտասուօք արձակեալ առ այրն Աստուծոյ, աղաղակեաց ասելով. Տէր Գրիգոր, որ զսաստիկ մեծ ամբարշտութեանն

մեղաց մերոց մերժեալ փարատեցեր յաշխարհէս Հայոց, փարատեա և զիմ սաստիկ մէգս տրտմութեանս ի սրտէս, և շնորհեա ինձ զանձկալի զեղբայրն իմ տեսանել առողջ առ իս. քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն. և զքո խնդիր քաջ ախորժելով կամի լսել և կատարէ: Եւ այսպէս մեծաձայն բարբառով և ողբալով աղաղակեաց Կամսարականն Ներսեհ առ այրն Աստուծոյ Գրիգորիոս. ոչ թէ բերանով բարբառէր, այլ սրտիւն աղաղակէր: Եւ նորա լուեալ վաղվաղակի ասաց ցՔրիստոս. և փրկչին Աստուծոյ անդ և անդ հանեալ զկապեալն Հրահատ ի շրջափակ զգուշութենէ պահապանացն, արձակէր խաղաղութեամբ առ սիրելի եղբայրն իւր և յաշխարհ:

Յանժամ տեսեալ զաներկիւղապէս և զքաջաբար ելս Կամսարականին Հրահատայ՝ զօրագլխին Արեաց Միհրանայ և այլ աւագանւոյն որ ընդ նմա էին, հրաման տային ածել զերանելի սեպուհն Սիւնեաց զՅազդ՝ ի նմին աւուր զառաջեաւ իւրեանց։ Եւ սկսան սաստիւ խօսել ընդ նմա և պատուհասել. Ոչ է, ասեն, հնար կեալ մարդոյ որ բազում վնասս և չարիս առ իւր իսկ նմանի մարդիկ գործեալ իցէ, թող թէ առ տէրն Արեաց, որ աստուածանման է, և իշխանութիւն ունի ի վերայ ամենայն մարդոյ սպանանել և կեցուցանել։ Արդ զխստակարն Հրահատ և զարժանին բազում մահուց՝ զոր ըստ նորա չար գործոցն պաշարեալ մեծ փառացն արքայից արքային՝ ետ ի ձեռս մեր, զոր և մեք թէպէտ և խնայել կամեցաք և ապրեցուցանել, սակայն իւր մահապարտութեան գործոցն որսացեալ զայրն՝ չետուն լինել նմա արժանի թողութեան, այլ վաղ և կամ անագան կորուսանեն զնա. քանզի ի մեծ և ի հզօր իշխանէ ոք փախուցեալ՝ հազիւ կարէ զանձն թաքուցանել, թող թէ փա-

խուցեալն յաստուածոցն՝ ո՞ւր կարէ թաքչել և ապրել։ Արդ և դու ընկեր նորին չար գործովք մահապարտութեամբ՝ ոչ իւիք կարես գտանել հնարս փրկութեան անձինդ և ապրել, բայց թէ ապաւինեալ ի կրակ՝ պագանիցես երկիր արեգական, և նոցա բարեխօսութեամբ գտանիցես թողութիւն ի թագաւորէն և կեցցես. և մեք խնայելով ի քեզ՝ տամք զայսպիսի խրատ քեզ. վասն զի կամիմք զկեանս քո և ոչ մեռանել։ Ի այն միտս յօժարեցուցեալ գրգռէր բազում անգամ պատգամաւորօք և թղթովք. էր երբեք և յորժամ ինքն առ աւագն Պարսից լինէր ի բանակին՝ անօրէն իշխանն սիւնի Գդիհոն, ի վերայ երանելի Սիւնոյն սեպհին Յազդայ, իբրև զչարկամ և զնախանձոտ եղբարց. և ոչ զի ուրացեալ ապրեսցի, այլ զի ուրացութեամբ մեռցի վաստանուն։

Եւ լուեալ զայս ամենայն բանս երանելւոյն Յազդայ՝ ի Միհրանայ և յայլ ամենայն աւագանւոյն Պարսից, ծանուցեալ զկամս և զխորհուրդս զանօրէն զեղբարց՝ նոյն իւրոյ Գդիհոնի, պատասխանի տուեալ ասաց. Թէ՝ Զժամանակաւոր զմարմնոյ կեանս թէ վաճառէր ոք և հասանէր ինձ գնել և կեալ, յաղագս ցաւոյ մարմնոյ և սիրոյ կենցաղոյս, տայի արդեօք զամենայն ինչ ըստ աղքատութեան իմոյ գինս և գնէի. բայց զյաւիտենից պատուհասն և զանշէջ գեհեննին սպառնալիս գնել ընդ կարասւոյ՝ յոյժ անմտութիւն է. մանաւանդ զի անյայտ է երեւումն վաճառուն։ Քանզի ոչ ոք գիտէ զկեալն իւր՝ զհեռին և զմօտեալն ի դուրս, գուցէ գնեալ խնդայցէ, և ի վաղիւն վախճանեալ յուղարկիցի ի խաւարն արտաքին։ Այլ զայսպիսի աղտեղի և կորստական վաճառ, թէ ուրացեալ էր իմ, ընդէ՞ր այժմ գնէի զդա վասն կելոյ, այլ վաղ իսկ առնուի հանդերձ փառօք և մեծամեծ պատուովք. այլ

զայս ընտրեցի յորում եմս, և զսոյն համարեալ լաւ և պատուական, ասէ, ուրախ եմ և խնդամ վախճանել քրիստոնէութեամբ, քան թէ զհազար հազարս ամաց կեալ ուրացութեամբ, և յաւիտենից անվախճան պատուհասին լինել ժառանգաւոր։

Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէն դատաւորացն ի սրբոյն Յազդայ, սրով կտրել զգլուխ երանելւոյն հրամայեցին, մերձ ի տեղի սուրբ մատրանն առաքելանման նահատակին սրբոյն Գրիգորի, ի գեօղն որ կոչի Բագաւան, ի նահանգին Բագրեւանդայ, ի լանջակողման լերինն՝ որ անուանի Նպատ, մօտ ի սուրբ տեղի մատրանն՝ որպէս երկու քարընկեցօք։ Եւ կատարեցաւ սրբոյ սիւնի սեպհին Յազդայ զընթացս նահատակութեան իւրոյ, յամսեանն հոռի, որ օր վեշտասան էր ամսոյն, և ամփոփեալ նշխարք նորա եդան անդէն ի սուրբ մատրանն Գրիգորի։

ՀԷ. Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան չուեալ գայր հասանէր յԱյրարատ գաւառ, և կատարեալ զուխտ պատարագաց ի Վաղարշապատ քաղաքին, հանդերձ ընդ իւր ուխտապահ նախարարօքն և այլ զօրօքն Հայոց՝ ի տանն Աստուծոյ և ի վկայարանս նահատակեալ կուսանացն, զուխտս պատարագաց և զսովորական նուէրս ընծայիցն իւր. և նախ հոգացեալ զաղքատաց դարմանս, ապա մեծաւ ցնծութեամբ ուրախանային և ինքեանք փառաւորելով զԱստուած: Եւ չուեալք անտի երթեալք հանգչէին ի բնական ոստանին Հայոց ի Դուին, մինչ զաւուրս ցրտաշունչ ձմերայնոյն սառնամանեացն անցուցանէին:

Եւ մինչդեռ կամէին հանգչել առ սակաւ մի և ոգի առնուլ յաշխատութենէն, գային յանկարծակի ի կողմանց Վրաց արք դիւաղդեցիկք և խելաշուրջք, խօսելով բանս սուտս և տեսիլս խաբեութեան, զոր ոչ էր

տեսեալ, ի կործանումն և յերկպառակութիւն զօրացն նորին՝ առ զօրավարին Հայոց Վահանայ՝ յոստանին, և ասէին ցամենեսեան. Թէ Ողջ են և կենդանի սքանչելի ասպետն Սահակ և քաջ սեպուհն Մամիկոնեան Վասակ. և զմեզ յղեցին առ ձեզ, թէ ի փախչելն ձեր ի կռուոյն Վրաց՝ մնացաք մեք ի կռուատեղն, խոցեալք կարեվէրք. և ըստ Աստուծոյ ազդեցութեանն՝ ի սաստկութենէ և ի կարեւոր վիրացն զոր ունէաք ի մարմնի մերում, մերթ ի սող և մերթ անձնքարշութեամբ հասաք առ միմեանս, և հոլովեալ անկաք ի խիտ թաւուտ թուփս դժնկաց. և կացեալ ի վերայ մեր ըստ Աստուծոյ ցուցակութեանն առն միոյ քահանայի հոգեւորի ի տեղացն անապատէ, և ի նմին ժամու բարձեալ ի մէնջ զմի մի ըստ անձին՝ տարաւ հեռի ի տեղեացն որպէս պարսկաւ միով հրասախաչափու. չեւ ևս գիտելով թէ ով ոք իցեմք և կամ յորմէ գաւառէ, այլ ըստ առաքինութեան իւրոյ՝ իբրեւ զայս յաղագս Աստուծոյ վիրաւորեալս՝ ապրեցուցանել զմեզ կամեցեալ, և կամ գիտեալս վախճանի՝ ամփոփել զոսկերս մեր յօգուտ հոգւոյ իւրոյ տենչացեալ. և ապա որպէս յանկասկած տեղի հեռացուցեալ զմեզ ի տեղւոջէն առն՝ և լինէր անհոգացեալ։ Երթեալ այնուհետեւ ի վանկունն իւր, բերէր մեզ կերակուր ինչ դուզնաքեայ և ջուր, ածեալ ընդ իւր և մանուկ մի միւս եւս այլ, և մատուցեալ մեզ աղաչէր ճաշակել. և մեր ընկալեալ ըստ կարի զկերակուրն ի ձեռանէ սրբոյն ջամբելով՝ զօրացաք սակաւ մի։ Եւ նորա գիտացեալ թէ սակաւ մի բերեալ ոգի՝ բացաք զաչս, սկսանա այնուհետեւ հարցանել զմեզ՝ թէ ուստի՞ էք և կամ յորմէ՞ գաւառէ. քանզի ձեւդ ձեր և կերպարան ազատս կարծեցուցանէ զձեզ։ Եւ մեր զառաքինութիւն զառն տեսեալ, զստոյգ իսկ ինչ պատմեալ ասացաք

նմա զմէնջ յանուանէ. և նորա լուեալ եւ փառս Աստուծոյ. և թողեալ առ մեզ զմանուկն գնայր ի մէնջ ի վանկունն իւր։ Եւ ի միւսումն եւս գիշերին ածեալ գրաստ՝ միւս եւս այլ մանկամբ՝ հանէին զմեզ ի գըրաստն, և օժանդակելով մեզ երեքեան տանէին յանապատն՝ ուր ինքեանք բնակեալ էին. և թաքուցեալ զմեզ առ իւր աւուրս բազումս, բժշկեալ ողջացաք զօրութեամբն Աստուծոյ։ Եւ որպէս սովորութիւն է հակառակորդ դիւին չնչել յականջս ոմանց աստուածատեաց մարդոց՝ որսալ զմեզ սկսեալ են անձանձրոյթ և կամին սպանանել, և անձանց փառս գտանել ի Պարսկաց և պատուս։ Եւ սուրբ վանականս ընդ բազում անապատ տեղիս և ընդ բազում խորաձորս քարանձաւաց շրջեցուցանէ զմեզ ի ծածուկ, բայց ածել այդր առ ձեզ երկնչի, գուցէ, ասէ, քննեալ ուրուք զհետս՝ գտանիցէ զմեզ և սպանանիցէ։ Բայց արդ փութացարուք արձակել այդ ի գունդ սատանիկ և զօրագլուխ հաւատարիմ, և տանել զմեզ առ ձեզ, որպէս զի հասեալք առ ձեզ՝ լիցուք ի միասին վրէժխնդիրք հաւատոցն Ճշմարտութեան։

Եւ լուեալ զայսպիսի սատանայական խօսս արանց անմտաց, խակոյն հաւատացեալ ասէին, թէ Արդ փութալ եւեթ պիտի. զի յորժամ նոքա ողջամբ ի Հայս գան, և Պարսիկք զայն լսեն՝ թէ արդարեւ նոքա ողջ են, խորտակին ամենայն զօրութիւնք նոցա և լքանին։ Այլ մանաւանդ յորժամ յականջս կանանց եւս եհաս բան արանցն իւրեանց, և լուան թէ ողջ են, — քանզի և ըղխօսս անգամ ի գիշերի զառնն և զկնոջ խօսէին նշանաւ գիւազգեցիկ արքն և հաւատալի առնէին, — չառնէին այնուհետեւ դուլ կանայքն ի տուէ և ի գիշերի, ըստ սայթաք և անհաստատ բնութեան կանանց, այլ զրգռէին զսիրելիս իւրեանց և զազգականս, զդայեակս նոցա և զծառայս, փութալ ձեպել հասանել վաղվաղակի և ածել զնոսա։

Եւ զայս ամենայն բանս գիւազգեցիկ արանցն եկելոց ի Վրաց, և զկամս և զհաւանութիւնս բազում արանցն ի Հայ մարդկանէ, եւս առաւել զանդլութիւն կանանց և ըղձեպս և զանժուժկալութիւն, որ նման բոցոյ տոչորէին ի խորհուրդս նոցա, և ոչ ոք զօրէր ցածուցանել, լուեալ ամենիմաստի և զգայուն մտաց մամիկոնեան Վահանայ զօրավարին Հայոց, ասէր. Այդ բանք և խորհուրդք՝ արանց վատախորհրդաց են, և որք չարաչար են իմաստիւք։ Քանզի գիտացեալ զեկս պարսիկ գումարտակի գարնանի յերկիրս Հայոց, խորհեալ իմացան զայլ՝ թէ քայքայել կարեմք և պառակտել ըղժողովումն զօրացն Հայոց՝ որ յոստանին էին, և այսր և անդր ցրուել. ապա թէ կարի սակաւ գունդ գայ ի Պարսից, թէպէտ և ձերբակալ արարեալ՝ կորուսանեն զնոսա։ Այլ թէ ընդդէմ ոմանց բանքս իմ ոչ թուին՝ ես աշխարհակորոյս արանցն ողջ ոչ տայի գնալ յաշխարհէս Հայոց։ Վասն զի զերանելի զեղբօրն իմոյ զնահատակութիւն յաւուր կատարման իւրոյ, և յառաջ քան զպսակիլն նորա տեսի զպսակն. և նախ քան զվախճանն՝ ցուցաւ ինձ գոյնն և կերպարան բանակի այնր և զօրու, յոր բանակ նախագնելոց և վերանալոց էր. քանզի վաղագոյն քան զյարձակելն մեր և հասանելն առ միմեանս, լուսաւորեցան երեսք նորա լուսով, զորոյ զնմանութիւն լուսոյն ոչ կարեմ ասել. և զարմացեալ ընդ նորա տեսիլն, կամեցայ միւսանգամ հայել ընդ նա, և յեւս առաւել ճառագայթարձակ լուսոյ երեսացն զարհուրեալ՝ ոչ եւս կարացի հայել։ Եւ թուի թէ և այլոց երեւեցաւ նոյն տեսիլ սքանչելութեան գունոյ նորա ի ժամուն. և ես անդէն և անդ գիտացի թէ նա

առաւ յինէն, և յայլ զօրս խառնեցաւ, որոյ զօրաց այն կերպարան է և լուսաւորութիւն։ Եւ ես ասեմ թէ զնա մի խնդրէք. և վասն ասպետի մի աշխատիք։ Ապա թէ որպէս զորդիս մարգարէիցն՝ կամիք թարթափել յընդունայնս, որք զԵղիայն խնդրէին աշխեալք, որոց բողոքէր Եղիշայ՝ չաշխատել, և չլսէին, դառնայք ամօթով նոյնպէս և դուք, որպէս և նոքա դարձան ամօթալից և ունայնք։ Բայց զի մի երեւեցայց ումեք բարենախանձ, առաջի ձեր են որք զօրուդ Հայոց և նախարարքդ. և որ ոք կամի երթալ՝ չարգելում. բայց յիշեսջիք, և գիտասջիք, թէ որքան կորուստ յանօգուտ երթիցդ յայդոցիկ հասանէ աշխարհիս Հայոց։

Յայնժամ հաւանեցուցեալ անխորհուրդ և թեթեւամիտ մարդոց, և մանաւանդ կանանց նահատակելոցն և նոցունց ընտանեաց և գայեկաց, զսեպուհն Մամիկոնէից ըզՄուշեղ՝ բազում այրընտիր գնդաւ արձակէին ընդ արան շաղաւաշութս և խաբեբայս յիրս անօգուտս և ի ճանապարհս՝ զոր ոչ գիտէին։ Որոց տարեալ զնոսա ի սահմանս Վրաց, յածեցուցանէին զկնի սատանայի, որոյ և ինքեանք արբանեկեալք իսկ էին. և բազում պատրողական կարկատելով պատճառս՝ ասէին ցնոսա. Փախուցեալք ի սպանողացն ի Թաքըստոց էին, փոփոխելով յայլ և այլ խորաձորս քարանձաւաց և ի ծառախիտ կատարս բարձր լերանց։ Եւ այսպէս ի բազում աւուրս խելացնորեցուցեալ յածեցուցանէին զսեպուհն Մամիկոնէից զՄուշեղ և զգունդն որ ընդ նմա, մինչև ցվախճանել ցրտաշունչ հողմոց ձմերայնոյն սառնամանեաց։

ՀԲ. Եւ եկեալ ժամանակ ծաղկոցաց գարնանւոյն օդոյն շնչմանց, աւետաւոր ջերմութեանց մերկոցն չքաւորաց, եկեալ հասանէր յանկարծակի յերկիրս Զառմիհր Հազարաւուխտ, սաստիկ և բազում

այրընտիր զօրօք, դիմեալ անցանէր ստիպով ընդ կամուրջ գետոյն Երասխայ, և ի գիւղաքաղաքին որ կոչի Արտաշատ բանակէր այն օր։ Քանզի զգացուցեալ էր նմա քաջ տեղեկութեամբ ուխտանենգացն յաշխարհէս Հայոց՝ զերթն կիսոյ գնդին Հայոց ի Վիրս, և թէ սպարապետն Հայոց Վահան Մամիկոնեան լոկ թըւով նախարարօք և սակաւ այրուձիով ի յաստանիդ. յորոց վերայ հասեալ քո այսչափ ընտիր բազմութեամբ, թէպէտ և եդեալ նոցա զանձինս ի մահ՝ չկարիցես առնել ձերբակալս այդչափ բազմութեամբ այրուձիոյ, այլ երեքկնակի և չորեքկնակի պատեալ պաշարեալ ըզնոսա՝ հանցես ընդ սուր զամենեսեան. և կատարեալ տանիս ի գլուխ զիւս գործոյս աշխատութեան, և դու պատուեալ փառաւորիս ի Թագաւորէն, և մեք հանգչիմք յերերագին աշխատութենէս յայսմանէ։ Եւ լուեալ զայսպիսի բանս Հազարաւախոսայ և այլ աւագացն որ ընդ նմայն էին, առաւել եւս ուրախանային. և ճեպով ի վաղիւն դիմէր ի վերայ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի, և զօրացն որ ընդ նմայն էին ի ժամուն: Եւ հասեալք մօտ ի քաղաքն Դուին, յօրինէր Հազարաւուխտ զճակատն ըստ օրինի գործոյ պատերազմին. և կարգեալ զաւագն՝ ի միջոցէ մայրւոյն, որում Խոսրովակերտն ասեն, անցուցանէր ի վերայ դաստակերտին, մինչև ի լեռնակողմն՝ զոր Ջրվէժն կոչեն:

Եւ տեսեալ սպարապետին Հայոց Վահանայ զայսչափ բազմութիւն զօրացն Պարսից, և այլ նախարարացն Հայոց՝ որ ընդ նմա էին, և այլ ռամիկ այրուձիոյն Հայոց, թէպէտ և զանընդդիմակայ չափաւորութիւն իւրեանց գիտէին, տեսանելով ծովացեալ գնդաւն Պարսից զամենայն դաշտն առհասարակ, այլ սակայն և ոչ կարի զարհուրեալք փախչել փութային. այլ ըստ բաւականի զօրուն իւրեանց բաժանեալ ի մի մի և յերկուս նախարարս՝ յարձակէին ի վերայ: Եւ առեալ քաջասրտաբար մասն ի գնդէն Պարսից՝ բազում արս ընտիրս գլխաթաւալ յերկիր կործանէին, և իւրեանց դարձուցեալ զերասանակս երիվարացն՝ գնացին ի բաց քաջաբար: Վասն զի և քաջաբար փախուստ առն հզօրի՝ սաստիկ ահ երկիւղի գուշակէ առ միւսանգամ գործ թշնամեացն գնդի. որ եղեալ առ յապա երեւեցաւ բազմաց, և ճաշակեալ առին զհամ և զարմացան. մանաւանդ առաւել էր քան զայլսն. զոր և գիտաց քաջագոյն՝ մնապարծ իշխանն Սիւնեաց Գդիհոն:

Բայց անդէն ի տեղւոջն որք ընտրեցին կամաւոր յօժարութեամբ զմահ անձանց և նահատակեցան՝ երկուք արք ի նախարարացն Հայոց կռուեալք լաւաբար, և զքաջութիւն գործոյ ցուցեալ. երանելին Որդի ի տոհմէն Դիմաքսենից, և երանելին Բաջաջ ի տոհմէն Աահառունեաց, եդեալ զանձինս ի վերայ ուխտին սրբոյ՝ պատկեցան։ Ընդ չարաչար խոցոտին և փախչին զօրքն Պարսից։ Եւ զսուրբ հայրապետն Հայոց տէր Յոհան ընկեցեալ ի ձիոյն, Թողին կիսամահ։ Վասն զի այնպէս ձեպով հասուցին սադրիչք անօրէնութեանն զՀազարաւուխտ ի վերայ Հայոց, զի և ոչ աւուրբ միով յառաջ ժամանեցին խօսս տալ ի քաղաքէն և անձին հոգալ, և ոչ ինքն կաթուղիկոսն Յոհան. այլ ամենազօր գթութիւն Փրկչին Քրիստոսի՝ ողորմեալ խնայեաց յուխտասէր հօտն իւր, և ածեալ ողջ զհայրն սուրբ՝ եցոյց խաղաղութեամբ ժողովրդեան իւրում և ուրախացոյց։

Եւ ի նմին աւուր, յետ վճարելոյ գործոյ պատերազմին, գայր հասանէր սեպուհն Մամիկոնէից Մուշեղ հանդերձ այրուձիովն որ էին ընդ նմա. և իբրև ոչինչ ժամանեալ յանբաւ գործոյ պատերազմին աի

տոյց, դարձեալ ընդ այլ փախըստէիցն գնայրն ի բաց։

ՀԹ. Եւ այսպէս ցրուեալ այսր և անդր զօրքն Հայոց իւրաքանչիւր ափուէին. և գնայր զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան ինքն և նախարարքն Հայոց՝ որք ընդ նմա էին, հանդերձ իւրաքանչիւր ուրուք դայեկօք և սիրելի ծառայիւք, ուշ եդեալ երթալ դադարել առ վայր մի յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց, ողի առնուլ և հանգչել առ վայր մի, և մնալ յուսով և սպասել փրկութեան Տեառն։ Զորոց զկնի հետամտեալ ձեպով անհանգիստ Հազարաւուխտ, երթայր դիմեալ ամենայն զօրօքն հանդերձ. և զբազում տեղիս ամրոցացն Հայոց ընդ երթալն առեալ հարկանէր քակէր աւերէր և անցանէր. և զբազումս կոտորեալ՝ հանէր արեանց ձապաղիս. խնդրէր հնարս, փքալով մեծամեծս, կամ առնել ձերբակալս զքաջ Մամիկոնեանն Վահան, և կամ սպանանել պատերազմաւ, և ապա հանգչել:

Եւ երթեալ յԱքաղն՝ բանակէր մօտ ի գեօղն, որում անուն էր միումն Գիւղիկ, և միւսումն Վարդաշէն. և բանակեալ անդ զօրն զայն, լսէր ի վաղիւն թէ մամիկոնեանն Վահան մօտ է ի նա ի Վարայրվարոյն ի Հոռոմ տան, ի գաւառին՝ որ կոչի Շաղագոմ: Եւ կարծեցեալ անդ լինել զխմաստախորհուրդ մամիկոնեանն յանհօգս՝ որպէս ի Հոռոմ տան անկեալ, պնդեալ յանկասկածս զցայգ ի տեղին տեղեակ առաջնորդօք հասանէր ընդ առաւօտուն ծագել: Եւ գտեալ անդ բազմութիւն այլ մարդկան, ընդ որս դիպեցան և կանայք երկուց Կամսարականացն՝ տեառնն Շիրակայ Ներսեհի և Հրահատայ, յորոց վերայ անկեալ յանզգաստս զօրացն Պարսից՝ զբազումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին. և զկանայս երկուց Կամսարականացն եղբարց՝ զՆերսեհի և զՀրահատայ՝ ըմբռնեալ տանէին ի բանակն Պարսից:

Բայց զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէնի և այլ ումեք ի նախարարացն՝ որք ընդ նմայն էին՝ ոչ պատահեալ, դառնայր ոչ եւս քաջ դիւրասրտութեամբ, յաղագս ոչ կատարելոյ խնդրոյն՝ որում հասանելն ցանկայր և վրիպեցաւ: Ստուգեալ վասն կանանցն Կամսարականացն, թէ արդարեւ նոցա կանայքն են, զուարձացեալ ուրախանայր ընդ միտս իւր՝ խորհելով այսպէս, թէ արդ նոքօք հաստատ կարեմ որսալ և ըմբռնեմ զՎահան. քանզի նոքա են նորա սիրտ, և հաւաստապէս միանձնապէս միութիւն. և թէ քակտեալ նոքա ի նմանէ լինին գամ մի, և նա միայն մնայ առանց այն արանց, կամ նուաճեալ հնազանդի մեզ՝ որպէս և կամիմք, և կամ փախուցեալ յօտար երկիր՝ կորնչի միայն առանձին: Բայց զկանայս նոցա երկուց Կամսարականացն, հրամայէր ըստ օրինացն քրիստոնէից, որպէս լուեալ էր հաստատապէս, պահել սրբութեամբ և ամենայն զգուշութեամբ։

Եւ ինքն չուեալ յԱքաղայ իջանէր ի գաւառն Բասեան, և բանակէր մօտ ի գեօղն՝ որ անուանի Դու, ի դաշտին Աղբերականաց՝ զոր Արծաթաղբերան կոչեն։ Եւ կացեալ անդ օր մի, դեսպան ի դրանէ հասանէր առ նա հրովարտակաւ. յորում գրեալ էր թագաւորին Պերոզի, տալ գիտել նոցա զլուր ամենայն Արեաց ուժով ի վերայ Հեփթաղին զդիմեցումն. և նմա հրամայէր երթալ ի Վիրս, և զթագաւորն Վրաց զՎախտանկ կամ ունել և կամ սպանանել, և կամ ի բաց փախուցանել յաշխարհէն. և զՇապուհն ի Միհրան տոհմէն՝ անդէն յաշխարհին Հայոց թողուլ գնդաւ՝ մարզպան։

Ձ. Եւ Հազարաւուխտոյ ընկալեալ զհրովարտակն, և լուեալ ըզհրաման թագաւորին, թողոյր աստէն զՇապուհն՝ պարսիկ այրուձիով, այրընտիր գնդաւ, զտէրն Սիւնեաց զԳդիհոն առ նմա ամենայն գաւառին Սիւնեաց գնդաւ, և ինքն փութով գնայր ի Վիրս։ Եւ երթեալ անդ ժողովէր առ ինքն զուխտանենգաց դասն. որոց նենգեալ թագաւորին Վախտանգայ և երդման Աւետարանին ստեալ՝ առ Հազարաւուխտ գային. ժողովէին առ նա և այնք եւս՝ որք ընդ արքայից արքայի միաբանութեամբ էին։ Եւ նա ումեմն թագաւորութիւն խոստանայր, և ումեմն գահ և պատիւ և պարգեւ բազում, և այլոց բազմաց զպէտս իւրաքանչիւր. և միաբանեցուցեալ զշատս յաշխարհէն Վրաց՝ գունդ կազմէր։ Եւ զայն տեսեալ թագաւորին Վախտանգայ, թէ իւրոցն ստեալ՝ թողին զնա և գնացին առ Հազարաւուխտ, և Հայք դեռ եւս ինքեանք անձեռնհաս են և վտանգեալք, խոյս տուեալ յաշխարհէն Վրաց՝ ի կողմանս Եգեր աշխարհին հասանէր առ վայր մի։

Իսկ Շապհոյ տարեալ զկանայս Կամսարականացն յամուր բերդն Բասենոյ, զոր Բողբերդն կոչեն, անդ թողոյր․ և յանձն արարեալ Յըզատ-Վշնասպայ բերդակալի զկանայս Կամսարականաց, պատուիրէր նմա բազում զգուշութեամբ պահել ըստ օրինացն քրիստոնէից զնոսա՝ սըրբութեամբ։ Քանզի կանայքն իսկ Կամսարականացն զնոյն առէին բազում անգամ համարձակապէս բողոքով․ Թէ զարսն մեր արդարև կամիք նուաճել, զայդ ևեթ տուք լսել նոցա՝ թէ մեք խաղաղութեամբ եմք, ապա զոր ինչ հրամայէք նոցա՝ լսեն և կատարեն։ Քանզի ամենայն Հայոց գիտելով առեմք զայս, և վըկայեն որ աստ առ ձեզ Հայ մարդիկ են, զի քան զմեզ զայլ կին նոքա ոչ գիտեն․ ապա թէ այլ ինչ լսեն վասն մեր, ի նախատանաց իսկ և յամօթոյ, թող ի մեղաց և ի դարշութենէ՝ ըստ մերոց օրինացն, առաւել գնեն զանձինս ի մահ, կորընչին։

Քանզի և ինքն իսկ Շապուհ ոչ միայն ի լրոյ ևեթ գիտէր զնոցա պնդութիւն յաղագս քրիստոնէութեան, այլ ինքն իսկ որպէս իսկ ձեռնասուն որդւոց՝ տեղեակ էր նոցա ամենայն իրաց, և քրիստոնէութեան պնդութեան, և յայլս ամենայն ի հրահանգս և ի միտս։ Որ վասն առաւել ևս սուրբ պահելոյ զկանայսն՝ բազում անգամ յանձն առնէր բերդակալին, և զնոյն համբաւ և պատուէր ստէպ տայր Կամսարականացն․ առ որս յղէր հանապազ, թէ Մի կորնչիք, և արքայից արքայի ի ծառայութենէ մի ելանէք․ այլ եկայք նուաճեցարուք, և զկանայս ձեր առ ձեզ առէք, և իմով միջնորդութեամբ զվնասդ թողուլ տամ արքայից արքայի․ զոր ինչ արժանէ՝ շնորհել տամ ձեզ, և զքրիստոնէութիւնդ զոր սիրէքդ, որպէս ցայժմ կալեալ էք հաստատութեամբ, ևս առաւել յայսմ հետէ կալարուք, և մի երկնչիք․ և ես վասն զի սիրեմ զձեզ իբրեւ զորդիս, զաւակաբար խրատ տամ ձեզ՝ որով կեալ կարէք և ի միջի լինել։ Ապա թէ խորհել կամիք և կարէք ինչ լաւ սպաս ցուցանել արքայից արքային, և հնարէք զՎահան սպանանել, գտանիցէք ի թագաւորէն պարգեւս և պատիւս, զոր ոչ է գտեալ ձեր ուրուք ի նախնեաց ի թագաւորաց. յորում վայելեալ ուրախանայք խաղաղութեամբ, դուք և ձեր որդիք մինչեւ յաւիտեան։

Եւ լուեալ զայսպիսի պատգամս երկոցունց Կամսարականացն՝ ի զօրագլխէն Պարսից Շապհոյ, թէպէտ այլ և այլ պատասխանիս տանէին բանից՝ խաբելով զՇապուհ ի բազում աւուրս, ապա գլուխ հաստատապէս պատգամին Շապհոյ, երկոքեան անշարժ հաստատեալք ի հաւատս, տէրն Շիրակայ Ներսէհ և Հրահատ, զայս յղէին. թէ՝ Մեր գործ և աշխատութիւն չէ վասն երկրաւոր ինչ վայելից, և ոչ վասն

կնոջ և որդւոյ, որ ձեզ ծանր թուի և կարեւոր. բայց խորհուրդ է հաւատոյս մերոյ մեծ և պատուական։ Մեզ՝ առ ահաւոր այնպիսի խորհրդոյն սիրով ամենայն ինչ կենցաղոյս վայելչութիւնք փոքր թուին և ոչ ինչ, աշխարհ և կին և ստացուածք և մեծութիւն։ Զի եթէ ոչ հաւաստեաւ տեսանէաք, եթէ երկինք և երկիր և ամենայն որ ի նոսա է՝ չէ համեմատ այնմ պատուականութեան՝ որում մեք ցանկամք, չէաք այնքան անզգայք՝ թէ ոչ կարէաք խաբել զձեզ, որպէս և այլ հացկատակեանդ որ առ ձեզ են, և առնուլ կապիճ մի մոխիր և տալ ցաղախին մի մեր, որպէս նա զայն կամէր, պղծել. և մեք մնոտի փառօք ի ձէնջ առ վայր մի վայելէաք և պայծառք երեւէաք, և ապա զյաւիտենից կորուստն կորնչէաք չարաչար։ Այլ վասն կանանցդ մերոց տամք ձեզ նշան ինչ, և ձեր փորձեալ քաջ քննեցէք. զի եթէ արդարեւ մեք յաղագս հաւատոյն՝ զոր սիրեմք և ունիմք հաստատապէս, և վասն այնր անանցալի յուսոյն և փառացն կրեմք զայս վիշտս, և հաճոյ է գործս մեր Ճշմարտին Աստուծոյ և ընդունելի, զմեզ փրկէ ի նեղութենէս, և զկանայսդ մեր պահէ ամենայն սրբութեամբ և տայ ցմեզ. ապա թէ ոչ այդպէս լինի, մերում թերահաւատութեան մեղադրեսցուք, և մի ինչ ձերում բռնութեանդ և սաստից:

Եւ զայս բանս այսպէս յղեալ երկոցունց Կամսարական եղբարցն առ Հազարաւուխտ, ինքեանք ևս առաւել քան զառաջինն անձամբ և զայլս յորդորելով՝ փոյթք և պատրաստք էին արբանեկութեան զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի՝ զամենայն գործ որ և հրամայէր նոցա:

ԶԱ. Եւ զհետ գնացին Հազարաւուխտայ ի Վիրս՝ մնայր Շապուհ յՈւքաղս, և ջանայր կատարել զհրամանն Հազարաւուխտայ, և որսայր զՄամիկոնեանն Վահան, գտանել զնա ի գեղձի և սպանանել. և ոչինչ լինէր ձեռնհաս, քանզի ամրութիւն Վիրնոյն շուրջ զնովաւ պարապեալ պահէր զնա: Բայց Մամիկոնեանն Վահան զամենայն օր ոչ տայր դուլ առնուլ զօրօք իւրովք Պարսկաց ի դակչին, այլ զցայգ զամենայն նետաձիգ լինելով ի ներքս՝ էր զոր ինքեանց Հայոցն խոցոտեալ նետիւ սպանանէին, և էր զոր ինքեանք Պարսիկքն զինքեանս ի վերայ միմեանց կուտակելով հեղձամղձուկս առնէին: Եւ երթեալ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեանն հանդերձ արամբքն որ ընդ նմա էին, բանակէր ի գիւղ մի մերձ, որ էր ընդ իշխանութեամբն Մամիկոնէից, որում անուն էր Ծաղիկ. կամեցեալ անցանել ի կողմն սահմանակցութեանն Հաշտենից, յաղագս գտանելոյ ի նոցանէ օգնութիւն:

Ազդ եղեւ Շապհոյ զօրավարին Պարսից, եթէ ահաւասիկ Մամիկոնեանն Վահան բանակեալ է ի գիւղ մի, և արք են ընդ նմա թուով յոյժ սակաւք։ Եւ կանխեալ վաղագոյն ընդ առաւօտն զօրագլուխն Պարսից Շապուհ ամենայն բազմութեամբն որ ընդ նմա, յանկարծակի ի վերայ եհաներ գնդին Հայոց։ Եւ գունդն Հայոց իբրեւ հանապազազգոյշ՝ վասն ցանգ անծոյլս յօրինելոյ ըզնոսա զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէնի, լինելով պատրաստք գնային ի տեղւոյն անվնասք. սակայն գունդք զօրացն Պարսից ոչինչ փոյթ առնէին այլոցն, զկնի զօրավարին Հայոց Վահանայ անցանէին. քանզի ասէին, թէ նմա միայն գտանեմք հնարս՝ ամենայն իրք մեր վըճարեալ են և յանդ։ Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան երթայր ընդ կողմն արեւելից ծովուն Կարնոյ, և գունդք զօրաւորացն Պարսից զկնի նորա երթային անհասութեամբ։ Եւ Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից և Ներսեհ կամսարական

տէրն Շիրակայ՝ ընդ կողմանն հիւսիսոյ ծովուն, վրիպեալք առ փոյթ ժամուն ի զօրավարէն Հայոց Վահանայ Մամիկոնենէ, սակաւ արամբք երթային խուովեալք. և մերձեալք ի գիւղ մի Կարնոյ՝ որում անուն էր Արծաթի, և հասեալք ի հեղեղատ մի որ մերձ էր ի գիւղ մի, և կամեցեալք յեզեր հեղեղատին առ վայր մի հանգչել, ուր և հնձողք արտորայոցն շուրջ զտեղօքն գործէին։ Եւ իբրեւ գիտացին Պարսիկքն՝ թէ ոչ եղեն նոցա հասու, կամեցան մշակացն տեղեացն վնասել, թէ ընդէ՞ր ընաւ ծառայից արքայից արքայի տայք շրջել յաշխարհի ձերում։

Եւ տեսեալ Խուրսայ, որ էր ի գաւառէն Արշամունեաց ի գեղջէն Շիրմաց, դայեակորդի տեառն Շիրակայ Կամսարականին, զոմն ի Պարսից զօրացն՝ զի կամէր սպանանել այր մի կարնացի ի մշակացն, և մշակն շուրջ գալով զբարդիւ միով խուսափէր ի սպանողէն. և տեսեալ զայն Խուրսայ դայեակորդւոյն կամսարականին Ներսեհի, զայրացեալ ընդ սեպհին Մամիկոնէից Մուշեղի և ընդ կամսարականին Ներսեհի ասէ աներկիւղապէս. Ո՞չ ապաքէն մահ այլ աշխարհաց առնն, թէ մեռանի ի Պարսկէն, ի մէնջ պահանջէ վրէժխնդիրն Աստուած։ Եւ յարձակեալ նիզակաւ Խուրսն ի վերայ Պարսկին, անդէն ի տեղւոջն սատակէր. և զերծուցեալ ապրեցուցանէր զկարնացին ի սպանողէն։ Եւ գրգռեալք ընդ բանսն Խուրսայ սեպուհն Մամիկոնէից Մուշեղ և կամսարականն տէրն Շիրակայ Ներսեհ, և ընդ գործն հայեցեալ ընդ Խուրսայ՝ զոր գործեաց քաջաբար, տեսեալ և զհետամուտսն զկնի նոցա՝ թէ չեն կարի բազումք, յարձակեցան ի վերայ Պարսկացն սակաւ արամբք որ ընդ նոսա էին, և զօրացեալ օգնականութեամբն Աստուծոյ՝ բազում արեանց ճապաղիս ի

տեղւոջն հանէին, և զայլսն փախըստականս արարեալ՝ դարձուցանէին ընդ կրունկն ամօթով։ Եւ եղեւ թիւ մեռելոց ի տեղւոջն եօթանասուն և երկուց արանց։ Եւ լուեալ զայսպիսի յաջողութեան գործ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի, ետ փառս Աստուծոյ. որ և առանց նորա կորացուցեալ խորտակէր Աստուած զզօրութիւն թշնամւոյն։ Եւ ինքն գնայր ի սահմանս Հաշտենից ըստ յառաջագրեալ խորհրդոյն իւրոյ, և հասեալ բանակէր ի գաւառին Արշամունեաց, ի գիւղն որ կոչի Երէզ. կամեցաւ հանգչել աւուրս երկուս։

ԶԲ. Եւ զօրավարն Սիւնեաց Գըդիհոնն փութացուցանէր սախպով զզօրագլուխն Պարսից գնդին զՇապուհն, ասելով. թէ Այրն Վահանայ Մամիկոնէից փորձ քաջութեանն և դու առեր և ամենայն աշխարհն Արեաց. և ես իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ. զի թերեւս գունդն ամենայն ի Դունի առ նմա միաբանեալ էր՝ նա մեզ անդէն իւր քաջութեանն գործ ցուցանէր· բայց արքայից արքայի թագն և Արեաց փառքն մեզ այնպէս յաջողեցին, զի նորա իրք այնպէս դիպեցան՝ որպէս տեսաքն, և մեզ բարի վճարումն եղեւ։ Եւ արդ տեսաք, այդչափ սակաւ արամբ զինչ գործ գործէ այրն, և որ քան զոր նուազեցուցեալ զգունդս մեր և վանէ։ Արդ՝ թէ ուսանէք եւս այլուստ կարէ գտանել օգնական, տեսջիք՝ զի նա ամօթով զմեզ դարձուցէ և սակաւաւորս· այլ և դառնալոյ իսկ մեզ անդէն անվստահ եմ շատ։ Բայց փութա և մի տար առն հանգիստ առնուլ, գուցէ թէ մեք ծուլանամք, և նա առնիցէ զմեզ աշխատել՝ ամաչիցեմք։ Եւ եթէ յիս միայն թողուք զնա՝ ցուցանեմ ձեզ յաւուրս հինգ իմոյս իսկ գնդաւս, թէ որպիսի մատնեալ վատի կորուսանեմ զնա և որք ընդ նմայն են։

Եւ վասն զի ոչ էին գործք առնն Գդիհոնի մաքուր հոգւոյ արժանի, այլ այսն պիղծ որ էր ի նմա՝ դուշակէր նմին զանձնէ իւրմէ, թէ յետ հինգ աւուր չար մահուամբ սատակելոց ես ի յարանցն՝ որք են ընդ մամիկոնենին Վահանայ· քանզի թափուր գտեալ ամենեւիմբ դիւին յԱստուծոյ խնամոցն զայրն, այնուհետեւ նման Սաւուղայ՝ ուր կամէր սպանանէր զնա։ Եւ լուեալ զայս ամենայն բանս զօրավարին Պարսից Շաղհոյ՝ ոչ տայր դուլ անձինն և ոչ զօրացն՝ որ ընդ նմայն էին, այլ փութով զհետ առնն երթայր սրտմտեալ, և հասեալ ի տեղիս բանակէր· կարծէր ի տեղիսն ուրեք անյայտ գետառուին թաքչել։

Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և իւր եւս զօրուն որ ընդ նմա՝ գոնեա զայն գիտէր հանգըստի յագեալ քնով, և հաւանեցուցեալ զարսն ի գեղջն Երիզայ· քանզի ամենայն անձն երկիւղի և կամաւ լսէր զհրաման նորա, իբրեւ Թագաւորի որ կարգեալ իցէ յԱստուծոյ ի վերայ երկրի. և ինքն Աստուած ընդ նմա էր յամենայն ի գործ՝ ուր և ուղղէր զկամս իւր: Եւ առեալ ընդ իւր զարս զօրուն իւրոյ և զշինականսն զԵրիզացիսն, գայր հասանէր ի վերայ զակչին ի գիշերի. և սպառափակ արարեալ Երիզացօքն զտեղի կռուոյն իւրեանց, և ինքեանք ըստ նմանութեան տեղատարափ շառաչման՝ նետաձիգ սաստկութեամբ զգունդս Պարսկացն ահաբեկէին: Եւ խառնեալ ընդ միմեանս զամբոխն զօրացն՝ որ ի զակչին էին, այլ եւս առաւել ինքեանք զինքեանս Պարսիկք առաթուր հարեալ կոտորէին. և լինէր ձայն լալոյ և ձայն գուժի ի բանակէ անօրինացն: Բայց ի Հայոց գնդէն Գաբաղ միայն սեպուհն գաբեղեան՝ կամաւորութեամբ կռուեալ և մեծ արութիւն ցուցեալ՝ խոցեցաւ. յորոյ վիրաց՝ և կատարելութեան պըսակի յետ սակաւ ինչ աւուրց արժանի եղեւ ընդունել յԱստուծոյ:

ԶԳ. Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան դարձեալ ի կոտորածէ Թշնամեացն, երթեալ հանգչէր ըզմնացեալ մասն ի գիշերոյն յՈղին գեղջն, զոր Շտեայ անուանեն, ի գոմս տեղեացն, մինչեւ յառաւօտուն ծագել. և ի ծագել լուսոյն՝ երթեալ բնակէր ի գիւղն Շտէոյ: Եւ մինչ կամեցեալ հանգչել առ վայր մի զօրացն Հայոց Վահանայ Մամիկոնէի ի ծանրութենէ գիշերոյն աշխատութեանց, զաչս ի վեր առեալ տեսանէին, և ահա հասեալ կայր ի վերայ նոցա զօրագլուխն Պարսից Շապուհ, զայրագնեալ սըրտիւ մռմռայր իբրեւ զգազան: Վասն զի առաւել քան զամենայն աւուրց՝ այն գիշերոյն վնասք չարութեան առաւել թուէր նմա և կարեւոր. որ եղեւն իսկ արդարեւ այնպէս, այլ ոչ ինչ նման առաջիկայ մեծ բեկմանն, զոր առ ժամայն էր տեսանելոց և իսպառ բեկանելոց։ Եւ տեսեալ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի զյանկարծահաս դիմեցմունս զօրագլխին Պարսկաց Շապհոյ՝ ամենայն բազմութեամբ զօրուն ի վերայ նոցա, թէպէտ և անպատրաստ տեսանէր զիւր գունդն ի ժամուն և կամ ի նուազս՝ առ սաստկութեամբ թշնամեաց զօրուն, սակայն զանգիտէր և բնաւ իսկ ոչ· այլ հրաման տուեալ փութանակի կազմէր որքան իսկ էին. ձայն բարձեալ գոչէր առիւծաբար, ասելով· Թէ Մարդոյ հաւատացելոյ միում յերկուց վրիպել անհնար է, և դիպմունք երկոքեան մեծարգոյ են և պատուական. այլ սակայն մինն յերկոսեան առաւել եւս մեծ՝ ի վեր է և բաղձալի քան զմիւսն. և ոչ անյօժարք և անխորհուրդ դիպմունք, որում և պատահեմք յերկոցունց· և որ ցանկացայք կեալ ժուժկալութեամբ և մեռանել յուսով. այլ կեալն և մեռանելն մասն է պար-

ծանաց. և մեռանել ի վերայ ուխտի որոյ՝ վիճակ է մարտիրոսութեան։ Արդ յաղթութեան մասամբն բազում անգամ պայծառացոյց զմեզ Աստուած, և գոհ եմք. իսկ որ առաւել մեծն է և քան զամենայն ի վեր, զայն եւս պարգեւեալ շնորհեսցէ մեզ հզօրն և պսակեսցէ։ Բայց և այժմ մի զանգիտեալ ոք զարհուրեսցի թերահաւատութեամբ. վասն զի Սուրբ Հոգին որ ասաց, թէ Զօրս տէր Աստուած հարկանէ և ի ձեռս իւրոց սիրելեացն ցուցանէ, մինն զհազարս հալածէ և երկուս զբիւրս շարժէ. արդ և մեք Աստուծոյ, և Աստուած հայի ի մեզ օգնել։ Եմք մեք թուով սակաւ, բազում հարիւր առաւել թէ եւս յոլովք և կամ նուազք. և եթէ խոստմունս ասացելոցն կատարել ի մեզ կամի հզօրն, ապա նոցա յերեքհարիւր հազարս զօրուցն չար մարդկան բազմութիւնք սխալին. քանզի ոչ դոյ ի նոսա ըստ կշռելոյ ական աւելի քան զՀորս հազար արանց· բայց մեք Աստուծով պարծեսցուք զօրհանապազ, և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան։

Եւ տեսեալ զայս ամենայն բանս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի, բաժանեալ որքան խակ էին արք զօրուն ընդ նմա, տայ իւրաքանչիւր զօրագլխացն՝ զորոց կարծէր եթէ ի դէպ է և պատշաճ։ Եւ մինչ դեռ ևս նա կազմ էր յարձակմանն, և զօրքն Պարսից ճակատեալք կարգմամբ դային սաստկապէս ի պատերազմ, հայեցեալ տեսանէ զի գունդն ամենայն Հայոց դարձուցեալ զերեսս յուխտէն երդմանն Աւետարանին և ի խրատուէ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի՝ երթային փախստեայք ամենեքեան։ Եւ միայն ինքն և յուխտապահացն Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից և երեքեան Կամսարականքն որդիք երանելոյն Արշաւրայ, ինքեանց երկուք կամ երեք դայեկօք, և այլ թուով

արք՝ որք ի յազատաց և որ իւր խակ ի Մամիկոնէից տանէն, ընդ բնաւ որպէս թէ քառասնիւք կամ նուազիւք ևս։ Որոց ևս տեսեալ զփախուստն ամենայն գնդին Հայոց առ հասարակ և զարհուրեալք՝ ասէր ոմն ցզօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, թէ Յո՛ւշ, տէր, յո՛ւշ· այսինքն թէ հնար ինչ է ի ժամուս տեղի տալ և անձին զգուշանալ։ Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի տեառնագրեալ զինքն՝ բարձր ձայնիւ ասէր· թէ Յիս արդ ոք յուշ մի ասէք· զի ինձ յուսալ ի մարդ և կամ պարծել մարդով քաւ լիցի, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ քաջաբար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր հանդերձ լաւ ուխտապահ արամբք սակաւուք, որ միայն առ նմա։ Եւ ապշեալ ընդ աչաւոր աներկիւղած ուժին զօրավարին Հայոց Վահանայ, և ընդ այլ սակաւ այնքան արանցն՝ որ ընդ նմա, զհետ զօրագլխին Պարսից Շապհոյ, ձեպով ցիշխանն Սիւնեաց առ Գդիհոն յղէր, ասէ. Ձե՛ռն տուր յիս կողմն, վասն զի իրս անպատումն իմն և նորոգս ցուցաւ. զի թէ արդարև զօրութիւն իմն աներևոյթ այլ է՝ որ օգնէ նոցա և մեզ չերևի, զայն ես ոչ գիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք լինել, ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր ձերբակալս առնեմք: Եւ իշխանն Սիւնեաց Գդիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապհոյ, նշկահելով փութանակի ի տեղին արշաւէր. և զօրավարն Հայոց Վահան մամիկոնեան հանդերձ ընդ իւր միաբան սակաւ արամբք՝ օգնութեամբ աջոյ հզօրին յարձակեալ՝ հերձանէր զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք բազմութիւնք ջրոց՝ որ հեղեղատեն զերկիր և անցանեն: Եւ ինքն հզօրաբար քաջ ուխտակցօքն նման առիւծոյ ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելա-

նէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ նմա՝ բազում արս հզօրս պատերազմողս ի զօրացն Պարսից, հարեալ խոցէին նիզակաւ ընդ անութ կարեվէր և զհպարտ իշխանն Սիւնեաց զԳդիհոն, և զահաւորալուր ամրութիւնն զինուն՝ յոր պանծացեալ յուսայր անօրէնն՝ ցելեալ վեր ի վայր թափ ընդ լեարդն զնիզակատէգն հասուցանէին: Որոյ դառնակոծ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ զոգին՝ սատկէր անխոստովան. որ պարծէրն անբարտաւանութեամբ և ասէր. Թէ Ես ընդ Վահանայ և ընդ այլ Հայերդ՝ ոչ եթէ նետիւ կռուիմ, այլ գդլկով պողեալ զբոլորս ցնդեմ, օն և անդր ցիր և ցան արկից ձորոցդ և դաշտացդ: Եւ եղև բան հպարտութեան նորա բեկումն նմին. զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ մամիկոնէի միանգամ և երկիցս զիշխանն Սիւնեաց զԳդիհոն, և դարձեալ երկայնամբտեալ ի նա Աստուծոյ իբրեւ զմարդասէր՝ ներէր խնայելով, զի թերեւս զղջացեալ՝ գտցէ ժամ դարձի և ապաշխարութեան և կեցցէ։ Եւ իբրեւ ոչ զգաստացաւ, այլ բնաւ ամենեւիմբ արհամարհեալ զճշմարտութիւն և եղեալ անպատասխանի յաստուածային հարցմանն, ընկալաւ զսատակումն ամօթոյ իւրոյ զաստիս և զհանդերձելոյն։ Եւ զօրքն Պարսից զկնի փախստէիցն Հայոց անցեալ երթային, յորոց և արս բազումս սպանին ի թուլացեալ մեղկացելոցն։

Բայց զօրավարին Հայոց Վահանայ մամիկոնենի հանդերձ իւրովք գործակցօքն զգործ քաջութեան վճարեալ Աստուծոյ զօրութեամբն, երթայր այնուհետեւ անհոգս որպէս թեւակից զօրուն Պարսից. և գունդք ամենայն զօրացն Շապհոյ և հայել ի նոսա լոկ ոչ իշխէին։ Քանզի այնպէս արկեալ էր Աստուծոյ զահ և զերկիւղ զօրավարին Հայոց Վահանայ մամիկոնէի ի վերայ զօրացն Պարսից, զի կարծէին թէ ի հայեցուածէ լոկ առն մամիկոնենի և յարանցն որ ընդ նմայն էին՝ չզերծանիցին առանց վտանգի։ Բայց ուխտապահ զօրացելոց արանցն որք՝ ընդ զօրավարին Հայոց Վահանայ յարձակեալք նահատակեցան ի ժամուն, Քոնթ Առաւենեան, և երանելին Ներս Յովսեպեան, և երանելին Ատգէն սեպուհն Վանանդացի, և երանելին Ղերպարգոս, որ էր ազգաւ Յոյն։

ԶԴ. Իսկ Սիւնեաց զօրուն թափեալ զփորոտի իշխանին իւրեանց յերկիր, վասն կարի զազրապէս հոտելոյն, և պատեալ եղեգամբ՝ առեալ գնացին ազգականք իւր և ծառայք յաշխարհն Սիւնեաց։ Եւ զայն տեսեալ Սիւնեաց այրուձիոյն բովանդակի, քամակակոտոր խորտակմամբ ցրուեալք և քայքայեալք ընդ այլ և այլ ճանապարհս գնացին յիւրաքանչիւր տեղիս։

Եւ Շապուհ պարսիկ գնդին զօրագլուխն երբեւ տեսանէր զքակումն սիւնի գնդին և զաճառ զօրութիւն հակառակորդին Վաչանայ մամիկոնէի, զմտաւ ածեալ յիշէր զանընդդիմակայ զօրութիւնն, սրտմտեալ զարհուրէր· եթէ զինչ առնիցէ չիմանայր· Զի, ասէր, թէ ի կենդանութեանն այնպիսի առն՝ որպէս Գդիհան էր, և այլընտիր գնդաւ յաղթեալ գտաւ նա և որ ընդ նմայն էին՝ յաւելուածով և այսոցիկ եւս որ աստ են առ իս, և համարեալ առ ոչինչ Վաչանայ՝ երեսուն միայն արամբք ի վերայ երից և չորից հազարաց յարձակեալ՝ խորտակեաց զամենեցունց զսիրտս, և պատառեալ վէր և ի վայր զայնչափ զօրաց բազմութիւն, զայնպիսի մեծամեծս գործեաց վնասս, իսկ այժմ որպիսի վստահութեամբ կարասցուք զայնպիսի քաջորերոյ ունել զդէմ սակաւացեալքս։ Այլ և զայս զմտաւ ածեալ երկնչէր, մի գուցէ ըստ բազմահնար իւրոյ իմաստութեանն՝ առաքեալ ի մերձակայ սահմանակից տեղեացս, առ Հայ մարդիկ գաւառին Անձտայ և Ծոփաց և Հաշտենից, և առեալ ի նոցանէ օգնականս որպէս յիւրոց ազգականաց, չկարիցեմք և զայրումն անձանց՝ որ մնացեալքս եմք՝ գտանել այնուհետեւ։ Այլ եկայք փութասցուք երթալ յաստանին Հայոց ի տեղիս, և ճեպաւ գեսպանօք զգացուսցուք արքայից արքայի։ Վասն զի և նորա՝ թէ աստուածոց օգնութեամբն վըճարեալ է զիւր գործն՝ ժամ է յաստանն գտանելոյ։ Եւ այնուհետեւ թէ բուռն գնդաւ, և կամ իւր իսկ գլխով, նա իշխէ որպէս և կամի առնել գլուխ Հայոց գործոյս։ Այլ ես զեռանդի գործոյն տեսչութիւնն երբեւ զմտաւ ածեալ յիշեմ, ոչ զօրեմ բնաւ խորհել ինչ և կամ իմանալ· զի թէպէտ և ոչինչ աւագ եմ ժամանակաւ, սակայն և ոչ երբէք յԱրեաց լուայ ի զօրագլխաց, և կամ ես այժմու ժամանակաւս և կամ յանցեալ դարս նախ ի պատերազմողաց, եթէ տասն արամբ ոք ի վերայ երից հազարաց այրընտիր արանց յարձակեալ և զայնպիսի գործեալ գործ՝ գնաց ինքն զերծեալ անվնաս:

ԶԵ. Եւ զայս ամենայն զմտաւ ածեալ այսպէս Շապհոյ, չուէր վաղուն ի գաւառն Բասենոյ. և եկեալ ի գիւղն՝ զոր Աղվարն կոչեն. և մինչդեռ տարակուսեալ տանջէին խորհուրդք զնա յերկիւղէ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, եկեալ հասանէր յանկարծակի դեսպան ի Պարսից, ունելով գոյժ չարաչար և նամականի բազում անողջոյն, զոր գրէր առ Շապուհ ի Պարսից աւագորերոյ, և Հայ՝ իւրաքանչիւր ազգականաց և սիրելեաց, որք յանթիւ սաստիկ կոտորածէ Հեփթաղին զերծեալք էին: Եւ ընկալեալ Շապհոյ զնամականին, և հասեալ ի վերայ ծանր և կարեւոր

չարեաց, և զայնպիսի ահաւոր զբեկումն զաշխարհին Արեաց ծանուցեալ ի գրելոցն, ի մեծ տրտմութիւն ապշութեան ընկղմեալ՝ զարհուրէր: Եւ կացեալ ժամանակս ինչ անխօս՝ իբրեւ թալկացեալ, ոչինչ բան կարէր հարցանել զայրն թղթաբեր, և ոչ անձին զգալ: Եւ զգացեալ յետ բազում ժամուց որպէս յապշութենէ և ի թմրութեանց, և կոչեցեալ զայրն առանձին՝ հարցանէր, թէ ո՞րպէս և կամ զի՞րդ սպառսպուռ եհաս այնպիսի վախճան և կործանումն Արեաց աշխարհին. և կամ ո՞ կարացեալ զերծանել և եբեր զհամբաւ կոտորածին զայնչափ անթիւ բազմութեան զօրացն բովանդակի. և կամ թէ զի՞րդ արդեօք մեռաւ աստուածանման տէրն Պերոզ, և կամ որպիսի՞ մահու:

Եւ դեսպանին պատասխանի արարեալ ասէր. թէ՝ Քո հարցանելդ պատշաճ և ի դէպ է, որպէս ամենայն մարդ որ կամի լսել ի պատգամաւորացն զիւրս պիտոյիցն և ըզտեղեկութիւնն. բայց ինձ կարի ծանր է խօսել զվատ բանս, և տալ զրոյց զայնպիսի չար աղէտից ի զերծելոց փախստէիցն. և մանաւանդ յորում ոք այնչափ ճխտաուց և բեկման չէ պատճառ, բայց ինքն աստուածանման տէրն Արեաց Պերոզ. և իբրև ոչինչ առն ծառայի զաստուածոց առնել վատ ինչ՝ մահ է և կորուստ: Բայց վասն զի ի ժամու յաստուածոցն ցասմանէ վատ պատահումն եղեւ տեառն Արեաց և բնաւ աշխարհին, և պատճառ ոչ ոք եղեւ այլ, բայց ինքն տէրն իւրում անձինն և Արեաց. առնել ըզտեսեալս և զլուեալսն՝ հարկ է, և չվճարի առանց առնելոյ:

Նախ մինչդեռ այդրէն իսկ էր ի Վրկանի Պերոզ, և զօրաժողով արարեալ յամենայն կողմանս կամէր խաղալ ի վերայ Հեփթաղին, խորհեալ առանձին միայն և ոչ զոք հարցանէր ի մարդկանէ՝ զարժանն և

զանարժանն, բայց զայս ևեթ գիտէր ամենայն գնդին մարդ, եթէ ընդ Հեփթաղին կամի կռուել: Լըքեալ և սրտաբեկեալ ամենայն մարդ՝ տեսանել լոկ սիրով չկարէր զայրն Հեփթաղ, և կամ զանունն լոկ լըսել, թող թէ կռուով ընդդէմ Հեփթաղի երթալ և կամ յայտնի ելանել, յիշելով զահ և զպաշարումն՝ զոր անցին ընդ տէրն Արեաց և ընդ Պարսիկս: Եւ յայտնի աղաղակէր ամենայն բերան, Եթէ մահապարտ եմք, և արքայից արքայ զմեզ սպանանել կամի, ինքն իսկ առաջին սուր ի վերայ եդեալ հրամայեսցէ սպանանել, քան եթէ սրով Հեփթաղին տայ կորուսանել զԱրիս. որ գործ մինչեւ ցյաւիտեանս զանձն և զԱրեաց աշխարհ վատանուն առնէ: Զայն բանս և ամենայն աւագանի դրանն խօսէին առ միմեանս հանապազ, և մանաւանդ սպարապետն Արեաց առաւել Վահրամ. զոր և համարձակապէս յականջս Պերոզի բազում անդամ հասուցեալ, և հրապարակաւ բողոքէր. և նա ոչ լսէր ումեք, և ոչ զգայր և ոչ յիշէր բնաւ զառաջին թշնամանս խայտառականաց իւրոց, զոր եգիտ անձամբ և ամենայն Արեօք ի Հեփթաղէ: Դիմեալ ի վերայ այնչափ բազմութեամբ Արեօք և Անարեօք՝ գնայց, որք իբրեւ զմահապարտ ի մահ, և ոչ իբրեւ զպատերազմողս ի կռուել երթային: Տային զրոյց ապրեալքն անտի և զայս եւս, թէ յորժամ մօտ հասաք անդր՝ առաքեաց առ Պերող Հեփթաղն, թէ Քո ընդ իս ուխտ է երդմամբ գրով և կնքով, թէ չկռուիմ ընդ քեզ. և սահմանս կարգեցաք, զորովք չիշխեսցուք թըշնամութեամբ անցանել առ միմեանս. արդ յիշեա զուխտն և զնեղութեան պաշարումն՝ յորմանէ ողորմեալ իմ արձակեցի զքեզ. և ոչ սպանի. և ի բաց դարձիր խաղաղութեամբ, և մի մեռանիր. ապա թէ ոչ լսես բանից իմոց, արդ գիտեա զի կորուսանեմ զքեզ և զամենայն զանպիտան բազմութիւնդ՝ յոր դու յուսացեալ ես: Քանզի ես և արդարութիւն ուխտապահութեանն, ի միասին կըռուիմք, և դու և ուխտազանցութեանն ստութիւն ի միասին էք. և արդ դու ինձ զի՞րդ կարես յաղթել: Եւ լուեալ Արեաց զբանս Հեփթաղին, ասէին ցՊերող, թէ նա արդար է, և մեք սուտ կռուիմք: Եւ Պերողի սաստկապէս զայրացեալ Արեաց աւագանւոյն, պատասխանի տայր հպարտութեամբ Հեփթաղին՝ և ասէ. թէ Զայս բազմութիւն գընդին զոր դուք տեսանէք, կիսովս ընդ ձեզ կռուիմ և կորուսանեմ, և կիսովս զհող տեղեացդ՝ ուր դու լինիս, կրել տամ, որ ի ծո՜վ որ ի փոսն զոր հատին՝ լնում: Եւ առ անզգայութեան սրտին ոչ իմանայր՝ թէ դիպակամբ ծառայից իւրոց լնլոց է զփոսն՝ զոր փորեաց ի կորուստ անձին իւրոյ և ամենայն Արեաց աշխարհին: Եւ հասեալք առ միմեանս և հարեալք ի դիմի, կորեաւ ինքն ամենայն որդովք իւրովք և աշխարհաւ: Եւ զերծեալք ի կործանմանէն արք սակաւ, և հասեալք ի Վրկան՝ պատմեցին ամենեցուն զամենայն անցս չարեացս այսոցիկ. և զամենայն արս աւագս և զայլ մարդիկն որ ի Վրկանին էին, փախուցին յԱսորեստան: Դեսպան արարին ի Վիրս առ Հազարաւուխտ, և զի այսր ձեզ արձակեցին, փութալ ժողովել զձեզ առ միմեանս, և գտանել զհնարս, որով լինիցին ի միջի և ձեր անձինք և Արեաց աշխարհ:

ՁՁ. Եւ լուեալ զայս ամենայն բանս՝ Շապհոյ ի դեսպանէն, պատասխանի տուեալ ասաց. Թէ իմ և զգունդս զոր այժմ դու ընդ իս տեսանես, թէպէտ և այդ լուր չարեաց չէր հասեալ, խնդրեաք պատճառս զերծանելոյ ի գործոյս յորում եմք: Վասն զի այնպէս զարհուրեցուցեալ ապշեցոյց և վատնեցեալ աշխատեաց զմեզ ապստամբն Վահան, որոյ իւր

իրք և արարածք՝ չեն որպէս զայսր ժամանակի մարդկան՝ զոր մեր տեսեալ և գիտեմք, այլ իբրև զառաջին քաջացն՝ զոր ի վէպսն պատմեն և լսեմք: Քանզի թող զայլ ժամանակաց զնորա և զարանցն որ ընդ նմա էին՝ յիշել զգործս և զաներկիւղութիւն, զոր իմ և կամ այլ աւագորերոյ որ տեսեալ է, այլ յառաջ քան զաւուրս տասն, թուով երեսուն արամբ՝ ոչ միայն ի վերայ այսր բազմութեան որ այժմ աստ են և տեսանես՝ յարձակեալ կռուեցաւ, այլ աւելի ևս գնդաւ իշխանն Սիւնեաց Գդիհոյն՝ իւր գաւառին այրընտիր ձիով աստ էր, և Վահան դէմ յանդիման այն երեսուն արամբ յարձակեալ ի վերայ, և նման արծւոյ յորում ժամու ի կաքաւուց երամ սլանայցէ, իցէ զոր սպանանիցէ և զայլ զամենեսեան ընդ ծերպս և ընդ սորս վիմաց տեղեաց ցրուիցէ, ըստ նմին օրինակի այսր անդր զայնչափ բազմութիւն զօրացն արկեալ վեր ի վայր ցրուեցին. սպանին և զսկայանման զայրն զԳդիհոնն, և այլ բազումս կոտորեալ ի գնդէն, գնացին ինքեանք անխռով՝ չերկուցեալք ընաւ յումեքէ: Եւ արդ ո՞չ անձանաչող և արհամարհոտ հպարտութեանն Պերոզի հանեալ զայնպիսի որեար և զայսպիսի մեծ և զօգտակար զաշխարհ յԱրեաց ի ծառայութենէ. զոր թէ այժմ զայնպիսի այր, որպէս և յառաջագոյն գիտէի և այժմ քաջագոյն ևս գիտացի, և զնորուն զընկերս՝ որ առ նմա են, և մանաւանդ զերիս եղբարսն՝ որ ի կամսարականն տոհմէն են, և հնարէի նուաճել և մեր առնել, որպէս մեծ մասն մխիթարութեան համարէի հասելոյ ծանր բեկման ի վերայ Արեաց աշխարհին:

Եւ խօսեցեալ զայս միհրանեանն Շապհոյ և դեսպանին ընդ միմեանս, հրաման տային զօրուն, և ըստ կարի օր ըստ օրէ չուեցին ձեպեալք՝ հասանէին յաշխարհն Պարսից: Բայց

զկանայս Կամսարականացն թողեալ Շապհոյ անդէն ի Բողբերդի, յանձն առնէր բերդակալին՝ ստէպ պատուիրելով, բազում զգուշութեամբ պահել և առաւելապէս սրբութեամբ, ըստ օրինի քրիստոնէից կարգի: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի լուեալ զայս ամենայն բանս և զհամբաւս, յԱստուծոյ այցելութիւն ընկենոյր, և զիրս համբաւոյն և զիւր զաշխարհիս Հայոց զպէտս և զհոգողութիւն, որ գիտէն զիւրաքանչիւր ուրուք ըղպատշաճ և զօգուտ, և մատակարարէ ողորմութեամբ իւրով ըստ ողջախոհութեան խնդրողացն: Եւ եկեալ հասանէր այնուհետև ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախորհուրդ և աննենգ ուխտապահ նախարարօքն Հայոց. կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ, զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան: Եւ ի տեղիս վկայարանացն, նախ հատուցանելով զաղքատացն զպէտս, և ապա ինքեանք ուրախացեալք զւարճանային խնդութեամբ: Եւ անտի չուեալ յոստանն ի Դուին մտանէին, և զարդարեալ անդ աւուրս սպասէին և ակն ունէին հրամանի առաջնորդութեանն Քրիստոսի:

ՁԷ. Եւ լուեալ Հազարաւուխտայ յաշխարհին Վրաց զպատմութիւն Պերոզի և զանթիւ կոտորած բազմութեանն Պարսից, զարհուրեալ տարակուսէր յանձն իւր, գնալ վաղվաղակի երթալ հասանել յերկիրն Պարսից: Եւ հասեալ ի դուռն՝ ժողովին առ նմա մնացորդք Արեաց աւագանոյն, ուրումն որդի և այլում եղբայր ըստ գլխոց ապրելոց ի ժամուն: Խորհուրդ ի մէջ առեալ թէ զո՞ արժանի թագաւորութեան նմանեցուցանել կարասցեն. և խորհեալ զայս ի բազում աւուրս՝ հաստատէին միաբանութեամբ զխրան ի վերայ Վաղարշու, որ էր եղբայր թագաւորին Պերոզի, որպէս ի վերայ առն բարերարի և հեզոյ: Ժողովեալք ամենեքեան առ Վաղարշ, սկսանէր խօսել Հազարաւուխտ և յայտնել նմա զխորհեալսն ամենեցուն, յիշեցուցանելով նմա զանձնահաճութիւն և կամակորութիւն զթագաւորին Պերոզի. Որ բռնութեամբ միայն, ասէր, ըստ կամի, և թէ բնաւ համարելով ինչ զոք և կամ խորհելով ընդ ումեք առնէր, զոր ինչ և կամէր առնէր, և բռնաւոր կամաւորութեամբ գործէր զինչ և կամէր: Որոց ելք անհարց զոք նորա իմաստիցն՝ ոչ միայն նորա անձինն, այլ ընդհանուր աշխարհիս Արեաց բերին զկործանումն և զբեկումն: Եւ արդ՝ համայն յօժարեալ ամենեքեան մեք ընտրեցաք զքեզ, որպէս զայր քաղցըր և աշխարհաշէն, կանգնել քեզ և հաստատել զգահ թագաւորութեան աշխարհիս Արեաց, ունել քեզ շէն զմասն մնացեալ Արեաց աշխարհիս, և զայլ ևս աշխարհն՝ որ ընդ Թագաւորութեամբս այսուիկ հնազանդեալ են. քաղցրաբանութեամբ և սիրով ածել ի հաւան զազգն՝ որ ընդդէմ և ապստամբ, ճանաչել զիւրաքանչիւր ոք Արեաց և Անարեաց ըստ իւրում արժանաւորութեան, գիտել ընտրել զպիտանին և զանպիտանն, խորհել ընդ իմաստունս, սիրել զընկերասէրս, ատել և կորուսանել զնախանձոտս և զբանսարկուս. հայել յամենեսեան, ճանաչել զբարեգործս, հատուցանել վաստակաւորաց զարժանի հատուցումն վաստակոց իւրեանց։ Զայս ամենայն և զսոյն նման խրատս խօսեցեալ ընդ նմա, և եդեալ վկայութիւնս, բազմեցուցանէին զնա ի գահու Թագաւորութեանն Պարսից։

ՁԸ. Խորհուրդ ի մէջ առեալ այնուհետև Հազարաւուխտոյ միաբանութեամբ աւագանւոյն յերկրորդումն աւուր Թագաւորութեանն

Վաղարշու, խօսէր առաջի Թագաւորին Վաղարշու և ասէր. Պերոզ արքայից արքայ ձեր եղբայր, որպէս և դուք իսկ գիտէք, զի բուռն և անձնակամ և անհաւան, և բազումք յարհամարհոտ նորա կամակորութենէն փախուցեալք են յԱրեաց Թագաւորութենէ, որք շատ և ոչ սակաւ մասամբ մնասեցին Արեաց աշխարհին։ Եւ նախ առաջին, որպէս մեծ աշխարհս Հայոց, որ և այսօր ի ձեր ծառայութենէ ի բաց կացեալ են. և այրն որ զաշխարհն ի բաց ունի ի ձէնջ, ի չճանաչելոյ զայր և զպիտանութիւն նորա, Պերոզ կորուսեալ եհան յԱրեաց ծառայութենէ զայր լաւ և զայնպիսի աշխարհ. և թէ որքան ինչ յայնմ առնէ մնասս և հարուածս Արեաց աշխարհիս եղեւ, գիտեն ամենեքեան. բայց թուի թէ և ձեր լուեալ է զամենայն և տեղեակ էք։ Բայց աւելի Շապուհ-Միհրան՝ զոր դուք կարգեցէք՝ առ զնորա քաջութեան փորձ և զխրատու. և թէ հարցանէք և լսել կամիք՝ դոյն իսկ առէ ձեզ։

Եւ Թագաւորին Վաղարշու հարցեալ զՄիհրան-Շապուհ զգործոյն Հայոց, թէ զինչ կարասցէ գործել գործ յաշխարհին Հայոց, և Վահանայ զինչ միտք են և ոյժ, և որպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Արեաց՝ աստուածոյ զօրութեամբն։ Եւ Միհրանայ պատասխանի տուեալ ասաց. թէ Արանց քաջ, զկռիւն զոր Հազարաւուխտ մեօք հանդերձ ընդ Վահանայ արար, և թէ Վահանայ իւր զօրքն բովանդակ անդ եղեալ էին, թուի թէ տանէր զյաղթութիւնն. այլ թէպէտ և յաղթէաք մեք, զայս գիտեմ զի անթիւ բազմութեան ի մէնջ կոտորած առնէին։ Այլ ձեր թագ այնպէս արարին, զի գնդին Հայոց կէս այրընտիր որեարն այլուր դիպեցան ի գործ. սակայն սակաւ արամբք որպիսի ինչ փոս արար՝ գիտէ ինքն Հազարաւուխտ և այլ պարսիկ որեար, որ անդ էին

աւագք։ Իսկ յորժամ Հազարաւուխտ ի Վիրս գնաց և զիս անդէն զօրագլուխ եթող գնդին, և յայնմհետէ զինչ Վահան զմեզ աշխատ կալաւ՝ կարի սակաւ արամբք, - զոր երբեմն թէ հարիւրօք ասեմ՝ չստեմ, և վկայեն ինձ գնդիս մերոյ աւագորեար, որ անդ էին և այժմ աստ են, - կարի ծանր է ասել և անհաւատալի բանք, թէ այնքան սակաւուք դէմ յանդիման կռուել աներկիւղութեամբ, և զօր ամենայն ի զակշի վերայ գալ և մեծամեծ փոս առնել։ Բայց զմիոյ աւուր գործն ես իսկ յիշեմ որ անդ էի. սակայն նոր համարիմ և ի վեր քան զմարդկան իրս, թող թէ որ լսէ զիարդ կարէ հաւատալ։ Քանզի թուով երեսուն արամբք ի վերայ երից հազարաց առն յաներկիւղս յարձակեալ, և զայնպիսի գործ վճարեալ, զոր ամենայն որ անդէն էին տեսողքն՝ այսօր յիշեն. թուի թէ երկիւղ գործոյն չեղանէ ի մտաց. զի և ոչինչ այլ իմիք նման չէին այն նորոգ իրք, բայց եթէ յորժամ ժիր մշակք քաջ սուր մանգաղաւ և գերանդեաւ ըզխոտ հարկանիցեն, և բազում որայս մօտ ի մօտ առ միմեանս կուտեալ թողուցուն, և ինքեանք ուրախալից ցնծութեամբ անհոգ յիւրաքանչիւր տունս գնայցեն. ստոյգ ըստ այնմ օրինակի յարձակեալք ի վերայ Միհրանայ այնքան արամբք՝ հերձին վեր ի վայր զբովանդակ գունդն, և շատ լաւ որեար կոտորեցին: Եւ զահաւոր այրն զԳդիհոն զՍիւնեաց տէրն սպանին. զոր յիմ միտս այսպէս ասէի, թէ լոկ Գդիհոն միայն ինքն տասն արամբ յիւր գնդէն պատահէր այնչափ առն, այն միայն առնէր. և զայնպիսի այր և զայլ ակնաւոր և քաջ արս ի պարսիկ մարդկանէ հանին ընդ սուր. և ինքեանք ոչինչ խոյս տուեալ ի բաց վարեցին զձիանս իւրեանց, այլ մօտ ի մեզ թեւակից երթային յանհոգս ի բազում ժամս: Եւ ի մեր գնդէն

ոչ ուրուք իշխեցեալ հայել ի նոսա. վասն զի աստուածք և ոչ մարդիկ կարծեցեալ ամենեցուն թուէին մեզ: Վասն որոյ և թէպէտ առաջի ձեր յանդգնութիւն թուին բանքս իմ, սակայն յաղագս կարծեաց ժամուս համարձակիմ ասել, զի զաշխարհին Հայոց զմեծութիւն և զօգուտն՝ զայն դուք իսկ քաջ գիտէք. բայց այրն Վահան և այլ որեարն որ ընդ նմա են, եթէ այսօր խաղաղութեամբ ի ձեր ծառայութեան էին, մեծ մասն բարւոյ և մխիթարութեան կարեւոր հասելոյ ողորմութեանս մերոյ՝ համարէի զիրան զայն: Զի յորժամ Հայք այնպիսի որեարով մեր էին, Վիրք և Աղուանք չիշխէին բնաւ թիւրել զանձինս և այլազգագոյնս ինչ խորհել:

Եւ լուեալ զայսպիսի կարգեալ բանս Թագաւորին Վաղարշու՝ ի Միհրանայ և Հազարաւուխտոյ, և այլ ամենայն Արեաց աւագանոյն, միաբան ամենեքեան զասացեալսն ի

Միհրանայ գովէին, թէ արդարև որպէս են իսկ՝ նոյնպէս ասացեր լաւաբար իմաստութեամբ զարդարն: Եւ վաղվաղակի և փութով զՆիխոր զՎշնասպդատ զայր հեզ և մտացի և աշխարհաշէն՝ բազում այրընտիր արամբք ի Հայս արձակէին: Պատուիրէր նմա ինքն իսկ թագաւորն, այլ եւս առաւել հազարապետութեամբ Հազարաւուխտ և այլ դրանն աւագանին, թէ Երթ ի Հայս և որ ինչ օրինակաւ և է՝ ամենայն քաղցրութեամբ և սիրով ըստ կամացն Վահանայ և նորուն ընկերակցացն՝ նուաճեալ զօրեարն և յԱրեաց ծառայութիւն ած: Բայց զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուձին Ատրպատականի, որ մօտ ի Հայս իցեն, և զայրուձին Հեր և Զարաւանդ գաւառի. մի՛ գուցէ յղեալ քո առ Վահան՝ և նա պատճառանօք քաղցր խօսելով ընդ քեզ՝ խաբիցէ զքեզ և վնաս ինչ առնիցէ: Վասն զի այրն ինքն քաջ է և բազմամիտ

է. քանզի և ցայժմ ոչ այնքան այնպիսի գործեան վճարեաց նա և որք ընդ նմա էին՝ լոկ քաջութեամբ. այլ դու քաջ պատրաստեսջիր: Բայց թուի թէ արդ Վահան չխորհի այդպիսի ինչ. զի զայդ գործ՝ զոր համարձակեցաւ Վահան գործել՝ և որք ընդ նմին էին, յանճանաչողութենէ Պերոզի զմարդկութիւնն՝ ըստ հպարտ և անձնակամ բարուցն իւրոց. և չկարացեալ Վահանայ և մարդկանն՝ որ միաբանեցան ընդ նմա՝ տանել արհամարհանաց, գնելով զանձինս ի մահ՝ դիմեցին առնել զայսպիսի իրս առ հարկի: Եւ խօսեալ զայս ամենայն բանս տեառն Արեաց Վաղարշու և ամենայն աւագանոյն ընդ Վշնասպ-դատայ Նիխորայ, և հրաժարեալ՝ զնա արձակեցին ի Հայս:

ՁԹ. Եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ո՛չ իշխեաց միջամխել ի Հայոց տեղիս, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի գեօղն՝

որում անուն էր Նըւարսակ, առաքեաց նա պատգամաւորս առ մամիկոնեանն Վահան զՇապուհ խորհըրդեան դպիր, և զՄիհր-վշնասպ ճուարշացի, որովք տայր գիտել նմա զիրս գալըյն իւրոյ ի Հայս, և թէ հրովարտակ ունիմ առ ձեզ ի թագաւորէն Վաղարշու՝ նուաճել զձեզ խաղաղութեամբ. և զամենայն աւագորերոյ՝ որ յԱրիս են՝ պատգամ ունիմ առ ձեզ. արդ արէք եկայք և լուարուք. և որպէս է ձեզ հաճոյ և խորհէք, ընտրեցէք որ բարին է:

Եւ տեսեալ Վահանայ մամիկոնէի զպատգամաւորս Նիխորոյ, և լըւեալ զայս ամենայն բանս պատգամին ի նոցանէն, ժողովէր առ ինքն զամենայն հաւատարիմ ուխտապահացն գունդ՝ զնախարարս և զազատս և զամենայն այրեւձիոյ. և հրամայէր մամիկոնեանն Վահան եկելոցն՝ ի Նիխորոյ՝ ասել առաջի ամենեցուն զբանս Թագաւորին Վաղարշու

և զբանս ամենայն Արեաց աւագանւոյն: Եւ տուեալ լսել մամիկոնենին Վահանայ ամենայն Հայորերոյն միահամուռ զպատգամն Նիխորոյ, ասէր ցպատգամաւորսն Պարսից՝ առ վաղին առնել նոցա պատասխանի:

Եւ ժողովեալ ի վաղին ամենայն Հայորերոյն առ մամիկոնեանն Վահան, և խորհեալ նախ ընդ միմեանս զվաղնջուց զպէտս և զխնդիր իւրացն, եկեալ և պատգամաւորացն Նիխորոյ յատեանն, սկսաւ խօսել մամիկոնեանն և առնել պատասխանի բանիցն Նիխորոյ. Եւ մեր ապստամբութեան իրացն, և յայտնի կարեւոր և մահաբեր գործ տալ զանձինս, բազում են բանք և կարեւոր. և չէ հնար գրով վճարել և կամ պատգամաւ, բայց եթէ յանդիման խօսել ընդ նմա՝ որ Արեաց տէրն է, և ընդ ձեզ՝ որ դրանն աւագանի էք: Բայց երիս բանս ասեմ ձեզ, որ թէ այս երից բանիցս պատասխանի առնէ ինձ՝ որպէս ես կամիմ և ամենեքեան սոքա՝ որ աստէն իսկ են. և կարէ զայս երիս խնդիրս տալ մեզ գրով և կնքով թագաւորին, զամենայն զոր ինչ ասէք՝ զպատեհն և զարժանն առնեմք, և բանի ձերոյ լսեմք որպէս և նախնիքն մեր լուան: Քանզի ոչ իմ բանքս՝ զոր խօսիմս ես ընդ ձեզ այժմս, այլ նոցա ամենեցուն՝ աւագի և կրտսերոյ, որ այժմ ձեր առաջի են. և ոչ եթէ այսօր ինչ խորհեալ կամ իմացեալ է մեր զբանս զայս, այլ յաւուր՝ յորում տուաք զանձինս ի մահ, նախ զայս երիս ընտրութիւնս խորհեալ եդաք այր ամենայն առաջի: Եթէ յանձն առցէն Պարսիկք թողացուցանել մեզ զայս երիս իրս, ծառայեսցուք նոցա որպէս զբնիկ և զհաւատարիմ ծառայս. և եթէ ո՛չ հաւանին յանձն առնուլ և խոստանան, ելցուք ըստ աշխարհ և կորիցուք, և խնդութեամբ մեռցուք. այլ Պարսկի առն երկիր ոչ պագցուք:

Եւ է մին յերիցն՝ նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի. եթէ զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զՀայ այր զոք մի՛ մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք՝ և զեկեղեցւոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ՝ որ ցայժմ լինէր՝ յայսմհետէ մեզ չտայք տեսանել, և քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին. ապա բարի է. և առաջին խընդիր մեր այդ է:

Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և ըզվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւն ըզպատուականն և զքաջն և զօգտակարն, արհամարհել և առ ոչ ինչ համարել զվատն և զանպիտանն, սիրել զվաստակաւորսն և առել զանվաստակն, ունել ի մտի զիմաստունս և ի խորհուրդս առնել, և զանմիտս ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ եւս հալածել: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի, ամենայն իրք Արեաց աշխարհիս աջող լինի և անսխալ. ապա եթէ զընդդէմն սիրէք՝ որպէս և ցայժմ՝ և ոչ զդէպսն, և գործքն այդպէս ընդդէմ լինին, որպէս և եղենդ իսկ և տեսէք:

Եւ երրորդ խնդիր մեր այս է. որ տէրն է Արեաց և աշխարհի թագաւոր՝ կամիմք զի ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն լուիցէ իւրովք ականջօք, և ինքն գիտասցէ և ինքն խօսեսցի իւրով բերանով. և մի, այլոյ աչօք տեսցէ և այլոյ ականջօք լուիցէ, ու այլովք հանապազ գիտասցէ[1] զմարդ լաւ և զանլաւ, և այլոյ բե-

---

[1] Եւ ինքն խօսեսցի... «զմարդ՝» չիք ի ձձ. մեր, Բովանդակիցաւ ի Տփղ. տպ.:

բանով խօսեսցի զպէտսն: Յաղագս որոյ չլինի ուղիղ հայեցուածն և ոչ արդար լսողութիւնն, այլ յոլով սուտ խօսքն ճանաչելն և հրամանքն ընդունայնք, և բնաւ այլ ընդ այլոյ լինի իմաստն ամենայն: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի, կործանեալ ամենայն վաստակք և ծառայիւքն կորնչին, և ոչ կարէ կալ աշխարհ և ի նմա բնակեալք անչարժ և հաստատուն: Բայց թագաւոր՝ որ իւրովք առողջ աչօքն հայի և աննախանձ լսողութեամբ լսէ և արդար բանիւ խօսի ընդ իւր ծառայս, կենդանացեալ ծառայքն՝ չյագին վաստակով, այլ յաւելեալ ի վաստակն՝ օր քան զօր աճեցուցանել ջանան զբարին. ո՛րպէս աշխարհ շինի, և տէրն շքեղացեալ պայծառանայ հանապազ:

Արդ՝ եթէ զայդ այդպէս կարէք խոստանալ, զխոստացեալսն գրով և կնքով հաստատեալ տայք ցմեզ, ապա կոչեա՛ և գամք կամաւ և լսեմք բանից ձերոց, և հրամանի թագաւորին հաւանիմք զոր ինչ ասէ։ Ապա եթէ զայս երկս խնդիրս ոչ կարէք տալ մեզ, և գիտէք թէ չէ հնար, որպէս եդեալ մեզ մահ առաջի՝ պատրաստ եմք մեռանել, այլ ծառայութիւն առնել Արեաց տեառն չըկարեմք։ Եւ այլ բանք՝ որ ինչ են, թէ ինձ լիցի գալ՝ ինձէն իսկ խօսիմ ընդ նմա, ապա թէ ոչ լինի դէպ գալ՝ մնասցէ բանն և իրքն։

Դ. Եւ խօսեցաւ զայս ամենայն բանս մամիկոնենին Վահանայ ընդ Շապհոյ խորհրդեան դպրի և ընդ Միհրն Վշնասպայ Ճուարշացւոյ՝ ուղարկեաց զնոսա. առաքեաց և մամիկոնեանն Վահան ընդ պատգամաւորսն Նիխորայ և յիւր ուխտակցացն զՅաշկուր արծրունի և զՍահակ կամսարականն՝ զերանելոյ զԱրշաւրայ զորդի, և զՎասաւուրտ Կարքային, և զԱռաւան աղբերկացի և զՊաճոկ ի Մարդպետական գնդէն։ Եւ հրաժարեաւ զամենեսեան զնոսա մամիկոնենին Վահանայ՝ արձակեալ խաղաղութեամբ առ Նիխոր։

Եւ երթեալ նոցա առ Նիխոր ի գաւառն ի Հեր, և տեսեալ Նիխորոյ զՀայերն՝ որ չոքան առ նա ի մամիկոնենէն Վահանայ, ամենայօժար սրտիւ խնդութեամբ ուրախացաւ։ Եւ հրաման տուեալ ընթրեաց՝ ընկալաւ զնոսա բազում գոհութեամբ և յոյժ սիրով, յիշելով համապազ ըստ ամենայն բաժակի՝ զքաջ մամիկոնեանն Վահան. և կատարեալ զուրախալից ընթրիսն, գային յիւրաքանչիւր վանս։ Եւ ընդ առաւօտն ժողովեցան ամենայն ատեանն Պարսկաց առաջի Նիխորոյ, և աստուածուրաց մարդիկն որ անդ էին եկեալ, և պատգամաւորքն որ ի Նիխորոյ որ առ մամիկոնեանն Վահան երթեալ էին՝ Շապուհ և Միհր-Վշնասպն, և հայ նախարարքն և այլ արքն ի մամիկոնենէն Վահանայ՝ որ ընդ նոսա էին։ Եւ տուեալ զպատգամն Մամիկոնեանն Վահանայ՝ Շապհոյ և Միհր-Վշնասպայ՝ առաջի ամենայն ատենին յայտնապէս։ Եւ լուեալ Նիխորոյ զամենայն զբանսն և զխօսս Մամիկոնենին Վահանայ, և խնդալից եղեալ ասաց առաջի ամենեցուն, թէ Ամենայն բանքդ այդ և պատգամդ զոր յղեալ է Վահանայ, արդարև աստուածոց արժանի. քանզի որպէս անմեղ են մարդիկն այն՝ զորս բռնի տարաւ Պերոզն և Հեփթաղին կոտորել ետ, և զամենայն զարիւնն զայն աստուածքն՝ ի Պերոզի գլխոյն խնդրելոց են, նոյնպէս անվնաս է Վահանն յամենայն իւր իրքս՝ զոր խորհեցաւ և գործեաց, զի ի բռնութենէ չարութենէն Պերոզի գործեաց, և ոչ իւրով կամաւ։ Եւ ես մինչև ցայսօր չէի մխիթարեալ ի մեծ բեկմանէն՝ որ եհաս Արեաց աշխարհին, բայց այդ լուր ուրախացուցեալ մխիթարեաց զիս այսօր. բայց տացեն աստուածքն և զօրն տեսանել, որ Վահան յիմ

ձեռն նուաճեալ՝ Արեաց ի ծառայութիւն հնազանդի։

Եւ խօսեցեալ զայս այսպէս Նիխորոյ առաջի ամենայն ատենին. և լուեալ զայս ուխտապահ նախարարացն Հայոց և այլ արանց՝ որ եկեալ էին ի Վահանայ Մամիկոնենէ, տային փառս Աստուծոյ, յորոյ ձեռս են սիրտք իշխանաց, և որպէս ինքն կամի տայ բարբառել նոցա։ Կոչէր այնուհետև վաղվաղակի Նիխոր զնոյն պատգամաւորս՝ զՇապուհ խորհրդեան դպիր և զՄիհր-Վշնասպ Ձուարշացի, և գրէր նամակ առ Մամիկոնեանն Վահան օրինակ զայս.

Լուայ, ասէ, զամենայն զխօսեցեալսն քո՝ ի պատգամաւորացն զոր ես առաքեցի առ քեզ. և գրեցի բովանդակ զնոյն բանս քո ի նամակիդ ծանուցանել քեզ, թէ արդարև խօսեցան ընդ իս զամենայն և լուայ։ Արդ արի եկ առ իս վստահութեամբ, և զամենայն խնդիրս քո՝ որ ի ձեռն դոցա յղեցեր առ իս, և այլ ինչ զոր դու ասես, ուխտեալ է Արեաց տեառնն և ամենայն Արեաց աւագանւոյն՝ տալ լինել և կատարել· և զքեզ և որ ընդ քեզ են, որպէս քո կամք են, Արեաց տէրն շքեղ առնէ և արձակէ ի Հայս։

Եւ զնախարարսն որ եկեալ էին ի մամիկոնենէն Վահանայ՝ սիրով ընկալեալ Նիխորայ և պատուեալ՝ արձակէր ընդ պատգամաւորս իւր առ մամիկոնեանն Վահան· մեծաւ պատուիրելով յանձնէր նոցա՝ փաղփաղակի և անյապաղ ածել զմամիկոնեանն Վահան· և հրաժարեալ զնոսա Նիխորայ արձակէր սիրով։ Եւ տեսեալ զայն աստուածուրաց խաբեբայիցն, որք ի միաբանութեան Պարսկացն էին՝ թէ որպէս յապըստամբացն եկեալ Հայք ի Նիխորայ պատուեալք և մեծարեցան ի Պարսկացն, և ինքեանք արհամարհեալք էին իբրև զանպիտանս, դարձեալք լի ամօթով յերկիր կործանէին։ Եւ տեսեալ զայն ուխտապահ նախարարացն Հայոց, և այլոցն որ ընդ նոսա էին, ակն արկեալ ցուցանէին միմեանց զկորանս նոցա։ Իսկ մի ոմն ի յուխտապահացն ասէ ցնոսա· Զի եթէ լոկ ի բանիցն խօսելոյ ընդ մեզ սիրով Նիխորայ՝ զձեօք այդպէս ամպ մթագին և շափառուկ անկաւ, և չերեւիք ի գետնոյդ, իսկ յորժամ շնորհեսցէ Քրիստոս և տեսանիցէք փառաւորեալ զմամիկոնեանն Վահան և զայլ ուխտապահսն՝ որ ընդ նմա են՝ փառօք, զոր տալոց է Քրիստոս, խորտակիցիք իսկ արդեօք և հեղձանիցիք· այլ ի մեծ ի աւուր յանշէջ գեհենին, զի՞նչ արդեօք գործիցէք հէքքդ և թշուառականքդ։

Եւ զայս ասացեալ առն՝ գնային ընդ պատգամաւորսն Նիխորայ առ մամիկոնեանն Վահան։ Եւ հասեալ պատգամաւորացն Նիխորայ առ մամիկոնեանն Վահան և մատուցեալ զնամակն Նիխորայ· և յայնմանէ գիտաց ի գրելոցն՝ թէ լուեալ տեղեկացաւ Նիխոր ի պատգամաւորացն զամենայն յղեալսն իւր առ նա. և ոչ էր բան յամենայն խօսիցն Մամիկոնենին Վահանայ՝ զոր թէ չէր թուեալ Նիխորայ։ Ի պատգամաւորացն տեղեկացեալ ծանեաւ և զայն՝ թէ որպէս խնդութեամբ և սիրով ընկալեալ զնախարարսն մեծարեաց Նիխոր. պատմեցին և զչարաչար կորանս ուրացողացն Ջոկոյ, և թէ որպէս կարի և փութով զերթս քո խնդրէ փափաքելով, զոր և պատգամաւորացն Նիխորայ ստիպով հաւանեցուցանէին նմա երթալ։

ԴԱ. Եւ չուեալ այնուհետև զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի ամենայն ուխտապահ նախարարօք հանդերձ, և այլ բազում և կազմ գնդաւ, որոց լուեալ ուխտիւք զխնդիրն ի Նիխորայ Մամիկոնեանն Վահանայ՝ կամաւ և ցընծալից սրտիւ երթային առ նմա։ Եւ եկեալ Մամիկոնեանն Վահան ի գաւառն որ կոչի Արտազ, ի գեօղն որ անուանեն Եղինդ, դադարէր անդ

ինքն և ամենայն գունդքն որ էին ընդ նմա. և առաքէր առ Նիխոր, և զիւր եկն տայր գիտել նմա։ Եւ ասէր ցՆիխոր Մամիկոնեանն Վահան. Արդ եթէ թուի քեզ գալ իմ և տեսանել զքեզ, տուր ածել առ իս արս աւագս Արիս և յականաւոր տոհմաց, որ եկեալ կացցեն աստ առ իմ որեար, մինչև եկեալ ես տեսից զքեզ, և խօսեցեալ իմ և քո ընդ միմեանս՝ լուիցուք ի միմեանց զոր ինչ ի դէպն թուի մեզ առնել։ Եւ Նիխորայ լուեալ զեկն և զկամս խնդրոյն Մամիկոնենին Վահանայ, փաղփաղակի տայր տանել ցկամսարականն տէրն Շիրակայ Ներսեհն՝ զԲազէ զԱտըրպայական շահապ և վեհնամ զՀայոց հազարապետ, և զՆերս-շապուհ զՄիհրանայ զեղբայր, և զհինգ եւս այր այլ աւագ Պարսիկս։ Եւ տեսեալ Մամիկոնենին Վահանայ զաւագորեարսն զոր առաքեալ էր Նիխորայ, ընդունէր զնոսա խնդութեամբ. և ի միասին ուրախացեալք այն օր, ի վաղիւն թողոյր զութեւանն զնոսա առ իւր հաւատարիմ արս, որոց հրաման տայր պատուել զնոսա արժանաւորապէս և զգուշանալ. և ինքն չուեալ գնդաւ և կազմութեամբ գնայր առ Նիխոր։ Մերձեալք ի գիւղն ուր Նիխոր էր, հրամայէր զօրուն որ ընդ նմա էին՝ վառել ըստ օրինի պատրաստութեան պատերազմի. որք ընդ լսել ի մամիկոնենէն Վահանայ զհրամանն, պատրաստեալք յամենայնի կազմ ցուցանէին նմա զանձինս։ Տայր հրաման մամիկոնեանն Վահան հնչեցուցանել զփողս պատերազմականս. և ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ երկիրն թնդէր. յորմանէ զարհուրեալք արք զօրուն Նիխորայ, կարծէին խաբէութեամբ ի վնասել զնոսա եկն մամիկոնեանն Վահան, և ոչ սիրով ի նուաճումն խաղաղութեան։

Եւ Նիխոր առաքեալ ընդ առաջ նորա արս աւագս, տայր ասել ցմա-

միկոնեանն Վահան. եթէ, Ոչ ըստ կարգի Արեաց առնես դու զայդ, այլ նորոգ իրօք այլ իմն ձեւանաս. յորում յայսմ հետէ քեզ կարի զԱրեաց զկարգն պարտ է ունել և հաւանել. քանզի ի չուէ փողով յԱրեաց բանակ՝ սպարապետն միայն Արեաց իշխէ մտանել, և այլ ոք զայդ համարձակութիւն ի Պարսիկս ոչ ոք իշխէ առնել։ Եւ մամիկոնենին Վահանայ պատասխանի տըւեալ Նիխորայ՝ ասէր. Նախ արա զիս Արեաց տեառն ծառայ, ապա և առանց ի քէն իսկ ուսանելոյ՝ թուի թէ և ես իսկ գիտեմ զԱրեաց աշխարհի զկարգ և զարժանն. մի թուեսցի քեզ հաշուել զիս կարի մոռացկոտ. քանզի և ոչ բազում ինչ ամօք գնացեալ եմ ի ձէնջ։

Եւ զայս բանս այսպէս ի ձեռն պատգամաւորի խօսեցեալ մամիկոնենին Վահանայ ընդ Նիխորայ, ապա ինքն իսկ եկեալ տեսանէր զնա յատենի ժամու. վասն զի ընդ ծագել արեւուն եկն մամիկոնեանն առ Նիխոր։ Եւ Նիխորոյ տեսեալ զմամիկոնեանն Վահան եւ զայլ նախարարսն զուխտակիցսն ընդ նմա, ցնծալից ուրախութեամբ բազում ժամս ընկալեալ ի գիրկս իւր՝ ողջունէր զնա․ տայր եւ զողջոյն զԱրեաց տեառնն Վաղարշու եւ զամենայն աւագանոյն․ մի ըստ միոջէ յանուանէ ողջունէր եւ զեկեալ նախարարսն մամիկոնենին Վահանայ՝ յոյժ սիրով, նոյնպէս զամենայն արս գնդին՝ զաւագս եւ զկրսերս։ Եւ լուեալ մամիկոնենին Վահանայ զողջոյն Արեաց տեառնն եւ զողջոյն ամենեցունց դրանն աւագանոյն, շնորհակալութեամբ գոհանայր երկրպագելով, եւ խնդալից ուրախութեամբ ընդունէր։ Եւ հրաման տուեալ Նիխորոյ զամենայն արս զօրուն Վահանայ մամիկոնենի ի ներքս թողուլ․ նոյնպէս եւ աւագպարսիկ արերոյ ի ներքս կալ յատենին հրամայէր։ Եւ կատարեալ զամենայն ասացեալսն Նիխորոյ, եւ

լցեալ ամենայն ատեանն արամբք՝ որ ընդ մամիկոնենին Վահանայ էին՝ եւ այլ պարսիկ արերով, սկսանէր խօսել Նիխոր ընդ մամիկոնենին Վահանայ եւ ասէր․

Թէպէտ եւ աշխարհակցութեան բնութեամբ չես կեցեալ ընդ իս, այլ ըստ բազում անգամ տեսանելոյ զքեզ ի դրան եւ լսելոյ յաշխարհի մարդկանէ ի Հայս եւ ի Պարսկէ, ոչ յանճանաչող եւ ոչ յանպիտան մարդկանէ, այլ ի լաւ եւ ի հայեցող եւ յիմաստուն արերոյ, զոր այժմ յայտնապէս փորձիւ ի միտ առեալ գիտացաք ամենեքեան, զի գործ պատերազմի ունի քաջութեամբ, նոյնպէս եւս առաւել խոհականութեամբ եւ իմաստիւք վճարի․ որպէս եւ դու զերկոսեանն զայդ ի քում անձին լիով ետուր տեսանել ամենայն Արեաց աշխարհի եւ ճանաչել։ Քանզի զքաջութիւն ցուցեր սակաւ արամբք․ քանզի ցանկաս կռուելով սակաւուք ընդ բազումս, և մեծամեծ զայդպիսի վնասանի առնելով և աշխատ ունելով: Եւ զիմաստութիւն յայտ արարեր՝ գիտելով զժամ կռուոյն և զտեղի տալոյ, և անվնաս զգունդն ի մէջի ունելոյ և միւսում եւս ժամու գործոյ պատրաստ լինել և չերկնչել: Զի եթէ ոչ երկու այդ իրք ի քեզ լի եղեալ էին, զիա՞րդ հնար լինէր քեզ այդչափ կարի սակաւ և թուով արամբք կալ ընդդէմ այնչափ անթիւ բազմութեան պատերազմող որերոյ, և երբեմն մեծապէս յաղթել, և երբեմն զարհուրեցուցանել և աշխատել: Յաղագս որոյ զմտաւ ածեալ իմ՝ զքո այդպիսի արարուած և զմտաւորութիւն, կարի քաջ ճանաչեմ զամենայն պատասխանիս՝ զոր առնելոց ես դու մեզ ամենայն բանի, զոր լսես ի մէնջ: Վասն զի թէ զապստամբութենէդ քումմէ հարցանեմք, թէ զիա՞րդ իշխեցեր խորհել՝ թող թէ առնել, պատասխանի տուեալ ասես, թէ չճանաչողութիւնն Պերոզի և ի յետսահարութիւն բռնադատեաց զիս՝ մեռանել. որ զծառայութիւնն և զվաստակ որպէս զատուած խնդրեր, և զվաստակոյն զհատուցումն առնել՝ և ոչ երբեք զմի յանմիտ մարդկանէ խորհէր հատուցանել: Զի քաջի առն քան զբազում ժամս հարանօք կեցեալ՝ շատ լաւ է մի օր ծանուցանել զլաւութիւն անձին և մեռանել: Եւ ոչ ոք յԱրեաց կարէ քեզ մեղադիր լինել՝ խորհել քեզ այդպէս խորհուրդ և առնել, ոչ որ այժմ Արեաց տէրն է և ոչ աւագանի դըրանն, որ գամ մի ի մէջի են, և դու գիտես: Վասն զի Պերոզ արքայից արքայ իբրև իւրում անձին և որդւոց չմարթաց հոգ տանել, բարի ծառայի առ նա՝ լաւ ինչ զիա՞րդ կարէր խորհել և առնել: Զի զայդ գործ զոր դու գործեցեր, բայց զի չկարէր ոք և զի չիշխէր գործել յայնժամ, այլ ամենայն ծառայ այր տեսանելով զնորա սատմբակութեանն զանչափութիւն, զամենայն որ խորհէր առնել, և չկարացեալ՝ մեռանէր կասէր։

Բայց քո և արանց որ ընդ քեզ եղեն միաբան, առ ոչ ինչ համարեալ զմահ անձին՝ դիմեցին յիրոդ քաջաբար. և որ մեռան ի ձէնջ, ի Պերոզի ամբարտաւանութենէն խնդրեն աստուածք զարիւնն զայն. և ովք ապրեալդ կարացայք և ի միջի լինել, անպարտ էք և անվնաս էք՝ վասն զի որ այժմ Արեաց տէրն է և ամենայն աւագանին՝ զայդ եւեթ խօսին հանապազ, և անմխիթար ողբան և տրտմին յիշելով զՊերոզի զանհաւան և զանբարհաւած ըղբարսն, զոր ոչ ունէր նման մարդոյ, այլ նման չար և վայրենի գազանի։ Որ կորոյս զինքն և զամենայն Արեաց աշխարհի զոյժ և զզօրութիւն, և զթագաւորութիւն մի մեծ և զազատ՝ ի ծառայութիւն ետ Հեփթաղին. յորմէ ի դառն ծառայութենէ՝ մինչ կենդանի է՝ Արեաց աշխարհն

զերծանել ոչ կարէ։ Բայց դու թէ հաւանեալ նուաճիս, և բնիկ քո նախնեաց տեառն ծառայութիւն առնես, և որ ինչ վատթարն եղեւ ի մէնջ և ի ձէնջ՝ մոռանաս և ի բաց թողուս, զայս առնես իմով միջնորդութեամբ, դու աստէն ի Հայս կաս մինչեւ թագաւորն կնքէ և տայ բերել առ քեզ. և եկեալ բարեաւ առ տէրն Արեաց, զամենայն որ ինչ բարի և արժան է և քում անձինդ և որում դու կամիս, տայ սիրով և կամաւ և կատարէ։

ԳԲ. Եւ խօսեցեալ զայս ամենայն բանս Նիխորոյ յատենին ընդ մամիկոնենին Վահանայ և ընդ ուխտակից նախարարսն Հայոց՝ որ ընդ նմա էին. և լուեալ մամիկոնենին Վահանայ՝ տայր պատասխանի բանիցն Նիխորոյ և ասէր. Աստուծոյ հաշտութիւն յորժամ է ընդ աշխարհի, յառաջահայեաց և իմացող մտաց դիւրին է անաշխատ ճանաչել։ Յորժամ զիշխանս բարեսէրս տայ և լուսածանօթս և աշխարհաշէնս, անդէն և անդ արժան է նուաղամոին գիտել զբարերարութեանն Աստուծոյ այցելութիւն, զոր սփռելոց է յաշխարհ և նորոգելոց, որպէս և այժմս ինձ երեւի և ամենեցուն: Զի զտէրն Արեաց իմ չեւ եւս է տեսեալ. բայց կամիմ տեսանել՝ եթէ տայ ինձ Աստուած միջնորդութեամբ քո, տեսանել այնպէս՝ որպէս ամենայն քրիստոնեայ կամի և ախորժայ: Սակայն զքեզ տեսանելով, զոր նոր խաղաղարար և առիթ բարւոյ այնպիսւոյ աշխարհի միոյ առաքեալ է, որպիսի Հայքն, և մեզ՝ որ աշխարհին մարդիկ եմք, կարի հայեցող ակամբ տեսանել, և ամենեցուն զխնամսն և զբարիսն՝ զոր տալոց է աշխարհին և մարդկան որ յաշխարհին են. քանզի տեսանեմք զքեզ կամաւոր բարւոյ և սիրիչ՝ անձին համարելով զբարի դիւան և զաշխարհին: Իսկ վասն Պերոզի արքայից արքային բարուցն

և անձնահաճութեանն՝ զոր ասացէր, անընտրող մտօք ունելով զծառայս, չընտրել զլաւն ի վատթարէն, զքաջն ի վատէն, զիմաստունն յանմտէն, զվաստակաւորն յանվաստակէն, շատ իսկ և բաւական լեցի քո՝ տեառն՝ բանն, և լիով ասացածն: Եւ ես գոհանամ զԱստուծոյ, զի զիս անաշխատ պահեցէք՝ յառնելոյ զըստ հարցման քո զպատասխանին: Բայց իմ թէպէտ էր այդ ամենայն տրտունջ զՊերոզէ, որպէս հանապազ խաբէին, զնա և զամենայն Արիս, արք անպիտանք, ատեցեալք յամենայն սրբասէր մարդկանէ, փախստականք յաշխարհէն ըստ աղտեղի գործոց իրեանց, լեռնախոյզք, աւազակապետք, արիւնապարտք, հացկատակք, բանսարկուք, խաբեբայք, շաղակրատք, անյարուչք, վատատոհմակք, ճանաչելով զանձինս թէ ոչ ինչ են, և կալ իւիք չկարեն, կասեալք յիրէ, լքեալք յորսոյ, գային անկանէին ի մոխիրն. և ձեր տուեալ զխնդիրն՝ խնդալով ուղարկէիք, պարգևելով գահ և պատիւ, և այլոց զտունս և զկեանս և զմեծութիւնս. և նոցա սակաւ մի խոյս եղեալ ի ձէնջ, լուեցից զայլ մեծամեծ թշնամանսն՝ որով թշնամանէին զկրակն յիւրաքանչիւր ի տունս, այլ գասս և նախատինս աւելորդ աղտոյ իւրեանց զկրակն առնէին: Եւ վասն զի զայս գիտէ ամենայն ոք և յայտնի է. զի ամենայն արուեստաւոր՝ որ զիւր արուեստն ինքն գիտէ և օգտեալ է յարուեստէն, զնոյն և որդւոց իւրոց կամի ուսուցանել, զի կեցցեն. և այնպիսի խաբեբայ մարդկան ծանուցեալ թէ ոչ իմաստիւ և քաջութեամբ կեցեալ և մեծացեալ, այլ սուտ վաճառականութեանն մոխրով, զնոյն փութային և որդւոցն իւրեանց ուսուցանել: Վասն որոյ բարձեալ էր յաշխարհէն Հայոց և կորուսեալ վաստակք և միտք, քաջութիւն,

տոհմականութիւն և արդարութիւն. և ի մէջ անցեալ փերեւերտին դէմքն այդր ամենայնի. և ձեր Արեաց տեսանելով զայն ամենայն, և չծանուցեալ՝ թէ մեր զայն հրահանգ եդեալ նոցա, և թէ չէն ուսեալ ինչ՝ չգիտեն, չէն մեղադրելի, այլ և յատենի եւս այպանելով՝ ամենայն վատաց և ի կուրոյ յետնելոց զՀայս ածէիք օրինակ, նախ Ասորոց, ապա լքելոց, ապա լուծելոց, ապա անգամալուծաց: Եւ բայց թէ ապա և որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող հացկատակաց ջոկն էր, և ոչ կորացեալ մտանէր ընդ դեախն. վասն նոցա և խնդութիւն եւս թուէր այնպիսի լուրն: Այլ որ մարդ էր և ամօթ կայր ի սրտի, և զայնպիսի բանս յԱրեաց տեառնէն լսէր, ոչ միայն միանգամ և երկիցս եւեթ ի դէպ էր մեռանել, այլ թէ և տասն անգամ կեայր և հանապազ զնոյն լսէր, տասն անգամ արժանի էր մեռանել:

Վասն որոյ և մեք երբեւ զխորհուրդս զայս ի միտ արկեալ իշխեցաք խորհել, և զայդպիսի ձաղանաց բանս՝ որ ի վերայ աշխարհիս եղեալ էր Արեաց տեառնն, և կայր ի նըմին հաստատեալ. և թէպէտ ածաք զմտաւ երթալ ըստ աշխարհ ելանել և կորնչել՝ ճանաչելով զԱրեաց ոյժ և զբազմութիւն, քանզի չէաք այնքան յիմարք և խելացնորք, թէ մեք Արեաց առաջի՝ թուով տառապեալ մարդիկ՝ այնչափ անթիւ բազմութեան զօրաց՝ ոչ կարեմք կալ ընդդէմ և կորնչիմք. քաջ տեղեկութեամբ գիտէաք. բայց ապա զայս ածաք զմտաւ, թէ գուցէ բնաւ յանզգաստուց զարհուրեալ գնամք՝ առաւել եւս ստուգապէս հաստատեալ ժառանգեմք զանուն վատութեանն՝ որ կայր ի վերայ մեր. թէ մարդիկ որ այնպէս յետին և անպիտան էին, յիրաւի կորեան, և անհետ եղեալ չերեւին ուրեք. արդ նոցա լինել ի միջի, ասէին, և չլինել՝ զնոյն վճարէ: Ապա ընտրեցաք նախ ծանուցանել զանձինս, և ապա կամ մեռանել և կամ կորնչել: Եւ եթէ էաք կացեալ միաբանք և չէաք պառակտեալք և քայքայեալք, ծանուցանէաք եկելոցն ի վերայ մեր, թէ արդարեւ որպէս զարի՛ այր եմք, և կամ թէ որպէս զԱսորի: Բայց զայս նշան մի տամ ձեզ, և փորձեցէք. զի զօրեարն զայն՝ որ զամ մի Պերոզի յիւրում թագաւորութեանն մոգութեամբ տէր է արարեալ, և այժմ զահ ունին և պատիւ, և յիւրաքանչիւր գաւառի իշխան են, և ձիոյ տէր են և զինու և գնդի, հրաման տուք՝ զի ժողովեսցին միաբան ամենայն իւրեանց պրուձիւ. և մեք այս սոյն արք թուով՝ զոր դուք գիտէք, որոց ոչ գոյ տուն և ոչ ծառայ, ոչ գունդ և ոչ տանուտէրութիւն. և դուք որ Արիք էք՝ զձեր օգնութիւն վայր մի ի բաց կալջիք, և զաշխարհս Հայոց ի մեզ և ի նոսա թողէք. և որ ոք կարասցէ ի միւսմէն հանել՝ նմա տաճիկք, և ձեզ ծառայութիւն արասցէ:

Եւ արդ զի մի բազմաբանութեամբ զերագալուր ձեր միտս ձանձրացուցից. այլ լաւել զօգուտ բազմաց, և չասել անհնար է. և քանզի յաղագս մեծի աշխարհի են բանքս իմ գիւտի և կամ կորստեան, և հարկ է լիով ասել. զի մեք որ զանձինս ի մահ եդաք, և յԱրեաց տեառնէն ի բաց կացաք, զայդ երկս ինչ ի ձեռն պատգամաւորացն գրեցի առ քեզ, և դու նոյնպէս գրով երկրորդեալ ի թագաւորէն. մեզ այդ խնդիրք միայն պիտին, և շնորհեցէք մեզ գրով և կնքով ի թագաւորէն: Զայլ ինչ պարգեւի շքեղութիւն, որ ոք վաստակել մարթասցէ՝ և տեսանիցէք, հայեսջիք՝ և ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան հատուսջիք. և մեր բնիկ տեարք էք, և մեք ձեր բնիկ ծառայք եմք. ընկալայք զմեզ սիրով, և ծառայեցու-

ցէք խնայելով. և զյանցումն զոր ի բնութենէ յանցանել ետուք՝ թողութիւն արարեալ շնորհեցէք մեզ:

ԿԳ. Եւ Նիխորայ լուեալ զայսպիսի կարգումն բանիցն ի մամիկոնենէն Վահանայ, մեծապէս խնդալից սրտիւ ուրախացեալ ասաց առաջի ատենին. թէ Զտրտմութիւն մեծ բեկման Արեաց աշխարհին որ եհաս, և զթանձրամած խաւարն որ եհաս և մածեալ նստէր ի վերայ սրտիս իմոյ, համարձակապէս և արդար խօսք Վահանայ և նուաճմանս ուեալք՝ փարատեալ զամենայն՝ մըխիթարեալ ուրախացուցին զիս: Հրամայէր արձակել զատեանն. և Որ ինչ, ասէ, պէտք են ինձ և Վահանայ այլ եւս բանից, խօսիմք օր ըստ օրէ, և յուսուրս քանի մի ուրախանամք առ միմեանս: Եւ այն օր հրամայէր Նիխոր Վահանայ առ նմա ուրախանալ ամենայն նախարարօքն ուխտակցօքն և բովանդակ գնդաւն որ ընդ նմա էին. բայց զուխտանենգսն ի Հայոց և զուրացողսն հանին արտաքոյ ընթրեացն ամօթալիցս։ Եւ ուրախացեալք այն օր ըստ օրինի մեծապէս ընթրեաց, և հրաժարեալք ի Նիխորայ՝ գնացին հանգչել ի վանս իւրաքանչիւր։

Եւ ի վաղիւն ժողովեալ ամենայն բազմութիւն մարդկան ի հրապարակն, հրաման տայր Նիխոր մինչդեռ ինքն առանձինն էր, զմամիկոնեանն Վահան տանել ի ներքս ի սենեակ։ Եւ խօսեցեալ ըստ ժամուն ընդ նմա միայն ընդ միայն զբազում ժամս՝ զպէտս կարեւոր իրաց աշխարհի ըստ իշխանաց հոգողութեան, գային երկոքեան ի միասին ի տուն ատենին։ Հրաման տայր Նիխոր ամենայն եկելոցն ընդ Մամիկոնենին Վահանայ, նախարարաց և ռամկաց՝ մտանել յատեանն առ նոսա, և արանց Պարսից աւագաց գալ առ նոսա յատեանն։ Բայց զարսն՝ որ զինքեանս հաւատարիմս Պարսկացն կացուցանէին, հրաման

առեալ նուիրակացն՝ և ոչ ի դուրսն մտանել տային, ասելով թէ Գործոյ ինչ դուք չէք իմաստուն բանից, և լսել իսկ չգիտէք, արդ զտեղի ատենին յարժանաւոր առնէ ընդէր խափանէք. զի թող նստի անդ մարդն այն՝ որ զխօսս աւագացն և զբանս իմաստնոցն լսել գիտէ և օգտել։

Եւ էր այնուհետև տեսանել յայտնի Աստուծոյ արդարաքննին հատուցումն, սիրելի ուխտակատարացն իւրոց տալ զպարծանս և զհամարձակութիւն, և խաբեբայ ուրացողացն դատու զգեցուցանել զամօթ և զանարգանս. և գայր ի յայտնութիւն բան գրոյն ճշմարտապէս՝ թէ Աստուած լոյս է։ Վասն որոյ ըստ նմին լուսաւորեալ ծագէին և երևք աստուածասէր պաշտօնէիցն իւրոց ըստ նմանութեան լուսոյն՝ զոր ընտրեցին ինքեանք և լուսաւորեցան։ Իսկ ի վերայ երեսաց մոխրապաշտացն նոյն կերպարան մոխրոյն իջեալ՝ նստէր ի վերայ ամբարշտացն, որոց մերկացեալ գլխօք՝ պատրողական հայկատակացն երեւեցան կերպարանք, ցուցակ սոսկ լի ամօթալից ձաղանօք: Եւ էին գոյնք ամենեցուն արդարեւ ըստ ասացածի եկեղեցական հռետորին, ծիւրեալք, ծնկեալք, երկթացեալք, պատկերի նմանեալք. զորս արդարեւ յայտ յանդիման առաջի երբեմն գերչացն խայտառակեալ նշաւակեաց խաչելութիւնն Քրիստոսի: Եւ կատարեալ առ նոսա ելանէր ի գլուխ բան սաղմոսերգին, Ոչ այսպէս են ամբարիշտք և ոչ այնպէս. որպէս էին թշուառացեալք և ողորմելի մարդիկն, որոց՝ ատրուշանն շնորհ չունէր, և յեկեղեցւոյ սրբոյ անձամբ մերժեալ արտաքս ընկեցան: Փոխովեալ նստէին առ մխեանս ապշեալք, քամակաբեկք, զարթուցեալք որպէս յերազոյ ցնորից գիշերոյ: Եւ ընդ Աստուծոյ զօրութեան գործ զարհուրեալ ապշէին, փութանակի և յանկարծ առնել ըզ-

նոսա այնպէս դժմիտս և ձաղադէմս առաջի սիրելեացն իւրեանց. ցանկային բազում գնոց առնուլ՝ թէ գոյր հնար՝ զապստամբութեանն անուն, և ո՛չ ոք տայր նոցա: Վասն զի որ ոք յայնպիսի անծանօթից կամէր երբէք մտանել յատեանն, ի բազմութեան ասէր ցնուիրակն՝ թէ յապստամբացն գնդէն եմ, և վաղվաղակի թողուին ի ներքս. այլ ոչ ոք տայր մտանել ի դուրս ատենին, և ոչ լսել զխօսս իշխանացն՝ որ զինչ խօսէին: Յայնժամ յայտնի տեսանէր յստակ ակն խորհրդոյ ճշմարտասիրացն զպայծառարար յաջողութեան ճախրումն Սրբոյն Գրիգորի ամենայն ճգնազգեցիկ ընկերովքն իւրովք՝ ի վերայ յերկարահամբեր ուխտապահացն բանակին, որ զամենայն երեսս պարսիկ մարդկանն և զայլսն՝ ահիւ և խնդութեամբ հայեցուցանէր ի մամիկոնեանն Վահան. որում տայր Քրիստոս իմաստ շնորհալից պատրաստաբան աջողակ ի գլուխ խոհականութեան, ձայնարկութիւն պատուեալ խօսիւք. և կատարեալ ելանէր ի գլուխ բան փրկչին Քրիստոսի, գրեալն յաւետարանն. Ոչ եթէ դուք իցէք որ խօսիցէք, ասէ, այլ Հոգին Հօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ:

Եւ երկրորդեալ յառենին զնոյն բանս մամիկոնենին Վահանայ, սկըսանէր միւսանգամ խօսել ընդ Նիխորոյ, և ասէր. Յաղագս ւրաքանչիւր ուրուք խնդրոյ և օգտի՝ որ այժմ աստ են առաջի ձեր նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ և յայրուձիոյ որերոյ, Ճանաչող էք և կարող, և գիտէք հատուցանել զարժանն. բայց ես և որ ընդ իս ուխտապահ նախարարքն են, զոր ինչ խնդրեցաք ի քէն պատգամաւորօք և գրեալովքն, զոր և երէկ և այսօր դէմ յանդիման խօսեցայ ընդ քեզ, և դու հրամանաւ Արեաց տեառնն և հրամանաւ ամենայն աւագանոյ դրանն գրով և կնքով խոս-

տացար տալ մեզ, առանց որոյ անհնար է կեալ մեզ՝ և ծառայութիւն առնել ձեզ, – հաւատոյ քրիստոնէութեան հաստատութիւն, մոգութեան և ատրուշանաց յաշխարհէս Հայոց բարձումն, զեկեղեցւոյ ըստ մեր կամաց զպայծառութիւն և զպաշտօն, – այդ որ կարևոր է մեզ և հարկաւորապէս պիտոյ, կնքով Թագաւորին հաստատեա մեզ. և այլ զոր ինչ գրեալ է ի նամակին, գիտես զամենայն, և ոչ ինչ է պիտոյ բազմաբանել առաջի քո: Բայց յաղագս գահու և պատուոյ և շքեղութեան, հայելով յիւրաքանչիւր ուրուք վաստակս՝ տաջիք անհոգութեամբ և մի զրկիցէք:

ԴԴ. Եւ զայս ամենայն խօսեցեալ մամիկոնենին Վահանայ, սիրով լըսէր զամենայն Նիխոր, և ախորժելով յանձն առնոյր: Խնդրէր Նիխոր ի Վահանայ զընիկ Հայոց զայրուձին. Կազմեա, ասէ, փութով և արձակեա ի Դուռն. քանզի Զարեհ որդի Պերոզի ընդդիմացեալ Արեաց արարուածի՝ գունդ գեռ կազմէր ի կորուստ անձին իւրոյ և հաւանելոց ընդ իւր. և դու փութա արձակել զՀայ այրեւձի, որ նախ քան զքո երթալն ի Դուռն՝ և սպաս մի քո մեծ ծանուցանի արարուածքդ առաջի Թագաւորին և ամենայն Արեաց: Վասն զի և ինձ հրաման ետ Թագաւորն վաղվաղակի մտանել ի Դուռն. վասն զի աստուածք զայս իրս յաջող և բարերարութեամբ վճարեցին, զի եւս առաւել վաղագոյն երթամ անդր՝ ի դէպ է և պատշաճ: Ուրախացեալ Նիխորոյ և Մամիկոնեանն Վահանայ առ միմեանս ոչ բազում ինչ աւուրս, կազմէր ըստիպով գործոյն պիտոյից: Հրաժարեալք ի միմեանց՝ չուէին խաղաղութեամբ, Նիխոր առ Թագաւորն ի Դուռն, և զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան ի Դուին:

Եւ կազմեալ[1] մամիկոնենին Վահանայ զայրեւձին Հայոց՝ արձակէր ի Դուռն, կարգեալ զգունդն ի ձեռն Վրենայ վանանդացւոյ. ընդ որս կազմեալ արձակէր և զիւր եղբօրորդի մի, զորդին Նահատակին Վասակայ զԳրիգոր: Որոց հասեալ ի Դուռն ժամանք՝ երթային պատրաստութեան գործոյ պատերազմին:

Եւ հասեալք յեզր գետոյն սաստկալէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեամբն, և զկամուրջն Արտաշատու գտին աւերեալ. և էր ինչ՝ որ ի տեղեացն բնակչացն, և էր ինչ՝ որ ի սաստկութենէն ջուրցն դիմեցմանց, և տարակուսեալ զօրքն՝ խնդրէին տեղիս անցի, և ոչ գտանէին. և փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկղմեալք ի ջուրսն, և հազիւ գտեալ անդրէն ելս՝ ապրէին: Իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան մերձեալ ի տեղի մի յեզր գետոյն, և տեառնագրեալ զինքն նշանաւ խաչին սրբոյ կենսատուի՝ իջանէր ի գետն, և որպէս

---

1. Շփոթեալ կարգ հատուածիս, յարմարեցաւ ըստ ձձ. և ըստ իմաստին:

ընդ յոյժ տեղի ծանծաղ՝ անցանէր խաղաղութեամբ ընդ ջուրսն. որ և տեղին՝ ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգութեամբ: Եւ լինէր այս նշան մեծ յայտնի, որ և առ յոյժ կացանի արանց լինէր անցանել դիւրաւ ըստ կամի. և ամենայն այրուձիոյն, ի ճշմարիտ հիմնացեալ հաւատոյն քաջ զօրավարին Հայոց Վահանայ՝ լինէր նշան, որպէս իսրայէլեան ժողովրդոցն յանցանելն իւրեանց ընդ Յորդանան:

Եւ հարեալք ի դիմի միմեանց գունդքն երկոքեան, և մատնեալ ի պարտութիւն գունդն Զարեհի՝ փախստական լինէին, և բազում վիրաւորք անկեալ յերկիր կործանէին: Անդ քաջացեալ հայրանման սեպուհն մամիկոնէից Գրիգոր, ցուցեալ մեծ քաջութիւն, յայտնի լինէր զօրավարին և զօրացն ամենեցուն, և հռչակեալ նորա լաւութեան անուն հասանէր մինչ ի թագաւորն Վաղարշ: Լաւացեալ և սեպուհն

վանանդացի Վրէն, գործ երեւեցուցեալ քաջանայր: Իսկ Զարեհն փախուցեալ ի լեառնակողմն տեղիս ուրանայր. զոր ձերբակալ արարին և ածին ի հրապարակն արքունի, և անդ նման անասնոյ փողոտէին յանխնայ:

Եւ ապա մտեալ յոստանն ի Դուին, և զշնորհակալութեան ըզպատարագն մատուցեալ Աստուծոյ արժանաւորապէս, և նախ զաղքատացն ողորմածութեամբ ըստ սովորութեանն կատարեալ զուրս, ուրախանային և ինքեանք ըստ Աստուծոյ հաճոյիցն խնդալից սրտիւ:

ԴԵ. Եւ յետ սակաւ աւուրց ընտիրով ժողովեալ մամիկոնենին Վահանայ զայրուձին Հայոց, և ինքն և ամենայն ուխտակից նախարարքն ընդ նմա, չուեալ գնայր առ թագաւորն Վաղարշ. և գնացեալք ըստ պատեհի աւուրց օթեւանաց ճանապարհին՝ երթեալ հասանէր ի Դուռն: Եւ լուեալ թագաւորին և ամենայն Արեաց աւագանոյն զերթալն Վաչանայ ի Դուռն, վաղվաղակի և ձեպով ժամ արարեալ՝ յանդիման լինէր թագաւորին և ամենայն Արեաց աւագանոյն: Եւ ածեալ զմտաւ զճանապարհորդութեանն աշխատութիւն թագաւորին Վաղարշու զմամիկոնէնին Վաչանայ, միայն սակաւ սիրով հարցեալ զողջոյն՝ ուրախանայր. այլ ոչ ինչ աւելի քան զայն հարցանէր զնա այն օր: Եւ ի վաղիւն ժողովեալ ամենայն աւագանի դրանն արքունի և այլ ամենայն բազմութիւն Արեացն, և լինէր խորան մեծ լցեալ սաստիկ որերով:

Սկսանէր խօսել թագաւորն Վաղարշ ընդ մամիկոնէնին Վաչանայ. Լուաք, ասէ, լսով զամենայն խօսեցեալսն քո ընդ Նիխորոյ. զոր ինչ պատգամաւորօք էիր ասացեալ, և զոր ինչ նամակաւ, և զոր ինչ դէմ յանդիման քո և նորա խօսեցեալ էր ընդ միմեանս՝ պատմեաց

մեզ, և ոչ էր քո սահեալ ի բանիցն զոր խօսեցեալ էր՝ և ոչ բան մի: Վասն զի Պերոզի իմ եղբօրն անձնահաճութիւն կամացն և անհաւանութիւն խորհրդոյն, և անլսողութիւն ումեք և ամբարտաւանութիւն, եթէ զքեզ միայն էր կորուսեալ յԱրեաց, թէթեւ ինչ էր վնասն. ծառայ մի կորնչէիր, որում թերեւս փոխանակ գտանէր. բայց նա իւրով հպարտութեամբն այնչափ անթիւ բազմութիւն լաւ որերոյ կորոյս, որոց այսօր փոխանակ չեք. յետոյ ապա և զինքն կորոյս և զորդիս և զկանայս: Արդ եթէ դու եղեալ ես պատճառ քո կորստեանդ և այնչափ բազմութեանն՝ որ կորեան ընդ քո ձեռն, դու այսօր հարցման արժանի էիր, և պատուհասի և չարաչար մահու. բայց իբրեւ այլ է պատճառ ամենայն գործոցդ այդմ և կորստեան՝ զոր դու գործեցեր, ըզքեզ ընդ այլոյ բռնութեան և վնասու պատուհասել՝ կարի ծանր է, և օրէնք մեր չհրամայեն։ Քանզի զայդ գործ՝ զոր դուդ կարացեր գործել, առ Պերոզի արհամարհոտ և կամակոր բարուցն՝ բազումք խորհէին յԱրիս գործել, բայց չեղեն ձեռնհաս. զի չկարացին զանձինս ի մահ տալ այդպէս աներկիւղ՝ որպէս դուքդ եռուք, քաղցր համարելով զկենցաղոյս տեսիլ. բայց դուք բնաւ ոչ ինչ համարելով զայս աշխարհ, քաջաբար մեռան՝ որք մեռանն. և եւս առաւել քաջաբար կեցայք, որ ապրեցայքդ և ի միջի էք։ Այլ երանի թէ և այլ որերոյն զորս ի զուրն տարաւ կորոյս Պերոզ, կարացեալ էր առնել զայդպիսի քաջասրտութիւն՝ զորս դուք արարէք. և թերեւս այսօր կենդանի էին իբրեւ զձեզդ և ի միջի և առ մեզ։

Եւ պատասխանի տուեալ մամիկոնենին Վահանայ՝ Թագաւորին Վաղարշու, առաջի ամենայն բազմութեանն, ասէ. Խօսել առաջի Աս-

տուծոյ և առաջի ձեր թագաւորաց երկայն բանիւք՝ չէ արժան։ Քանզի ես զամենայն զխօսս մեր և զխնդիր և զհամարձակութիւն գործոյն, դընել զանձինս ի մահ, ցուցի ձեզ և ամենայն դրանն ասպանոյ՝ ի ձեռն Նիխորոյ գրով և կնքով. զնոյն բազում անգամ ասել՝ յերկարումն է խօսից և ձանձրութիւն։ Վասն զի զկամս և զանհաւան բնութիւն՝ զոր ատացէք դուք զեղբօրէն ձերմէ ըղ-Պերոզէ, չար էր և առն թագաւորի անպատշաճ։ Բայց ի յայլ ոք արդեօք՝ յոր լինէր ի նմանէ բռնութիւն, տամբ էր արդեօք և կամ կենօք և կամ պատուհասիւ ինչ այլով. իսկ զմեզ հոգւովք հարկանէիք. որում կարեաց և վտանգի՝ ոչ մեր նախնիքն և ոչ մեք առաջի չկարացաք կալ։ Եւ հանապազ բողոքեալք և բողոքեմք, եթէ սուտ թուին մեզ օրէնքդ ձեր, և մարդոց անմտաց բարբանջմունք են. և մի բռնադատէք զմեզ թշնամանել՝ զոր կամաւ և խորհրդով պատուել ոչ կարեմք, և ոչ սիրել զի ծաղր թուին մեզ և չհաւատամք· և իշխանաբար և ըստ բռնութեան չլսել բողոքոյն մերոյ, և կամէիք կորուսանել զմեզ, և կորուսաք։ Քանզի օրէնք մեր զսըրբութիւն խնդրեն, և զամենայն աղտեղութիւն՝ որով հոգիք մարդոյ կորնչին, չառնուն յանձն և չկամին· և տերանց՝ հրամայեն ծառայել և հնազանդ լինել որպէս Աստուծոյ։ Եւ արդ աղէ ցուցէք այր մի՝ որ ի Պերոզէ արքայից արքայէ, որ զձեր օրէնս կատարեալ է և պատուեալ են, թէ վասն պիտոյութեան և կամ ի կռուի վաստակ և գործ ցուցանելոյ՝ գտեալ է։ Վասն զի ձեր Արեաց զօրագլուխք բազում եղեալ ի տեղիս տեղիս, ասասցեն զմիոյ ուրուք ի նոցանէ զերեւելի գործ ինչ՝ զոր նոցա արարեալ է և ձեր զօրագլխաց տեսեալ, և վասն այնպիսի վաստակոյ նոցա՝ ձեր հատուցումն արարեալ է։ Իսկ զաղտեղի

գործս նոցա և զմահապարտութիւն՝ յայտնապէս գիտեն գաւառակիցք նոցա և այլ մարդիկ աշխարհին Հայոց, թէ որպիսի մարդիկ են, լի ամենայն աղտեղութեամբք, սուտք, անպիտանք· աղտեղագործք, գաղտաշուրջք, գողք, լեռնախոյզք, գերեզմանակրկիտք, խաբեբայք· և ընդ որս կրսեր շինականք մարդիկ աշխարհին Հայոց՝ հաց գարշէին ուտել ընդ նոսա, և կամ բնաւ ի մօտ իսկ երթալ առ նոսա, զի մի պղծիցին գուցէ ըստ հրամանի օրինաց մերոց, գայլին ի ձէնջ խաբէութեամբ զձեր օրէնսդ ունէին, և ըստ կամի աղտեղեալ զկրակն՝ զձեզ առ անմիտս ունէին։

Յաղագս որոյ համարձակապէս ձայնիւ բարբառով առաջի ձեր ասեմ այսօր, ի բաց բարձէք զխաբէութեան զվաճառդ զայդ յաշխարհէն Հայոց, զոր չունիմք առ արդարս, և չպատուէ ոք իբրև Աստուած։ Այլ յետինն զառաջինն, վատքն զլաւն, և անպիտանն զպիտանին, և որդի ստամբակ զհայր, և ծառայ չարագործ զտէր իւր, յորժամ ի յետս տանել կամ կորուսանել, և զձեր սուտ օրէնսդ ի ձեռն առեալ՝ զամենայն չարիս զոր և կամի գործել՝ գովու վճարէ: Բայց աղէ՝ դուք ի մէնջ որպէս ի ծառայից զձեր տէրանց զպատիւն խնդրէք, զգործ և զվաստակ և զհպատակութիւն, զօգուտ, զարգարմութիւն, և աստուածաբար անզրկող մտօք զիւրաքանչիւր մարդոյ ըստ իւրաքանչիւր վաստակոյ զարժանն հատուցէք: Մեր ամենեցուն այդ բանք են, և այդ խնդիր. եթէ չնորհեալ հաստատեալ զխընդիրդ զայդ մեզ, և ի ծառայութենէ ձերմէ զմեզ ի բաց չկամիք հանել, որպէս օրէնքն են թագաւորաց գրով և կնքով՝ զայդ մեզ հաստատուն արարէք, և ի մէնջ որպէս ի ծառայ որերոյ գործ խնդրեցէք և հպատակութիւն. և ձեր մտացի և ամենա-

հայեաց ակամբ հայեցարուք յայր և ի գործ նորուն, և հատուցէք զարժանն:

Եւ խօսեցեալ զայս ամենայն բանս մամիկոնենին Վահանայ՝ առաջի Թագաւորին Վաղարշու և առաջի ամենայն աւագանոյ դրանն, և բարձր ձայնիւ գովեցին ամենեքեան և առ լաւս կալան, զարմացեալ ամենեքեան ընդ իմաստութիւնն Մամիկոնենին և ընդ չնորհ աջողութեանն բանիցն՝ որ ելանէին ի բերանոյ նորա: Քանզի ոչ միայն հաւատացելոցն, այլ և անհաւատիցն երեւէր բղխումն պարգեւեալ յԱստուծոյ բանիցն առ Մամիկոնենի, որ ախորժակ քաղցրութեամբ լսելի լինէր յականջս ամենեցուն:

Որում պատասխանի տուեալ Թագաւորին Վաղարշու՝ ասէր ցմամիկոնեանն Վահան և ցամենայն հայ նախարարսն ուխտակիցս Մամիկոնենին. Եւ զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ, և խօսեցաւ առաջի մեր՝ ձեր Վահանն, տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև ցյաւիտեանս։ Եւ զգործս ապըստամբութեանդ զոր ի բռնութենէն Պերոզի և ոչ ի ձեր կամաց գործեցէք՝ թողեալ լիցի ձեզ այսօր, և մի ոք իշխեսցէ ի Թագաւորաց՝ որ զայս գահ ունին, և կամ Արի այր՝ յիշել զայդ կամ առանձինն յիւրեանց խօսս և կամ առաջի առն Հայոյ, յայտնեալ մինչև յաւիտեան։ Բայց դուք հպատակութիւն զոր արժան է ծառայից առ տեարս առնել՝ հատուցէք առ մեզ լիով և կատարեցէք։ Եւ զայս ասացեալ Թագաւորին՝ արձակեցին զատեանն։

Ղ.Զ. Իսկ ի վաղիւն խորհեալ աւագանոյ դրանն Թագաւորին Վաղարշու, զոր գիտէին թէ և նա ինքն կարի սիրով ախորժէ և կամի լսել և առնել, տալ Մամիկոնենին Վահանայ զտէրութիւն Մամիկոնենից և զսպարապետութիւն Հայոց. և

Թագաւորն կամաւ և սիրով յանձն առեալ՝ ծանուցանէին Մամիկոնենին Վահանայ զկամս Թագաւորին Վաղարշու, միաբանութեամբ դրանն աւագանոյ։ Եւ Մամիկոնենին Վահանայ պատասխանի արարեալ ասէր. Ընդդիմանալ կամացն ձերոց և հրամանին՝ չունիմ իշխանութիւն. և յիս կողմն կամք ձեր և արարուած կարի մեծ է և առաւել։ Բայց կամէի այսպէս՝ թէ սակաւ մի գործ ցուցանէի և սպաս, որով ձեզ ըստ արժանի հաճոյ եղեալ՝ հայէիք ի վերայ, և ապա որ ինչ թուէր ձեզ և կամէիք առնել՝ առնէիք. բայց առ այս նուագ կամէի թէ ներէիք ինձ։

Եւ Թագաւորին և ամենայն Արեաց աւագանւոյն լռեցուցեալ զբանս Մամիկոնենին Վահանայ, բազմեցուցանէին զնա ի գահու տէրութեան Մամիկոնենից, տուեալ ցնա ըստ օրինի նախնեաց իւրոց և զսպարապետութիւն Հայոց աշխարհին։ Շնորհէին և այլոց ուխտապահ նա-

նախարարացն Հայոց, որք ի միաբանութեանն էին ընդ տեառն Մամիկոնենից և սպարապետին Հայոց Վ̣ահանայ, իւրաքանչիւր ումեք ի ժամուն որ ինչ պէտք էին պատշաճ ըստ անձին արժանաւորութեան։ Եւ ընկալեալ զամենեսին Թագաւորին Վ̣աղարշու և ամենայն աւագանւոյն՝ լի սիրով և կամաւոր պատուով, ի հրաժեշտի կացուցանէին երթալ խաղաղութեամբ յաշխարհն Հայոց։ Եւ եկեալ տէրն Մամիկոնենից և սպարապետն Հայոց Վ̣ահան՝ հրաժարեալ ի Թագաւորէն Ա̇րեաց Վ̣աղարշու և յամենայն դրանն աւագանւոյն, հարցանէր Թագաւորն Վ̣աղարշ զնա և ասէր. Վ̣ահան սպարապետ Հայոց, գո՞հ ես զմէնջ. քա՞ջ կալաք՝ թէ ոխն և ո՛չ եւս ինչ, ասա։ Եւ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վ̣ահանայ՝ պատասխանի տուեալ ասէր ցԹագաւորն Վ̣աղարշ. Զոր ինչ ձեր բարերարութիւնդ առ մեզ արար, բայց Աստուածն որ ամենեցուն արարիչն է և զամենայն մարդոյ կամի զբարի և զօգուտ, նմա միայն հնար և վայելուչ էր առնել զայդ առ մարդ, զոր և դուք առ մեզ անարժան ծառայիցս արարէք. այլ մարդոյ մահկանացուի անհնար էր։ Քանզի զխաան թողէք, գահ և պատիւ տուեալ մեծարեցէք, մեռելութեան յարուցիչ եղայք, զգլորեալ և զկորուսեալ աշխարհ մի դարձեալ կանգնեցէք։ Բայց որովհետեւ հարցէք և համարձակեցուցէք զարդարն ասել, որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեանս իմոյ, և յարուցեալ իմ՝ ի միջի արարէք, կամէի թէ զբովանդակ անձս յարուցեալ էր և ոչ զկէսս. վասն զի զկէսս մեռեալ տեսանեմ դեռ։ Եւ Թագաւորին Վ̣աղարշու հարցեալ ասէր. Աղէ՛ յայտնապէս ծանո մեզ զպէտս բանիդ, զի գիտասցուք։ Եւ սպարապետին Հայոց տեառն Վ̣ահանայ Մամիկոնէից ասացեալ. Զի թէ էր և հնար էր շնորհել ձեզ զտանուտէրութիւնն Կամսարականին, ապա բովանդակապէս շնորհեալ ի ձէնջ տեսանէի զմեռելութիւն ամենայն անդամոցս կենդանացեալ։

Եւ Թագաւորին Վաղարշու պատասխանի արարեալ սպարապետին Հայոց տեառն Մամիկոնենից՝ ասէր. Յաղագս ոչ կարի տրտմեցուցանելոյ զքեզ ի ժամուս, և դարձեալ՝ վասն զի նախ և առաջին զայդ պարգեւ խնդրեցեր ի մէնջ, եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն Կամսարականին։ Իսկ յաղագս տէրութեանն Արծրունեաց, թող վայր մի՝ զի գիտասցեն մարդիկն թէ որ ի տոհմէն են, ապա ինչ արժանաւորապէս ցուցանել առ մեզ, և վաստակս ինչ յօգուտ Արեաց աշխարհիս վաստակել. հայեսցուք ապա և մեք յարժանն։ Բայց դու այժմու ի մէնջ պարգևիդ գոհ լեր, և ջանա ամենայն ուժով տիրասէր լինել յայսմհետէ և արդարամիտ և աշխարհաշէն. և

երթ բարեաւ ի քո ընտանիս և յաշխարհն. և հասելոյ երբէք ի մէնջ հրամանի կազմ կաց և պատրաստ։

ՂԷ. Եւ հրաժարեալ Թագաւորին Վաղարշու զսպարապետն Հայոց՝ զտէրն Մամիկոնէից զՎահան, և զամենայն նախարարս Հայոց՝ արձակէր խաղաղութեամբ։ Եւ եկեալ զօրավարն Հայոց տէրն Մամիկոնենից Վահան յաշխարհս Հայոց, ամենայն ուխտապահ նախարարօքն Հայոց, որում ընդ առաջ ելանէր սուրբ այրն Աստուծոյ կաթուղիկոսն Հայոց Յոհան, պատուական նշանաւ խաչին և սուրբ նշխարօք Ճգնազգեաց նահատակին Գրիգորի, որովք և յուղարկեաց իսկ ի դուռն զամենեսեան։ Եւ պատահեալ սըրբոյն Յոհաննու կաթուղիկոսին՝ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ և այլ նախարարացն Հայոց որ ընդ նմա և ամենայն զօրուն բազմութեանն, ողջունէր ըզնոսա օրհնութեամբ համբուրիւ, և տանէր ուրախալից սրտիւ. Ցնծացէ անձն իմ ի Տէր, զի զճգնեալ որդւոց եկեղեցւոյ իւրոյ ջնջեաց զքիրտն՝ որ վասն անուանն Քրիստոսի քրտնեցան, հանգոյց զաշխատութիւնն, մաքրեաց զաղտ զինուցն, լուաց զոգիսն հաւատարմաց ուխտապահութեան ջրովն, և զգեցոյց ամենեցուն հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, և որպէս փեսայից եդ պսակս, և որպէս հարսն արքայութեան իւրոյ զարդարեաց զձեզ զարդու: Շնորհեսցէ բարեխօսութեամբ սրբոց իւրոց՝ զարդարել զձեզ և այնու զարդու՝ որով զարդարին առաքեալքն և մարգարէքն յաւուրն Քրիստոսի. զորոյ զարդու պայծառութեան անեսչութիւն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ կաթողիկոսին, և օրհնեալ զամենե-

սեան, նախ գային ի քաղաքն Վաղարշապատ, որ այժմ անուանի Նոր քաղաք: Եւ ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան ուխտակից նախարարօքն Հայոց՝ որ ընդ նմա էին, կային անդ աւուրս, և կատարէին զուխտս և զնուէրս ի սուրբ եկեղեցւոջն Կաթուղիկէի, և ապա յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց. և հոգացեալ նախ զպէտս դարմանոյ աղքատացն՝ լցեալք կատարէին: Գային միաբան ամենայն նախարարքն Հայոց և այլ բազմութիւն՝ զամենայն օր մեծապէս ցնծութեամբ սաղմոսիւք և ճառիւք հոգեւոր վարդապետաց եկեղեցւոյ սրբոյ, ուրախ լինէին զուարճացեալք առ զօրավարին Հայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ, և առ միմեանս: Եւ կացեալ անդ աւուրս, ապա չուեալ զօրավարին Հայոց տեառն Մամիկոնէից Վահանայ՝ գայր մտանէր ամենայն Հայոց բազմութեամբն ի բուն ոստանն

Հայոց ի Դուին օրհնելով և փառաւորելով զՍուրբ Երրորդութեանն զօրութիւն։

ՂԲ. Յայնժամ գայ յերկիրս Հայոց մարզպան, որում անուն էր Անդեկան, այր խելացի մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողութեամբ որոշել զիմաստունն յանմտէն և զլաւն ի վատթարէն։ Որոյ տեսեալ օր ըստ օրէ զօրավարին Հայոց զտեառնն Մամիկոնենից Վահանայ զիմաստից զառաջատեսութիւն, զարդարախոհութիւն, զաշխարհահօգութիւն, զքաջութիւն սրտի, զգիտողութիւն պատշաճ յամենայն իրս, ի բնաւի զյառաջադիմութիւն. տեսանէր և զայն՝ թէ յոր գործ և յօժարեցուցանէր զինքն, թէպէտ և կարի ի դժուարինն, Տէր յաջողէր ի ձեռն նորա, և ամենայն դիւրաւ վճարի և անաշխատութեամբ։ Եւ ընդ այսչափ աստուածատուր իմաստուն աջողութիւնս, որ բնակեալ էին ի

զօրավարին Հայոց տեառն Մամիկոնենից Վահանայ, զամենայն օր ըստ օրէ տեսանելով Անդեկանն և զմտաւ ածելով, զարմանայր ի միտս իւր ի ծածուկ, և ըստ բարեսէր մտաց իւրոց ուրախանայր։

Սիրէր զնոյն Անդեկանն, և ի դուռն ամենայն աւագանւոյն դրանն ստէպ և իւրոց սիրելեաց զիմաստալից միտսն առնն ծանուցանէր։ Տայր գիտել և թագաւորին Վաղարշու լիով զամենայն, ճանապարհորդեալ յաշխարհէս Հայոց և ինքն Անդեկանն ի դուռնն, զամենայն աջողութիւնս զօրավարին Հայոց տեառնն Մամիկոնէից Վահանայ, ընդ թագաւորին Վաղարշու՝ առաջի ամենայն դրանն աւագանւոյն յոյժ զարմանալով, թէ Եւ յամենայն այդպիսի լաւ իմաստունս՝ զոր իմ առ ձեզ բազում անգամ գրեալ էր և այժմ ինձէն ասացի, առաւելապէս և օր քան զօր լինէր տեսանել աճեցեալ, և ոչ փոքր ինչ երբեք նուաղեալ ի նմանէ ի սոյն յառաջադիմութիւն։ Յաղագս որոյ համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, թէ աւելի ձեզ և անդէպ՝ այլ մարզպան կացուցանել։ Քանզի այլ մարզպան որ երթայ յաշխարհն Հայոց, նախ և առաջի զայն խրատ չունի՝ զոր այրն այն ունի․ զի յո՞ւմ անձին այնչափ շնորհ և աջողակ խորհրդականութիւն բնակեալ, բայց ի ձէնջ՝ որ աստուածանմանդ էք և քան զմարդկային բնութիւնս ի վեր․ այլ ոք ի մարդկանէ համարձակապէս ասեմ, թէ սակաւ ոք է՝ որ համեմատ է նմա։

Եւ դարձեալ․ օտար մարզպանն որ երթայ յաշխարհն Հայոց, աշխարհն մեծ է․ յամս երկուս և երիս հազիւ կարէ ճանաչել նախ զերս աշխարհին՝ զգիւղն և զգաւառն, ապա զմարդիկ աշխարհին զլաւսն և զվատթարսն, զապիրատն և ըզպիտանիսն․ և վարելով ըստ անգիտութեան խառն ի խուռն՝ ոգւոց

շատ ծանր լինի։ Իսկ նա զի բնիկ ի յաշխարհէն է, զամենեսեան ի յականէ ճանաչէ, և զլաւն առ լաւն ունի և զանպիտանս առ յետինս։ Առաւել ևս որ լինի յիրացն, զոր ես ասեմ ձեզ․ մարզպանն պարսիկ՝ որ երթայ յաշխարհն, կնաւ երթայ և որդւովք, գրամբ և սիրելովք, ծառայիւք և աղախնեօք․ և այնք ամենեքեան թէ Արեաց տեառն զռոճիկ ունեն, չէ սակաւ ծախսն․ և թէ զաշխարհին ուտեն, շատ վտանգ հասանէ աշխարհին մարդկան։ Իսկ նա թէ լինի՝ զիւր տանն համբար ունէ, և ամենայն յարքունի գանձ համարի, և արքունի իւրոց օգուտ լինի։ Եւ յառն վաճանայ ի լաւութիւն հայելով և յաջողակութիւն՝ ի բազում ժամուց խորհելով ի միտս իմ և լաւ համարելով աշխարհին իւրոց և արքունի, համարձակեցայ ասել․ խորհել զարժանն և առնել՝ դուք գիտէք, եղբարք։

Եւ լուեալ զայս ամենայն բանս

յԱնդեկանայ Թագաւորն Վաղարշ և ամենայն դրանն աւագանւոյն, հաճեալ ընդ բանսն ամենայն Անդեկանայ՝ զարմացան ամենեքեան որք լուանն, և մեծաւ գովութեամբ առ լաւսն կալան զԱնդեկան, որպէս զայր տիրասէր և աշխարհաշէն։

Դթ. Վաղվաղակի հրամայէր Թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւագանւոյ դրանն և Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, և զտէրն Մամիկոնենից և զզօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին Հայոց կարգել։ Եւ բերեալ զհրովարտակ մարզպանութեանն՝ տային ցզօրավարն Հայոց ցտէրն Մամիկոնենից Վահան, և աջով հզօրին Աստուծոյ մարզպան ի վերայ աշխարհին Հայոց կարգեալ հաստատէին։

Իսկ տէրն Մամիկոնենից Վահան զօրավարն Հայոց և մարզպան, ընկալեալ զհրովարտակն մարզպանութեան ի ձեռաց դեսպանին, թէպէտ

և զխանդաղատութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս, այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի Թագաւորին իշխէր և անհնազանդ լինել։ Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ ի տունն Աստուծոյ։ Եւ Լուեալ զայս մարդկանն՝ որ ի քաղաքին, դրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ՝ նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ և հարսունք անգամ յառագաստաց մոռացեալ առ վայր մի առ խնդին զամօթ հարսնութեան, դիմեալ ընթանային յեկեղեցին։ Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ, լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի։ Եւ էր այն օր անյագ խընդութիւն և անսպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն և ողջախորհուրդ մտաց լաւահայեցաց, և սուտ թախանձալից և տրտմութիւն անմխիթար՝ խօթամտաց և խարդախաց։

Եւ սրբոյ կաթուղիկոսին Հայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւետաւորութիւնն շնորհեալ յԱստուծոյ ի ժամանակս երանելւոյն, բերկրեալ ցնծալից սրտիւ՝ տայր սաղմոսել ի ժամուն. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայէլի. և կարգացմունս հրամայէր զտեղի ելիցն Իսրայէլի ի ծառայութենէն Փարաւոնի, և ի Թագաւորութենէն՝ զընթերցուածն՝ ուր թագաւորեցոյց Դաւիթ զորդին իւր զՍողոմոն։ Եւ եկեալ ինքն ի տեղի լսողութեանն աստիճանին, և տուեալ զխաղաղութեան ողջոյնն և ասէր։

Ծ. Բազում կերպարանօք և ազգի ազգի ցուցակութեամբք փրկիչն մեր և տէր Յիսուս Քրիստոս զիւրոյ գալստեանն և մարդանալոյն ի սուրբ և յԱստուածածին կուսէն ծրագրեալ՝ յայտաբերէր մեզ զօրինակն ի սկզբանէ։ Մորենեաւն՝ զերանելի Կոյսն, եգիպտական նշանագործութեամբք՝ զանազանութիւն հրէական օրինացն, զենմամբ գառինն՝ զազատաբերութիւնն Իսրայէլի. որոյ ճշմարիտ գառին զենմամբ՝ փրկելոց էին ամենայն արարածք. ծովուն ճանապարհորդութեամբն՝ զաւազանին զնորածնութիւն, հեղձմունս Եգիպտացւոցն՝ զհնոյ մարդոյն մեռելութիւն. ի Յորդանան ճանապարհորդելոյ ժողովրդեանն պատահումն, ըստ գրելոյ ի կարգին, երկոտասան բղխեցելոցն աղբերցն, և եօթանասուն արմաւենեաց ծառոցն, Ընտրեաց, ասէ, փրկիչն այլ եւս եօթանասունս, զորս և առաքեաց ի բժշկութիւն հիւանդաց. որոց թէպէտ և պտղոց ճաշակմունք զհամս քաղցրութեան ունէին յինքեանս, այլ անդէն տնկագործեալ ի տեղւոջն՝ ցուցան աղբեւրս։ Իսկ ելք երկոտասան աղբերացն յորդաբուղխ ականց ի բացարձակ տեղիս ծաւալեալ՝ զբազումս ծաւալեալ անդաստանս ցուցանէն ծաղկալիցս և պտղալիցս և պտղաբերս. որք զերանելի երկոտասանից առաքելոցն ունէին զկերպարանս, զորոց և այսօր սաղմոսերգն յայտնեաց զճըշմարտութիւն, ըստ ասելոյն. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զտէր յաղբերացն Իսրայէլի։ Այս յորդաբուղխ աղբերաց շնորհ, նման եդեմեան դրախտին աղբեր, զորմանէ ասէ, ելանէր յերկրէ և ոռոգանէր զամենայն երեսս երկրի. ծծեալ սուրբ առաքելոցն ի կուսածին աղբերէ Բանին, լցեալ յուռթեցին զամենայն երեսս երկրի։ Ի սոցա քարոզութեան ծովուս՝ մեղք մեռանին, արարածք կենդանանան, Փարաւոն ընկղմի, Իսրայէլ ապրի, ծառայութիւնն սպառի, ազատութիւնն հաստատի, գառն բաշխի, ազինք անմահանան, ճաշակօղք գառինն՝ երկնաճանապարհորդք լինին, անճաշակօղք՝ ծովասոյզք կորնչին, հեթանոսք իսրայէլանան, սատանայ փարաւոնակերպ ի Յորդանանու յորձանսն սուզեալ կիզու։

Ո՛ նոր և անպատումն սքանչելեաց գործ։ Երեք անարատ մանկունքն զբոց հնոցին ցօղացուցին, և վտակք երկոտասան աղբերցս քարոզութեան՝ զջուրսն մկրտութեան աւազանին հրացուցին. այլ մի և նոյն բարեձեւ Բաբելոնի հնոցն և բաբելացի անօրինացն բոցանայր։ Եւ աստ. զոմանց՝ աւազանին ջուրք լուացեալ զաղտ զօդուց մկրտելոցն՝ լուսազարդեալ նորոգէն, և զարդարութեան թշնամին հանդերձ գործովք հին մարդոյն յայրիչ հուր անանցական փոխեալ կիզուն։

Եկեղեցւոյ սիրիչք, առաքելոցն որդիք, Քրիստոսի արեանն գինք, մի ծառայեցուցանէք զոգիս ձեր երկիւղի մարդկան. տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղբերացն Իսրայէլի։ Ահա սիրեցէք զեկեղեցիս, և սիրեցայք յեկեղեցւոյ, զթագաւորս՝ քաղցրացոյց եկեղեցի, զգազանս՝ ընդելացոյց, զգայլս՝ գառինս արար, զձեզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց։

Այլ ես այսօր առ ցնծալ սրտիս և ուրախանալ մտացս՝ համբարձեալ զձեռս ի յերկինս ընդ ծերոյն Դաւթայ աղաղակեմ առ Աստուած, զոր ինչ դրուատեաց գոհութեամբ նա յաղագս որդւոյն իւրոյ Սողոմոնի՝ մատուցանէր Աստուծոյ բարձրելոյ՝ բան. Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ՝ ի զաւակէ իմմէ նստել յաթոռ իմ, և աչք իմ տեսանեն։ Զայնակցելով ընդ մարգարէին ասեմ զնոյն և ես. Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս, որ ինձ հաւատացաւ, պատուով շքեղութեամբ պայծառացեալ ի Քրիստոսէ։ Հրէայքն պապանձեցին, ուրացողք ամաչեցեն։ Փախեաւ Ադոնիա, որ առանց Աստուծոյ կարծէր թագաւորել. օգնականացն զգեցեալ զամօթ՝ պաշարեալք ընդ սեղանովն թագչէին. Թագաւորեցին, ասէ, և ոչ ինեւ. դաշինս կռեցին՝ և ոչ իմով կամաւ։ Ո՞ւր են առանց Աստուծոյ գոռոզացեալքն. ո՞ւր են առանց Աստուծոյ իշխանացեալքն. ո՞ւր են արիւնահեղքն, ո՞ւր են պոռնկասէրքն։ Տուր ինձ, ասէ, զԱբիսակ սամնացի, և զԱստուած ոչ խնդրեցին, և զՏէր զօրութեանց ոչ ճանաչէին։ Ո՞ւր են եկեղեցւոյ թշնամանիչքն, առոտնհարուք օրինացն, որբութեանն ապղծիչք, շինիչք մոխրատանցն, մոռացողք ճշմարտութեանն, հայհոյողք արդարութեան. – փախեան, կորացան, ամաչեցին։

Ո՛ տայր զգլուխս իմ ի ջուր, և զաչս՝ յաղբերս արտասուաց, և նըստեալ լայի զհիգացելոցն կորուստ։ Ահա տեսէք, ահա մեռանի իգատենչն. այլ մի տայք մեռանել։ Սատակի առաջի սեղանոյն՝ արիւնահեղն. այլ օգնել փութացարուք: Գլխատի Սիմէի, այլ ձեռն տուք գթալով. չէ՛ ասա, ասացէք Սողոմոնի. և ոչ ի քարեղէն սալս գրեալ անթողութիւնք օրինացն: Քրիստոս է ասա. ծափս հարէք ամենայն հեթանոսք. որ ասէ, թէ Ներկայք առ իս ամենայն աշխատեալք, և ոյք ունիք զբեռինս ծանունս, և ես հանգուցանեմ զձեզ: Եւ դարձեալ, թէ, Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն:

Այլ և ձեզ պատուիրեաց հզօրագունիցդ և կարողացդ, թէ Դուք որ կարողդ էք՝ զտկարութիւն տկարացն բարձէք. կոչեցեալք դուք ի Քրիստոսէ և բազմեալք, պատրաստեալք ուտել զհացն երկնաւոր, կոչեցէք և ընդ ձեզ զկաղսն և զկոյրսն և զհիւանդս. և մի տայք թոյլ նոցա ընդ Ագոնեայ և ընդ Յովաբայ՝ զեղջերաց սեղանոյն բուռն հարկանել[1].

---

[1] Աստ թուի պակաս ինչ:

որ է անգամ մարմին անբեղուն ըստ բուսոյ, և անհամ ըստ ճաշակոյ, յունէրէն[1]: Գինել կաթն յօժարեցուցէք զոգէսան ի սննդականութիւն. և յուրախարար բաժակէն ըմպել ուսուցէք՝ յանուշարար ուրախութիւն ոգւոյն փրկութեանն. յայնմ կաթնէ և ի գինւոյ՝ զոր յառաջաձայնեաց իմաստաբանն Սողոմոն շնորհօք Սուրբ Հոգւոյն յԵրգս երգոցն ասաց. Քանզի գեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարսն, քանզի գեղեցկացան ստինք քո ի գինւոյ: Բայց ի թմբրական գինւոյն հրաժարեցուցէք զախեղծսն և զհիւանդացեալսն ոգւով զընկերսն, զոր ի հրէական ժողովրդոցն արբեալ անառակութեամբ. Արարած գիրք[2] մեծ մարգարէին՝ յանդիմանեալ յիշատակէ այժմ և մինչ ի վախճանն.

---

[1] Թերի են իմաստքդ:

[2] Իմա զԳիրս Ծննդ. բայց ոչ ի նմա՝ այլ յԵսայ գիրս (ԼԲ, 6) գրեալ է բանդ:

«Նստաւ, ասէ, ժողովուրդն յուտել և յըմպել, և յարեան ի խաղալ»: Եւ մի դարձեալ ի գինւոյն յայնմանէ, զոր Ղովտ և Նոյ արբին: Եւ մի ընդ Սիմէի ելանել տայք արտաքս քան զԵրուսաղէմ, և մանաւանդ յածել ի խնդիրս որդւոց Հագարու: ԶԻսահակայ տուք սերել զզաւակ, և ի նորա խնդրել ի զաւակէ զմարդացեալն Աստուած: Քանզի զհարձորդէգիրն ի քարեղէն գրեալ սալսն՝ համակ խստութիւն քարոզէ քարասրտացն և չարաց. զոր և Պաւղոս ըստ այլաբանութեանն առակախօսեալ ասաց. Քանզի Հագար, ասէ, լեառն Սինեա է յԱրաբիա, հաւասար է այժմ Երուսաղէմի, և ծառայէ որդւովքն իւրովք հանդերձ. այլ վերին Երուսաղէմ ազատ է. և Թողութեան Քրիստոսի վարդապետութիւնն գրեալ յընդունողացն, և միացեալ ոչ ի քարեղէն սալսն, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս:

Բազում են եկեղեցւոյ սրբոյ բըժիշկք. եկայք այսր ամենայն աշխատեալք, և ոյք ունիք ըստ յառաջագոյն ասացելոցն՝ բեռինս ծանունս, և աստ ի բաց ընկեցեալ հանդերուք: Իսկ դուք որ այժմդ ի ներքսդ էք, լերուք կոչնականք և հրաւիրակք արտաքոյ անցաւորացն, ելէք ի հրապարակս և ի փողոցս, ժողովեալ զամենայն ախտացեալսն ոգւովք և զբեկեալս մեղօք՝ ածէք այսր, և բժշկին ամենեքեան՝ բերելով ընդ ինքեան. զխոստովանութիւն և զարտասուս պահանջէ: Եւ ըստ իւրաքանչիւր ախտից՝ բժիշկքն յայտնի են և պատրաստ: Զմաքսաւորն առ Մատթէոս աւետարանիչ ածէք, և Զաքէոս. զպոռնիկս առ կինն պոռնիկ՝ որ այսօր դուստր է Քրիստոսի. զաւազակս՝ առ աւազակն դրախտաբաց. զուրացողս՝ առ առաքելութեան դռնապանն և փակակալ Պետրոս: Եւ գին աւելի ինչ ոք քան զաղօթս և զարտասուս ոչ պահանջէ:

Բայց միայն ի դատաւորացն՝ հայցի ողորմածութիւնն առ դատաստանաւն:

Եւ արդ ո՞վ ոք քան զայնպիսին կայցէ հէք և թշուառական, որ վասն խուն արտասուաց՝ յերկնից արքայութենէն վրիպեալ գտանիցի. և կամ քան զմիւսն եւս հրաշալի և երջանիկ, որ ընդ սակաւ օր ըստ օրէ արտասուաց՝ զյաւիտենից բարութիւնսն ժառանգիցէ: Քանզի եթէ զկին սիրելի և կամ զորդի և կամ զայլ ոք ի կարեւոր բարեկամաց տեսանէիր մեռեալ, ո՞չ ապաքէն լայիր չարաչար, և լուել երբեք և ոգի առնուլ ոչ կամէիր: Եւ արդ՝ զքոյին իսկ զոգիդ տեսանես հանապազ մեռեալ առաջիդ. և անշէջ հրոյն երկիւղ և գեհենի սպառնալեացն յիշումն միշտ զխորհուրդդ խոցոտէ, և դու յորսայս անկեալ հեղգաս. զիա՞րդ հանդարտել իսկ և կամ առ վայր մի կարիցես լուել և ոգի առնուլ:

Հաւատացէք, զի ես ընդ բանս իսկ զարհուրեալ դողամ: Վասն որոյ զձեզ աղաչեմ զջոկս հաւատանոցդ դեռեւս և անդայթիցդ, մի նմանեցուցանէք զաղօթս ձեր փարիսեցւոյն. թէպէտ և բիւր բարեաց զանձինս գտանիցէք եղեալ պատճառ, այլ ասացէք, եթէ Ծառայք անպիտանք եմք. և մի առանց իւղ բառնալոյ՝ ընդ անմիտ կուսանսն ճանապարհորդիցէք ի հարսանիսն. դուցէ փակ լիցի դուռնն, և մնայցէք ամօթալից արտաքոյ: Եւ մանաւանդ դուք՝ որ զամենայն ցերեկութեանն աշխատութիւն՝ զտօթս և զքրտան, զվաստակս և զտեւողութեան յաստուածային այգեգործութեան տընկելոյ յոգւոջ ուրուք, յամենայնէ վրիպիցէք, և զբնաւն կորուսանիցէք:

Արդ եղիցի ձեզ ընդ այդպիսի զարդու՝ և զերկնից փափաքելի զգենուլ զզարդն. և ընդ այսպիսի ուրախարար պսակի, որ թուով ա-

ւուրս պայծառացուցանէ զատացողս իւր, զլուսատեսիկ և զերկնաւոր պսակն, զանապականն և զմշտնջենաւոր ընդունել՝ յաջոյ փրկչէն մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի։ Լսել զփառաւորեալ և զերանելի բարբառն, թէ, Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի։

Որում լիցի մեզ արժանի լինել և ամենեցուն, շնորհօք և մարդասիրութեամբն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԹՈՒՂԹ

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑՒՈՅ

ՄԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ
ՍՏԱԽՕՍ ԱԲԵՂԱՅԻՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹՂԹՈՅՍ

ԱՌԱՔԵԱԼ ՅԱՄԻԹ ՔԱՂԱՔԷ

Լուսաւորէ միշտ շնորհ աստուածային՝ զսիրողս արդարութեան․ և մանաւանդ զայնոսիկ՝ որ աստուածային բանին պարապեցին քննութեան․ քանզի ուսան ի Քրիստոսէ, որ ասէ․ Քննեցէք զգիրս։ Զի շահ մեծ անձանց համարելով զերկնաւոր բանն՝ միշտ կիրթ ունելով զնոյնն, զի թեւաւորեսցեն զոգիս իւրեանց և զլսողացն՝ այնպիսի մասանց առաքինութեան․ քանզի պատճառ զօրութեան և իմաստութեան ընկալան, ուսեալ ի մարգարէէն․ «Որ հանէ զպատուականն յանարգէ՝ բե-

րան իմ եղիցի»։ Քանզի բան Ճըշմարիտ՝ արդար և օրինաւոր ի խրատաբանութիւն ժողովրդոց՝ ծաղկեալ պտղաբերէ զոգիս լսողացն երկնաւոր լուսովն։ Սոքա զօրէն վաճառականաց ընդ ծով և ընդ ցամաք աշխատասիրեալք՝ վասն յոլով տանելոյ զխորհուրդս մտացն անապական երկնաւոր գանձուն, տալ որոց խնդրէ ի Նոցանէ զբանն աստուածային ի գիւտս փրկութեան անձին։

Յորոց մի յայսպիսեացս երանելին Ղազար՝ Նախանձաւոր և աշխատասէր այսպիսի երկնաւոր արուեստի, անդստին ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական գիտութեան՝ Յունաց յաշխարհն Ճանապարհորդէր· և անդ քաջաց և առաքինի մարդոց պարապեալ՝ լիով զմարգարիտն՝ զբանն աստուածային՝ ընկալեալ յինքեան, եկեալ հասանէր յիւր աշխարհն։

Եւ քանզի սովորեաց մարդկային բնութիւն՝ զի իմաստունքն և

մեծամեծքն գնեն ի վաճառականաց զմարգարիտն և զպատուականս հանդերձիցն, զի երեւելիք և պայծառք երեւեսցին ամենայն մարդկան յերեւելիս· սոյնպէս և զսորա զգիտութիւն բանի լուեալ իմաստուն և գիտուն մարդոց ընթերցուածոց պատուիրանացն Աստուծոյ՝ գովեցին, և խնդացին նովաւ յամենայն ժամ եկեղեցիք և վկայարանք Սրբոց և տեղիք վարդապետարանք· ծաղկեալք լինէին հոգիք լսողացն ի շնորհացն որ ելանէին ի բերանոյ նորա· և ի մէջ հայրապետացն և եպիսկոպոսացն իբրև զարուսեակ պայծառացեալ երեւէր բանական գիտութեամբն։

Կամեցեալ մեծի յիմաստութեանն Վահանայ մարզպանին՝ զօրավարին Հայոց՝ Տեառն Մամիկոնէից, զնա իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել, շնորհէր նմա զհոյակապ և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի, որում անուն էր Սուրբ կաթողիկէ եկեղեցի, վանօքն. և նորա ընկալեալ զբանն մարզպանին՝ խնամածէր զտեղին:

Պատահեաց նմա կրել տրտմութիւն ի վայրապար մարդկանց, զի ի հրոյ ճասեալ փայտակերտն եկեղեցւոյն: Վասն որոյ ածեալ զմտաւ և յիշելով զբանն Պաւղոսի, զի յամենայն ժամ աստուածասէրքն առանց խղճի մտաց կեցցեն, որպէս աղօթս առնէր ասելով. «Խնդրեմք յԱստուծոյ, զի մի չար ինչ պատահեսցէ ձեզ». յայսմանէ կամ եղեւ նմա գնալ ի կողմանս Յունաց. հասանէր յԱմիթ քաղաք, և անդ առ ժամանակ մի զտեղի առնոյր: Տեսանելով զայն չարանախանձ մարդկան՝ յաւելուին բանս սուտս զտեղւոյն և զուսմանէն եւս զնորա, զի զբարձր անունն խոնարհեցուցանել կարասցեն:

Լուեալ զայս ամենայն Ղազարու՝ իբրեւ զքաջ պատերազմող զինեալ զինքն, զի բանիւ զօրութեան զիւր ոգւոյն և զքաջալերութեան և ըզ-

պատկեր կերպարանաց՝ ի ձեռն գրոյ թղթոյս այսորիկ ծանուսցէ նոցա, զվաստակ բանի իւրոյ որ առ նոսա յառաջագոյն լուսափայլեալ, զի կարճեսցին բերանք չարախօսացն զնմանէ. զի այսպէս, ասէ, ի ձեռն անխմաստ և վայրապար մարդոց՝ եհաս հալածումն լաւաց և պիտանի մարդկան աշխարհիս Հայոց: Նա մանաւանդ զի վստահ եղեալ յամենիմաստ մարզպանն, եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել չլսող, և գիտել զիրաւունս, զի անմեղադրելի զինքն արասցէ ի ձեռն գրոյս:

Եւ առեալ ի ձեռն զզէն գիտութեան, զի յաղթող երեւեսցի. և առաքէ զգրեալս ի ձեռն բարեսէր մեծի և պատուական նախարարին՝ Մամիկոնէին Համազասպայ, որ և պատճառ իսկ եղեւ նմա այսրէն դարձին. զի յաղբերէն գիտութեան նորա արբցեն միւսանգամ մարդիկ և պտղաբերք լիցին Աստուծոյ զարդարութիւն:

Վասն որոյ և զերրորդ պատմութիւնս Հայոց՝ երանելի իմ Ղազար պատմագրեաց։ Ընդ նմին գրեցաք և զԹուղթս, զի ընթերցասէրքն ըզպատմութիւնս կարդալով՝ ընդ նմին և զԹուղթս ընթերցեալ, զփորձ առցեն նորա լաւութեան բանին։

Փրկիչն մեր և տէր Յիսուս Քրիստոս՝ քաջ զգուշացուցանելով պատուիրէր Առաքելոցն. թէ, Յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք՝ ասասջիք, եթէ ծառայք անպիտանք եմք։ Իսկ ընդէ՞ր և հոգեւոր մշակն Աստուծոյ՝ Սուրբն Պաւղոս, զկծեալ իմն երբեմն վասն արանց խանդացելոց ընդ մեծ շնորհն որ էր ի նմա, և բանս անհանճարս խօսելոյ ընդ նորադարձ աշակերտեալսն՝ ի կործանումն լսողացն, զորս անուանագրեալ սուտ մշակս կոչէ, և չկարացեալ տանել զայթակղութեանն՝ արտաքոյ Քրիստոսի կանոնին վարեցաւ, և անձամբ զանձին լաւութիւնս և զճգունս մեծամեծ պարծանօք գրեալ մի ըստ միոջէ կարգեաց. և ոչ իմն ըստգտեալ խոտեցաւ. այլ կաց մնաց ի նմին առաքելութեան պայծառապէս։ Եւ եթէ ընդէ՞ր այս այսպէս լինէր՝ ծանիցէ քննօղն, թէ կարասցէ. ապա թէ ոչ՝ լռեսցէ։

Արդ դու, Տէր, այր քաղցր ես և խոնարհամիտ և արդարահայեաց և կշռաքնին, և հաւատոց Աստուծոյ առաւել ընդանի՝ որպէս և ամենայն նախնիքն քո։ Եւ ես անպիտանս և ամենեցուն կղկղանք՝ թէպէտ և երեւեցիմ առաջի Տեառն՝ առն եղեալ որդի, իբրեւ զանզգամ՝ որպէս մեծ առաքեալն Պաւղոս. այլ քո Տեառն՝ քրիստոսանմանութեամբ տարեալ՝ ներելով անզգամութեանս իմում, ընկալ զիս իբրեւ զանզգամ։

Զկեալ զիմ ի տղայութեանն՝ զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ։ Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հռոմս, ժամանակեցի անդ. և եկեալ անտի կեցի առ Կամսարականսդ՝ յամենայն ամբոխան, մինչեւ յամս նուաճման ձերոյ։ Եւ

զհետ այնորիկ որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ պարապիլ աղօթից և հանգչել։ Եւ երթեալ ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս. զձմեռն ի քարայրի առ առն միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս և տեղին՝ անձուկ. և զամառն յաղագս տօթոյ տեղւոյն՝ քահանայապետ աշխարհին՝ տէր Մուշէ, տանէր զիս առ ինքն, ուր և լինէր ի հովու։

Արդ՝ զառաջինն կելոյն իմոյ ըղվարս՝ տէր Ներսէհ և Հրահատ, կամսարական՝ գիտեն. զՍիւնեացն յառաջադրեալ եպիսկոպոսն աշխարհին։ Եւ դու յայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն. ոչ իբրեւ զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկրտւոյն, և ոչ իբրեւ օտար զոք ի քէն և կամ զծառայ ուրուք քանզի պարեգօտաւորք ազատեալ են ի

Քրիստոս։ Իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղեւ մեզ առիթ՝ Տէր Աղան՝ քո Տեառն քեռի էր։ Ըստ այդմ մասին ի Հայս քեզ Տեառն անկ էր։

Դարձեալ, երանելի մայրն քո յորժամ առ բդեշխին ած զձեզ[1], յորում դրան և զմեզ ուսուցանէին, – սակայն թէպէտ և ըստ տիոց աւագագոյնք քան զձեզ էաք, այլ սնընդակիցք էաք ձեզ և խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր, – սնուցանէ մայրն ձեր օրհնեալ և Անուշ Վռամ[2] ըստ իւրեանց հոգեսիրութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպէս զձեզ։ Այլ ըստ այնմ ամենայնի քեզ Տեառն անկ էր։ Իսկ ըստ առաւելեալ շնորհիս, զոր ետ ինձ Քրիստոս, եթէ արժանաւորի կամ անարժանի, զայն տուիչն քաջ գիտաց։ Ապա արդարեւ քեզ իսկ և արժանի։

Վասն զի ի գործս յայսմ՝ զքո զքաջութիւնդ զօրացուցեալ պայծառացոյց վերին խնամակալութիւնն քան զամենեցունց, որք էին և կամ որ այժմ են ի Հայս. և զիմ շնորհս՝ քան զբազումս պարեգօտաւորաց։ Ահա անզգամեցայ և ճառեմ. ներեա՛, աղաչեմ, փոքր մի անզգամութեանս իմոյ։ Ապա սաստոյդ՝ առաւել քեզ իսկ էի արժանի։

Եւ եմ ես այն Ղազար՝ ըստ առ ի քէն և այլոց բազմաց ստացածի, որում ոչ ոք գոյ փոխանակ։ Իսկ այժմ առ նախանձու աղէտի՝ բազումք նկրտէին լինել իմ փոխանակ. բայց եթէ լիցեն։

Քանզի ի սկզբանէ արարածոց բազում օձիւս գործեաց նախանձ՝ յաշխարհի։ Անդէն և անդ ի սկըզբանն զնախաստեղծն ընկճեալ՝ նախանձու բանսարկուին՝ դարձոյց զնա ի հող. և վկայէ գիր ի Կաթուղիկեան, թէ Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ: Երկուց միայնոյ դեռ ևս յԱդամայ ծնելոց՝ յաշխարհ, Կայէնի և Հաբելի, որպէս ի փոքրիկ և ի նեղ՝ յանբաւ բնակութիւն տիեզերաց հայեցուցեալ, զԿայէն նախանձարկու դիւին՝ եղբայրասպանութեամբ զաւակաց: Ի ձեռն նախանձու դրդռեալ Եսաւ ի վերայ Յակովբայ՝ մահ խորհէր: Ի ձեռն նախանձու զանմեղն Յովսէփ՝ մոլեգնութեամբ եղբարքն ի ստըրկութիւն վաճառեցին: Եւ ի ձեռն նախանձու զերկուս հոգեշնորհ անձինս՝ զԱհարոն և զՄարիամ, յանարժան խորհուրդ յանդգնեցուցեալ՝ բորոտեցուցանէր զմարգարէ կինն: Ի ձեռն նախանձու զախոյեանաբեկ և զժողովրդակեցոյց զայրն զԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել:

---

[1] Տես յէջ 356,

[2] Տես յէջ 356,

Եւ արդ զի՞նչ ևս ասեմ զարարածոցս առ միմեանս, ուր և զամենեցուն զարարիչն և զտէր Յիսուս

Քրիստոս՝ առ նախանձու ժողովուրդք Հրէից և քահանայապետք՝ նախ ժամանակօք ձաղեալ այպանէին, կոչելով զնա երբեմն կախարդ, յասելն, թէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս. և դարձեալ՝ գինեմոլ անուանէին և զեխասէր, ասելով ցաշակերտսն, թէ Ընդէ՞ր վարդապետն ձեր խառն ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէ և ըմպէ: Այլ և չպահեցողութեամբ և անժամակերութեամբ եպերէին, ասեն. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ խառն ուտեն: Կոչեցին զնա և դիւահար. Ո՞չ, ասեն, ասեմք, թէ Սամարացի ես դու, և դեւ գոյ ի քեզ: Եւ ժողովեալ սուտ վկայս՝ առ մոլեգնութեան քինուն՝ զինչ պէտս տային խօսել, և քըրքջէին խրախացեալք առաջի դատողացն. ուր ծանուցեալ Պիղատոսի ըստ վկայութեան Աւետարանչին, թէ առ նախանձու մատնեցին զնա, լուացեալ զձեռս՝ ասէ. Անպարտ եմ ես յարենէ առնդ, զի ոչ ինչ գտի ի դմա վնաս արժանի մահու. դուք առէք և ըստ ձեր օրինաց դատեցարուք։ Եւ ընկեցեալ զնա յօրէնսն և ի ժողովուրդս, ուր էին երկոքեան մահապարտք՝ և ժողովուրդք Հրէից և օրէնքն։ Որոց չհանդուրժեալ դիւամոլ Նախանձուն՝ վիճակեցին մահու, և ոչ ուղղոց այլ անիծից, իբրև զչարագործ և մարդասպան, այսինքն՝ խաչի, զարարիչն և զնորոգիչն, զկենսատուն և զմահասպան, զերախտաւորն առ ամենեսեան, զքաղցրն և զբազումողորմն։

Եւ զայս ամենայն կարիս կրեալ յանձն իւր յաղագս մեր՝ զնոյն և իւրոց աշակերտացն ստէպ զգուշացուցանէր, թէ և ձեզ դիպելոց է այս ամենայն. յորում մի իբրև զանկազմս և զանպատրաստ գտեալք՝ հասելոց ի վերայ ձեր վշտացն՝ զանգիտիցէք։ Եթէ զիս սիրեցին՝ ապա

և զձեզ սիրեսցեն. եթէ զիս ընկալան, և զձեզ ընդունիցին. ապա թէ զիս հալածեցին՝ և զձեզ հալածեն. և եթէ զիս ատեցին՝ և զձեզ ատեն. և եթէ զիս՝ որ տանուտէր էի՝ Բէեղզեբուղ կարդացին, ո՛րչափ ևս առաւել զձեզ և զընտանիս իմ։

Դորին նմանեօք ըստ ժամանակի ուսացեալ առ Նախանձու կուտէին ի վերայ իմ բազում բանսարկութիւնս ասելով. եթէ «Ղազար ասէ, թէ պոռնկութիւն մեղք չէն. զայն և մարզպանին սադրէ»։ Եւ եթէ ընդէ՞ր այդ այդպէս, դու Տէր, քաջ գիտես քան զսուտ կարծողսն։ Եւ ընդունէին զեղխ և անսուրբ անձինք քաղցր ախորժելով զլուր այդպիսի բանից՝ ի սատարութիւն բունելոց յինքեանս չար գործոցն։

Արդ ո՞ր ոք յանօրինաց՝ թող թէ ի քրիստոնէից՝ ի միտս իւր խորհէլ զայսպիսի ինչ բան, թող թէ և առ այլում զայսպիսի շշնջել բան, ո՞ր անմիտ, ո՞ր ագէտ, ո՞ր Հրեայ, ո՞ր այլազանդ։ Եւ Ղազա՛ր զայդ քարոզէր. ում և կամ ո՞ւր, և կամ ե՞րբ. որ ազգէ՛ան ի գրոց, որ անհրաժա՛նդն է յուսմունս, որ մովսիսական օրինացն օտա՛ր է և քրիստոսական շնորհին անտեղեա՛կ։ Եւ չիցե՞ն արդեօք աբեղեանս Հայոց արժանի ողբոց արտասուաց և բազում սգոյ, համբաւել զանպիտանս, խօսել առ նախանձու զանարժանս։

Բանզի ո՞ արդեօք զերկայնամիտն և զանցասումն Աստուած դրդուեալ՝ յայնպիսի ահաւոր շարժեաց ի բարկութիւն, ածել զՋրհեղեղն ի վերայ ամենայն երեսաց երկրի, մինչեւ զամենայն ծածկել զլերինս. ո՞չ ապաքէն բորբոքեալն ի պոռնկութիւն։ «Տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան՝ խառնակեցան ընդ նոսա»։ Յաղագս որո՞յ երեք համարեցաւ այնպէս մեծ արդարութիւն Ահարոնեան Փենեհէսի՝ ազգէ յազգ մինչեւ յաւիտեան, եթէ ոչ յաղագս հարկանելոյ գեղարդեամբն

և ցցելոյ ընդ գետինն զԶամբրի՝ հանդերձ Մադիանացի բոզին, և ցածուցանելոյ զբարկութիւն Աստուծոյ։ Յորո՞ւմ պատուհասի քսան և չորք հազարք արանց ի միում պատերազմի անկան ի ժողովրդենէն Տեառն։ Ամնո՞ն ո՞չ ապաքէն վասն անհանճար խօսիցն՝ բազմաժամանակեայ քինակալութեամբ սպանաւ յեղբօրէն։

Կամիցի՞ն զսոցուն անդստին ի մովսիսագիր պատմութենէն և յայլոց մարգարէից լսել զհակառակն. հայեսցին ընդ առաջին ճանապարհ հարցն ապաշխարութեան։ – Այրն Աստուծոյ՝ Ենովք, ընդ ամուսնացեալն օրինաւորութեամբ և գտեալ հաճոյ Աստուծոյ՝ յանմահական փոխեցաւ վիճակն։ Նոյ՝ բազմաժամանակեայ պահելով զկուսութիւն մինչեւ ի հինգ հարիւր ամ և զկնի այսորիկ յաղագս որդեծնութեան ամուսնացեալ սրբութեամբ՝ երկրորդ աշխարհիս սերելոյ գտաւ պատճառս: Ըստ սմին և մեծն ի մարգարէս Մովսէս. սոյնպէս և պաշտօնեայ նորին պարկեշտասէր կուսութեամբ պատուեալ Յեսու: Իսկ զարմանալի զառնէն զԵղիայէ՝ ո՞ ոք բաւական իցէ ասել բանիւ զգովութիւն, որ ի մարմնի զանմարմնոցն բերելով զքաղաքավարութիւն՝ հրեղէն կառօք ի հոգեղէնսն վերացաւ ի կեանս: Իսկ եթէ ի քրիստոսատուր շնորհէն ըղձացունց բաղձայցեն զնմանս, զխըստագոյնս գտցեն և զզարհուրելիս, որ զբնաւ գործելոցն մեկուսի ընկեցեալ մեղանչականութիւնս, և զլոկ զպատճառս տենչից հայեցմունսն՝ ընդ կատարեալ շնութեանն լծեաց փրկիչն, ասելով. թէ «Որ հայի ի կին մարդ՝ ի պատճառս ցանկութեան՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում»:

Այլ և զհեթանոսաց զվարդապետին յաւելեալ ի սոյնս զքարոզութիւն՝ լռեալ լռեսցեն լիրբքն և անամօթքն, որ այլոց բանիւ զիւրեանց կամաց խօսին զախորժս. և չսոսկան արամբն՝ որով Քրիստոս խօսէր ընդ աշխարհի, որ զմիացորդս չարչարանաց Փրկչին յիւրում ի ճգնափորձալից ի մարմնի կրէր, Տարսոնացի սերովբէն Պաւղոս: Սա զոր ինչ յաղագս պոռնկացելոցն չժառանգելոյ զարքայութիւն գրեաց՝ յամենայն յիւր ի Թուղթսն՝ յոյժ բազում են, և գրել զբնաւն մի ըստ միոջէ շատ աշխատութիւն համարիմ և աւելորդ. քանզի ընդ գիտնոյ օրինաց են խօսքս: Այլ սակաւ բանիւք զոր յերկրորդումն թղթին գրէ ի Կորնթացւոցն՝ ճանաչի և այլն ամենայն. թէ, «Ընդէ՞ր իսկ բնաւ և անուանի ի մէջի ձերում պոռնկութիւն»: Եւ առ Եփեսացիսն, թէ, «Պոռնկութիւն և ամենայն պղծութիւն և կամ ագահութիւն մի անուանեսցի ի մէջի ձերում»: Եւ անդէն առ նմին. թէ «Զայս գիտասջիք, զի ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռապարիշտ, ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի»:

Արդ, աղէ տեսցուք հէքք և թըշուառականք, ընդէ՞ր առ նախանձ արկանիցեն զանձինս ընդ անապաշխար մեղօք. զորոց և յիշէ, ասելով, թէ «Են մեղք որ մահու չափ են». զոր և յԱւետարանչացն կարդան ցանդ և զանց առնեն իբրև զարհամարհոտս, թէ, որ «Հայհոյեսցէ զՀոգին Սուրբ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձելումն»: Այլ գործէ ոք մեղս ըստ թուլութեան մարմնոյ, որպէս և ես՝ որ մեղաւորս եմ քան զամենայն կենդանիս. այլ ասել ըզմեղսն չգոլ մեղս՝ որպիսի՞ արհամարհոտ և ամբարիշտ հոգի կարիցէ ածել զմտաւ: Իսկ որ ճանաչէ ըզյանցանսն և զարհուրեալ սրտիւ կարօղ լինիցի փութալ ի զղջումն՝ վաղվաղակի պատահի թողութեան: Իսկ որ կամիցի ապաքինել ըստ

ձեռոյ անմիտ կուսանացն՝ չգիպի ողորմութեան:

Այլ ասեն. Աղանդաւոր է: Եւ զայս ստէպ ծանուցանել ամենեցունց ճեպէին. զորս հաւատացուցեալ ի տկարամտաց՝ թեր ի վարդապետութիւն շնորհին որ էր ի յիս, հայեցուցանէին: Որ և զանուն անգամ աղանդոյն, որով բամբասէին յանդըգնեալքն՝ կարի յոյժ համարիմ աղտեղի նշանակել գրով: Այլ նկատումն հայհոյանացն զնոցունց իսկ զյառաջագրելոցն բերէ զնմանս, թեթևս և չնչինս համարել ըզպոռնկացելոցն զգործս:

Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն, և ըստ զօրելոյ տկարամտութեանս իմոյ կարգացեալ զգիրս արանցն սրբոց, որք վառեալք Սուրբ Հոգւոյն զինու՝ զաւուրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն ի սիրտս նոցունց, և զաղեղունս նոցա փշրեցին, և զփրկագործ վարդապետութիւնն՝ իւրեանց գրով մեզ աւանդեցին, հոգացեալ իբրեւ զարդարեւ ոգեսէր հայրս, զամենայն արգէտ խորհուրդ մարդոց զօգուտն, զորոց յերկար ոք և ջերմ սիրով ընթերցեալ զգրեալս, անջատս և դիւրագերծ կարէ լինել հրարձակ նետից չար ձգողացն. զսրբոցն ասեմ զԱթանասէ Աղէքսանդրացւոյ, և զերկուց միանուն արանցն, զԿիւրղէ Աղէքսանդրացւոյ և զԿիւրղէ Երուսաղեմացւոյ, զԲարսղէ Կեսարացւոյ և զԳրիգորէ Նազազացւոյ, որ և յաղագս առաւելեալ ի նմա շնորհի՝ Աստուածաբան յորջորջեցաւ. և զմերոյն առաքելանման նահատակին Գրիգորի՝ զվարդապետէն Հայոց, և զնոցունց նմանեացն, որք զնոյն շաւիղ առողջմտութեանն հետեւեալ վարդապետեցին: Յաղագս որոյ և զայլսն ամենայն և զորս առ նոսա արանցն՝ ծառայք նորա ունին զամենայն գրեալսն, զԱրիոսի Աղէքսանդրացւոյ և զԱպողինարոսի Լաւոդիկեցւոյ, և զՆեստորի զԱնտիոքացւոյ, և զԵւտիքեայ Կոստանդնուպօլսեցւոյ, և զԿումբրիկայ ստրկի, որ և յետոյ Մանի զինքն անուանափոխեաց. ուստի և Մանիքեցիք կոչեցան աշակերտեալքն նմա. և զայլոցն բազմաց զնոյնանման կործանեան ճանապարհին ուղեկցաց, զորս սուրբ կաթուղիկէ և առաքելանման Եկեղեցւոյ նզովեալ և արտաքս ընկեցեալ՝ յամենայնէ ի բաց և մեկուսացեալք ի յԱստուծոյ ուղղափառ ուխտէն, մինչև ցայսօր վարին ներկեալք իւրաքանչիւր աղխիւ, անծածուկքն միմեանց, և յայտնի են ամենայն ուղղափառ ժողովրդոց:

Եւ արդ թէպէտ և գթեալ ոտքս անբժշկութեամբ կաղան ի հաւատըն, այլ սակայն բանիւ և ոչ գործով. զի ըստ մարմնոյ պարկեշտութեան յամենայն ձգնութիւնս մի զմիով ելեւելս առնեն, և մանաւանդ ի կերակուրս և ըմպելիս և ի գիջութեան ժուժկալութիւնս. և զայս տեղեակ գիտեն յամեալքն ի Յոյնս:

Իսկ Հայոց աշխարհի աղանդ՝ զոր ասեն և անանուն է ըստ վարդապետի և անգիր ըստ բանի։ Ի հաւատոյ և յուսմանէ ապէտք երեւին, և ի գործս ծոյլք և անժոյժք. յորոց՝ ըստ անգիտութեանն՝ որ է ի նոսա, և ըստ անկարգ վարուց, այդպիսի իսկ արդարեւ աղանդոց-վայել էր բուսանել, ըստ յօդուածոյ առաքելաբանութեանն. թէ «Ըստ խոզի հարմնացելոյ՝ կոյաջուր բաղանիք»։ «Մի արդարեւ պատմեսցի այս ի Գէթ, ըստ բանի ողբոյն, և մի լուիցի ի դրունս Ասկաղոնի». իսկ որ ընթեռնուն ի միտ առցէ։

Բայց ես թէ և գիտէի զոք յայնպիսեացն՝ ընդ Լոյս դատել և կամ պարտաւորել ամենեւիմբ և ոչ կամէի. վասն որոյ կարծէին չարաթոյնքն, թէ՝ և ես նմանիցիմ նոցա։ Քանզի ուսեալ էի ի Փրկչէն, որ ոչ հրամայէ ամենեցունց՝ յոխորտ խլել զորոմն ի ցորենոյն՝ մինչեւ ի ժամանակ հնձոցն, և առաքել զհրեշ-

տակս իւր ի ժամանակի հնձոցն. զորս կամ հրեշտակս իսկ ասէ, և կամ Ճշմարիտ վարդապետս. որպէս սովոր են զվարդապետս հրեշտակս անուանել աստուածեղէն Գիրք, որպէս և զիշխանն՝ աստուածս ասացին մարգարէքն։ Իսկ ես ոչ հրեշտակս և վարդապետ, և ոչ երբէք իսկ չեմ եղեալ բանիս այս ըստ երբէք ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան[1] և ոչ երբէք։ Քանզի յաղագս ատելոյ զիս, — թերեւս արդեօք և ըստ անարժանութեան, — սուրբքդ և անարատք և յամենայն մեղաց աղտ ուսուցիչքդ Հայոց՝ թող ի մեծամեծն ձկտեցուցանել զիս, յեպիսկոպոսութիւն և կամ ի նոցին յառաջին զգաստութիւն, և կամ յեկեղեցւոյ դատաւորութիւնս, այլ և քորեպիսկոպոս ոք չարար, զոր Պարսիկք և արք անարժանք գործեն և այսօր։

---

[1] Պակասի ինչ կամ խառնակեալ է. իսկ իմաստն յայտնէ չլինել փափագող կամ հետամուտ աւագութեան։

Իսկ անձամբ զանձն յանդգնեցուցանել ի վարդապետութիւն, որպէս և զբազումս տեսանէի յանպիտանից, այնպէս յահագին առնէն սարսէի ի Յակոբոսէ, որ բողոքէն ցանկ, թէ «Մի բազումք վարդապետք լինիք, եղբարք, գիտասջիք զի մեծ դատաստան ընդունիք»։ և ոչ դարձեալ իբրև լցեալն պիղծ և վատթար գործովք, որոց չհայեցեալ յիւրեանց գերանն՝ յայլոց մատուցեալ յակինն՝ զննեն հանել շիւղ։ Եւ այսպիսի կեղծեօք հնարեն կարծեցուցանել աշխարհի զանձինս արդարս. և այն ոչ երբէք ծածկի, այլ եւս առաւելեալ յաւելուածովք կուտեն անձանց բարկութիւն յաւուրն բարկութեան. և չլսեն ըզՊաւղոսի բողոքն, «Թէ զանձինս դատէաք»։ Եւ այլք ագահութեան ախտիւ վարակեալք՝ արկանեն ընդ պարտեօք զարդարս և զոչ արդարս,

և կարացեալ եւեթ ըմբռնել զմամոնայն՝ յաղագս որոյ խուենն, այնուհետեւ զամենեսեան արդարս անուանեն և անմեղս, և զմարգարէին Ամբակումայ սուտնկանեն զաղաղակ, մանաւանդ թէ նովաւ զՍուրբ Հոգւոյն, թէ «Վա՛յ որ պահէ զագահութիւն չար ի տան իւրում»։

Դարձեալ ասէին թէ գամ մի պիղծ ոք է և չարագործ՝ Ղազարայ վանք անդ են, և սիրէ զնոսա։ Եւ զայնպիսի բանից զասացողաց զգործս՝ ես ահա լսեմ, զի ոչ ինչ է ինձ հարկ ասել. բայց օր ահագին և անաչառ Քրիստոսի՝ չլռէ, այլ անշէջ բոցոյն մատնէ։ Եւ անուանէին բարեկամս ինձ եղբարսդ սրբոյ զգին գրուանին զքո տեառն եղբօրորդւով։ Եւ ունին երէքեանքդ զամենայն սննդեան և խրատու մասն և զհրահանգ՝ հոգեպէս և մարմնապէս, և զծանօթութիւնս ուղղափառ հաւատոյ՝ յօրհնելոյ ի մօրէն քումմէ և ի քէն ի Տեառնէ։ Եւ են արք ոչ *թերակատարք ինչ հասակաւ և կամ տխեղծք, այլ յամենայն մասնաւորութիւնս և յիրս արիութեան լիք և կատարեալք: Ընդ նոսին և զԱբեղենից տէր, որ և նա ի քո Տեառն սիրոյն և յամենընկալ բարերարութենէդ ունի զամենայն յարգանաց իւրոց և լինելոյ ի միջի զպատճառ, և առ ի Տեառնէ. և էն ի Քրիստոսի շնորհէն ամենեքեան ողջ և ի միջի: Հարցցին ըստ մարմնոյ զհայրութեան իմոյ իրասս և զըստ հոգւոյ զվարդապետութեան իմոյ զբան, և զոր ինչ լուեալ է քո յինէն. չունելով պարտաւորութիւն յոգիս իւրեանց, տասցեն անուստ:*

Բայց սիրելին երեքին եղբարքն զվանսն Սրբոյ Կաթուղիկէի՝ պըտղովք և ամենայն պիտոյիւք. որոց իւրաքանչիւր ուրուք տուր յայտնի էր՝ և գրով մնաց ի տեղւոջն. որք արդարեւ քո Տեառն կամացդ դոքա երեւեցան կամակատարք: Վասն զի յօրէ յորմէհետէ, դու Տէր, ըստ

քո անարգամեծար խնամոցդ յանձնեցեր զիս քո ընտանեաց, դոքա երեւեցան յիս հրամանակատարք բանի քում, ուրոյն ըստ կամի ըզպտղաբերութիւն տեղւոյն հատուցանելով. և ուրոյն զիմ պէտս և զկարօտութիւնս հոգալով, այլ և զբանս իմ յոյժ ախորժիւք և պատուականութեամբ ընդունէին՝ որպէս և զառողջ վարդապետի, և պատուէին որպէս և զհայր. և մանաւանդ առաւել տէր Համազասպ, որում տացէ Տէր ողորմութիւն, որպէս և տանն Ոնեսիփորայ, բարեխօսութեամբ սողի զբանդ. զի բազում անգամ հանգոյց զիս և ի հալածմանն կերակրիչ իմ եղեւ:

Իսկ ոմանց ի տանդ տեառն՝ ես իբրեւ զանօթ էի յաւելորդ: Քանզի յաղագս որոյ արուեստի դու, տէր, զիս սպասաւորեալ մեծարէիր՝ այնմ ինչ դոքա չէք տենչողք: Արծաթ և ոսկի, զոր թէ իմ ի շատ ումեք տուեալ էր, որում թէ ոք ի խնդիր էր՝ զայն ի պէտս տեղւոյդ ծախէի: Խոհակերութիւն ուսեալ իսկ չէի, եթէ ձկան աղիս ըստ ուրուք ճաշակելեացն մարթէի յօրինել, և կամ զհաւուց փարախս, որովք թերեւս կարէի ումեք հաճոյ լինել[1]:

Բայց ես և այլ նոր ինչ բանս ասեմ Տեառնդ, զոր եթէ թուիցի արդարախնդիր մտացդ՝ նախ քան զամենայն ապաչեմ զտէրդ՝ քննել զայդ. յորոյ ճշգրտիւ հասեալ ի վերայ՝ կամ զարմասջիր և կամ խոտեալ իբրեւ զոչ արդար՝ անգոսնեսջիր: Քանզի յօրէ յորմէհետէ տարար դու, Տէր, զիս ի տեղիդ, մինչեւ յօր հալածման իմոյ՝ ի մտից տեղւոյդ և կամ երեխայրեաց մինչեւ ցդրամ մի յանձն իմ ոչ է յարեալ, և յիրս իմոց պիտոյից ումեք ինչ ոչ էր տուեալ. և գիտեն զայս բնակեալքն ընդ իս: Այլ առաւե-

---

1. Հատուածդ Խոհ... ումեք... վրիպեալ է ի Բ, Գ տպագրաց.

լագոյն այր մի Ակիթ անուն, որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց՝ ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ, և մինչեւ ցգնալն իմ ի տեղւոջդ էր, և արդ լուայ թէ առ Անգղոյ է նա առաւել գիտէ, քանզի յոլով նորա արբանեկեալ էր զպէտս տեղւոյդ, հարցցի թէ կա՞յ ուրեք և տասցի: Այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ ի տեառն Ներսեհէ և Հրահատայ ի պէտս գարմանոյ և հանդերձոյ և ձիոյ՝ յայտնի է, նոյնպէս և ի քո Տեառն յեղբօրորդեացդ. և այն իսկ շատ լինէր ինձ և բաւական, այլ երբէք և յաւելորդացն՝ ի պէտս տեղւոյդ ծախէր յիմոցն: Բայց բերեալքն իմ յԱղուանից և ի Վրաց և ի Սիւնեաց և յԱրշարունեաց, և որ ի դոցունց իսկ ի քո Տեառն եղբօրորդեացդ, ամենայն իւրաքանչիւր ուրուք տուրն որոշողութեամբ մնաց ի տեղւոջն գրով. և զիս հանին մերկ և թըշնամանօք յամենայն արարելոց իմոց, զոր ի մանկութենէ ապրեալ էի։ Զի անգամ և զհոռոմ գրեանդ ոչ ետուն զկնի իմ. որք կան այդր ընկեցեալ ի կերակուր ցեցոյ. բայց արդեօք կարդացեալ լուսաւորիցին ի դոցանէ բնակեալք ի տեղւոջդ, և կամ զայլս լուսաւորիցեն։

Եւ դու, Տէր, զայս և մի ինչ ոչ գիտացեր, բայց գիտել արժան էր. քանզի լուայ, եթէ ասէին զկնի իմ, եթէ չգայր ինչ ի տեղւոջն։ Զի ամենայն կահիւ կազմածով՝ եթէ սակաւ մի երեւէին նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն՝ չհամարէին զանձս արժանի կալոյ։ Զի թէպէտ միանգամ և երկիցս ջարդեցաւ բոլոր կահն յանհաստատութենէ շինուածոյն, այլ զվերջինսն թէ գիտացեալ էր Տեառնդ՝ և պահանջեալ յինէն համար, դէմ յանդիման զերեւելիս գոլ առաջի քո՛ ընդդրութեան, գովութեան և կամ պարսաւանաց էի արժանի։ Բայց ես ընդ օձաեւլոյն եւեթ այսր անդր։ . . . . .

Զի տրտում եմ անմխիթար մինչեւ ի մահ, որ նման գայլոց յարձակեցան յարարս իմ և գիշատեցին յանխնայ, տեսեալ զիս՝ եթէ մերժեցայ յաչաց քոց։ Եւ արդ իմով ընչիւք շրջին պճնեալք՝ ծաղր առնելով զիս։ Այլ որ ինչ ի տեղւոջն մնաց իմ, ուրախ եմ և ցնծամ, զի ի սուրբ և ի հոգեւոր տեղւոջ մնաց։

Դարձեալ այլ շոգմոդ բանիւք զայրացուցանել զքեզ, Տէր, ընդ իս փութային, թէ մանուկ մի հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել։ Եւ ինձ հրեշտակ ոք ոչ մարմնացաւ, որ թերեւս ըստ հոգեղէն բնութեանն տեսեալ զառ ի ծածուկ ձգեալ զորոգայթ թշնամեացն՝ մարթէր զգուշանալ և յանձն առնոյր լինել ինձ երկրորդ մարդ, զոր և առնէի։

Անդէն և անդ հասեալ մօտ անկանէին ի դաւաճանութիւն նենգիչքն, և արբուցեալ հրապոյրս պղտորս՝ ասէին. Ո՜վ անմիտ մարդիկ, ընդէ՞ր վաստակիք յանօգուտս. հի՞մ լայք ի զուր ի խորշակահար տեղւոջդ, և խօլութեամբ անձնամահք լինէք: Չի են ի Մամիկոնէից տանէ աւագ ծառայք ոմանք և այլ քահանայ աւագ որ է ի տանն, որոյ ընդ մեզ բանք են երդմամբ, թէ երբ և է Պազորայ իսկ չտամ հանգչել այդր, թող թէ նորա ումեք: Եւ այսպիսի բանիւք թուլացեալ լազքն, այնուհետեւ ի շալակս իւրեանց՝ առաւել քան ի տեղիդ՝ փութային համբերել: Սակայն ես նման մեղուի բերելով յամենայն կողմանց՝ բաւական լինէի և ծախողացն և մթերից տեղւոյն:

Բայց, դու Տէր, այր յերկարայուշ ես և անմոռաց, մանաւանդ՝ թէ ըստ ի քեզ հոգասիրութեանդ՝ և կամաւ եւս խորհեցիր զյիշելդ, զտուեալ պատգամն երանելոյն Յովհաննու՝ Գիւտայ կաթուղիկոսի եղբօրորդւոյն, քեզ Տեառն, ի Սեւկոյ դրախտին՝ յարանց ոմանց, որք խոստանալով քեզ Տեառն, կարասի,

խնդրէին զտեղիդ: Եւ քո Տեառն կոչեցեալ զտէր Վարդ՝ զքո եղբայր և զՀայգիկ և զիմ անարժանութիւնս, հրամայեցեր միւսանգամ երկրորդել տեառն Յովհաննու զպատգամն․ յոր ասացեալ քո Տեառն և այլ բազում ինչ բանս, գլուխ պատգամի պատասխանւոյն արարեալ, եթէ՝ Պարտ էր նոցա իսկ ածել զմտաւ և զայդպիսի ինչ ճշդել առ իս․ բայց որովհետեւ նոքա անզգամեցան, սակայն ես զայսպիսի քրտամբ մեծ զվաստակս և բազում աշխատութեամբ զծախս՝ վասն վաճառականութեամբ ընդ թեթեւ ընչի տալ ոչ կարես, և ոչ զհոգեւոր և զյաւիտենական գանձ՝ անպիտոյ և անցաւոր կարասւոյ փոխանակել: Եւ ընդ տեառն Յովհաննու զայրացար, թէ բնաւ իբրեւ քեզ առն լսել իսկ էր արժան զայդպիսի բանս, թող թէ առ իս բերել:

Եւ ես վասն զի տկարամիտ և անզգուշացող այր եմ՝ յերկրաւոր միտս, ոչ զգայի ժամոյն դաւոյն․ այլ պարտ էր փութով և երագ երագ անկանել յատագ արտասուօք և աղաչելով, և ի բաց փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյդ: Եւ ահա լինէի պրծեալ ի չարաթոյն ժանեաց գազանացն, որք յայնմհետէ դարանամուտեալք ի ծածուկ, և ըստ անհամար մեծութեան իւրեանց սաստիկ կարասեաւ գնեալ բազում յեսան՝ արկեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց և թոյնք իժից էին ի ներքոյ շրթանց: Եւ իմ ոչ մարթացեալ աղօթել իբրև զՍաղմոսերգն, թէ «Պահեա, Տէր, ի ձեռաց մեղաւորի և ի մարդոյ չարէ փրկեա զիս»․ որոց հետամուտեալ այնուհետև խափանեցին զգնացս իմ, և հասեալ խոցոտեցին զիս ի մահ: Այլ խնդամ ցնծացեալ, զի այն վիրօք և որ յառաջագոյն խոցոտեալ իմ հոգիս մեղօք՝ առողջացեալ զօրացաւ:

Եւ այսպէս վճարեալ զամենայն խնդիր ի վերայ իմ, այնուհետև

ուրախ լինէին որպէս ի կատարելում տօնի զուարճացեալք: Որոց պարտն էր լալ զիս իբրև զանցուցեալ՝ նստեալ շուրջ զինև ի սենեկի, և արտասուել, պատել իբրև զվիրաւոր՝ և դեղ դնել․ այլ զոցունց հատուցին զհակառակն․ այպն առնելով պատեցին շուրջ զինև, ի սիրտս իւրեանց խնդալիցք․ «Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց և ասացին․ վա՜շ վա՜շ, տեսին աչք մեր»: Եւ զի ոչ լոկ բանից ընդվայրախօսութիւն է զոր ասեմս, այլ ճշմարտապէս արդիւնաւոր փորձիւ, յանդիման կացուցանեմ Տեառնդ զբանս:

Ցերեւելի սեպուհ մի յականաւոր տոհմէ՝ առաքեցի առ գլխաւորդ Հայոց քահանայութեան, առ հիւանդտեսդ հոգւոց, ասեմ․ Առ ի բժշկութիւն վիրաւորաց փութա, հա՛ս յօգնել․ խոցոտեցայ ի թշնամւոյն անթիւ նետիւք․ կարեվէր եմ մերձ ի մահ․ քեզ է այսուհետև հարկ՝

գնել դեղ և բժշկել. կամ թէ մեռանել՝ տանել ի շիրիմ և թաղել: Եւ նա պատասխանի արարեալ ասացաւ և պատգամաբերին շնորհելով Քրիստոսի ողջ է, և այլն ոչ ինչ թեթեւ, եթէ Ես և ի տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի. դու տես, եթէ գամ բժշկեմ և կամ թաղեմ. մի դուցէ զգացեալ ուրուք և զիս ընդ քեզ թաղիցէ:

Ո՞ւր աներկիւղութիւն քաջ հովուի է. ո՞ւր հոգողութիւն արդար ուսուցչի. ո՞ւր քրիստոսանմանութիւն արդար հայրապետի: Արարածոց արարիչն յաղագս մեղաւորաց գիւտի մարդ եղեւ. բազում թշնամանաց համբերեաց, կափանաց և թուք յերես առնլոյ, և փշեղէն պսակի, հանդերձ այլովք եւս մեծամեծօքն. դա և ջուր անգամ սրսկել ընդ երեսս թալկացելոյ վիրաւորի ոչ իշխեաց, ի մարդկան երկիւղէ: Առեալ լիաբուռն զդահեկանս ի Սամարացի գթածէն՝ զգինս դարմանոց հիւանդաց՝ ի սապատս համբարէ, և զհիւանդս հանեալ ի պանդոկոյն՝ ընկենու արտաքս բազում անփութութեամբ: Փրկիչն Քրիստոս բարձր կոչմամբ. զամենայն օր խնդրէ զմեղաւորս. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և վաստակեալք, և որք ունիք զբեռինս ծանունս, և ես հանգուցանեմ զձեզ». և Պաւղոս զանյարական զարկուծն զանյայտ դիպեցման յաշխարհի՝ չեւ եւս գլորելոյն զգուշացուցանէ, գրելով առ Գաղատացիսն. «Եղբարք, ասէ, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ էք, հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. զգոյշ լինիցիք անձանց, զի մի և դուք փորձիցիք. զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի»: Իսկ դա զնորին հակառակն աղաղակէ, թէ «Յո՞ դաս. չկամիմ, չիշխեմ տեսանեմ»: Արդեօք տարա՞ւ զիս ի սենեակ միանգամ և երկիցս, և խօսեցա՞ւ ընդ իս, որպէս հրամայէ Փրկիչն, միայն ընդ միայն, և կամ միով և կամ երկու ընկերօք. և գըտեալ անհաւան՝ համարեալ իբրև զմեղաւոր և զմաքսաւոր՝ հալածէր։

Յիշեալ, ասէ, ուրումն երբեմն առ ւագի զանուն իմ առաջի ոմանց պարեգօտաւորաց, ասաց տրտմագին հառաչմամբ. եթէ, Ոչ եղեւ իրաւացի հեռանալ առն յաշխարհէս, քանզի զարդ էր եկեղեցւոյ։ Եւ ոչ այլ ինչ կարացեալ ասել լսողացն՝ զայս եւեթ ետուն պատասխանի. եթէ, Յաղագս հալածման նորա մեք չեմք ինչ պարտաւորք. բայց վասն գիտութեանդ, որ ասէքդ, արդարև յառաջնում քոյ համեղս ասէր և զօրաւորս, բայց ապա յարդի ժամս բնաւ վատ ասէր։ Եւ զայս ոչ կարացին գիտել, թէ ի յանդիմանութիւն և յամօթ անձանց իւրեանց՝ խօսէին զայնպիսի բանս։

Արդ աղէ ասասցեն, յաղագս ո՞յր շնորհեալ պարգեւէ ի վարդապետութեան բանս։ Ասողի՞, – ո՞չ ապաքէն վասն ունկնդրացն ախորժս լսութեան և խնդրուածոյ։ Նայեցարուք ընդ ժողովուրդն Յունաց. յորժամ քարոզն լուեալ աղաղակէ, և որ կամին ասել՝ ի կարգեալ տեղին մատչի, ամենեցուն զարթուցեալ զսիրտս առ Աստուած վերացուցանեն. տարածեալ ձեռօք խաչանմանք լինին. միաձայն խնդրուածովք և արտասուալից գոչմամբ զՓրկիչն թախանձեցուցանեն. «Տուր, ասեն, բան. առաքեա շնորհ. դու իսկ ինքն գովաւ՝ որպէս Սրբոյն Պաւղոսի՝ խօսեա ընդ մեզ. նմա ծանո զհաշտութիւն քո ընդ ծառայս քո։ Մի նմանեսցէ դա յաղագս մերոց մեղաց՝ ստերջամբոց. այլ անձրևահոս բղխմամբ յորդեսցէ յանդաստանս հոգւոց մերոց, որովք ծաղկեալք՝ պտուղք արժանիս հաճութեան կամաց քոց բերեալ մատուցուք»։

Եւ արդ՝ ո՞յր ուրուք ի տգիտաց՝

թող թէ սակաւ մի և ի հեռաւորաց բանի, ոչ զարթնուցու միտք, չվառիցի խոհարանն, չվերաբերիցէ ի գանձուն Սուրբ Հոգւոյն զնոր և զհինս. մանաւանդ որ ըստ խոնարհութեան ոք՝ և ոչ հպարտական գիտութեամբ մատչիցի յասելն, ի լսողացն յաղօթս՝ և ոչ յանձինն պանծայցէ գիտութիւն: Զի եթէ ընտիր Աստուծոյ անօթն Պաւղոս՝ առ իւր աշակերտեալն յԵփեսոս գրէր, աղաչելով. «Աղօթս արարէք, ասէ, և վասն իմ, զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ», և արդ եթէ որ հաղորդակից էր խորհրդոցն Աստուծոյ՝ աղօթից կարօտէր և աղաչէր. ո՞րչափ ևս առաւել այժմու մարդիկս՝ զգածեալ բազում տկարութեամբ:

Իսկ Հայոց աբեղէնքս առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է ի սիրտ նոցա՝ զնոցունց հակառական երկնեն. և արդարև ըստ ասացածի մարգարէին՝ յղանան ըղ-

ցաւս և ծնանին զանօրէնութիւն. աղօթս իսկ չառնեն ի վերայ ասողին. այլ և եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրէն՝ հեղձնուն ի նախանձուէ: Եթէ զօք տեսանեն ի ժողովրդենէն՝ եթէ գովէ, ծաղր առնելով ամաչեցուցանեն. «Արդ լռել ինչ, ասեն, չգիտէ, և ընդ վայր աղաղակէ և քրքռի»: Իսկ Յունաց ժողովուրդն՝ և տղայքն անգամ ի վերայ ուսոց ծնողացն՝ շարժեալ զձեռներն ի գովութիւն այլոցն, ձայնս անյօդակապս արձակեալ յայթռեն: Եւ գոքա նստին գլխարկեալք, պատատեալք երեսօք, որպէս առ հատեալ գլխական, պապանծեալք որպէս համր դեւ: Եւ եթէ գթացեալ Մարդասիրին՝ կամիցի տալ բան խրատու ի ժողովրդոցն փրկութիւն, հայեցեալ ի դառն խորհրդոցն նոցա որոճմունս՝ յինքն ամփոփեալ արգելու զշնորհն. անդիմակայ արդարև ըստ գրելումն յՕրհնութիւնսօրհնութեանց, երկոքին սոքա, սէր և նախանձ. «Թռիչք նորա թռիչք բոցոյ հրոյ». յորոց իւրաքանչիւր ոք յայսց ի բարի վարողացն՝ արքայութիւն առնէ, և ի չարիս աճեցուցչացն՝ զդժոխս ժառանգեցուցանէ։

Եւ արդ լսէ՞ ոք ի ժամանակի՝ նմանող մարգարէին Երեմիայի, որ ասէր ողբալով. «Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր և զաչս յաղբիւրս արտասուաց», և թող նստեալ լայր զթշուառութիւն աշխարհիս։

Եւ ասեն. Ի նախնումն գիտնաբար խօսէր Ղազար, և այժմ անգիտաբար։ Մինչ ի դոսա դեռ ևս լռեալ էր նախանձն, յասօղս՝ զօրացեալ էր շնորհն. Իսկ յորժամ տեսին զբազմութիւն ժողովրդոցն յօժարեալս ի լսել, յորդորեալս ի գովութիւնս, պատմելով միմեանս զշնորհին յորդորմունս, յարգելով և անմոռաց զարմանալով զլուսաւոր և զանդայթ բանին բղխումն ի հրապարակս և ի փողոցս, յայս ևեթ

հռչակելով առ միմեանս խայտացեալք, ի կոր կործանեցան. և այնուհետև սկսան յղանալ զոխակալութիւնն և ծնանել զնախանձ։ Իսկ յորժամ ի դոսա այնպիսի առաւելաւ չարակամութիւն՝ լռեալ արգելաւ բանն. և ոչ թէ յասողէն, քաւ լիցի. քանզի անզեղջ է շնորհն և անպակաս են պարգևքն. այլ ի գոյանէ, զի մի լուիցեն զբան փըրկութեան իւրեանց։ Առ որս կատարի բան Հոգւոյն, որ ասէ. Թէ, «Տաց ձեզ սով՝ ոչ սով հացի, և ոչ ծարաւ ջրոյ՝ այլ սով լսել զպատգամս Տեառն»։

Սահեցուցեալ զմտածութիւնն ի բազում յածմունս, և զայս ևս յօդեալ յայլ չարախորհութիւնսն՝ ասէին. «Այդ, գիր ոչ կարդայ, և զընթերցուածն այնպէս ասէ անսայթաք՝ որպէս թէ գրոցն» Եւ յայս ոչ հայեցան գիտել, թէ որք քաջ գիտեն՝ զսաղմոսն Դաւթի պաշտել, միայն պիտոյ է ի ժամուն անսխալ, և ոչ միշտ զգիրսն ի ձեռին ունելով՝ խօսել զայլ այլս իբրև ըզբանդագուշեալս: Իսկ մեր երանելի վարդապետքն՝ զամենայն զկատարանս եկեղեցւոյ երիցս և չորիցս ուսուցեալ մեզ ի սկզբանէ մինչև ի կատարած գրոցն՝ համարս պահանջէին ի մէնջ զնոյնս, և իբրև զԴաւթի սաղմոսն՝ պաշտել մեզ հարկաւորէին: Իսկ այժմ յոլովք ի լիրբ մախողաց՝ և զանուանս անգամ և կամ զքանօնութիւնս կանոնեալ եկեղեցական գրենոյ հազիւ կարեն գիտել, և գրգռութեամբ նախանձարկու դիւին նստեալք առ միմեանս՝ լու ի լու այլոցն զինչպէտս խօսին:

Եւ արդ՝ զինչ ևս ասեմ. զի չէ բաւական ժամանակս համարելոյ զանթիւ յիս ի նետաձգութենէ թըշնամւոյն զվէրս, զոր աւուր աւուր և ժամու ժամու ընկալեալ վտանգիւ՝ տանէի ամենայնի ի հարկէ: Քանզի և կծկեալ որպէս ի սաստիկ և պինդ կապոյ՝ քաղցր և ամենահեշտ քո Տեառն ախորժակ սիրովս, — զորոյ եթէ գամ ճաշակեալ ուրուք առցէ զհամ անուշութեան, — կամէի տեսանել քան թէ յայսմանէ վրիպել:

Բայց այժմ եկեալ յաւարտումն բանիս ի դէպ և ի պատշաճ համարիմ յիշել զզարմանալւոյ և զերիցս երանելւոյ աւազակին զբան, զոր ի խաչին սաստելով ասէր ցեղկելի յիւր ընկերն, թէ «Մեք ըստ արժանի զոր գործեցաքն՝ ընդունիցիմք զհատուցումն». և ի Փրկիչն հայեցուցանելով, թէ «Իսկ սա ընդէ՞ր»: Արդ ես ահա ըստ արժանի որոց գործեցին՝ ընկալայ զպատուհասն, և խոստովանիմ առաջի հրեշտակաց և մարդկան. իսկ այլ առաքելանման մարդիկն՝ ընդէ՞ր այպխտումն, և ևս առաւել քան զայնս դիպեալք՝ ի յաշխարհիս ի յայսմ, խստագոյն վշտիւ վախճանեցան:

Երանելի Փիլիսոփոսն Մովսէս,

որ արդարեւ մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից, ո՞չ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի աբեղեանդ Հայոց հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն և զոգիտահալած զգրեանն նորա՝ առ անգիտութեան փաթաղիկէս կոչէին․ և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ, յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ՝ զխաբէական զեպիսկոպոսութիւնս նման դեղոց մահու արբուցեալ որբոյն՝ հեղձուցին: Որոյ՝ ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նզովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք . . . . զտեառնէ, զնա կացոյց ի վերայ անչափ անհանգիստ աշխատութեանց և վաստակոյն՝ զցայգ և զցերեկ, ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց: Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել: Զհրեշտականման այրն զՏէր՝ Նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցին, որք և այժմ դեռ եւս անյագութեամբ քինով ընդ մեռելոյն կագին:

Անարատ և յամենեցունց յարգելի յոյսն՝ տէր Խոսրովիկ, չեւ եւս հասեալ ի սահմանս մեր, մինչդեռ գայր ի Ճանապարհի և լուսան, որպէս ի վերայ թշնամւոյ ընդդէմ զինեցան, ասելով․ Ահա, ո՞ւր գայ միւս Թարգմանն: Եւ օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զգանչիւն մահաձայն աղեղանցն՝ աղօթեաց առ Բարձրեալն, և վաղվաղակի ընկալաւ զխնդիրն․ որում և տենչալի նշխարացն այլք՝ և ոչ մեք՝ արժանի եղեն ընդունակութեան:

Այլ ի դէպ համարիմ ընդ նոսին յիշել և զտէր Աբրահամ զեպիսկոպոս, որում ըստ ձաթի խորհրդոյն և չհանգուցանէր ի ծերութիւնս, և կարող լինէր առ նմա գոնեա սուղ ինչ ժամանակ մնալ․ թէպէտեւ ոչ թերակատար գոլով սուրբ և սոյդ հաւատ, զոր ուսեալ ի տղայութեանն յերանելոյ Աղանայ՝ կեամ նովիմբ ի նմին անփոփոխութեամբ, մինչեւ ի վախճան կենցաղոյս իմոյ։ Այլ յաղագս իմաստաւոր բանի՛ ըստ նորա տեառն մեծ հրահանգին, շահեալ ի նմանէն՝ հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ հաշուէի զպարապումն զայն։ Յորոյ վերայ տեսեալ պարեգօտաւորաց՝ զայրագնեալ իմն՝ զօրհնելոյ տիկնոջ աւագի զմիտսն, ոչ ծանուցին առ ժամայն. նա աղաչելով զերանելի մայրն՝ հոգացեալ իբրեւ զեղբարս ի վերայ եղբօր, այլ առաւելս զայրացուցեալ գրգռելով զկամսն իւրեանց նովաւ կատարեցին զհաճոյս։

Եւ այդք այսպէս թշնամանեալք և հայհոյանօք հալածեալք, ոչ յերեկոյս ինչ ժամանակաց զրուցատրութեամբք յումեքէ համբաւոց ծանուցաւ մեզ, այլ առ մեւք իսկ և ի մերում ժամանակի եղեալ տեսաք զայս ամենայն։ Իսկ զյառաջագոյն գրելոցս սուրբ արանցն, զորս

ի պատմութեանն նահատակին Գրիգորի դրոշմեալ յիշատակէ, զի՞նչ եւս ասացից զարդար և զարժանաւոր բարեպաշտ կաթողիկոսէն՝ զսրբոյն Ներսէսէ, և զկրօնաւոր առաքինւոյն և զմեծ լուսաւորչէն Հայոց՝ զտէր Սահակայ, և զայլոց բազմաց, որոց ոչ բացեալ ի բարեբան զբերանս իւրեանց՝ ի վերայ աշխարհիս այսորիկ՝ վախճանեցան։

Յաղագս որոյ երկնչիմ զարհուրեալ, մի գուցէ և ի դոսա յարիցեն աւետարանին սպառնալիքն, որ ասէ. «Ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս, և ի նոցանէ սպանանիցէք և խաչիցէք, և տանջիցէք ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք. որպէս զի եկեսցէ ամենայն արիւն արդար հեղեալ յերկիր՝ յարենէն Աբելի արդարոյ մինչեւ ցարիւնն Զաքարիայ՝ որդւոյ Բարաքեայ, զոր սպանէք ի մէջ տաճարին և սեղանոյն. այո ասեմ ձեզ, զի խնդրեցից յազգէդ յայդմանէ»: Այլ մխիթարեցիմք ի տգիտաց՝ առ ժողովուրդն միայն Հրէից կարծեցեալ զբանից ասացուածն: Խոկացի այնպիսին ուշադրելով. «Յարենէն, ասաց, Հաբելի արդարոյ». որպէս զի հայեցեալ ի ժամանակ սպանման նորա՝ ծանիցէ երկիւղիւ, թէ առ ամենեսեան է բանդ, որ նոյնպիսի գործոց լինին նմանողք:

Համարձակիմ ասել ի սոյնս յանդգնութեամբ և զայս ես. եթէ ոչ իցեն սոյդ կարծեցեալքս յինէն, դու Տէր, քաղցրութեամբ զանց արարեալ՝ ներեսջիր ինձ որպէս ակարամտի: Զի քոյում իսկ ամենասքանչ անձինդ, յորմանէ ամենայն մարդ ի Հայս՝ յաւագ և ի կրտսեր՝ հասեալ է մեծապէս օգտակարութիւն և գահ և փառք, իսկ ոմանց՝ և ի մահուանէ ի կեանս, և ի կորստենէ գտանել և ի միջի լինել, դու Տէր, եղեալ ես պատճառ: Եւ արդ տեսանելով զայդպիսի օր ըստ

օրէ զքո Տեառն յԱստուծոյ փառաւորութեանն լցեալ զհմտութիւն, որ պարգեւեալ առ նոսա բերեալ չքեղութիւնս և պարծանս, և թէ էր՝ կամէին գտանել հնարս, շատք էին որ առ նախանձու չհատուցանէին զբարի փոխարէնս փոխանակ քո Տեառնդ բարւոյ, այլ զնոցուն հակառակին: Իսկ վերին արդարատես ակնարկուածն՝ չհայի ի չար կամացն խնդիրս, այլ իւր խնամակալութեանն յաջողութեամբ՝ կատարէ հանապազ անփոփոխութեամբ ի բարիս, ի փառաւորութիւն անուան իւրոյ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբեղենից տէր 624.
Աբիսակ սոմնացի 587.
Աբրահամ երէց Արածայ 237. 245.
Աբրահամ խոստովանող (եպսկ.) 272. 274. 300. 301. 340. 645.
Աբրահամ նահապետ 98. 214.
Ագաթանգեղոս 1. 5. 7. 8.
Ադամ 608.
Ադամակերտ 16.
Ադոնիա 587. 588.
Աթանաս աղեքսանդրացի 618.
Աթիլ քանանայ 388.
Ալեքսանդր մակեդոնացի 430.
Ալվար գիւղ 500.
Ակիթ 627.
Աքիտովփէլ 240.
Ակոռի գիւղ 400. 407.
Ահարոն 608.
Աղան արծրունի 15. 134. 198. 606.
Աղբակ 325.
Աղբերականաց դաշտ 474.
Աղձնիք 197.
Աղուանք 16. 127. 128. 141. 143. 147. 150. 151. 156. 165. 196. 202. 207. 210. 266. 382. 430. 627.
Ամատունիք 134–35. 144. 185. 198. 215. 236. 266. 273. 389.
Ամբակում մարգարէ 623.
Ամիթ քաղաք 597. 600.
Ամիրներսեհ Սիւնի 170.
Ամոն 613.
Այրարատ, Այրարատեան գաւառ 22. 24. 28. 31. 32. 113. 200. 300. 458.
Անակ 5.
Անանիա Սիւնեաց եպիսկոպոս 133.
Անատոլ սպարապետ 232.
Անարիք 145. 268. 512.
Անգեղ տուն 197.
Անգղ բերդ 186.
Անդեկան 576. 577. 580.
Անդուլ 627.
Անի բերդ 390.
Անձեւացիք 134–35. 144. 236. 273. 410. 412–14.
Անձտայ գաւառ 499.

Անուշվան 356. 606.
Անդիոք 197. 232. 266.
Աշոցաց իշխան 237.
Աշուշա 144. 159. 170. 184. 344–46. 356.
Աշտատ 347. 348. 366.
Աշտիշատ 112.
Ապար աշխարհ 274.281.303.325.342.
Ապողինար լաւոդիկեցի 618.
Ապրսամ արծրունի 237. 273.
Առանձար ամատունի 215. 273.
Առաւեղեանք 144. 225. 232. 273.
Առաւան աղբիւրկացի 526.
Առաւան անձևացի 273.
Առաւան վանանդեցի 135.
Առաստոմ գնունի 395. 401. 403. 407.
Առեստ քաղաքագեօղ 412.
Առնակ ամատունի 273. 362.
Ասկաղոն 620.
Ասորեստան 79. 278. 340–42.
Ասորիք 12. 39. 545.
Ատգէն վանանդացի 497.
Ատոմ գնունի 135. 273. 395. 401. 403. 407. 418.
Ատրներսեհ սաղար 415.
Ատրորմիզդ Արշական 229. 235–6.
Ատրպատական աշխարհ 391. 393.

Ատրվշնասպ–խոապեան կամ Տապեան 415. 421.
Ատրվշնասպ–Յոզմանդեան 382–3. 390. 397–8.
Արաբիա 590.
Արած 237. 245. 272.
Արահեզ գիւղ 354.
Արամանայ գիւղ 177. 180.
Արեաց աշխարհ. Տ. Պարսից աշխարհ
Արիոս 618.
Արիք. և (Անարիք) 57. 71. 74–5. 116.
122. 127–30. 139–40. 145-49. 167–
169. 195. 200. 201. 229. 246. 238.
239. 245. 256. 259–60. 264. 266.
268. 310. 313. 376. 379. 385. 398.
441-2 444–47. 450. 453-54. 474.
485-86. 499. 501–506. 508. 510–
514. 517–21. 524. 526. 539–40.
533. 535-37. 539–43. 545–49. 556.
560–62. 564. 568–70. 572. 579-580.
Արծաթաղբերք 474.
Արծաթի գիւղ 483.
Արծակ գեօղ 189.
Արծկէ գիւղ 69.
Արծրունիք 159. 198. 410. 572.
Արծրունիք (միւս) 237. 273.
Արձան 219.

Արշակ որդի Տիրանայ 2. 77.
Արշակ որդի Պապայ 2. 22–24. 32.
Արշակունիք 21. 32. 36. 41. 54. 56. 57. 75. 102.
Արշամունեաց գաւառ 483. 485.
Արշարունիք 627.
Արշաւիր արշարունի կամսարական 135. 198. 203–6. 225. (244) 395. 403. 434. 438. 492. 526.
Արշէն երէց 238. 248. 324-5.
Արսէն ընծային 228.
Արտազ գաւառ 217. 416. 532.
Մրտակ մոկացի 135. 144. 158–59. 225.
Արտակ պալունի 198. 227.
Արտակ ռըշտունի 144.
Արտակունիք 419.
Արտաշատ 245.
Արտաշատու բերդ 391.
Արտաշատ գիւղաքաղաք 467.
Արտաշատու կամուրջ 557.
Արտաշէս որդի Վռամշապհոյ 57. 70–71. 74–76.
Արտաշէս որդի չմայեկայ 356.
Արտաշիր ստահրացի 1. 5.
Արտաւազդ մամիկոնեան 273.
Արտաւան կամ Արտեւան Արշակ 1. 5.

Արտէն իշխան Արեղենից 209.
Արտէն գաբեղեան 231.
Աւարայր գիւղ 217.
Բաբգէն սիւնի 272. 403. 406. 418. 434. 438.
Բաբելոն 362. 585.
Բաբելոս 44.
Բաբիկ ռոփսեան 273.
Բաբիկ Սիւնի որդի Վասակայ 170. 361.
Բաբկէն տես Բաբգէն
Բաբոց 419.
Բագաւան գեօղ 457.
Բագրատունիք 209. 393.
Բագրեւանդ գաւառ 110. 177. 189. 248. 325. 457.
Բագէ շահապ 533.
Բակուր 272.
Բաշղ վահեւունի, տես Բարշղ.
Բասեան, կամ բասեն գաւառ 177. 474. 476. 500.
Բարեք (այն է՝) Բարաքիաս 647.
Բասիլ եպս. Մոկաց 134.
Բարշղ վահեւունի 420. 422. 434.
Բարսեղ կեսարացի 618.
Բերդկունք գեօղ 189.
Բզնունիք 69. 343.

Բիւզանդիոն քաղաք 8. 10–11.
Բիւզաս 9.
Բլուր գիւղ 110.
Բճնի գիւղ 388.
Բողբերդ 476. 509.
Բռնավէժ 416.
Բրքիշոյ կամ՝ Բարդքիշոյ 79. 80–81.
Գարաղ Գարեղեան 488.
Գադ եպս. Վանանդայ 134.
Գադիշոյ խորխոռունի 144. 209. 365. 375.
Գագրիկ արեղեան 135. 179.
Գաղատացիք 635.
Գարդմանայ վանք 627.
Գարեգին սրուանձտեան 228.
Գարջոյլ մախազ 395. 401–403.
Գդիհոն սիւնի 402. 415. 155–6. 469. 475. 485. 487. 394–5. 498. 507.
Գեդէովն 402.
Գիւղիկ գիւղ 472.
Գէթ 620.
Գիւտ կաթողիկոս 354. 362–66. 368. 369. 371–75. 630.
Գիւտ վահնունի 135. 144. 198. 209.
Գնէլ 77. 79.
Գնթունիք 237.
Գնունիք 135. 228. 273. 395. 401. 407. 434.

Գոթք 9.
Գոտորզ 15.
Գրիգոր Լուսաւորիչ 2. 5. 49. 63. 80–83. 86. 95. 102–4. 111. 117. 124. 171. 220–21. 223. 395. 452–3 457. 553. 573. 590. 647.
Գրիգոր մամիկոնեան 557. 558.
Գրիգոր նազազացի 618.
Դաղ ասաւեղեան 273.
Դանիէլ եպիս. 42–43.
Դանիէլ մարգարէ 100.
Դաւիթ երէց 134.
Դաւիթ մարգ. 171. 348. 582. 586. 641.
Դենշապուհ 312. 330. 334. 337.
Դիմաքսեանք 135. 179. 204. 228. 273. 469.
Դողըվճ. 216.
Դու գեօղ 441. 474.
Դուին 391. 407. 416. 458. 468. 510. 556. 559. 576.
Եգերաց աշխարհ 475.
Եգիպտացիք 583.
Եգիպտոս 31.
Եդեսիա 43.
Եզնիկ եպս. Բագրեւանդայ 134.
Եկեղեաց գաւառ 45. 197.
Եղբայր եպս. Անձեւացեաց 134.

Եղեգեակ գիւղ 248. 272.
Եղիա մարգարէ 465. 614.
Եղինդ գեօղ 532.
Եղիշէ եպս. Ամատունեաց 134.
Ենովք 613.
Եսայի մարգարէ 52.
Եսաւ 608.
Երեմիա մարգ. 640.
Երեմիա եպս. Ապահունեաց 134.
Երեմիա եպս. Մարդաստանի 134.
Երեմիա երէց 179.
Երէզ գիւղ 485. 487.
Երիզացիք 488.
Երիքով 425.
Երուսաղէմ 10. 221. 287 590.
Եւտիքէս 619.
Եփեսացիք 615.
Եփեսոս 638.
Զամբրի 613.
Զանգակ երէց 212.
Զանդաղան յնստանեայ տանէն 188.
Զարաւանդ, Զարեւանդ գաւառ 213. 216. 518.
Զարեհ որդի Գեորգի 555. 559.
Զարեհաւան գիւղ 195.
Զարմիհր հազարաւուխտ 382. 466. 470–71. 474–75. 480. 506. 510–12. 514. 517–18.

Զաւէն եպս. Մանանաղւոյ 134.
Զաքարիա մրգր. 647.
Զաքէոս 591.
Զենակք գիւղ 300.
Ընծայնի (ազգ) 228.
Թաթ կամսարական 273.
Թաթիկ եպս. Բասենոյ 134. 238. 278.
Թաթուլ դիմաքսեան 198. 273.
Թաթուլ վանանդեցի 225.
Թէոդոս Բ կայսր 231.
Թրակիա 9.
Իսահակ կաթողիկոս, տես Սահակ.
Իսահակ նահապետ 590.
Իսմայելացիք 76.
Իսրայէլ, Իսրայէլացիք 161. 583 585-86.
Լեոն Բ կայսր Յունաց 363.
Լփինք 205.
Խաղխաղ գիւղ 202.
Խաղտիք 233. 471..
Խողոցիմք գիւղ 114.
Խոսրով Ա 5.
Խոսրով Գ 22. 34. 36–37. 54.
Խոսրովակերտ 468.
Խոսրովիկ երէց 645.
Խորական տ. Մուշ ի Նիխորականայ՝

Խորէն երէց 134. 300–301. 338. 340. 342.
Խորէն Խորխոռունի 198. 204. 227.
Խորէն Մախազ 225.
Խորխոռունիք 144. 209. 227.
Խորձեան 45.
Խուժաստան 238. 365.
Խուժիկն 283. 302–310. 325–329. 331–334.
Խուրս Արշամունի 483–84.
Ծաղիկ գիւղ 481.
Ծաղկէոտն կամ Ծաղկուտ գաւառ 186. 428.
Ծոփք 197. 499.
Կամսարականք 198. 203–6. 208. 403. 404. 419. 421. 436–39. 440. 472. 473. 476–78. 480. 482–484. 492. 508–509. 572. 605.
Կայէն 608.
Կանգարք 429.
Կատիշք 393. 403–405. 419.
Կարմիր ծով 425.
Կարնացի 483–484.
Կարնոյ ծով 482.
Կարնոյ քաղաք 483.
Կիլիկիա գաւառ 304.
Կիւրեղ աղեքսանդրացի 618.

Կիւրեղ երուսաղեմացի 618.
Կողթեկ իշխան Ուրծայ 391.
Կոպրիք 393.
Կոռնելիոս 98.
Կոստանդիանոս 9. 11.
Կոստանդինուպոլիս 11.
Կորիւն 38. 219.
Կորնթացիք 86. 615.
Կումբրիկոս, տես Մանի
Կուր գետ 202. 207. 432. 436.
Կռուակք 397.
Հաբէլ որդի Ադամայ 608. 647.
Հաբէլ քահանայ 42. 43.
Հազար 590.
Հազարաւուխտ 382. 467. 471. 474. 480. 506. 510–512. 514–15. 517–18.
Համազասպ, Համազասպեան, եղբայր Վարդանայ 111. 180. 225. 273. 601.
Համազասպ հայր Վարդանայ 111.
Հայաստան, տես Հայոց աշխարհ
Հայդիկ 631.
Հայոց աշխարհ 1. 8. 16. 18. 20. 31. 32. 34. 36. ևայլն
Հայք 36. 53. 128. 130. 140. 143–45. 147. 161. 170. 182. 184. 196. 200. 202. 265. 282. 302. 310–11. 343.

358. 383. 393. 398. 431. 436. 444–445. 476. 517. 530. 542. 545.
Հաշտեանք 197. 481. 485. 499.
Հացեկաց գիւղ 37.
Հեղինէ 10.
Հեր գաւառ 213. 216. 518. 519. 527.
Հեփթաղք 474. 500. 502–505. 528. 540.
Հմայեակ դիմաքսեան 135. 198. 204. 228.
Հմայեակ մամիկոնեան 111. 176. 180. 198. 231. 234–35, 356.
Հոն կամ Հոնք 207-8. 264–65. 268. 378. 383. 386–87. 409. 429–30. 439. 445.
Հոռոմոց աշխարհ 266.
Հոռոմք 367. 387. 440. 472. 604.
Հռովմ 6. 161.
Հռուփանոս 44.
Հրահատ յԱշոցայ 135.
Հրահատ կամսարական 395. 401. 403–404. 451. 453–54. 472. 478. 605. 627.
Հրահատ մամիկոնեան 407, 419. 627.
Հրեայք 297. 609–10.
Հրեւ 347–49. 352. 365.
Հրեւշնոմշապուհ 349.
Ձուիկ 356.

Ղազար բարեկամ Քրիստոսի 287.
Ղազար փարպեցի 15. 598. 600. 602. 607. 611-12. 623. 630. 640.
Ղեւոնդ երէց 134. 179. 218–19. 222. 224. 237. 240–43. 248. 250. 255. 257. 260. 269. 272. 290. 312. 316. 318-320. 323–25. 332–33. 336.
Ղեկովբ գետ 9.
Ղերպարգոս 497.
Ղովտ 590.
Ճարմանայնու դաշտ 431.
Մաղխանացի 613.
Մամիկոնեանք 154. 238. 244. 355. 358. 630.
մանազկերտեցիք 354.
Մանանաղի 134.
Մանդակունիք 273.
Մանէճ ապահունի 135. 144. 209.
Մանձկերտ (Մանազկե՛րտ) 134.
Մաշթոց 37–39. 41-43. 45. 47-48. 50. 113. 219.
Մանի 619.
Մանիքեցիք 619.
Մատթէոս աւետարանիչ 591.
Մարդաստան 134.
Մարդպետական գունդ 199.
Մարիամ Աստուածամայր 191.

Մարիամ քոյր Ահարոնի 608.
Մարկիանոս կայսր 232.
Մարկիոն 249.
Մելիտէ կաթողիկոս մանազկերտեցի 354.
Մելիտէ եպս. Մանձկերտոյ 134.
Մեսրովբ, որ է (Մաշթոց) 43-45.
Մերհուժան արծրունի 198. 273.
Միհրան 428-32. 440-42. 444. 451. 453. 455. (513-514). 516-18. 533.
Միհրան տուն 366.
Միհրներսեհ հազարապետ 115-18. 120. 125. 129. 141. 167. 195-96. 200-201. 245. 250. 256. 258-59. 313. 244.
Միհրշապուհ մարդպետ 225.
Մեհրվշնասպ ճուարշացի 520. 527-529.
Միջագետք 43.
Մկնառինճ գեօղ 441.
Մոկաց ազգ 410.
Մովան անդերձապետ արքունի 279. 310. 327.
Մովսէս կաթողիկոս մանազկերտեցի 354.
Մովսէս կրօնաւոր 605.
Մովսէս մարգարէ 435. 614.

Մովսէս փիլիսոփոս 643.
Մուշ դիմաքսեան 204.
Մուշեղ մամիկոնեան 273 465-66. 470. 484. 492.
Մուշէ եպս. Արծրունեաց աղբակացի 133. 237. 248. 372. 320. 324-5. 605.
Մուշէ տարօնացի 45.
Մուշէ քհնպտ. Սիւնեաց 605.
Մուշ ի Նիխորականայ 204.
Մուշկան Նիւսալաւուրտ 216. 229-30.
Մրէն 134.
Յազդ սիւնի 440 451. 454-5. 457.
Յազկերտ Ա. 54. 56-7.
Յազկերտ Բ 110. 114-5. 139. 141. 144. 146. 148. 166. 171. 184. 229. 230. 236-39. 258. 270. 325. 337. 339. 344. 346. 356.
Յակոբ նահապետ 608.
Յակոբոս առաքեալ 622.
Յաշկուր արծրունի 526.
Յեսու 614.
Յըզատվշնասպ 347-48. 366. 476.
Յոբ 98. 407.
Յոհան անձաւացի 412. 414.
Յոհան ի գաւառէն Եկեղեաց 45.
Յոհան կաթողիկոսի 396. 406-8. 416.

417. 422. 424. 470. 573. 582. 630. 631.
Յոհան մոկացի 413
Յոհան ռուփսեան 273.
Յոյնք 11–12. 21–22. 32. 34–35. 46. 54–55. 231. 233.
Յովաբ 588.
Յովհաննէս եղբօրորդի Գիւտայ կթղ. 630–31.
Յովհաննէս մկրտիչ ·609.
Յովնաթան 348.
Յովսէփ կաթողիկոս 113. 133. 218. 222. 237. 240. 248. 251. 256. 272. 292. 312–13. 315. 320. 323.
Յովսէփ նահապետ 76. 608.
Յովսէփ պաղնացի 45.
Յորդանան 421. 558. 585.
Յուդա մատնիչ 163. 193. 223. 389.
Յունաց աշխարհ 11. 231. 263. 598. 600.
Նախճաւան գիւղ 393.
Նեստոր 619.
Ներշապուհ (Ներս–Շապուհ) արծրունի 135. 144. 236–7. 248. 274. 533.
Ներս յովսեպեան 497.
Ներսեհ երուանդունի 412–14.
Ներսեհ իշխան ուրծայ 209.

Ներսեհ կամսարական 395. 401. 404–406. 419. 422. 437. 451–53. 472. 478. 482. 484. 605. 627.
Ներսեհ քաջբերունի 225. 228.
Ներսեհապատ 416.
Ներսէս Պարթեւ 32. 58. 68–69. 76–78.
Նիխոր Վշնասպդատ 518–21. 526. 537. 541. 549–50. 554–56. 560. 563.
Նիխորական սերուխտ 200,
Նիկիա 87.
Նիւշապուհ շահաստան 274. 279. 281. 300. 308. 337.
Նոյ Նահապետ 590.
Նոր քաղաք, տես Վաղարշապատ
Նուարսակ գեօղ 520.
Նպատ լեառն 457.
Շարուլ գաւառ 341.
Շաղագոմ գաւառ 472.
Շամարտացին գթած 634.
Շամուէլ ասորի 81.
Շապուհ Ա. թագ. Պարսից 21. 35. 36. 53–54. 56–57.
Շապուհ Բ 56–57.
Շապուհ դպիր 520. 526. 529.
Շապուհ (Միհրան) 474. 476–78. 480–482. 485. 487. 489–90. 494. 496. 498. 500. 506. 508. 513–14. 516–518. 527–28. 533.

Շաւասպ արծրունի 273.
Շիրակ գաւառ 383. 395. 401. 406.
Շիրման գիւղ 483.
Շմաւոն անձևացի 135. 144. 236. 273.
Շնգին արծրունի 273.
Շտէոյ գիւղ 489.
Ոդմուս գիւղ 375.
Ողին գիւղ 489.
Ոնեսիփոր 625.
Ոստանեայ տուն 188.
Ուրծայ գաւառ. 209. 391.
Որդի դիմաքսեան 469.
Որկոմի գիւղ 300.
Որչընճաղ գիւղ 234.
Ոքաղ գաւառ 472. 474. 480.
Պալունիք 135. 209.
Պաղանական տուն 45.
Պանոկ 526.
Պապ արտակունի 419.
Պարգև արծրունի 273
Պարթևք 58.
Պարխար լեառն. 234–35.
Պարսիկք 21–2. 32–6. 53. 57–9. 69. 71. 76. 77. 114. 130. 144. 148. 165. 169. 171. 184. 195. 202–203. 205–6. 209. 215–18. 224. 226–29. 231. 233. –35. 238–39. 324. 346. 356–57. 360.

364–65. 383–84. 389. 391. 393. 396. 397. 399–400. 402–3. 406. 416. 419. 420. 422. 432–33. 435–36. 441. 444. 451–52. 455–56. 462–63. 468–70. 472–73. 478. 481–85. 488–90. 492. 497. 500. 503. 510. 511. 521–22. 530. 533. 535. 537. 550.
Պարսից աշխարհ 36. 54. 116. 208. 230. 239. 346. 508. 510.
Պետրոս առաքեալ 425. 591.
Պետրոս Երկաթի 212.
Պերոզ արքայ Պարսից 346. 354. 358. 360. 364–65. 377–78. 380. 382. 444. 474. 501–505. 508. 510–11. 513. 519. 528. 539–40. 542–43. 555. 561–64. 568.
Պիղատոս 297. 318. 609.
Պղատոս 43.
Պօղոս առաքեալ 63. 66. 84. 86. 96. 161. 304. 590. 600. 603–4. 615. 622. 635. 637–38.
Ջնիկան մայպետ արքունի 310. 327. 330.
Ջրվէժ դաստակերտ 468.
Ռեւան 308. 325.
Ռշտունեաց գաւառ 248. 325. 410.
Ռոփսեանք 273.

Սագրայ բերդ 391.

Սահակ ասպետ բագրատունի 393-94. 406. 407. 417–18. 420. 434. 439. 459.

Սահակ կաթողիկոս 40. 47. 58–60. 69–75. 80. 82. 109–113. 160–61. 175. 256. 647.

Սահակ կամսարական 526.

Սահակ Ձայնոյ 212.

Սահակ մանդակունի 273.

Սահակ եպս. Ռշտունեաց 134. 237. 248. 251. 256. 272. 312. 315–18. 320. 322. 325.

Սանակ եպս. Տարոնոյ 134.

Սամարիա, Սամարացի 609.

Սամոս 44.

Սամուէլ մարգարէ 202.

Սամուէլ քահանայ յԱրածայ 237. 245. 272.

Սասան 1. 5.

Սասանեանք, տես Պարսիկք

Սատոյ դիմաքսեան 273.

Սատոն Գարեղեան 434.

Սաւուղ 487. 608.

Սեբուխտ Նիխորական 200.

Սեւուկ անձեւացի 413. 630.

Սիմէի 588. 590.

Սինեայ լեառն 590.

Սիւնիք 123. 125. 128. 208–9. 211–12. 231. 235. 237–38. 240–42. 244. 259. 263. 265. 267. 269–72. 393-94. 400 403. 415. 419. 475. 494–95. 497. 605. 627.

Սողոմոն իմաստուն 582. 588. 589.

Սուրէն Պահլաւ 70. 73. 74. 415.

Սուրէն Պահլաւ կամ Պալհաւ զօրագլուխ 415.

Սուրմակ երէց 76. 134.

Ստահրացի. տես Արտաշիր

Սրուանձտեանք 228.

Վազգէն 382.

Վախթանգ 382. 384. 409. 428-30. 434. 439. 474–75.

Վահան Աղուան 207.

Վահան ամատունի 113. 135. 144. 185. 198. 236. 273.

Վահան Գնունի 228.

Վահան կամսարական 419.

Վանան մամիկոնեան մեծն 4. 13. 15. 18. 356. 360. 375–76. 378–81. 383-84. 386–7. 393–96. 410. 412. 413. 417–18. 420–422. 424. 426–27. 429-30. 432–37. 440–42. 451. 458. 459. 463. 467–68. 473. 478. 481–82. 485. 487. 489–90. 493–98. 500. 506.

507. 509-10. 514-15. 517-21. 527. 537. 541. 549-50. 553-60. 562. 567. 571. 573. 575-77. 580. 599.
վահեւունիք 135. 144. 198. 209.
վահրամ սպարապետ 503.
վահրիճ 42.
վաղարշ արքայ Պարսից 511. 513-14. 517. 519-20. 536. 558-60. 562. 567. 569. 570-74. 577. 580.
վաղարշապատ 6. 31. 89. 458. 509. 575.
վայոց ձոր 114. 325.
վանանդ գաւառ 134. 325. 375.
վառգոշ գնթունի 406.
վասակ արծրունի 15.
վասակ մամիկոնեան 356. 394. 397. 398. 401. 403. 406. 427-28. 435-39. 557.
վասակ սահառունի 406.
վասակ սիւնի 115-16. 135. 143. 170. 178-82. 184-85. 188-190. 196-201. 208-9. 211-12. 237-243. 259. 263. 265. 267. 269. 271-72. 344.
վասաւուրտ Հարքային 526.
վարազդեն առաւեղեան 273.
վարազկերտ գիւղ 397-98.
վարայրվարոյ 472.

վարազներսեհ ուրծացի 391.
վարազ-շապուհ ամատունի 389.
վարազ-շապուհ պալունի 135. 209. 231.
վարազվաղան սիւնի 115-18. 120. 122. 125. 270.
վարդ 357. 387-88. 224-26. 228. 631.
վարդան հայր Մեսրոպայ 37.
վարդան մամիկոնեան մեծն 111. 135. 148. 150. 253-54. 156. 159. *և այլն*
վարդաշէն գիւղ 472.
վարդգէս գաւառ 278, 334.
վարձայ 273.
վարշակի ջերմուկ 428.
վեհդենշապուհ (որ և Դենշապուհ) ամբարապետ 279. 281-82. 293. 295. 297. 300-301. 303. 305-8. 310-12. 315-16. 320-22. 326-27. 329-30. 338-341.
վեհշապուհ 201.
վեհվեհնամ 383. 533.
վինի կամ վինխոռեան 415. 421.
վիրք 16. 128. 132. 141, 143-44. 147. 150-51. 156. 159. 161. 165. 170. 184. 264. 344-45. 356. 382. 384. 386. 392. 409. 428-34. 438-40. 458-59. 463. 467-68. 506. 627.

Վուրկն լփնացի 205.
Վռամ կրման արքայ Պարսից 53. 54. 57.
Վռամ որդի Յազկերտի 56. 69-73. 75. 77. 79. 81. 110. 114.
Վռամշապուհ 36. 38. 41, 47. 50. 53.
Վրաց աշխարհ տես՝ **Վիրք**
Վրէն Ջիւնական 135.
Վրէն մանանդացի 419–20. 557. 5[illegible]9.
Վրէն տաշրացի 237. 273.
Վրիւ (Ասորի) 377-80.
Վրիւ մաղխազ 135.
Վրկան կամ Վրկանք 273. 296. 302. 337-8. 502. 506.
Տաճատ արծրունի 15. 273.
Տաճատ գնթունի 228.
Տաճատ եպս. Տայոց 134.
Տայք 231. 234. 354. 357. 393. 440.
Տաշիրք 237.
Տաշրացիք 273.
Տարօն գաւառ 37. 112.
Տարբերունի (գւռ.) 134.
Տէր խորձենացի 45. 644.
Տիգրոն 365.
Տիրան Բ 2. 78.
Տիրոց իշխան Բագրատունեաց 209.
Տղմուտ դաշտ 217.

Տուարածատափ 177.
Տրդատ արքայ 6.
Փայտակարան քաղաք 195.
Փապագ կամ Փափագ, եւ Փափակ առաւելեան 135. 225. 237. 273.
Փապակ պալունի 418.
Փառսք, որ է Պարսք 346,
Փարաւոն 582.
Փարսման Մանդակունի 273.
Փաւստոս Բուզանդ կամ Բուզանդացի 2. 8. 12.
Փեննեճէզ 612.
Փիւնիկէ 44.
Փլորենտ տսորի 232.
Քաջաջ սահառունի 470.
Քաջաջ սարկաւագ 238. 248. 272. 324–25.
Քաջբերունիք 225.
Քասուն եպս. Տարբերունոյ 134.
Քոնթ առաւենեան 497.
Քուշանք 274.
Օշական գիւղ 113.

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

Հայաստանի Ազգային գրադարան
NL0434024